ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՄԱՅԻՍ 2013

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Կանչվել են նոր Յոթանասունականներ և Երիտասարդ Կանանց նոր գերագույն նախագահություն

Հայտարարվել են երկու նոր տաճարներ

© JOSEPH BRICKEY, ՀԱՅԱՍՏԱՆ

Սիլովայի որոնումը, Ջոզեֆ Բրիքլի

Սիլովայի ավազանը Երուսաղեմում սկիզբ էր առնում մի աղբյուրից, որը գտնվում էր քաղաքի պատերից դուրս: Լինելով տարածքում քաղցրահամ ջրի միակ աղբյուրը, Սիլովայի ջրերը երկար ժամանակ եղել են Աստծո պաշտպանության և պահպանող զորության խորհրդանիշը: Ինչպես գրված է Եսայիա 8.6–8-ում, Եսայիան մարգարեացավ, որ Իսրայելի թագավորությունը կմերժեր Տիրոջը ի օգուտ երկու թագավորների: Դա իրականացավ: Ի տարբերություն Եսայիայի ժամանակների, այս կինը փնտրում է Սիլովայի քաղցրահամ ջրերը՝ այսինքն, ըստ խորհրդանիշի, Աստծո մշտական սերը և պաշտպանությունը:

Բովանդակություն մայիս 2013

Հատոր 14 • Համար 2

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Բարի գալուստ համաժողով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Այս բաները ես գիտեմ
Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

9 Ամուր հիմք
Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս

12 Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք
Էլեյն Ս. Դալտոն

15 Փրկիչն ուզում է ներել
Երեց Քրեյգ Ա. Քարդոն

18 «Սա է իմ գործը և իմ փառքը»
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

22 «Եկեք ինձ մոտ»
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

26 Եկեղեցու պաշտոնյաների հաստատում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

28 Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2012
Ռոբերտ Վ. Քանթվել

28 Վիճակագրական հաշվետվություն, 2012
Բրուք Պ. Հեյլս

29 Որ խաղաղություն լինի տանը
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

32 Անձնական խաղաղությունն արդարության պարգևն է
Երեց Քվենթին Լ. Քուք

36 Տիրոջ ճամապարհը
Երեց Սթենլի Գ. Էլլիս

39 Ավետարանը ողջ աշխարհին
Երեց Ջոն Բ. Դիքսոն

41 Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

45 Բաց մի թողեք ալիքի վրա լինելու հնարավորությունը
Երեց Ռասսել Մ. Նելսոն

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

48 Հաստատ կանգնեք սուրբ տեղերում
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

52 Քահանայության զորությունը պատանու մեջ
Երեց Թեդ Ռ. Քալիսթեր

55 Ծառայելու ձեր սրբազան պարտականությունը
Դեյվիդ Լ. Բեք

58 Չորս կոչում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

62 Մենք մեկ ենք
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

66 Եկեք, Աստծո որդիք
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

70 Աստծո լույսի հույսը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

77 Սա հրաշք է
Երեց Նիլ Լ. Անդերսեն

81 Բառերը, որ մենք խոսում ենք
Ռոզմարի Մ. Վիքսոմ

83 Ամուսնություն՝ նայիր և սովորիր
Երեց Լ. Ուիթնի Քլեյթոն

86 Օրենքին հնազանդությունն ազատություն է
Երեց Լ. Թոմ Փերի

89 Հնազանդությունը օրհնություններ է բերում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

93 «Հաւատո՛ւմ եմ, Տէր»
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

96 Քրիստոսի հետևորդները
Երեց Դալլին Հ. Օքս

99 Հայրը և Որդին
Երեց Քրիստոֆել Գոլդեն Կրուս.

102 Տուն՝կյանքի դպրոց
Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլա

104 Տիրոջ կողմից ընդունված լինել
Երեց Էրիկ Վ. Կոպիչկե

107 Սքանչելի առավոտներ
Երեց Բրյուս Դ. Փորթեր

109 Փրկագնում
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

113 Մինչև նոր հանդիպում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

115 Ձեր սուրբ տեղերը
Էնն Մ. Դիբ

118 Փրկելով մի աղջիկ՝ սերունդներ եք փրկում
Մերի Ն. Քուք

121 Մի շարժվեք
Էլեյն Ս. Դալտոն

125 Ձեր սքանչելի ճանապարհորդությունը դեպի տուն
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

72 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

130 Նրանք խոսեցին մեզ հետ. դարձնելով համաժողովը մեր կյանքի մասը

132 Համաժողովի պատմությունների ցուցիչ

133 Մեր ժամանակների ուսմունքները

133 Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

134 Եկեղեցու նորությունները

183-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏ, 6 ԱՊՐԻԼԻ, 2013, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք՝ Երեց Ռանդալ Ք. Բենեթ: Փակման աղոթք՝ Ջին Ա. Սթիվենս: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. "Redeemer of Israel," *Hymns,* no. 6; "In Hymns of Praise," *Hymns,* no. 75; "Hark, All Ye Nations!" *Hymns,* no. 264, arr. Wilberg; "Let Us All Press On," *Hymns,* no. 243; "Faith," *Children's Songbook,* 96, arr. Elliott, unpublished; "My Redeemer Lives," *Hymns,* no. 135, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿ, 6 ԱՊՐԻԼԻ, 2013, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացման աղոթք՝ Ռասսել Տ. Օսգութորփ: Փակման աղոթք՝ Ջ. Դեվն Քորնիշ: Երաժշտություն՝ Բրիգամ Յանգ Համալսարանի միացյալ երգչախումբ, խմբավարներ՝ Ռոնալդ Ստահելի և Ռոզալինդ Հալ, երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "Jesus, the Very Thought of Thee," *Hymns,* no. 141, arr. Staheli, pub. Jackman; "Did You Think to Pray?" *Hymns,* no. 140, arr. Johnson, pub. Johnson; "Rejoice, the Lord Is King!" *Hymns,* no. 66; "More Holiness Give Me," *Hymns,* no. 131, arr. Staheli, pub. Jackman:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈ, 6 ԱՊՐԻԼԻ, 2013, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք՝ Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ: Փակման աղոթք՝ Լարի Մ. Գիբսոն: Երաժշտություն՝ երիտասարդ ամուրիների քահանայության երգչախումբ Սոլթ Լեյք Սիթիից, Յուտա, խմբավար՝ Ջաստին Բիլս, երգեհոնահար՝ Քլեյ Քրիսչենսեն. "Arise, O God, and Shine," *Hymns,* no. 265, arr. Wilberg, pub. Oxford; "Nearer, My God, to Thee," *Hymns,* no. 100, arr. Bills, unpublished; "Hope of Israel," *Hymns,* no. 259; "Ye Elders of Israel," *Hymns,* no. 319, arr. Bills, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏ, 7 ԱՊՐԻԼԻ, 2013, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացման աղոթք՝ Երեց Սթիվեն Ի. Մնոու: Փակման աղոթք՝ Երեց Օ. Վինսենթ Հալեք: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիսչենսեն. "Go Forth with Faith," *Hymns,* no. 263; "Let Zion in Her Beauty Rise," *Hymns,* no. 41, arr. Kasen, pub. Jackman; "Come, Follow Me," *Hymns,* no. 116, arr. Wilberg, unpublished; "Guide Us, O Thou Great Jehovah," *Hymns,* no. 83; "Where Love Is," *Children's Songbook,* 138, arr. Cardon, unpublished; "Come, Come, Ye Saints," *Hymns,* no. 30, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿ, 7 ԱՊՐԻԼԻ, 2013, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք՝ Քերոլ Մ. Սթիվենս: Փակման աղոթք՝ Երեց Լարի Յ. Վիլսոն: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Լինդա Մարջեթս և Բոննի Գուդլիֆ. "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58, arr. Murphy, unpublished; "Tell Me the Stories of Jesus," *Children's Songbook,* 57, arr. Murphy, unpublished; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3; "Lord, Dismiss Us with Thy Blessing," *Hymns,* no. 163, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈ, 30 ՄԱՐՏԻ, 2013, ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Էլեյն Ս. Դալտոն: Բացման աղոթք՝ Էլլա Էդգլի: Փակման աղոթք՝ Էմիլի Մաքսվել: Երաժշտություն՝ երիտասարդ կանանց երգչախումբ Յուտայի Հայլենդի ցցերից, խմբավար՝ Մերիլի Վեբ, երգեհոնահար՝ Լինդա Մարջեթս. "High on the Mountain Top," *Hymns,* no. 5, with "Arise" descant; "In That Holy Place," DeFord, pub. DeFord; "More Holiness Give Me," *Hymns,* no. 131, arr. Goates, unpublished; "O Thou Rock of Our Salvation," *Hymns,* no. 258, arr. Kasen, pub. Jackman; "Let Zion in Her Beauty Rise," *Hymns,* no. 41, arr. Webb, unpublished:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Սովորաբար համաժողովից երկու ամիս անց աուդիոձայնագրությունները մատչելի են բաշխման կենտրոններում:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

ԿԱԶՄԻ ՎՐԱ

Առջևում. Լուսանկարը Լեսլի Նիլսոնի կողմից
Ետևում. Լուսանկարը Լեսլի Նիլսոնի կողմից

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Գերագույն համաժողովի լուսանկարները կատարվել են հետևյալ անձանց կողմից Սոլթ Լեյք Սիթիում՝. Քոդի Բել, Ռենդի Քոլիեր, Վեստոն Քոլտոն, Սքոթ Դեյվիս, Քրեյգ Դայմոնդ, Լոյդ Էլդրիջ, Մառա Ջենսոն, Քոլին Քինգ, Էշլի Լարսեն և Լեսլի Նիլսոն; Արիզոնայում, ԱՄՆ՝ Մինդի Սյու Էվանս; Ավտրալիայում՝ Քոլին Լիգերթվուդ; Բրազիլիայում՝ Թոմե Սիքյերա; Սոբրալում՝ Ֆրանսիսկո Ֆլավիո Դայաս Կարնեյրո; Կալիֆոռնիայում, ԱՄՆ՝ Ռոնդա Հարիս; Չիլիում՝ Օսկար Շմիթներ; Դանիայում՝ Էն-Մարի Լինդբերգ; Էկվադորում՝ Ջիմմի Փադիլլա Փին; Էլ Սալվադորում՝ Խոսե Փերիա; Նյու-Յորքում, ԱՄՆ՝ Մարք Վեյնբերգ; Շոտլանդիայում՝ Միլվիա Մերի Բրաուն; և Հարավային Աֆրիկայում՝ Ջերեմի Ռակոտոմամոնջի:

ՄԱՅԻՍ 2013 ՀԱՏ. 14 Հ. 2
ԼԻԱՀՈՆԱ 10785 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն
Խորհրդատուներ. Շեյն Մ. Բոուեն, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Քրիսթոֆել Գոլդեն Կրտս., Էնթոնի Դ. Փերքինս

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ
Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար, Լառեն Փորթեր Գանթ
Հրատարակչության օգնական. Մելիսա Զենտենո
Ստեղծագործական և խմբագրական կազմ. Սյուզան Բարթթ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Մինդի Ռեյ Ֆրիդվան, Գարի Հ. Գարֆ, Ջենիֆեր Գրեյս Ջոնս, Հիքարի Լոֆտուս, Մայքլ Ռ. Մորիս, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդենբերգ, Ջուլիա Վուդբերի

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Դիզայնի կազմ. Ջենեթ Էնդրյուս, Ֆեյ Փ. Անդրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Շայլդ, Քերի Լին Ս. Հերին, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն Սքոթ Մ. Մույ, Բրեդ Թիլր
Մտավոր սեփականության համակարգող. Քոլթեր Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակչության կազմ. Քոննի Բոութորփ Բրիջ, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Բրայըն Վ. Գիջի, Քեթլին Հովարդ, Դենիզ Քըրբի, Գիննի Ջ. Նիլսոն, Տի Փիլչեր, Գեյլ Թեյթ Ռաֆերթի
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սլովեներեն, սվահիլի, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
May 2013 Vol. 14 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

ԽՈՄՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Այրինգ, Հենրի Բ., 22, 62
Անդերսեն, Նիլ Լ., 77
Բալլարդ, Մ. Ռասսել, 18
Բեդնար, Դեյվիդ Ա., 41
Բեք, Դեյվիդ Լ., 55
Գոլդեն, Քրիսթոֆել, Կրտս., 99
Դալտոն, Էլեյն Ս., 12, 121
Դեյվիս, Դին Մ., 9
Դիբ, Էնն Մ., 115
Դիքսոն, Ջոն Բ., 39
Էլիս, Մթենլի Գ., 36
Կոպիչկե, Էրիկ Վ., 104
Հեյլս, Ռոբերտ Դ., 48
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 93
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 66, 89, 113
Նելսոն, Ռասսել Մ., 45
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 26, 58, 70, 125
Սքոթ, Ռիչարդ Գ., 29
Վիքսոմ, Ռոզմարի Մ., 81
Փաքեր, Բոյդ Ք., 6
Փերի, Լ. Թոմ, 86
Փորթեր, Բրյուս Դ., 107
Քալիսթեր, Թեդ Ռ., 52
Քարդոն, Քրեյգ Ա., 15
Քլեյթոն, Լ. Վիթնի, 83
Քուք, Մերի Ն., 118
Քուք, Քվենթին Լ., 32
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 109
Օքս, Դալլին Հ., 96
Ֆալաբելլա, Էնրիկե Ռ., 102

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ակտիվացում, 55
Աղոթք, 9, 113
Ամուսնություն, 83, 102
Աշակերտություն, 58
Ապաշխարություն, 15, 41, 83, 109
Առաջնորդության, 52
Աստվածային էություն, 12, 18, 58
Բարոյականություն, 6, 41, 121
Բժշկում, 58, 70
Եկեղեցու աճ, 39
Երախտագիտություն, 113
Երեխաներ, 81, 102
Երիտասարդ Կանայք, 12
Զոհաբերություն, 104
Ընտանեկան պատմություն, 118
Ընտանիք, 6, 18, 29, 55, 83, 102, 118
Ընտրություն, 86
Լսել, 81
Խաղաղություն, 29, 32
Ծառայություն, 22, 55, 58, 109
Հաղորդակցում, 81
Հաղորդություն, 9
Համեստություն, 83, 104
Հայտնություն, 52
Հայր Աստված, 36, 99
Հավատարմություն, 83
Հավատք, 83, 93
Հարգանք, 83
Հիսուս Քրիստոս, 22, 29, 48, 70, 89, 96, 99, 107, 109
Հնազանդություն, 48, 86, 89
Հույս, 70, 107
Զախորդություն, 12, 70, 107, 118
Ճշմարտություն, 89
Մահ, 118
Մահկանացու կյանք, 125
Մարգարեներ, 36
Միասնություն, 62
Միսիոներական աշխատանք, 4, 39, 45, 62, 66, 77
Մորմոնի Գիրք, 45
Նախաերկրային կյանք, 125
Նախապատրաստություն, 66
Ներում, 15
Ուխտեր, 104
Չափանիշներ, 48
Պատվիրաններ, 86, 89
Սեր, 66, 83, 125
Սուրբ Հոգի, 6, 115
Սուրբ գրություններ, 66, 102
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 9
Սրբություն, 115
Վերականգնում, 45
Վկայություն, 18, 66, 93
Վստահություն, 52
Տաճարներ, 4, 32, 121
Տուն, 29, 102
Փրկության ծրագիր, 41, 125
Քահանայություն, 18, 52, 55, 62
Քավություն, 12, 109, 121

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բարի գալուստ համաժողով

Ես կոչ եմ անում ձեզ լինել ուշադիր և ընկալունակ ուղերձների հանդեպ, որոնք մենք կլսենք: Թող որ մենք անենք դա, իմ աղոթքն է:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան ուրախ եմ ես ողջունելու ձեզ Եկեղեցու 183-րդ ամենամյա գերագույն համաժողովին:

Վերջին անգամ հանդիպելուց հետո հաջորդող վեց ամիսների ընթացքում ես հնարավորություն եմ ունեցել փոքր ինչ ճանապարհորդելու և հանդիպելու ձեզանից ոմանց հետ ձեր տարածքներում: Հոկտեմբերի գերագույն համաժողովից հետո ես ուղևորվեցի Գերմանիա, որտեղ պատիվ ունեցա հանդիպելու մեր անդամներին այդ երկրի տարբեր վայրերում, ինչպես նաև Ավստրիայի տարբեր մասերում:

Հոկտեմբերի վերջին ես նվիրագործեցի Քալգարի Ալբերտա Տաճարը Կանադայում՝ Երեց և Քույր Մ. Ռասսել Բալլարդների, Երեց և Քույր Քրեյգ Ք. Քրիսչենսենների, և Երեց և Քույր Վիլիամ Ռ. Վոքերների հետ: Նոյեմբերին ես վերանվիրագործեցի Բոյզ Այդահո Տաճարը: Ինձ հետ ճանապարհորդում և մասնակցում էին նվիրագործումներին Երեց և Քույր Դեյվիդ Ա. Բեդնարները, Երեց և Քույր Քրեյգ Ք. Քրիսչենսենները, և Երեց և Քույր Վիլիամ Ռ. Վոքերները:

Մշակութային տոնակատարությունները՝ կապված այս երկու նվիրագործումների հետ, աներևակայելի էին: Ես անձամբ ներկա չեմ գտնվել Քալգարիում մշակութային տոնակատարությանը, քանի որ Քույր Մոնսոնի 85-ամյակն էր, և ես զգում էի, որ պետք է նրա հետ լինեի: Ինչևէ, ես և նա պատիվ ենք ունեցել դիտելու տոնակատարությունը մեր հյուրասենյակում կաբելային հեռուստատեսությամբ, այնուհետև ես հաջորդ առավոտ մեկնել եմ Քալգարի՝ նվիրագործման համար: Բոյզում ավելի քան 9000 երիտասարդներ տաճարային տարածքից մասնակցել են մշակութային տոնակատարությանը: Երիտասարդների թիվն այնքան մեծ էր, որ տեղ չկար ընտանիքների անդամների համար այն դաշտում, որտեղ նրանք հանդես էին գալիս:

Միայն անցած ամիս Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Քույր Ուխդորֆի, Երեց և Քույր Ջեֆրի Ռ. Հոլլանդների և Երեց և Քույր Գրեգորի Ա. Շվիցերների ուղեկցությամբ, ուղևորվեց Թեգուսիգալպա, Հոնդուրաս, այնտեղ ավարտված մեր նոր տաճարը նվիրագործելու համար: Հրաշագեղ երիտասարդական տոնակատարություն տեղի ունեցավ նվիրագործմանը նախորդող երեկո:

Կան այլ տաճարներ ևս, որոնք հայտարարվել են և որոնք գտնվում են նախնական փուլի տարբեր ընթացքներում կամ կառուցման ընթացքում:

Այս առավոտ պատիվ ունեմ հայտարարելու երկու լրացուցիչ տաճարների մասին, որոնք գալիք ամիսներին և տարիներին

կկառուցվեն հետևյալ վայրերում. Սեղար Սիթի, Յուտա, և Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա: Եղբայրներ և քույրեր, տաճարների կառուցումը շարունակվում է առանց դադարի:

Ինչպես գիտեք, հոկտեմբերի գերագույն համաժողովին ես հայտարարեցի երիտասարդ տղամարդկանց և կանանց տարիքային փոփոխությունների մասին՝ լիաժամկետ միսիայում ծառայելու համար. երիտասարդ տղամարդիկ այժմ կարող են ծառայել 18 տարեկանից, իսկ կանայք՝ 19-ից:

Երիտասարդների արձագանքները ուշագրավ և ոգեշնչող էին: Ապրիլի 4-ի դրությամբ՝ երկու օր առաջ, մենք ունեինք 65634 լիաժամկետ ծառայող միսիոներ, և ավելի քան 20000, ովքեր ստացել են իրենց կանչը, սակայն դեռ չեն սկսել միսիոներական նախապատրաստումը միսիոների ուսուցման կենտրոնում, և ավելի քան 6000՝ իրենց եպիսկոպոսների և ցցերի նախագահների հետ հարցազրույցի փուլում: Մեր առջև անհրաժեշտություն ծագեց ստեղծել 58 նոր միսիաներ՝ միսիոներների ավելացված թվին հարմարվելու համար:

Միսիոներական այս բանակը պահելու համար, և քանի որ մեր միսիոներների մեծ մասը գալիս է համեստ պայմաններից, մենք կոչ ենք անում ձեզ, եթե կարող եք, առատորեն նվիրատվություն կատարել Եկեղեցու Միսիոներական Ընդհանուր Ֆոնդին:

Այժմ, եղբայրներ և քույրեր, մենք կլսենք ոգեշնչված ուղերձներ այսօրվա և վաղվա ընթացքում: Նրանք, ովքեր կդիմեն մեզ, աղոթքով խնդրել են, իմանալու համար այն, ինչ Տերը ցանկանում է, որ մենք լսենք այս ժամանակ:

Ես կոչ եմ անում ձեզ լինել ուշադիր և ընկալունակ ուղերձների հանդեպ, որոնք մենք կլսենք: Թող որ մենք անենք դա, իմ աղոթքն է, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Այս բաները ես գիտեմ

Այն ամենից, ինչ կարողացել, ուսուցանել և սովորել եմ, ամենաթանկ և սուրբ ճշմարտությունը, որ կարող եմ առաջարկել, իմ վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին:

1992 թվին ես 68 տարեկան էի, արդեն ինը տարի ծառայել էի որպես Տասներկուսի Օգնական և 22 տարի՝ որպես Տասներկուսի անդամ: Զգացի, որ պետք է սկսեմ գրել իմ «Անավարտ երգը»: Առաջին մասն այսպես է՝

Մի միտք եկավ անցյալ գիշեր,
Խորհրդաստ ու կարևոր:
Հոգնած էի այնքան, որ ես
Չկարողացա քուն մտնել:

Զբաղված ու ծանր օր էր,
Ճակատագրիս մասին էի խորհում
Ու այսպես մտածում.
Երբ ջահել էի, 68 տարեկան չէի,

Առանց կաղալու էի քայլում,
Ուսերս չէին ցավում:
Երկու անգամ էի մի տողը կարդում,
Եվ ապա անգիր կրկնում:

Կարողանում էի անվերջ աշխատել,
Առանց շունչ քաշելու:
Այն, ինչ հմտորեն էի անում,
Դժվարությամբ է այժմ տրվում:

Եթե տարիները ետ բերեի,
Եթե ընտրությունն իմը լիներ,
Տարիքը երիտասարդության հետ չէի փոխի,
Շատ բան կկորցնեի:

Գոհությամբ առաջ եմ գնում,
Թողնելով երիտասարդությունը ետևում:
Քանզի, ետ գնալով, կկորցնեմ մի բան՝
Հասկացողությունը իմ ձեռք բերած:

Տաս տարի անց, որոշեցի մի քանի տող էլ ավելացնել այդ տողերին.

Տասը տարին արագությամբ անցավ,
Դրանց հետ անցավ շատ ցավ:
Մետաղե ազդրը ջնջեց կաղությունս,
Քայլում եմ բավականին ուղիղ:

Մեկ այլ մետաղե թիթեղ մեջքս պահում է ձիգ,
Մի սարք է դա հրաշալի,
Օգնեց քողարկել հետևանքները պոլիոյի,
Միացել եմ կարծրավիզ սերնդին:

Ծերության նշաններն են երևում:
Այլևս դրանք չեն ջնջվում:
Ժամանակի հետ սաստկանում է
Իմ մոռացկոտությունը միայն:

Կհարցնեք՝ հիշո՞ւմ եմ ձեզ արդյոք:
Իհարկե, չեք փոխվել այնքան:
Մի տխրեք դուք երբեք,
Եթե ձեր անունը չհիշեմ:

Համաձայն եմ, որոշ բաներ եմ իմացել,
Որ չէի ուզի երբևէ իմանալ:
Տարիքն իր հետ անգին ճշմարտություններ է բերել,
Որի շնորհիվ հոգին է աճել:

Իսկ բոլոր օրհնություններից առավել,
Լավագույնն իմ կյանքում,
Ընկերակցությունն ու ապրանքն է,
Որ իմ կնոջից եմ ստանում:

Մեր բոլոր երեխաներն ամուսնացել են հաջող,
Իրենց ընտանիքներով,
Զավակներով, թոռներով,
Որքան արագ նրանք մեծացան:

Չեմ փոխել միտքս մեկ մազաչափ անգամ,
Երիտասարդությունս վերագտնելու համար:
Տարիքի հետ համբնթաց,
Գալիս է գիտելիքը ճշմարտության:

Կհարցնեք՝ «Ի՞նչ է լինելու ապագայում:
Ինչպիսի՞ն կլինի ճակատագիրն իմ»:
Անտրտունջ առաջ կգնամ:
Հարցրեք, երբ 88 տարեկան դառնամ:

Անցյալ տարի ավելացրեցի այս տողերը.

Սիա արդեն 88 տարեկան եմ:
Տարիներն արագ սլացան:
Քայլեցի, կաղացի, ձեռնափայտ բռնեցի,
Այժմ վարում եմ անվասայլակ:

Լինում է, որ հաճախ եմ նիրհում,
Բայց ինձ հետ է միշտ Քահանայությունը,
Թեպետ ֆիզիկական ուժից եմ զրկվել,
Հոգևոր մեծ ուժ եմ ձեռք բերել:

Ճամփորդել եմ ողջ աշխարհով,
Մղոններ միլիոնավոր,
Արբանյակի օգնությամբ
Զայնս հասնում է ամենուր:

Ամենայն վստահությամբ եմ ասում՝
Ճանաչում եմ Տիրոջը ու սիրում:

Կարող եմ հին մարգարեների
հետ վկայել,
Նրա սուրբ խոսքը քարոզել:

Գիտեմ, Գեթսեմանիում ինչ
է Նա զգացել,
Անհնար է անգամ պատկերացնել:
Գիտեմ, այդ ամենն արեց մեզ
համար,
Լավագույն Ընկերը մեր:

Գիտեմ, Նա կրկին կգա՝
Զորությամբ ու փառքով մեծ:
Գիտեմ, կտեսնեմ Նրան կրկին՝
Իմ կյանքի արշալույսին:

Նրա վիրավոր ոտքերի առաջ
ծնկի կգամ,
Լուսաշող Հոգին Նրա կտեսնեմ:
Դողդոջուն ձայնով կշշնջամ՝
«Իմ Տեր, իմ Աստված, ես գիտեմ»:[1]

Ես իրոք գիտեմ:

Մեր տան ետնամասի պատուհանները նայում են ծաղիկների փոքր պարտեզին և անտառին, որի կողքով փոքր առվակ է հոսում: Տան պատերից մեկը նայում է պարտեզին, որը խիտ պատված է անգլիական բաղեղով: Տարիների ընթացքում բաղեղի մեջ բույն էին դրել փոքր թռչունները՝ սերինոսները: Ճյուղերի մեջ հյուսված բույնն ապահով տեղ էր, որ պաշտպանում էր որսի դուրս եկած աղվեսներից, ջրամկներից և կատուներից:

Մի օր բաղեղի թփերում իրարանցում էր: Հուսակտուր ճիչերը լսելով, 8–10 սերինոսներ էին օգնության եկել մոտակա անտառից, որոնք միացել էին այդ ահազանգող ճիչերին: Շուտով տեսա, ինչն էր իրարանցման պատճառը: Օձը սողացել էր բաղեղից դուրս և կախվել էր պատուհանի դիմաց, և այնքան մոտ էր, որ ես դուրս քաշեցի նրան: Օձի մարմնի մեջտեղում երկու ուռած մաս կար, որն ապացույցն էր նրա, որ այդ գիշատիչը բնից երկու ծիտիկների էր հափշտակել: Նման բան մենք չէինք տեսել այդ տանն ապրելու 50 տարիների ընթացքում: Դա եզակի դեպք էր մեր կյանքում:

Մի քանի օր անց, կրկին իրարանցում էր, այս անգամ շան վազելու տեղը ծածկող թփերի մոտից: Մենք լսեցինք նույն ճիչերը և տեսանք հավաքված նույն հարևան սերինոսներին: Մենք ճանաչեցինք գիշատչին: Թոռնիկս մագլցեց վերև և դուրս քաշեց ևս մեկ օձ, որն ամուր բռնել էր արդեն սպանված մայր թռչունին:

Ինքս ինձ ասացի. «Ի՞նչ է կատարվում: Եդեմի պարտեզը կրկին հարձակման է ենթարկվում»:

Միտքս եկան մարգարեների կողմից տրվող զգուշացումները: Մենք միշտ չէ, որ պաշտպանված ենք հակառակորդի ազդեցությունից, անգամ մեր տան պատերի ներսում: Մենք պետք է պաշտպանենք մեր ձագուկներին:

Մենք ապրում ենք շատ վտանգավոր աշխարհում, որը սպառնում է այն ամենին, ինչը հոգևոր է: Ժամանակի և հավերժության մեջ հիմնական միավորը՝ ընտանիքը գտնվում է տեսանելի և անտեսանելի ուժերի հարձակման ներքո: Հակառակորդն ակտիվ է: Նրա նպատակն է՝ վնաս պատճառել: Նա հաջողության կհասնի, եթե կարողանա թուլացնել և կործանել ընտանիքը:

Մենք՝ Վերջին Օրերի Սրբերս, հասկանում ենք ընտանիքի մեծ կարևորությունը և ձգտում ապրել այնպես, որ հակառակորդը չսողոսկի մեր տուն: Մենք մեր երեխաների հետ միասին ապահով և անվտանգ ենք, երբ պատվում ենք մեր կապած ուխտերը, և ապրում ենք հնազանդության պարզ արարքներով, որ պահանջվում են Քրիստոսի հետևորդներից:

Եսայիան ասել է. «Արդարության գործը կլինի խաղաղություն, և արդարության արդյունքը հանգիստ ու ապահովություն հավիտյան»:[2]

Այդ խաղաղությունը նաև խոստացվել է հայտնություններում, որտեղ Տերը հայտարարում է. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա»:[3]

Քահանայության լիակատար զորությունը տրվել է՝ տունը և տան բնակիչներին պաշտպանելու նպատակով: Հայրը իշխանություն և պատասխանատվություն է կրում ուսուցանելու իր զավակներին, օրհնելու և ապահովելու նրանց ավետարանի արարողություններով և քահանայության անհրաժեշտ այլ պաշտպանությամբ: Նա պետք է սեր, հավատարմություն և հարգանք տածի մոր հանդեպ, որպեսզի

իրենց երեխաները տեսնեն այդ սերը:

Ես հասկացել եմ, որ հավատքը ոչ թե արտահայտություն կամ համոզմունք է, այլ իրական ուժ է: Արդարակյաց մոր հավատքով լի աղոթքներից առավել զորավոր բան չկա:

Սովորեք և ձեր ընտանիքներին ուսուցանեք Սուրբ Հոգու պարգևի և Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Ձեր տան պատերի ներսում եք կատարում մեծագույն հավերժական աշխատանքը: Մեծագույն հավերժական աշխատանքը, որ երբևէ կկատարեք, կլինի ձեր տան պատերի ներսում:

Մենք գիտենք, որ երկնային ծնողների հոգևոր զավակներն ենք, և այստեղ՝ երկրի վրա ենք, որպեսզի մեր մահկանացու մարմինը ստանանք և փորձվենք: Մենք՝ մահկանացու մարմին ունեցողներս, իշխանություն ունենք մարմին չունեցող էակների վրա:[4] Մենք ազատ ենք ընտրելու այն, ինչ ուզում ենք, սակայն ընտրելով մեր արարքները, մենք ազատ չենք ընտրելու հետևանքները: Դրանք չենք կարող փոխել:

Սուրբ գրություններում ազատ կամքը բնորոշվում է որպես «բարոյական ազատ կամք», ինչը նշանակում է, որ կարող ենք ընտրել բարու և չարի միջև: Հակառակորդը փորձում է գայթակղել մեզ, որպեսզի չարաշահենք մեր բարոյական ազատ կամքը:

Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ. «Որ ամեն մարդ կարողանա գործել վարդապետությամբ և սկզբունքով, ինչ վերաբերում է ապագային, համաձայն բարոյական կամքի ազատության, որը տվել եմ նրան, որպեսզի դատաստանի օրն ամեն մարդ պատասխան տա իր իսկ մեղքերի համար»:[5]

Ալման ուսուցանել է, որ «Տերը չի կարող նայել մեղքի վրա նվազագույն»:[6] Սա հասկանալու համար մենք պետք է մեղքը բաժանենք մեղավորից:

Օրինակ, երբ շնության մեջ բռնված մի կնոջ բերեցին Փրկչի առաջ, Նա բաց թողեց նրան, ասելով հինգ բառ. «Գնա և այսուհետև մեղք մի գործիր»:[7] Դա է Նրա ծառայության ոգին:

Հանդուրժողականությունն արժանիք է, սակայն բոլոր արժանիքների նման, չափն անցնելու դեպքում, այն վերածվում է չարիքի: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չընկնենք «հանդուրժողականության թակարդը»: Երկրի օրենքների թուլացման հետևանքով անբարոյական արարքները հանդուրժող ամենաթողությունը չի նվազեցնում հոգևոր լուրջ հետևանքները, որոնք ողջախոհության Աստծո օրենքի խախտման արդյունք են:

Բոլորը ծնվում են Քրիստոսի Լույսով, որն առաջնորդող ուժ է և օգնում է յուրաքանչյուր անհատի տարբերել ճիշտը սխալից: Մահկանացու կյանքի փորձության մի մասն է այն, թե ինչպես ենք վարվում այդ լույսի հետ և ինչպես ենք արձագանքում այդ հուշումներին՝ արդարակյաց կյանքով ապրելու համար:

«Քանզի ահա, Քրիստոսի Հոգին տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին տարբերել չարից. ուստի, ես ցույց եմ տալիս ձեզ դատելու ուղին. քանզի ամեն բան, որ հրավիրում է անել բարիք, և համոզում է հավատալ Քրիստոսին, առաջանում է Քրիստոսի զորությամբ ու պարգևով. ուստի, դուք կարող եք կատարյալ իմացությամբ տարբերել՝ դա Աստծուց է»:[8]

Յուրաքանչյուրս պետք է լինի այնպիսի վիճակում, որ արձագանքի ոգեշնչմանը և Սուրբ Հոգու հուշումներին: Տերը մաքուր բանականություն է լցնում մեր միտք՝ հուշելով, առաջնորդելով, ուսուցանելով և զգուշացնելով մեզ: Աստծո յուրաքանչյուր որդի կամ դուստր կարող է իմանալ տվյալ պահին իրեն անհրաժեշտ բաները: Սովորեք ստանալ և գործել ոգեշնչմամբ ու հայտնությամբ:

Այն ամենից, ինչ կարդացել, ուսուցանել և սովորել եմ, ամենաթանկ և սուրբ ճշմարտությունը, որ կարող եմ առաջարկել, իմ վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին: Նա ապրում է: Ես գիտեմ, որ Նա ապրում է: Ես Նրա վկան եմ: Եվ Նրա մասին ես կարող եմ վկայել: Նա մեր Փրկիչն է, մեր Քավիչը: Սրանում ես համոզված եմ: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Boyd K. Packer, “Unfinished Composition,” 2012.
2. Եսայիա 32.17:
3. Վարդապետություն և Ուխտեր 38.30:
4. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 211:
5. Վարդապետություն և Ուխտեր 101.78:
6. Ալմա 45.16:
7. Հովհաննես 8.11:
8. Մորոնի 7.16:

Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս
Նախագահող Եպիսկոպոսության
Երկրորդ Խորհրդական

Ամուր հիմք

Եկեք ընդունենք Իր մուտ գալու Փրկչի հրավերը: Եկեք կառուցենք մեր կյանքը ապահով և ամուր հիմքի վրա:

1989թ. հոկտեմբերի 17-ին աշխատանքից տուն վերադառնալիս մեքենաս հասավ լուսաֆորին Մարքեթ և Բիլ փողոցների խաչմերուկին Սան-Ֆրանցիսկոյում, Կալիֆոռնիա: Այդ պահին ես զգացի, որ մեքենան ցնցվեց, և մտածեցի. «Կարծես, անվադողը ծակվեց»: Երբ մեքենան շարունակեց ցնցվել, շատ մոտ տեսա մի ավտոբուս և մտածեցի. «Այս ավտոբուսը հենց նոր հարվածեց ինձ»: Ապա մեքենան սկսեց ցնցվել ավելի ու ավելի ուժեղ, և ես մտածեցի. «Երևի, բոլոր չորս անվադողերն են ծակվել»: Բայց դա ոչ անվադողերն էին, ոչ ավտոբուսը, այլ հզոր մի երկրաշարժ: Երբ կանգնեցի կարմիր լույսի տակ, մայթի վրայով, կարծես, ծովի ալիքներ էին անցնում ամբողջ Մարքեթ փողոցով: Իմ առջև գրասենյակային մի բարձրահարկ շենք այս ու այն կողմ էր ճոճվում, ձախ կողմում գտնվող հին շենքից աղյուսները սկսեցին ներքև թափվել, իսկ երկիրը շարունակվում էր ցնցվել:

Լոմա Պրիետա երկրաշարժը ցնցեց Սան-Ֆանցիսկոյի Ծոցի տարածքը այդ օրը ժամը 17:04-ին և թողեց 12000 անօթևան:

Երկրաշարժը լուրջ վնասներ հասցրեց Սան-Ֆրանցիսկոյի Ծոցի տարածքում, հատկապես անկայուն շերտեր ունեցող Սան-Ֆրանցիսկո և Օքլենդ քաղաքներում: Սան-Ֆրանցիսկոյի Մարինա շրջանը կառուցվել է ստորգետնյա ջրերի բարձր տոկոս պարունակող ավազի, ցեխի, քանդված նյութերի խառնուրդի վրա: Օգտագործվել էին նաև փլատակների մնացորդները Սան-Ֆրանցիսկոյի Ծոցից՝ 1906թ. երկրաշարժից հետո: [1]

1915-ին բազմաբնակարանային շենքեր մնացին փլատակների տակ: 1989թ. երկրաշարժի ժամանակ ցեխի, ավազի և փլատակների

ջրային խառնուրդը շենքերի փլուզման պատճառ դարձավ: Շենքերը կառուցված չէին ամուր հիմքի վրա:

Լոմա Պրիետայի երկրաշարժը ազդեց շատերի, այդ թվում և իմ կյանքի վրա: Խորհելով այդ օրվա իրադարձությունների մասին, մտքում և սրտում ես էլ ավելի եմ համոզվում, որ կյանքի փորձություններին, երկրաշարժերին և աղետներին դիմակայելու համար մենք պետք է կառուցենք ամուր հիմքի վրա:

Նեփիացի մարգարե Հելամանը հստակ պարզությամբ նկարագրել է մեր կյանքը կայուն հիմքի՝ Հիսուսի Քրիստոսի հիմքի վրա կառուցելու կարևորությունը. «Եվ, այժմ, իմ որդիներ, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12):

Ժամանակակից տաճարների կառուցման ժամանակ մեծ ուշադրություն է հատկացվում նախագծման և ինժեներական աշխատանքներին և շինանյութին: Տեղանքում, որտեղ պետք է կառուցվի տաճարը, տարվում է հողի մանրաստույգ զննման և երկրաբանական աշխատանքներ: Հաշվի են առնվում տարածաշրջանի քամու, անձրևի և եղանակի փոփոխությունները, որպեսզի կառուցված տաճարը կարողանա դիմանալ ոչ միայն փոթորիկներին և տարածքին հատուկ կլիմային, այլ նախագծված և տեղակայված լինի այնպես, որ դիմակայի անսպասելի երկրաշարժերի, հողմերի, ջրհեղեղների և բնական այլ աղետների, որոնք կարող են տեղի ունենալ: Շատ տաճարներում բետոնե կամ պողպատե սյուներ են տեղադրվում խորը հողի

մեջ՝ տաճարի հիմքը ամուր պահելու նպատակով:

Ինչպես մեր ժամանակների նախագծողները և շինարարները, մեր սիրող և բարի Երկնային Հայրը և Նրա Որդին պատրաստել են ծրագրեր, գործիքներ և այլ միջոցներ են տվել մեր օգտագործման համար, որպեսզի մենք կառուցենք և ամրացնենք մեր կյանքը ամուր և անսասան հիմքի վրա: Այդ ծրագիրը փրկության ծրագիրն է, երջանկության մեծ ծրագիրը: Այդ ծրագիրը մեր առջև է բացում սկզբի և վերջի հստակ պատկերը և կարևոր քայլերը, ներառյալ՝ արարողությունները, որոնք անհրաժեշտ են Հոր զավակներից յուրաքանչյուրին Նրա ներկայություն վերադառնալու և Նրա հետ հավերժ ապրելու համար:

Հավատքը, ապաշխարությունը, մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևը և մինչև վերջ համբերելը կյանքի «նախագծի» մասերն են: Դրանք օգնում են պատրաստել շինանյութ, որն ամուր կպահի մեր կյանքը Քրիստոսի Քավության հիմքի վրա: Այն օգնում է ձևավորել և ամրացնել մարդու կյանքի պահող կառուցվածքները: Եվ, ինչպես տաճարի նախագիծն ունի «հատկորոշիչներ», որոնք մանրամասն ցուցումներ են տալիս, թե ինչպես պետք է պատրաստել և միացնել հիմնական բաղադրիչները, աղոթքը, սուրբ գրությունների ընթերցանությունը, հաղորդության ընդունումը և քահանայության հիմնական արարողությունների ստացումը դառնում են այն «հատկորոշիչները», որոնք օգնում են կառուցել և իրար միացնել կյանքի բաղադրիչները:

Այս հատկորոշիչների հավասարակշռված կիրառումը կենսական նշանակություն ունի: Օրինակ, բետոն պատրաստելու համար հարկավոր է խառնել ավազի, մանրախճի, ցեմենտի և ջրի ճշգրիտ քանակություն՝ առավելագույն ամրություն ստանալու համար: Այս բաղադրիչների սխալ քանակի օգտագործումը կամ բացակայությունը բետոնը թույլ են դարձնում, թույլ չտալով կատարել իր կարևոր ֆունկցիան:

Նմանապես, եթե մենք պատշաճ հավասարակշռություն չենք կիրառում մեր կյանքում՝ ամենօրյա աղոթքների, սուրբ գրություններից սնվելու, հաղորդությունից ամեն շաբաթ ուժ ստանալու և քահանայության արարողություններին, ինչպես օրինակ՝ տաճարային ծեսերին, հաճախակի մասնակցելու հարցում, մենք նույնպես հայտնվում ենք մեր հոգևոր կառուցվածքը թուլացնելու վտանգի առաջ:

Եփեսացիներին ուղղված իր նամակում Պողոսի խոսքերը կարելի է կիրառել մեր բնավորության և հոգու հավասարակշռված զարգացման կարիքի դեպքում. «Որ նորանում բոլոր շինուածքը միասին յարմարուած աճում է, որ լինի սուրբ տաճար Տէրով» (Եփեսացիս 2.21):

Աղոթքը առավել հիմնարար և կարևոր շինարարական հիմնանյութերից մեկն է՝ մեր հավատքի և բնավորության կառուցման համար: Աղոթքի միջոցով մենք կարող ենք արտահայտել մեր երախտագիտությունը, սերը և նվիրումը Աստծուն: Աղոթքի միջոցով մենք կարող ենք ենթարկել մեր կամքը Նրան և ստանալ ուժ՝ մեր կյանքը Նրա ուսմունքների հետ համաձայնեցնելու համար: Աղոթքը ուղի է, որով մենք կարող ենք քայլել՝ փնտրելով մեր կյանքում Նրա ազդեցությունը, անգամ հայտնությունը:

Ալման ուսուցանել է. «Խորհուրդ արա Տիրոջ հետ քո բոլոր գործերում, և նա ուղղություն ցույց կտա քեզ բարու համար. այո, երբ դու պառկես գիշերը, պառկիր ի Տերը, որ նա կարողանա հսկել քեզ, քնիդ մեջ. և երբ դու վեր կենաս առավոտյան, թող քո սիրտը լի լինի գոհությամբ առ Աստված. և եթե դու անես այս բաները, դու պիտի բարձրացվես վերջին օրը» (Ալմա 37.37):

Մեր մտքերը, զգացմունքները և ցանկությունները Աստծո հետ կիսելը անկեղծ և սրտանց աղոթքի միջոցով պետք է յուրաքանչյուրիս համար դառնա նույնքան կարևոր և բնական, որքան շնչելը և ուտելը:

Ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրությունը նույնպես կամրացնի մեր հավատքը և բնավորությունը: Ճիշտ ինչպես մենք կարիք ունենք ուտելիքի մեր ֆիզիկական մարմինները սնուցելու համար, մեր հոգիները կսնուցվեն և կամրանան, եթե մենք սնվենք Քրիստոսի խոսքերով, ինչպես դրանք պարունակվում են մարգարեների գրվածքներում: Նեփին ուսուցանել է. «Մնվեք Քրիստոսի խոսքերով. քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.3):

Թեև սուրբ գրությունները կարդալը լավ է, միայն կարդալը բավական չէ Փրկչի ուսմունքների լիարժեք շունչը և խորությունն ըմբռնելու համար: Քննելը, խորհելը և կիրառելը Քրիստոսի խոսքերը,

ինչպես ուսուցանվում են սուրբ գրություններում, իմաստություն և գիտելիք կբերեն մեր մահկանացու հասկացողությունից դուրս: Սա կամրացնի մեր պարտավորվածությունը և հոգևոր ուժ կտա բոլոր իրավիճակներում մեր լավագույնն անելու համար:

Առավել կարևոր քայլերից մեկը, որոնցով մենք կարող ենք ամրացնել մեր կյանքը և հաստատուն ամրացված մնանք Փրկչի հիմքին, դա ամեն շաբաթ արժանիորեն հաղորդությունն ընդունելն է: Հաղորդության արարողությունը Եկեղեցու յուրաքանչյուր անդամի հնարավորություն է տալիս նախապես խորհել իր կյանքի մասին, մտածել այն գործողությունների կամ գործողություններից զերծ մնալու մասին, որոնք կտանեն դեպի ապաշխարություն, և ճաշակել հացը և ջուրը որպես սուրբ խորհրդանիշեր՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մարմնի և արյան, որպես Նրա Քավության վկայություն: Անկեղծությամբ և խոնարհությամբ այն ընդունելու դեպքում, մենք թարմացնում ենք հավերժական ուխտերը, մաքրվում և սրբագործվում ենք, և ստանում ենք խոստումը, որ միշտ կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Հոգին գործում է որպես սոսինձ, կապող նյութ, որը ոչ միայն սրբագործում, այլ նաև մեր հիշողություն է բերում բոլոր բաները և կրկին ու կրկին վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Հաղորդությունն արժանիորեն ընդունելը ամրացնում է մեր անձնական կապը հիմնաքարի՝ Հիսուս Քրիստոսի հետ:

Իր ծառայության ընթացքում Փրկիչը սիրով և հստակությամբ ուսուցանում էր վարդապետությունները, սկզբունքները և անհրաժեշտ գործողությունները, որոնք կարող են պահպանել մեր կյանքը և ամրացնել մեր բնավորությունը: Լեռան քարոզի վերջում Նա ասաց.

«Հետևաբար, ով որ լսում է իմ այս խոսքերը և կատարում դրանք, ես կնմանեցնեմ նրան մի իմաստուն մարդու, որն իր տունը կառուցեց վեմի վրա,

Եվ անձրևը տեղաց, և ջրհեղեղները եկան, և քամիները փչեցին ու զարկեցին այդ տանը. և այն չընկավ, քանզի վեմի վրա էր կառուցված:

Եվ ամեն մեկը, որ լսի իմ այս խոսքերը և չկատարի դրանք, կնմանեցվի մի հիմար մարդու, որն իր տունը կառուցեց ավազի վրա,

Եվ անձրևը տեղաց, և ջրհեղեղները եկան, և քամիները փչեցին ու զարկեցին այդ տանը. և այն ընկավ, և մեծ էր նրա անկումը» (3 Նեփի 14.24–27; տես նաև Մատթեոս 7.24–27):

Եղբայրներ և քույրեր, մեզանից ոչ մեկը գիտակցաբար չի կառուցի իր տունը, աշխատավայրը, երկրպագության սուրբ տները ավազի, փլատակների վրա՝ առանց պատշաճ նախագծի և նյութերի: Եկեք ընդունենք Իր մոտ գալու Փրկչի հրավերը: Եկեք կառուցենք մեր կյանքը ապահով և ամուր հիմքի վրա:

Ես խոնարհաբար վկայում եմ, որ ամրացնելով մեր կյանքը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության խարիսխի օգնությամբ և խստորեն հետևելով մեր երջանկության համար Նրա ծրագրին, ներառյալ՝ ամենօրյա աղոթքի, սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության և հաղորդությունը ամեն շաբաթ ընդունելու սովորույթներին, մենք կուժեղանանք, մենք իրական անձնական աճ և մշտական դարձ կապրենք, մենք ավելի լավ պատրաստված կլինենք հաջողությամբ դիմակայելու կյանքի փոթորիկներին և աղետներին, մենք կունենանք խոստացված ուրախությունը և երջանկությունը և վստահություն ձեռք կբերենք, որ մեր կյանքը կառուցված է ամուր հիմքի վրա՝ հիմքի, որն երբեք չի քանդվի: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. Տես “1989 Loma Prieta Earthquake,” wikipedia.org/wiki/1989_Loma_Prieta_earthquake:

Էլեյն Ս. Դալտոն
Երիտասարդ Կանանց վերջերս ազատված գերագույն նախագահ

Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք

Որպես Աստծո դուստրեր յուրաքանչյուրս յուրահատուկ և տարբեր ենք մեր հանգամանքներով և փորձով:

Ամեն շաբաթ ողջ աշխարհում երիտասարդ կանայք կրկնում են Երիտասարդ Կանանց թեման. Որ լեզվով էլ դա լինի, ես ամեն անգամ լսում եմ այս խոսքերը. «Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք, ով սիրում է մեզ, և մենք սիրում ենք Նրան»:[1] Հոգին հաստատում է իմ հոգուն, որ դրանք ճշմարիտ են: Դա ոչ միայն մեր ինքնության հաստատումն է՝ թե ով ենք մենք, այլ նաև գիտելիք այն մասին, թե ումն ենք մենք: Մենք վեհացած էակի դուստրեր ենք:

Ամեն երկրում և ամեն մայրցամաքում ես հանդիպում եմ ինքնավստահ տպավորիչ երիտասարդ կանանց, լցված լույսով, կատարելագործված դժվար աշխատանքով և փորձություններով, ովքեր կրում են մաքուր և պարզ հավատք: Նրանք առաքինի են: Նրանք ուխտեր պահողներ են, ովքեր «կանգնում են որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»:[2] Նրանք գիտեն, թե ով են, և որ նշանակալի դեր ունեն Աստծո արքայությունը կառուցելու գործում:

Երբ ես քոլեջում էի, ես ԲՅՀ միջազգային ժողովրդական պարողների անդամ էի: Մի ամառ մեր խմբին հատուկ պատիվ էր հասել շրջագայության մեկնել Եվրոպայի միսիաներով: Դա ինձ համար դժվար ամառ էր, որովհետև մի քանի ամիս առաջ հայրս հանկարծամահ էր եղել: Երբ մենք Շոտլանդիայում էինք, ես հատկապես միայնակ էի զգում և հուսահատված էի: Այդ երեկո մենք պարեցինք ժողովատանը, իսկ ելույթից հետո զնացինք հարևանությամբ գտնվող միսիայի տուն: Քայլելով դեպի տուն ես տեսա մի քար, որը դրված էր լավ խնամված այգում՝ ցանկապատի մուտքի մոտ: Քարի վրա գրված էր. «Ինչ էլ որ լինես, քո մասը լավ կատարիր»: Այդ պահին այդ բառերը խորապես թափանցեցին սրտիս մեջ և ես զգացի, որ երկինքը ինձ ուղերձ հղեց: Ես հասկացա, որ սիրող Երկնային Հայրը ճանաչում է ինձ: Ես զգացի, որ միայնակ չէի: Ես կանգնած էի այդ այգում՝ արցունքները աչքերիս: «Ինչ էլ որ լինես, քո մասը լավ կատարիր»: Այս պարզ նախադասությունը թարմացրեց իմ մտահայացքն այն մասին, որ Երկնային Հայրը ճանաչում էր ինձ և ծրագիր ուներ իմ կյանքի համար, և հոգին, որ ես զգացի, օգնեց ինձ հասկանալ, որ իմ մասը կարևոր էր:

Ավելի ուշ ես իմացա, որ այդ ասացվածքը ներշնչել է մարգարե Դեյվիդ Օ. Մակքեյին, երբ նա ծառայում էր որպես երիտասարդ միսիոներ Շոտլանդիայում: Նա տեսել էր այն մի շենքի քարի վրա՝ իր կյանքի և միսիայի հուսահատ ժամանակ, և այդ խոսքերը քաջալերել էին նրան: Տարիներ անց, երբ շենքը քանդեցին, նա կարողացավ պայմանավորվել և վերցնել քարը, տեղադրելով այն միսիայի տան այգում:[3]

Որպես Աստծո դուստրեր յուրաքանչյուրս յուրահատուկ և տարբեր ենք մեր հանգամանքներով և

Սիդնեյ, Ավստրալիա

փորձով: Ինչևէ, մեր մասը կարևոր է, որովհետև *մենք* կարևոր ենք: Մյուսներին սնուցելու, ուսուցանելու և նրանց համար հոգալու մեր առօրյա ներդրումը կարող է թվալ ձանձրալի, աննշան, դժվար, անգամ՝ նվաստացնող, սակայն, եթե մենք հիշենք Երիտասարդ Կանանց թեմայի առաջին տողը - Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք, ով սիրում է մեզ - դա ամբողջովին կփոխի մեր վերաբերմունքը և մեր հարաբերությունները:

Վերջերս իմ հրաշալի 92-ամյա մայրս մահացավ: Նա հեռացավ մահկանացու այս կյանքից այնպես, ինչպես ապրեց՝ հանգիստ: Նրա կյանքը չանցավ այնպես, ինչպես նա ծրագրել էր: Նրա ամուսինը, իմ հայրը, մահացավ 45 տարեկանում, թողնելով նրան երեք երեխաների՝ իմ և իմ երկու եղբայրների հետ: Նա 47 տարի ապրեց որպես այրի: Նա պահում էր մեր ընտանիքը, ցերեկը ուսուցանելով դպրոցում, իսկ երեկոյան դաշնամուրի դասեր տալով: Նա խնամում էր իր տարեց հորը՝ իմ պապիկին, ով ապրում էր մեր հարևանությամբ: Նա ապահովեց յուրաքանչյուրիս քոլեջի կրթությամբ: Նա պնդում էր, որ մենք դառնայինք «ներդրողներ»: Եվ նա երբեք չէր բողոքում: Նա պահում էր իր ուխտերը և դրա արդյունքում երկնքի զորությունները օրհնում էին մեր տունը և հրաշքներ ուղարկում: Նա ապավինում էր աղոթքին, քահանայությանը և ուխտերի խոստումներին: Նա հավատարիմ էր Տիրոջն իր ծառայության մեջ: Նրա հաստատուն նվիրումը կայունացնում էր մեզ՝ նրա զավակներին: Նա հաճախ կրկնում էր մեզ այս սուրբ գրությունը. «Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք»:[4] Դա նրա կարգախոսն էր, և նա գիտեր, որ դա ճիշտ էր: Նա հասկանում էր, թե ինչ էր նշանակում լինել ուխտ պահող: Նա երբեք ճանաչում չի ստացել աշխարհի կողմից: Նա չէր ձգտում դրան: Նա հասկանում էր, թե ով էր և ումն էր՝ Աստծո դուստրը: Իսկապես, մեր մոր մասին կարելի է ասել, որ նա լավ կատարեց իր մասը:

Կանանց և մայրերի մասին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին մի առիթով ասել է.

«Մենք երբեք չպետք է մոռանանք կանանց ուժի մասին: . . . Մայրերն են, որ առավել ուղղակիորեն ազդում են իրենց երեխաների կյանքի վրա: . . . Մայրերն են, որ մեծացնում են նրանց և դաստիարակում Տիրոջ ուղիներով: Նրանց ազդեցությունը գերիշխող է: . . .

Նրանք են կյանքի արարիչները: Նրանք են երեխաներին սնուցողները: Նրանք են երիտասարդ կանանց ուսուցիչները: Նրանք են մեր անբաժանելի ընկերակիցները: Նրանք են մեր գործընկերները Աստծո արքայության կառուցման գործում: Որքան մեծ է նրանց դերը, որքան հրաշալի է նրանց ներդրումը»:[5]

Ինչպե՞ս կարող է մայրը կամ հայրը սերմանել իր դստեր մեջ այն ազնվազարմ և հավերժական ճշմարտությունը, որ նա Աստծո դուստրն է: Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել նրանց քայլ անել աշխարհից դուրս և ավելի լիարժեք մուտք գործել Աստծո արքայություն:

Բարոյապես անզգայացած աշխարհում երիտասարդ կանայք կարիք ունեն կանանց և տղամարդկանց, ովքեր կանգնում են «որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»: Երբեք նախկինում սա չի եղել այնքան կարևոր, որքան այսօր: Երիտասարդ կանայք կարիք ունեն մայրերի, կարիք ունեն ուսուցիչների, ովքեր կմարմնավորեն առաքինի կանացիությունը: Մայրեր, ձեր դստեր հետ ձեր հարաբերությունները մեծագույն կարևորություն ունի, ինչպեսև ձեր օրինակը: Այն, թե ինչպես եք դուք սիրում և պատվում նրա հորը, նրա քահանայությունը և նրա

աստվածային դերը, կարտացոլվի և, մի գուցե, կուժեղացվի ձեր դստեր վերաբերմունքի և պահվածքի մեջ:

Ո՞րն է այդ մասը, որը մենք պետք է «լավ կատարենք»: Ընտանիքի մասին հայտարարության մեջ հստակ գրված է.

«Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: . . .

Մենք զգուշացնում ենք, որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, բռնություն են գործադրում իրենց կանանց, ամուսինների կամ երեխաների հանդեպ, կամ թերանում են ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև»:[6]

Մորմոնի ժամանակ՝ քայքայվող հասարակության մեջ, նա տրտնջում էր, որ կանայք կողոպտվում էին. Նրանցից խլում էին ամենաթանկ արժեքը՝ իրենք առաքինությունը և մաքրաբարոյությունը:[7]

Կրկին, ես կոչ եմ անում վերադառնալ առաքինությանը: Առաքինությունը Աստծո դուստրերի ուժն ու զորությունն է: Ինչի՞ն նման կլիներ աշխարհը, եթե առաքինությունը՝ բարոյականության բարձր չափանիշներին համաձայն մտքի և գործի սովորույթները, ներառյալ մաքրաբարոյությունը,[8] կրկին կարևորվեին մեր հասարակության մեջ որպես բարձրագույն արժեք ունեցող: Եթե անբարոյականությունը, պոռնոգրաֆիան և բռնությունը նվազեն, կլինե՞ն արդյոք ավելի քիչ թվով քանդված ամուսնություններ, կոտրված կյանքեր և փշրված սրտեր: Կարո՞ղ են լրատվամիջոցները ազնվացնել և զորացնել, ոչ թե քննադատել և նսեմացնել Աստծո

թանկարժեք դուստրերին: Եթե ողջ մարդկությունը հասկանա այս հայտարարության կարևորությունը՝ «Մենք մեր Երկնային Հոր դուստրերն են», ինչպե՞ս կվերաբերվեն կանանց:

Մի քանի տարի առաջ, երբ Համաժողովների այս Կենտրոնի կառուցումը մոտենում էր ավարտին, ես մտա այս սուրբ շինությունը՝ պատշգամբի հարկում, կարծր գլխարկով և անվտանգության ակնոցներով, պատրաստվելով փոշեկուլով մաքրել գորգը, որի տեղադրմանը օգնել էր ամուսինս: Բեմահարթակի տեղում կար մի բեռնատար, որը տեղափոխում էր աղբը, և փոշու շերտը այս շենքում շատ հաստ էր: Ժամանակի ընթացքում այն նստեց նոր գորգի վրա: Իմ մասը փոշեկուլով մաքրելն էր: Եվ ես մաքրում, մաքրում և մաքրում էի: Երեք օր անց, իմ փոքր փոշեկուլը վառվեց:

Ցերեկը՝ այս սքանչելի շենքում առաջին զերագույն համաժողովից առաջ ամուսինս կանչեց ինձ: Նա տեղադրում էր գորգի վերջին կտորը այս պատմական ամբիոնի տակ:

Նա ասաց. «Ի՞նչ սուրբ գրություն գրեմ այս գորգի ետևում»:

Եվ ես ասացի. «Մոսիա 18.9. «Կանգնեք որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»»:

Ծայրահեղ դժվար աշխարհում այդպես են վարվում այս Եկեղեցու երիտասարդ կանայք և բոլոր կանայք: Նրանք փոխում են դեպի լավը: Նրանք առաքինի և օրինակելի են, խելացի և արդյունավետ: Նրանք տարբերություն են մտցնում, որովհետև տարբեր *են*: Նրանք լավ են կատարում իրենց մասը:

Տարիներ առաջ, երբ ես փոշեկուլով մաքրում էի այդ գորգը, ձգտելով լավ կատարել իմ փոքր մասը, չէի մտածում, որ մի օր իմ ոտքերով կկանգնեմ այս ամբիոնի գորգին:

Այսօր, որպես Աստծո դուստր, ես կանգնած եմ որպես վկա, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նա մեր Քավիչն է: Նրա անսահման, քավող զոհաբերության միջոցով է, որ ես մի օր կվերադառնամ և կապրեմ Նրա հետ՝ կայացած, մաքուր և կնքված հավերժական ընտանիքով: Ես մշտապես պետք է փառավորեմ Նրան՝ կին և մայր լինելու պատվի համար: Ես վկայում եմ, որ մենք առաջնորդվում ենք Աստծո մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կողմից, և ես ես շնորհակալ եմ արդարակյաց տղամարդկանց համար, որոնց քահանայության զորությունը օրհնում է իմ կյանքը: Եվ ես մշտապես շնորհակալ պետք է լինեմ այն ամրության համար, որ ստանում եմ Փրկչի անսահման Քավության ամենակարող զորության միջոցով, մինչ շարունակում եմ ձգտել «լավ կատարել իմ մասը»: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Երիտասարդ Կանանց Անձնական Զարգացում* (գրքույկ, 2009), 3:
2. Մոսիա 18.9:
3. Տես Matthew O. Richardson, "'What E'er Thou Art, Act Well Thy Part': John Allan's Albany Crescent Stone," *Journal of Mormon History,* vol. 33 (Fall 2007), 31–61; Francis M. Gibbons, *David O. McKay: Apostle to the World, Prophet of God* (1986), 45:
4. Վարդապետություն և Ուխտեր 82.10:
5. Gordon B. Hinckley, "Standing Strong and Immovable," *Worldwide Leadership Training Meeting,* Jan. 10, 2004, 21.
6. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
7. Տես Մորոնի 9.9:
8. Տես *Երիտասարդ Կանանց Անձնական Զարգացում,* 70:

Երեց Քրեյգ Ա. Քարդոն
Յոթանասունից

Փրկիչն ուզում է ներել

Տերը սիրում է մեզ և ուզում է, որ մենք հասկանանք Նրա ներելու հոժարակամությունը:

Մեր Փրկչի մահկանացու կյանքի ծառայության ժամանակ շատերը հետևեցին Նրան՝ ներառյալ դպիրներ և Փարիսեցիներ՝ «Գալիլեայի ամեն գիուղաքաղաքներիցը և Հրեաստանից և Երուսաղէմիցը. . .»:[1] Անկողնուն զամված անդամալույծ մի մարդ, ով փափագում էր բուժվել, բերվեց դեպի մեծ ամբոխը, բայց չկարողանալով մոտենալ Փրկչին՝ նրա ընկերները վեր հանեցին նրան դեպի այդ տան կտուրը, որտեղ որ Փրկիչն էր, և օճորքից իջեցրեցին նրան: Տեսնելով հավատքի այս ցուցաբերումը՝ Իրեն լսողների համար դեռ անհայտ միտումով՝ Փրկիչը հայտարարեց. «Ով մարդ, քո մեղքերը թողուած լինեն քեզ»:[2]

Սա պետք է որ զարմացրած լինի այդ մարդուն, և, չնայած որ սուրբ գրությունները ոչինչ չեն ասում նրա արձագանքի մասին, նա գուցե մտածել է, արդյոք Փրկիչն իսկապես հասկացել է, թե ինչու է նա եկել:

Փրկիչը գիտեր, որ շատ մարդիկ հետևում էին Նրան Իր զորեղ հրաշքների պատճառով: Նա արդեն ջուրը գինու էր վերածել,[3] հեռացրել էր պիղծ ոգիներ[4] և բժշկել էր ազնվական մարդու որդուն,[5] բորոտին,[6] Պետրոսի զոքանչին[7] ու շատ-շատերին[8]:

Բայց այս անդամալույծ մարդու միջոցով Տերն ընտրեց վկայություն տալ և՛ առաքյալին և՛ Նրա՝ որպես աշխարհի Փրկչի եզակի դերի մասին չարախոսողին: Լսելով Փրկչի խոսքերը՝ դպիրներն ու Փարիսեցիները սկսել էին իրենք իրենց խորհել՝ տգիտորեն խոսելով հայհոյանքի մասին՝ եզրակացնելով, որ միայն Աստված կարող է ներել մեղքը: Իմանալով նրանց խորհուրդները՝ Փրկիչը դիմեց նրանց՝ ասելով.

«Ի՞նչ էք խորհում ձեր սրտերումը.

Ո՞րն է ավելի հեշտ. ասել՝ Մեղքերդ թողուած լինեն քեզ, թէ ասել՝ Վեր կաց և ման եկ»:[9]

Չսպասելով նրանց պատասխանին՝ Փրկիչը շարունակեց. «Բայց որ իմանաք, թէ մարդի Որդին իշխանութիւն ունի *երկրի վերայ* մեղքեր թողելու. Անդամալոյծին ասեց. Քեզ եմ ասում, Վեր կաց և մահիճդ առ, և գնա քո տունը»:[10] Եվ նա արեց:

Այս հրաշալի բժշկության միջոցով Փրկիչը մեզ բոլորիս հորդորեց այս շատ ավելի հզոր հոգևոր ճշմարտության մասին. Մարդու Որդին ներում է մեղքերը:

Մինչ այս ճշմարտությունը պատրաստակամորեն ընդունվում է բոլոր հավատացյալների կողմից՝ այդքան էլ հեշտությամբ չի ճանաչվում դրան ուղեկցող հիմնական ճշմարտությունը. Փրկիչը ներում է մեղքերը «երկրի վրա» և ոչ թէ Վերջին Դատաստանի ժամանակ: Նա չի արդարացնի մեզ մեր մեղքերի *մեջ*:[11] Նա չի արգելում մեզ վերադառնալ դեպի մեր նախկին մեղքերը:[12] Բայց երբ մենք ապաշխարում և հնազանդվում ենք Նրա ավետարանին, Նա մեզ ներում է:[13]

Այս ներման մեջ մենք տեսնում ենք Քավության՝ ներդաշնակորեն և գթասրտորեն կիրառված, հնարավորություն տվող *և* փրկագնող զորությունը: Եթե գործադրելով հավատք առ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ Նրա Քավության հնարավորություն տվող զորությունը *ամրացնում* է մեզ մեր թուլության պահին,[14] և Նրա փրկագնող զորությունը *արբագործում* է մեզ, երբ մենք «[հանում ենք] բնական մարդուն»:[15] Սա հույս է բերում բոլորին, հատկապես նրանց, ովքեր զգում են, որ կրկնվող մարդկային թուլությունը Փրկչի օգնելու ու փրկելու հոժարակամությունից վեր է:

Թույլ տալով, որ Փրկիչը լուսավորի մեր հասկացողությունը՝[16] մի անգամ Պետրոսը հարցրեց, թե քանի անգամ նա պետք է ների իր եղբորը, և հետո հարցրեց. «Մինչև



եօ՞թն անգամ»: Անշուշտ, դա կլիներ ավելի քան բավարար: Բայց Փրկչի պատասխանը մեզ համար ճանապարհ բացեց, որպեսզի ճանաչենք *Նրա* ողորմած սիրտը. «*Չեմ* ասում քեզ, մինչև եօթն անգամ, այլ մինչև եօթանասուն անգամ եօթը»:[17]

Տերը սիրում է մեզ և ուզում է, որ մենք հասկանանք Նրա ներելու հոժարակամությունը: Վարդապետություն և Ուխտերում ավելի քան 20 դեպքում Տերն ասաց նրանց, ում հետ Նա խոսում էր. «Քո մեղքերը ներված են քեզ» կամ նման բառեր:[18] Այս դեպքերից կեսում Տիրոջ բառերն ուղղված էին հատկապես Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ երբեմն դիմելով միայն նրան, երբեմն՝ մյուսներին ևս:[19] Դրանցից առաջինը գրառվել է 1830թ.-ին, վերջինը՝ 1843թ.-ին: Այսպիսով, շատ տարիների ընթացքում, Տերը բազմիցս ասել է Ջոզեֆ Սմիթին. «Քո մեղքերը ներված են քեզ»:

Մինչ Ջոզեֆը «մեղավոր [չէր] մեծ ու չարամիտ մեղքերում»,[20] լավ կլինի մեզ համար հիշել, որ շատ քիչ բացառություններով, Տիրոջ «մինչև եօթանասուն անգամ եօթը» չի սահմանափակում ներումն ըստ մեղքի լրջության:

Կիրթլենդում հավաքված երեցների հետ խոսելիս՝ Տերն ասաց. «Ես կամենում եմ, որ դուք հաղթեք աշխարհին. *ուստի* ես գութ կունենամ ձեր վրա»:[21] Տերը տեղյակ է մեր թուլությունների մասին և «աշխարհի» հավերժական հետևանքների մասին անկատար տղամարդկանց և կանանց համար:[22] Այս հատվածում *ուստի* բառը Նրա հաստատումն է, որ միայն Նրա կարեկցանքի զորության միջոցով է, որ մենք կարող ենք վերջիվերջո «հաղթել աշխարհին»: Ինչպե՞ս է այդ կարեկցանքը դրսևորվում: Կիրթլենդում այս նույն երեցներին Նա ասաց. «Ես ներել եմ ձեզ՝ ձեր մեղքերը»:[23] *Փրկիչն ուզում է ներել:*

Ոչ ոք թող չկարծի, որ այս ներումը զալիս է առանց ապաշխարության: Տերը իրոք հայտարարել է. «Ես՝ Տերս, ներում եմ մեղքերը նրանց, ովքեր խոստովանում են իրենց մեղքերն իմ առաջ և ներում են խնդրում», - հետո Նա զգուշացնում է նրանց մի լրացուցիչ պահանջմունքի մասին. «Ովքեր չեն մեղանչել ի մահ»:[24] Մինչ Տերը «[Չի] կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել»[25]՝ Նա զանազանում է որոշ մեղքերի հարաբերական լրջությունը: Նա պայման է դնում, որ չի լինի ներում «Սուրբ Հոգու դեմ հայհոյանքի» համար:[26] Նա հայտարարում է սպանության[27] լրջությունը և շեշտում է սեռական մեղքի՝ շնության լրջությունը:[28] Նա հայտնի է դարձնում Իր ներումը ստանալու աճող դժվարությունը կրկնվող լուրջ սեռական մեղքի դեպքում:[29] Եվ Նա ասել է, որ «նա, ով մեղանչում է ավելի մեծ լույսի դեմ, ավելի մեծ դատապարտություն պիտի ստանա»:[30] Մինչդեռ, Իր ողորմածությամբ, անհապաղ կատարելագործման փոխարեն Նա թույլ է տալիս բարելավվել ժամանակի ընթացքում: Նույնիսկ մեղքերի շարանով, որոնք մահկանացության թուլության արդյունք են հանդիսանում, այնքան հաճախ, որքան մենք ապաշխարենք և փնտրենք Նրա ներումը, Նա ներում է, կրկին ու կրկին:[31]

Այս պատճառով մենք բոլորս, ներառյալ նրանք, ովքեր պայքարում են հաղթահարել հակում առաջացնող վարքագծերը, ինչպիսիք են նյութերի չարաշահումը կամ պոռնոգրաֆիան և դրանց հետ առնչվող մարդիկ, կարող ենք իմանալ, որ Տերը կընդունի մեր արդար ջանքերը և գթառատորեն կների «մինչև եօթանասուն անգամ եօթը», երբ ապաշխարությունն ավարտված լինի: Բայց սա չի նշանակում, որ ինչ-որ մեկը կարող է *հոժարակամորեն* կրկին մեղանչել՝ առանց պատասխան տալու հետևանքների մասին:[32]

Տիրոջը միշտ հետաքրքրել են մեր սրտերը,[33] և քողարկված կեղծ հավատքը չի արդարացնում մեղքը:[34] Այս տնտեսությունում Տերը զգուշացրել է Իր ծառաներից մեկին նման քողարկման համար՝ հայտարարելով. «Թող [նա] ամաչի նիկոդայոսականների խմբից և բոլոր նրանց գաղտնի պղծություններից»:[35] Նիկոդայոսականները հին կրոնական խմբակցություն էին, ովքեր պնդում էին, որ ունեն թույլտվություն կատարելու սեռական օրինազանցություն Տիրոջ շնորհի հիման վրա:[36] Սա հաճելի չէ Տիրոջը:[37] Նրա կարեկցանքն ու շնորհը չեն արդարացնում մեզ, երբ «[մեր] սրտերը բավարարված չեն: Եվ [մենք չենք] հնազանդվում ճշմարտությանը, այլ հաճույք [ենք] ստանում անիրավությունից»:[38] Անշուշտ, այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել,[39]

Նրա կարեկցանքն ու շնորհը այն միջոցներն են, որոնց օգնությամբ «որոշ ժամանակ անց»[40] մենք հաղթում ենք աշխարհին Քավության հնարավորություն տվող զորությամբ: Խոնարհաբար փնտրելով այս թանկագին նվերը՝ «[մեր] թույլ կողմերը [կդառնան] ուժեղ»,[41] և *Նրա* զորությամբ մենք կկարողանանք անել այն, ինչը երբեք չէինք կարող անել միայնակ:

Տերը նայում է մեր ստացած լույսին,[42] մեր սրտերի ցանկությանը[43] և մեր գործերին,[44] և եթե մենք ապաշխարում ենք ու փնտրում ենք Նրա ներումը, Նա ներում է: Երբ խորհում ենք մեր սեփական կյանքի ու մեր սիրելիների ու ծանոթների կյանքի մասին, մենք հավասարապես պետք է պատրաստ լինենք ներելու ինքներս մեզ ու մյուսներին:[45]

Քարոզիր Իմ Ավետարանը խոսում է հակումը հաղթահարելու դժվարության մասին և խրախուսում է քահանայության ղեկավարներին ու անդամներին «չզարմանալ կամ չհուսահատվել», երբ ունկնդիրները կամ նոր անդամները շարունակում են պայքարել նմանատիպ խնդիրների դեմ: Փոխարենը, մեզ խորհուրդ է տրվում «վստահություն ցուցաբերել այդ անձի հանդեպ և դատապարտող դիրք չգրավել . . . այդ երևույթին վերաբերվելով որպես ժամանակավոր և հասկանալի նահանջ»:[46] Կարո՞ղ էինք ավելի քիչ բան անել մեր սեփական երեխաների և ընտանիքի անդամների համար, ովքեր պայքարում են նմանատիպ խնդիրների դեմ՝ ժամանակավորապես մոլորված լինելով արդարության ճանապարհից: Նրանք, անշուշտ, արժանի են մեր համառությանը, համբերատարությանն ու սիրուն - և, իհարկե, մեր ներմանը:

Անցյալ տարվա հոկտեմբեր ամսվա Գերագույն Համաժողովում Նախագահ Մոնսոնը խորհուրդ տվեց.

«Մենք պետք է պահենք մեր մտքում, որ մարդիկ կարող են փոխվել: Նրանք կարող են հրաժարվել վատ սովորույթներից: Նրանք կարող են ապաշխարել օրինազանցություններից: . . .

«. . . Մենք կարող ենք օգնել նրանց հաղթահարել իրենց թերությունները: Մենք պետք է զարգացնենք ունակություն՝ տեսնելու մարդկանց *ոչ* թե ինչպես նրանք ներկայում են, այլ թե ինչպիսին նրանք կարող են դառնալ»:[47]

Եկեղեցու ավելի վաղ համաժողովներից մեկի ժամանակ Տերն ասել է անդամներին.

«Ճշմարիտ ասում եմ ձեզ. դուք մաքուր եք, բայց ոչ բոլորդ, . . .

Քանզի *ամեն մարմին* ապականվել է իմ առաջ: . . .

. . . Քանզի, արդարև, ձեզանից ոմանք մեղավոր են իմ առաջ, *բայց ես ողորմած կլինեմ ձեր թուլության համար*»:[48]

Նրա ուղերձն այսօր նույնն է:

Մեր Երկնային Հայրը տեղյակ է մեր խնդիրներից, և որ մենք բոլորս մեղանչում ենք ու «Աստծո փառքից պակասուած [ենք]»[49] կրկին ու կրկին: Նա ուղարկեց Իր Որդուն, ով «գիտի թուլությունը մարդու, և թե ինչպես սատարի նրանց, ովքեր փորձվում են»:[50] Նրա Որդին մեզ ուսուցանում է «միշտ [աղոթել], որ *չընկնենք* գայթակղության մեջ»:[51] Մեզ ասված է՝ «կանչեք առ Աստված *ողորմության* համար. Քանզի նա հզոր է փրկելիս»:[52] Փրկիչը մեզ պատվիրում է ապաշխարել[53] և ներել:[54] Եվ չնայած որ ապաշխարելը հեշտ չէ՝ եթե մենք մեր ողջ սրտով ձգտենք հնազանդվել Նրա ավետարանին, Նա մեզ տալիս է հետևյալ

խոստումը. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ չնայած [ձեր] մեղքերին, *որովայնս լի է կարեկցանքով [ձեր] հանդեպ:* Ես լիովին դուրս չեմ գցի [ձեզ]. *և ցաման օրը ես ողորմություն կհիշեմ*»:[55] Փրկիչն ուզում է ներել:

Ամեն շաբաթ Մորմոնական Թաբերնաքլի երգչախումբը սկսում է իր հաղորդումը Վիլյամ Վ. Ֆելփսի հայտնի «Մեղմ երգեք սուրբ մեղեդին» օրհներգի ոգեշնչող բառերով: Ավելի քիչ հայտնի են չորրորդ հատվածի մխիթարող խոսքերը.

Տերը Սուրբ է:
Նրա խոսքը թանկագին է.
Ապաշխարեք և ապրեք. . . ,
Նույնիսկ եթե ձեր մեղքերը
կրկնակի կարմիրի պես լինեն,
Օ՜, ապաշխարեք, և նա կների:[56]

Կոչ եմ անում ձեզ՝ հիշեք Տիրոջ խոսքերը, հավատացեք դրանց և հավատք գործադրեք առ Նա՝ ի ապաշխարություն:[57] Նա սիրում է ձեզ: Նա ուզում է ներել: Ես այսպես եմ վկայում Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 5.17; տես նաև Մարկոս 2.2:
2. Ղուկաս 5.20; տես նաև Մատթեոս 9.2; Մարկոս 2.5:
3. Տես Հովհաննես 2.1–11:
4. Տես Մարկոս 1.21–28; Ղուկաս 4.33–37:
5. Տես Յովհաննէս 4.46–54:
6. Տես Մատթէոս 8.1–4; Մարկոս 1.40–45; Ղուկաս 5.12–15:
7. Տես Մատթէոս 8.5–13; Մարկոս 1.29–31; Ղուկաս 4.38–39:
8. Տես Մատթէոս 8.16–17; Մարկոս 1.32–34; Ղուկաս 4.40–41:
9. Ղուկաս 5.22–23; տես նաև Մատթէոս 9.3–5; Մարկոս 2.6–9:
10. Ղուկաս 5.24; շեշտադրումն ավելացված է; տես նաև Մատթէոս 9.6–7; Մարկոս 2.10–12:
11. Տես Ա. Կորնթացիս 6.9–10; Ալմա 11.34, 37; Հելաման 5.10–11:
12. Տես Բ Պետրոս 2.20; Հակոբոս 2.10; Վարդապետություն և Ուխտեր 82.7:
13. Տես Եսայիա 1.18; Երեմիա 31.34; Ղուկաս 7.36–50; Ենովս 1.5; Ալմա 24.10; Մորոնի 6.8; Վարդապետություն և Ուխտեր 1.32; 58.42–43:
14. Տես Հակոբ 4.7; Ալմա 14.26; Մորոնի 10.7:
15. Մոսիա 3.19; տես նաև 2 Նեփի 10.24–25:
16. Տես Ալմա 32.28, 34:
17. Մատթէոս 18.21–22; շեշտադրումն ավելացված է; տես նաև Ղուկաս 17.1–4:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.5–7; 25.3; 29.3; 31.5; 36.1; 50.36; 60.6–7; 61.2; 62.3; 64.1–4, 5–7, 15–17; 75.6–8; 82.1; 84.60–61; 90.1, 6; 108.1; 110.5; 112.3; 124.74–76, 78; 132.50:

19. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.5–7; 29.3; 60.6–7; 61.2; 62.3; 64.5–7; 84.60–61; 90.1; 110.5; 132.50:
20. Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.28:
21. Վարդապետություն և Ուխտեր 64.2; շեշտադրումն ավելացված է:
22. Տես 1 Նեփի 20.9–11; Վարդապետություն և Ուխտեր 24.2; 50.41; 63.47; 108.1–8:
23. Վարդապետություն և Ուխտեր 64.3:
24. Վարդապետություն և Ուխտեր 64. 7:
25. Վարդապետություն և Ուխտեր 1.31; տես նաև հատվածներ 32–33; Ալմա 45.16:
26. Վարդապետություն և Ուխտեր 132.27; տես նաև Մատթէոս 12.31; Ղուկաս 12.10:
27. Տես Ելից 20.13; Մոսիա 13.21; Վարդապետություն և Ուխտեր 132.19; Մովսես 5.31–36:
28. Տես Ալմա 39.5; Վարդապետություն և Ուխտեր 42.24–26:
29. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.22–26, 75–78, 80–82; 63.13–17; 76.103:
30. Վարդապետություն և Ուխտեր 82.3; տես նաև Յովհաննէս 15.22:
31. Տես Մորոնի 6.8:
32. Տես Մոսիա 15.26:
33. Տես Ա. Թագավորաց 16.7; Սաղմոս 24.3–4; Առակաց 23.7; Մատթէոս 15.18–20; Մարկոս 7.20–23; Եբրայեցիս 3.12; 3 Նեփի 12.19; Վարդապետություն և Ուխտեր 59.8; 64.34:
34. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.29–30; 121.37:
35. Վարդապետություն և Ուխտեր 117.11:
36. Տես Bible Dictionary, “Nicolaitans.”
37. Տես Հայտնություն 2.6, 15:
38. Վարդապետություն և Ուխտեր 56.15:
39. Տես 2 Նեփի 25.23; Վարդապետություն և Ուխտեր 138.4:
40. Մովսես 7.21:
41. Եթեր 12.27:
42. Տես Յովհաննէս 15.22; Վարդապետություն և Ուխտեր 1.33; 82.3:
43. Տես Ալմա 41.5–6; 3 Նեփի 9.20; Վարդապետություն և Ուխտեր 137.9:
44. Տես 1 Նեփի 15.33; Ալմա 41.3–4; Վարդապետություն և Ուխտեր 137.9:
45. Տես Մատթէոս 6.14–15; Վարդապետություն և Ուխտեր 64.8–10; 98.39–48:
46. *Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական Ծառայության Ուղեցույց* (2004), 189:
47. Թոմաս Ս. Մոնսոն, «Տեսեք ուրիշներին այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ» *Լիահոնա,* նոյ. 2012, 68, 69; շեշտադրումն ավելացված է:
48. Վարդապետություն և Ուխտեր 38.10–11, 14; շեշտադրումն ավելացված է:
49. Հռովմայեցիս 3.23:
50. Վարդապետություն և Ուխտեր 62.1; տես նաև Ալմա 7.12:
51. Վարդապետություն և Ուխտեր 61.39; շեշտադրումն ավելացված է:
52. Ալմա 34.18; շեշտադրումն ավելացված է; տես նաև 2 Նեփի 31.19; Ալմա 7.14:
53. Տես Հելաման 13.11; Վարդապետություն և Ուխտեր 19.4, 13–21:
54. Տես Վարդապետություն և Ուխտեր 64.8–10.
55. Վարդապետություն և Ուխտեր 101.9; շեշտադրումն ավելացված է; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 82.1–7:
56. “Gently Raise the Sacred Strain,” *Hymns,* no. 146.
57. Տես Ալմա 34:15–17.

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Սա է իմ գործը և իմ փառքը»

Աստված ազատորեն տվել է Իր զորությունը նրանց, ովքեր կընդունեն և կպատվեն Նրա քահանայությունը, որը տանում է դեպի անմահության և հավերժական կյանքի խոստացված օրհնությունները:

Նախագահ Փաքեր, մենք անհամբերությամբ սպասում ենք այդ հիանալի բանաստեղծության 98-րդ թողարկմանը: Ինչպիսի հրաշալի ուսուցում էր մեզ համար:

Մի քանի շաբաթ առաջ, ձմեռային ցուրտ մութ մի երեկո ես և կինս՝ Բարբարան, հիացմունքով նայեցինք երկնքին: Միլիոնավոր աստղեր, կարծես, բացառապես պայծառ և գեղեցիկ լինեին: Այնուհետև ես բացեցի Թանկագին Մարգարիտը և կրկին զարմանքով կարդացի Մովսեսին ասված Տիրոջ խոսքերը. «Եվ անթիվ աշխարհներ եմ ես ստեղծել. և դրանք նույնպես ես ստեղծել եմ իմ անձնական նպատակի համար. և Որդու միջոցով եմ ես ստեղծել դրանք, որն իմ Միածինն է» (Մովսես 1.33):

Մեր օրերում Հաբլի տիեզերական աստղադիտակը հաստատում է այն բազմությունը, որ տեսավ Մովսեսը: Հաբլի գիտնականների տվյալներով, Հարդագողի ճանապարհի գալակտիկան, որից առաջացել են մեր երկիրը և արևը, միայն մի փոքր մասն են՝ միայն մեկը ավելի քան 200 միլիարդ նման գալակտիկաներից: Ինձ համար դժվար է ըմբռնել, անհնար է պատկերացնել, թե որքան շատ և անծայրածիր են Աստծո արարումները:

Եղբայրներ և քույրեր, զորությունը, որով ստեղծվել են երկինքը և երկիրը, քահանայությունն է: Մենք՝ Եկեղեցու անդամները, գիտենք, որ այդ քահանայության աղբյուրը Ամենազոր Աստվածն է և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Քահանայությունը ոչ միայն այն զորությունն է, որով ստեղծվել են երկինքը և երկիրը, այլ նաև այն զորությունը, որով Փրկիչը Իր մահկանացու ծառայության ժամանակ հրաշքներ է գործել, օրհնել և բժշկել է հիվանդներին և, որպես Հոր Միածին Որդի, դիմացել է անտանելի ցավին Գեթսեմանի պարտեզում և Գագաթում, այպիսով ողորմածությամբ իրականացնելով արդարադատության օրենքները և պարգևելով անսահման Քավություն, հաղթահարելով ֆիզիկական մահը Հարության միջոցով:

Այդ քահանայության իշխանությունը և զորությունը Նա տվեց

Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին և Իր մյուս Առաքյալներին՝ օրհնելու համար մյուսներին և կապելու երկնքում այն, ինչ կկապվի երկրի վրա:

Քահանայության զորությունը Աստծո սրբազան և կարևորագույն պարգևներից է: Այն տարբերվում է քահանայության իշխանությունից, որը լիազորություն է գործելու Աստծո անունից: Այդ լիազորությունը կամ կարգումը տրվում է ձեռնադրությամբ: Քահանայության զորությունը գործում է միայն այն ժամանակ, երբ այն օգտագործում են արժանի և Աստծո կամքին համաձայն գործողները: Ինչպես հայտարարել է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը. «Տերը մեզ՝ բոլոր քահանայություն կրողներիս, տվել է իր իշխանությունից, սակայն մենք կարող ենք օգտվել երկնքի զորություններից միայն մեր անձնական արդարակեցության պայմանով» (“Boys Need Heroes Close By,” *Ensign,* May 1976, 45):

Վերականգնման փառավոր օրերին և այսօր աշխարհում Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերահաստատման ժամանակ Հովհաննես Մկրտիչը, Պետրոսը և Հովհաննեսը, Մովսեսը, Եղիասը և Եղիան եկան երկիր և վերականգնեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով քահանայության բոլոր բանալիները և իշխանությունը՝ այս վերջին օրերում Աստծո աշխատանքի համար:

Այդ բանալիներով, այդ իշխանությամբ և այդ զորությամբ է կազմակերպված այսօր Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, որի գլխավերևում Քրիստոսն է, որը ղեկավարում է այն Իր կենդանի մարգարե՝ Թոմաս Ս. Մոնսոնի միջոցով, որին օգնում են պատշաճ կանչված և կարգված Առաքյալները:

Մեր Երկնային Հոր քահանայության օժտման մեծ ծրագրում տղամարդիկ կրում են հատուկ պատասխանատվություն՝ սպասավորելու քահանայությունը, սակայն նրանք քահանայությունը չեն: Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր, սակայն հավասարապես արժեքավոր դերեր: Ինչպես կինը չի կարող երեխա բերել առանց տղամարդու, այնպես էլ տղամարդը չի կարող լիարժեք կիրառել իր քահանայության զորությունը՝ առանց կնոջ հավերժական ընտանիք կազմելու համար: Այլ խոսքերով, հավերժական հեռանկարը, և բազմանալու ստեղծարար ուժերը, և քահանայության զորությունը ամուսինը և կինը կիսում են: Եվ որպես ամուսիններ, տղամարդը և կինը՝ երկուսն էլ պետք է ձգտեն հետևել մեր Երկնային Հոր ծրագրին: Սիրո, խոնարհության և համբերատարության քրիստոնեական արժեքները պետք է լինեն նրանց ուշադրության կենտրոնում, մինչ նրանք փնտրում են քահանայության օրհնությունները իրենց անձնական և իրենց ընտանիքների կյանքում:

Մեզ համար վճռորոշ է հասկանալը, որ Երկնային Հայրը ուղի է տվել Իր բոլոր որդիների և դուստրերի համար, որ նրանց մատչելի լինեն քահանայության օրհնությունները և որ նրանք ուժեղացվեն քահանայության զորությամբ: Իր հոգևոր զավակների համար Աստծո ծրագրի առանցքում է Նրա իսկ հայտարարությունը. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Վարդապետություն և Ուխտերի 81-րդ բաժնում Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված հայտնության մեջ Տերը բացատրում է, որ քահանայության զորությունը պետք է օգտագործվի, որ «սատարի թույլերին, բարձրացնի ընկած ձեռքերը և ամրացնի տկար ծնկները» (հատված 5):

«Եվ անելով այս բաները՝ դու ամենամեծ բարիքը կգործես քո մերձավորների համար և կավելացնես փառքը նրա, ով քո Տերն է» (ՎԱՌ 81.4)։

Մտածելով թույլերին սատարելու, ընկած ձեռքերը բարձրացնելու և տկար ծնկները ամրացնելու մասին, ես հիշեցի յոթամյա մի անուշիկ աղջնակի մասին, որը ցույց էր տալիս իր պապիկին լոլիկի փոքր բույսը, որը նա ստացել էր սերմից, երբ կատարում էր երկրորդ դասարանի իր առաջադրանքը։

Նա բացատրում էր, որ մեկ փոքրիկ սերմից բույս է աճում։ Իսկ երբ բույսը խնամվի, այն կտա բազմաթիվ լոլիկներ, որոնք յուրաքանչյուրը կունենան շատ սերմեր։

Նա ասաց. «Եվ եթե այդ բոլոր սերմերը ցանվեն, ավելի շատ լոլիկ կաճի, իսկ այդ սերմերից մի քանի բերք հետո կարելի է ունենալ միլիոնավոր լոլիկներ»։

«*Այդ ամենը*՝ միայն մեկ փոքր սերմից», - ասաց նա հիացած։

Սակայն հետո ասաց. «Ես գրեթե սպանել էի իմ բույսին։ Ես թողել էի նրան մութ սենյակում և մոռացել էի ջրել։ Երբ հիշեցի բույսի մասին, այն թոշնել էր և թառամած տեսք ուներ։ Ես լաց եղա, մտածելով այն միլիոնավոր լոլիկների մասին, որ այլևս երբեք չէին աճի»։

Այնուհետև նա ոգևորությամբ պատմեց իր պապիկին կատարված «հրաշքի» մասին։

Նա բացատրեց. «Մայրիկն ասաց, որ, մի գուցե, բույսը չի մահացել։ Մի գուցե նա մի քիչ ջրի և լույսի կարիք ունի, և կրկին կապրի։

«Եվ նա իրավացի էր։ Ես բույսին մի քիչ ջուր տվեցի և դրեցի այն պատուհանին՝ լույսի տակ։ Եվ գիտե՞ս, թե ինչ եղավ։ Այն վերակենդանացավ և այժմ կտա միլիոնավոր լոլիկներ»։

Լոլիկի նրա փոքր բույսը, որն այդքան մեծ ներուժ ուներ, սակայն թուլացել և թոշնել էր ոչ դիտավորյալ անտեսվելու հետևանքով, փոքրիկ աղջկա սիրող և հոգատար ձեռքերում ամրացավ և վերակենդանացավ ջրի և լույսի հասարակ սնուցման շնորհիվ։

Եղբայրներ և քույրեր, որպես մեր սիրող Երկնային Հոր բառացի զավակներ, մենք ունենք անսահման և աստվածային ներուժ։ Բայց եթե մենք զգույշ չլինենք, մենք կարող ենք նմանվել թառամած լոլիկի բույսին։ Մենք կարող ենք հեռանալ Քրիստոսի ճշմարիտ վարդապետությունից և ավետարանից, և դառնալ հոգեպես թերսնված և թառամած, դուրս մնալով աստվածային լույսից և Փրկչի հավերժական սիրո և քահանայության զորության կենդանի ջրերից։

Նրանք, ովքեր քահանայություն են կրում և չեն կարողանում մշտապես պատվել այն, ծառայելով մեր ընտանիքներին և մյուսներին, կնմանվեն նրանց, ովքեր չեն *ստանում* օրհնությունները, որ պարունակվում են քահանայության զորության մեջ, և հոգեպես, անշուշտ, կթոշնեն, զրկելով իրենց հոգևոր սնունդից, լույսից և Աստծո զորությունից, ինչպես լոլիկի բույսը, որը լի էր ներուժով, սակայն անտեսվել և թոշնել էր։

Քահանայության այդ նույն զորությունը, որը ստեղծել է աշխարհները, գալակտիկաները և տիեզերքը, կարող է և պետք է լինի մեր կյանքի մասը, որպեսզի սատարի, ամրացնի և օրհնի մեր ընտանիքներին, մեր ընկերներին և մեր հարևաններին։ Այլ խոսքերով, անի այն, ինչ Փրկիչը կաներ, եթե ծառայեր այսօր մեր մեջ։

Եվ այս քահանայության զորության հիմնական նպատակն է օրհնել, սրբացնել և մաքրել մեզ, որպեսզի կարողանանք ապրել մեր ընտանիքների հետ միասին՝ մեր երկնային ծնողների ներկայությամբ, կապված քահանայության կնքումներով, մասնակցելով Աստծո և Հիսուս Քրիստոսի հրաշալի աշխատանքին, ընդմիշտ տարածելով *Նրանց* լույսը և փառքը։

Այդ նպատակով մի քանի ամիս առաջ ես հնարավորություն ունեցա մասնակցելու ղեկավարների համաշխարհային ուսուցման տեսանյութի պատրաստմանը, որը կոչվեց *Ամրացնել ընտանիքը և Եկեղեցին Քահանայության միջոցով*։

Այս նորարար և ուսուցանող տեսասկավառակը թարգմանվել է 66 լեզվով։ Այն ուսուցանում է, թե ինչպես կարող է քահանայության զորությունն օրհնել, կենդանացնել և վերակենդանացնել մեր կյանքը, մեր ընտանիքների և Եկեղեցու բոլոր անդամների կյանքը։

Այն ցույց է տալիս մեզ բոլորիս՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, ամուսնացածներին, այրիներին կամ միայնակներին, անկախ իրենց հանգամանքներից, թե ինչպես մենք կարող ենք լինել քահանայության օրհնությունների ճաշակողները։ 12–18 րոպե տևողությամբ մի քանի հատվածներ բացատրում են քահանայության բանալիները, իշխանությունը և զորությունը, և թե ինչպես է այն ամրացնում անհատներին, ընտանիքներին և Եկեղեցին։

Մի հատուկ տեսարան նկարահանվել է իմ մոր նախատատիկի՝ Մերի Ֆիլդինգ Սմիթի, պիոների մի շատ փոքր տանը։ Նա Նախագահ Ջոզեֆի ավագ եղբոր՝ Հայրումի այրին էր։ Լինելով միայնակ ծնող,

քահանայության հանդեպ իր ամուր հավատքի շնորհիվ, նա դիմում և ապավինում էր այդ զորությանը՝ իր երեխաներին սիրո և ավետարանի լույսի մեջ մեծացնելու և օրհնելու համար: Այսօր նրա սերունդը՝ Եկեղեցու հազարավոր հավատարիմ ղեկավարներ և անդամներ, շնորհակալ են նրա հավատքի, քաջության և օրինակի համար:

Ղեկավարների այս նոր ուսուցումն այսօր մատչելի է համացանցում՝ LDS.org կայքում բոլորին՝ տեսնելու և կիրառելու (wwlt.lds.org): Դուք կարող եք դիտել այն կենդանի եթերում LDS.org-ում, կամ կարող եք ներբեռնել այն ձեր համակարգչի, շարժական հեռախոսի կամ պլանշետի մեջ:

Առաջին Նախագահությունը խնդրել է ցցերի նախագահություններին և եպիսկոպոսություններին ցցի կամ ծխի խորհրդի ժողովներից մեկը կամ մի քանիսը նվիրել [ամբողջ] տեսասկավառակը դիտելուն: Ցցերի և ծխերի խորհուրդները պետք է քննարկեն, թե ինչպես կարող են կիրառել ներկայացված ուսմունքները (տես Առաջին Նախագահության նամակ, 1 փետ., 2013):

Այդ նյութը կոգեշնչի և կխրախուսի անդամներին քահանայության քվորումներում, Սփոփող Միությունում, Կիրակնօրյա Դպրոցում, Երիտասարդ Կանանց և Երիտասարդ Տղամարդկանց միություններում (հատկապես նրանց համար, ովքեր պատրաստվում են միսիայի), և Երեխաների խմբում կամ հինգերորդ կիրակի օրվա միացյալ ժողովներին: Խորհուրդների անդամները այնուհետև կկարողանան խրախուսել անհատներին և ծնողներին օգտագործել այդ նախապատրաստությունը իրենց ընտանիքներում: Եղբայրներ և քույրեր, ղեկավարման այս ուսուցումը Եկեղեցու յուրաքանչյուր անդամի համար է: Ծնողներ, դիտեք այն, կիսվեք դրանով և քննարկեք այն, ինչ սովորել եք և զգացել եք, ձեր երեխաների հետ, և թույլ տվեք նրանց դիտել և անել նույնը ձեզ հետ, որպեսզի ձեր ընտանիքները կարողանան ամրանալ քահանայության միջոցով:

Հիսուսն ասել է.

«Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ, եւ խմէ» (Հովհաննես 7.37):

«Ով որ խմէ այն ջրիցը որ ես կ'տամ նորան, նա յաւիտեան չի ծարաւիլ: Այլ այն ջուրը, որ ես կ'տամ նորան, ջրի աղբիւր կ'լինի նորանում, որ յաւիտենական կեանքի համար կ'բղխէ» (Հովհաննես 4.14):

«Ես եմ աշխարհքի լոյսը. Ով որ իմ ետեւից գայ, . . . կեանքի լոյսը կ'ընդունի» (Հովհաննես 8.12):

Եթե ձեզանից որևէ մեկը զգում է, թե ձեր հավատքը կամ Երկնային Հոր ծրագրի մասին ձեր վկայությունը ավելի թույլ է, քան, ձեր կարծիքով, պետք է լիներ, ապա ավելի լիարժեք շրջվեք դեպի Փրկիչը: Թույլ տվեք, որ լույսը և Նրա կենդանի ջուրը անեն ձեր և ձեր ընտանիքի համար այն, ինչ արեցին թոշնած լոլիկի թուփը կյանքի բերելու համար:

Ես սկսեցի, հիանալով և զարմանալով քահանայության զորության միջոցով Աստծո ստեղծագործություններով: Կարծում եմ, ձեզանից շատերը նույնպես մտածում են այն մասին, թե հնարավո՞ր է արդյոք լիովին ըմբռնել մեզ ուսուցանելու և օրհնելու Աստծո զորությունը: Այն այնքան մեծ է, այնքան վեհ, այնքան զորեղ:

Ջոզեֆ Սմիթն ասել է. «Քահանայությունը հավիտենական սկզբունք է և եղել է Աստծո հետ հավիտյան, և կլինի հավիտյան՝ առանց օրերի սկզբի կամ տարիների ավարտի» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 104):

Աստված ազատորեն տվել է Իր զորությունը նրանց, ովքեր կընդունեն և կպատվեն Նրա քահանայությունը, որը տանում է դեպի անմահության և հավերժական կյանքի խոստացված օրհնությունները:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի աշխատանքը իրականացվում է քահանայության միջոցով: Դա այն զորությունն է, որի միջոցով մեր Երկնային Հայրը և Նրա Միրեցյալ Որդին ստեղծեցին այս երկիրը և գործի մեջ դրեցին մեզ համար երջանկության մեծ ծրագիրը: Եկեք լինենք իմաստուն և ձգտենք ամրացնել մեր կյանքը, մեր ընտանիքների կյանքը և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո քահանայության զորության միջոցով, դա է իմ խոնարհ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

«Եկեք ինձ մոտ»

Իր խոսքերի միջոցով և Իր օրինակով Քրիստոսը ցույց է տվել մեզ, թե ինչպես ավելի մոտենանք Իրեն:

Ես երախտապարտ եմ լինել ձեզ հետ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս համաժողովում: Սա Նրա Եկեղեցին է: Մենք վերցնում ենք Նրա անունը մեզ վրա, երբ մտնում ենք Նրա արքայություն: Նա Աստված է՝ Արարիչը, և կատարյալ է: Մենք մահկանացուներ ենք՝ մահվան և մեղքի ենթակա: Սակայն Իր սիրով մեր և մեր ընտանիքների հանդեպ, Նա հրավիրում է մեզ մոտ լինել Իրեն: Ահա Նրա խոսքերը. «Մոտեցեք ինձ, և ես կմոտենամ ձեզ. Փնտրեք ինձ ջանասիրաբար, և կգտնեք ինձ. Խնդրեք, և կստանաք. Թակեք, և ձեզ կբացվի»:[1]

Այս Զատկին մենք հիշում ենք, թե ինչու ենք սիրում Նրան, և այն խոստումը, որ Նա տալիս է Իր հավատարիմ աշակերտներին՝ դառնալու Իր սիրելի ընկերները: Փրկիչը տվել է այդ խոստումը և մեզ բացատրել, թե ինչպես ենք Նրան ծառայելով մոտենում Նրան: Օրինակներից մեկը Օլիվեր Քաուդերիին տրված հայտնության մեջ
է, երբ նա ծառայում էր Տիրոջը Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ Մորմոնի Գրքի թարգմանության վրա, «Ահա, դու Օլիվերն ես, և ես խոսեցի քեզ հետ քո ցանկությունների պատճառով, ուստի գանձիր այս խոսքերը քո սրտում: Հավատարիմ և ջանասեր եղիր Աստծո պատվիրանները պահելիս, և ես կօղակեմ քեզ իմ սիրո բազուկներում»:[2]

Ես զգացել եմ Փրկչին մոտենալու ուրախությունը և Նրա ինձ մոտենալը՝ հիմնականում պատվիրաններին հնազանդվելու հասարակ գործողությունների միջոցով:

Դուք ունեցել եք այդպիսի փորձառություններ: Դա գուցե պատահել է, երբ դուք ընտրել եք հաճախել հաղորդության ժողովի: Այդպես պատահեց ինձ հետ մի կիրակի օր, երբ ես շատ երիտասարդ էի: Այդ օրերին մենք հաղորդությունը ստանում էինք երեկոյան ժողովի ժամանակ: Ավելի քան 65 տարի առաջ այդ օրվա հիշողությունը, երբ ես պահեցի պատվիրանը՝ հավաքվելու ընտանիքիս և Սրբերի հետ, դեռ ինձ մոտեցնում է Փրկչին:

Դրսում մութ էր և ցուրտ: Ես հիշում եմ լույսի և ջերմության զգացումը ժողովարանում այդ երեկո ծնողներիս հետ: Մենք ճաշակեցինք հաղորդությունը, որը սպասավորվում էր Ահարոնյան Քահանայություն կրողների կողմից, ուխտելով մեր Երկնային Հոր հետ միշտ հիշել Նրա Որդուն և պահել Նրա պատվիրանները:

Ժողովի վերջում մենք երգեցինք «Մնա ինձ հետ այս երեկո» օրհներգը, որի մեջ կային հետևյալ խոսքերը. «Ով Փրկիչ, մնա ինձ հետ այս գիշեր»:[3]

Ես զգացի Փրկչի սերն ու մոտիկությունը այդ երեկո: Եվ ես զգացի Սուրբ Հոգու սփոփանքը:

Ես կամենում էի ևս մեկ անգամ բոցավառել Փրկչի սիրո և Նրա մտերմության զգացումը, որը ես զգացել էի հաղորդության այդ ժողովի ընթացքում իմ պատանեկան հասակում: Այսպիսով, վերջերս ես պահեցի մեկ այլ պատվիրան: Ես քննեցի սուրբ գրությունները: Դրանցում ես գիտեի, որ կկարողանայի ետ գնալ կրկին, որպեսզի Սուրբ Հոգին թույլ տար ինձ զգալ, այն ինչ հարություն առած Տիրոջ աշակերտները զգացին, երբ Նա պատասխանեց նրանց հրավերին գալ իրենց տուն և մնալ իրենց հետ:

Ես կարդացի Նրա Խաչելությունից և թաղումից հետո երրորդ օրվա մասին: Հավատարիմ կանայք և ուրիշները գտան քարը գերեզմանից հեռու գլորած և տեսան, որ Նրա մարմինն այնտեղ չէր:Նրանք եկել էին Նրա սիրուց դրդված՝ օծելու Նրա մարմինը:

Երկու հրեշտակ կանգնած էին կողքին և հարցնում էին, թե ինչու էին նրանք վախենում, ասելով.

«Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում:

Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ. Յիշեցէք ինչպէս նա ձեզ հետ խօսեց, երբոր Գալիլեայումն էր.

Որ ասում էր, թէ պետք է մարդի Որդին մեղաւոր մարդկանց ձեռը մատնուի՝ եւ խաչուի եւ երրորդ օրը յարութիւն առնէ»:[4]

Մարկոսի Ավետարանն ավելացրել է հրահանգ հրեշտակներից մեկի կողմից. «Բայց գնացէք, նորա աշակերտներին եւ Պետրոսին ասեցէք, թե Նա ձեզանից առաջ կգնայ Գալիլեա. Այնտեղ կտեսնէք նորան ինչպէս նա ձեզ ասեց»:[5]

Առաքյալներն ու աշակերտները հավաքվել էին Երուսաղեմում: Ինչպես մենք կարող է լինեինք, նրանք վախեցած էին և զարմանում էին, երբ խոսում էին միմյանց հետ, թե մահը և լուրերը Նրա հարության մասին, ինչ էր նշանակում իրենց համար:

Երկու աշակերտներ քայլում էին Երուսաղեմից Էմմաուս տանող ճանապարհով: Հարություն առած Քրիստոսը հայտնվեց ճանապարհին կեսօրին և քայլեց նրանց հետ: Հարություն առած Տերը եկավ նրանց մոտ:

Ղուկասի գիրքը թույլ է տալիս մեզ քայլել նրանց հետ.

«Եւ եղաւ որ նորանք խօսելիս եւ վիճաբանելիս, հէնց ինքն Յիսուսը մօտեցաւ եւ գնում էր նորանց հետ:

Բայց նորանց աչքերը բռնուած էին, որ չճանաչեն նորան:

Եւ նորանց ասեց. Այդ ի՞նչ բաներ են, որ դորանց համար իրար հետ վիճում եք գնալիս, եւ տրտմած էք:

Եւ պատասխանեց նորանցից մէկը, անունը Կղէոպաս, եւ ասեց նորան. Դո՞ւ ես միայն բնակվում Երուսաղէմումն, որ չիմացար այն բաները, որ այն օրերը եղան նորանում»:[6]

Նրանք պատմեցին Նրան իրենց տխրության մասին, որ Հիսուսը մահացել էր, մինչդեռ նրանք վստահ էին, որ Նա էր լինելու Իսրայելի Քավիչը:

Պետք է որ սեր զգացվեր հարություն առած Տիրոջ ձայնում, երբ Նա խոսեց այդ երկու վշտահար և սգացող աշակերտների հետ.

«Եվ Նա ասեց նրանց. Ո՛վ անմիտներ եւ թուլասիրտներ՝ հաւատալու այն բոլոր բաներին, որ մարգարէները խօսեցին.

Չէ՞ որ պէտք էր՝ որ Քրիստոսը այս չարչարանքները քաշէր եւ իր փառքը մտնէր:

Եւ սկսելով Մովսէսիցը եւ բոլոր մարգարէներիցը մեկնում էր նորանց՝ ինչ որ գրքերի մէջ գրուած էր իր մասին»:[7]

Ապա՝ եկավ այն պահը, որը ջերմացրեց սիրտս փոքր տղա լինելուց սկսած.

«Եւ մօտեցան այն գիւղին, ուր որ գնում էին. եւ նա այնպէս էր ցոյց տալիս, թէ ավելի հեռու տեղ է գնում:

Եւ նորանք բռնադատեցին նորան եւ ասեցին. Մնա մեզ հետ, որովհետեւ իրիկուայ դէմ է եւ օրն իջել է. Եւ նա մտաւ որ նորանց հետ մնայ»:[8]

Փրկիչն ընդունեց այդ գիշեր Էմմաուս գյուղի մոտ Իր

աշակերտների տունը մտնելու հրավերը:

Նա նրանց հետ սեղան նստեց, հաց առաւ, օրհնեց, կտրեց և տվեց այն նրանց: Նրանց աչքերը բացվեցին, այնպես որ նրանք ճանաչեցին Նրան: Հետո նա աներևույթ եղավ նրանց տեսողությունից: Ղուկասը գրի առավ մեզ համար այդ օրհնված աշակերտների զգացումները. «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խոսում էր, եւ ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար»:[9]

Այդ նույն ժամին երկու աշակերտները ետ սլացան Երուսաղեմ՝ պատմելու տասնմեկ Առաքյալներին, թե ինչ էր պատահել իրենց: Այդ պահին Փրկիչը կրկին հայտնվեց:

Նա կրկնեց բոլոր Իր Հոր զավակների մեղքերի համար քավություն անելու և մահվան կապանքներն արձակելու՝ Իր առաքելության վերաբերյալ մարգարեությունները:

«Եւ նորանց ասեց թէ Այսպէս է գրուած, եւ այսպէս պէտք էր Քրիստոսին չարչարուիլ եւ երրորդ օրը մեռելների միջից յարութիւն առնել.

Եւ նորա անունովը ապաշխարութիւն եւ մեղքերի թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերի մէջ Երուսաղէմից սկսած:

Եւ դուք այս բաների համար վկաներ էք»:[10]

Փրկչի խոսքերը ճշմարիտ են նաև մեզ համար, ինչպես դրանք ճշմարիտ էին Իր աշակերտների համար այն ժամանակ: Մենք ականատեսներ ենք այս բաների: Եվ փառահեղ հանձնարարությունը, որ մենք ընդունեցինք, երբ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, մեզ համար պարզ է դարձվել Ալմա մարգարեի կողմից դարեր առաջ Մորմոնի ջրերի մոտ:

«Եվ եղավ այնպես, որ նա ասաց նրանց. Նայեք, ահա Մորմոնի ջրերը, (քանզի այդպես էին դրանք կոչվում) և արդ, քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, և հոժար եք կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

Այո, և հոժար եք սգալու նրանց հետ, ովքեր սգում են. Այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն

մխիթարության, և կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ,

Արդ, ես ասում եմ ձեզ, եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առաջ, որ դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ, որ կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որպեսզի նա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափի ձեր վրա:

Եվ այժմ, երբ ժողովուրդը լսեց այս խոսքերը, նրանք ուրախությունից ծափ տվեցին, և բացականչեցին. Այս է մեր սրտի իղձը»:[11]

Մենք ուխտի մեջ ենք՝ ինչպես կարիքի մեջ գտնվողներին բարձրացնելու, այնպես էլ Փրկչի վկաները լինելու ուխտի մեջ, քանի դեռ ապրում ենք:

Մենք միայն այն ժամանակ կկարողանանք անել այդ առանց ձախողման, երբ մենք սեր զգանք Փրկչի հանդեպ և Նրա սերը մեր հանդեպ: Երբ մենք հավատարիմ լինենք այն խոստումներին, որ արել ենք, մեր սերը Նրա հանդեպ կզգանք, որ աճում է, որովհետև մենք կզգանք Նրա զորությունը և Նրա մոտենալը մեզ՝ Իրեն ծառայելու ընթացքում:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հաճախ է մեզ հիշեցրել Իր հավատարիմ աշակերտներին Տիրոջ խոստման մասին. «Եվ որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[12]

Կա մեկ այլ ուղի, երբ դուք և ես զգացել ենք Նրա ավելի շատ մոտենալը մեզ: Երբ մենք Նրան նվիրված ծառայություն ենք մատուցում, Նա ավելի է մոտենում նրանց, ում մենք սիրում ենք մեր ընտանիքներում: Ամեն անգամ, երբ ես կանչվել եմ Տիրոջ ծառայությանը տեղափոխվելու կամ թողնելու ընտանիքս, ես սկսել եմ տեսնել, որ Տերն օրհնել է կնոջս և երեխաներիս: Նա պատրաստել է սիրով լի ծառաներ և հնարավորություններ՝ նրանց Իրեն ավելի մոտեցնելու համար:

Դուք զգացել եք նույն օրհնությունը ձեր կյանքում: Ձեզանից շատերն ունեն հարազատներ, ովքեր հավերժական կյանքի ուղուց հեռու են թափառում: Դուք ուզում եք իմանալ, թե էլ ինչ կարող եք անել՝ նրանց ետ բերելու համար: Դուք կարող եք վստահել Տիրոջը նրանց ավելի մոտենալու համար, մինչ ծառայում եք Նրան հավատքով:

Դուք հիշում եք Տիրոջ խոստումը Ջոզեֆ Սմիթին և Սիդնի Ռիգդոնին, երբ նրանք հեռու էին իրենց ընտանիքներից Նրա հանձնարարություններով. «Իմ բարեկամներ Սիդնի և Ջոզեֆ. Ձեր ընտանիքները բարվոք են. նրանք իմ ձեռքում են, և ես կվարվեմ նրանց հետ, ինչպես ինձ բարի է երևում. քանզի ինձանում է ողջ զորությունը»:[13]

Ալմայի և Թագավոր Մոսիայի նման, ձեզանից ոմանք՝ որպես հավատարիմ ծնողներ, երկար և լավ ծառայել են Տիրոջը, այնուամենայնիվ, ունեցել են երեխաներ, ովքեր հեռացել են, չնայած Տիրոջ համար իրենց ծնողների զոհաբերությանը: Ձեզ նման՝ նրանք արել էին այն ամենը, ինչ կարող էին, առանց ակնհայտ արդյունքի, նույնիսկ սիրող և հավատարիմ ընկերներիօգնությամբ:

Ալման և իր օրերի Սրբերը աղոթեցին իր որդու և Մոսիա թագավորի որդիների համար և հրեշտակ հայտնվեց: Ձեր աղոթքները և նրանց աղոթքները, ովքեր գործադրում են իրենց հավատքը, կբերի Տիրոջ ծառաներին՝ օգնելու ձեր ընտանիքի անդամներին: Նրանք կօգնեն նրանց ընտրել ուղին դեպի տուն՝ Աստծո մոտ, նույնիսկ, երբ նրանք հարձակման ենթարկվեն սատանայի և նրա հետևորդների կողմից, որի նպատակը ընտանիքները կործանելն է այս կյանքում և հավերժությունում:

Դուք հիշում եք խոսքերը, որոնք խոսվեցին հրեշտակի կողմից երիտասարդ Ալմային և Մոսիայի որդիներին իրենց ապստամբության ժամանակ. «Եվ բացի այդ, հրեշտակն ասաց. Ահա Տերը լսել է իր ժողովրդի աղոթքները և նաև իր ծառա Ալմայի աղոթքները, որը քո հայրն է. քանզի նա աղոթել է մեծ հավատքով քեզ համար, որ դու կարողանաս բերվել ճշմարտության իմացությանը. Հետևաբար, այս նպատակով եմ ես եկել համոզելու քեզ Աստծո զորության և իշխանության վերաբերյալ, որպեսզի նրա ծառաների աղոթքները կարողանան պատասխանվել համաձայն իրենց հավատքի»:[14]

Իմ խոստումը ձեզ, ովքեր աղոթում եք և ծառայում Տիրոջը. այն չէ, որ դուք կունենաք ամեն օրինություն, որ դուք կկամենաք ձեզ համար և ձեր ընտանիքի համար: Բայց ես կարող եմ խոստանալ ձեզ, որ Փրկիչը մոտ կգա ձեզ և կօրհնի ձեզ և ձեր ընտանիքը նրանով, ինչը լավագույնն է: Դուք կունենաք Նրա սիրո մխիթարությունը և կզգաք Նրա ավելի մոտենալը՝ ի պատասխան ձեր աղոթքների, երբ դուք օգնության հասնեք՝ ծառայություն մատուցելով ուրիշներին: Երբ դուք կապեք վիրավորի վերքերը և առաջարկեք Նրա Քավությամբ մաքրագործում նրանց, ովքեր տանջվում են մեղքի մեջ, Տիրոջ զորությունն աջակից կլինի ձեզ: Նրա աջը կտարածվի ձեր ձեռքի հետ՝ սատարելու և օրհնելու մեր Երկնային Հոր զավակներին:

Դեպի տուն փառահեղ մի դարձ է պատրաստված մեզ համար: Այդ ժամանակ մենք կտեսնենք մեր սիրելի Տիրոջ իրականացած խոստումը: Նա է, ով ողջունելու է մեզ հավերժական կյանքում՝ Իր և մեր Երկնային Հոր հետ: Հիսուս Քրիստոսը նկարագրել է դա այս ձևով.

«Փնտրիր առաջ բերել և հաստատել իմ Սիոնը: Պահիր իմ պատվիրանները բոլոր բաներում:

Եվ, եթե պահես իմ պատվիրանները և համբերես մինչև վերջ, դու կունենաս հավերժական կյանք, պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից»:[15]

«Քանզի նրանք, ովքեր ապրում են, պիտի ժառանգեն երկիրը, իսկ նրանք, ովքեր մահանում են, պիտի հանգստանան իրենց բոլոր աշխատանքներից, և նրանց գործերը պիտի գնան իրենց հետևից. Եւ նրանք պսակ պիտի ստանան իմ հոր ապարանքներում, որոնք ես պատրաստել եմ նրանց համար»:[16]

Ես վկայում եմ, որ մենք կարող ենք Հոգու միջոցով հետևել Երկնային Հոր հրավերին. «Սա է Իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան»:[17]

Իր խոսքերի միջոցով և Իր օրինակով՝ Քրիստոսը ցույց է տվել մեզ, թե ինչպես ավելի մոտենանք Իրեն: Երկնային Հոր ամեն զավակ, ով ընտրել է մտնել մկրտության դարպասի միջով Նրա Եկեղեցին, այս կյանքում կունենա հնարավորություն ուսուցանելու Նրա ավետարանը և լսելու Նրա կողմից կանչված ծառաներից՝ Նրա հրավերը. «Եկեք ինձ մոտ»:[18]

Լոս Անջելես, Կալիֆոռնիա, ԱՄՆ

Ամեն Նրա ուխտյալ ծառա Իր թագավորությունում երկրի վրա և հոգևոր աշխարհում, կստանա Նրա ուղղորդումը, երբ նրանք օրհնեն և ծառայեն ուրիշների հանուն Նրա: Եվ նրանք կզգան Նրա սերը և կգտնեն ուրախություն՝ ավելի շատ մոտենալով Նրան:

Ես Տիրոջ Հարության վկան եմ, այնպես անկասկած, ինչպես որ ես եղած լինեի երկու աշակերտների հետ այդ երեկո Էմմաուսի ճանապարհի տանը: Ես գիտեմ, որ Նա ապրում է, այնպես անկասկած, ինչպես Ջոզեֆ Սմիթն էր հավատում, երբ Նա տեսավ Հորը և Որդուն պայծառ առավոտվա լույսի մեջ՝ Պալմիրայի ծառերի պուրակում:

Սա Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին է: Միայն Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կողմից կրվող քահանայության բանալիներում ունենք ընտանիքներով կնքվելու զորությունը, որպեսզի հավերժ ապրենք մեր Երկնային Հոր և Տեր Հիսուս Քրիստոսի հետ: Մենք Դատաստանի օրը կկանգնենք Փրկչի առջև դեմ հանդիման: Դա կլինի ուրախության ժամանակ նրանց համար, ովքեր մոտեցել են Նրան այս կյանքում Նրա ծառայության մեջ: Մեծ ուրախություն կլինի՝ «Լավ, բարի եւ հաւատարիմ ծառայ»[19] խոսքերը լսելը: Այսպես եմ ես վկայում՝ որպես հարություն առած Փրկչի և մեր Քավչի ականատես, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 88.63:
2. Վարդապետություն և Ուխտեր 6.20:
3. “Abide with Me; ’Tis Eventide,” *Hymns,* no. 165.
4. Ղուկաս ԻԴ.5–7:
5. Մարկոս ԺԶ.7:
6. Ղուկաս ԻԴ.15–18:
7. Ղուկաս ԻԴ.25–27:
8. Ղուկաս ԻԴ.28–29:
9. Ղուկաս ԻԴ.32:
10. Ղուկաս ԻԴ.46–48:
11. Մոսիա 18.8–11:
12. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
13. Վարդապետություն և Ուխտեր 100.1:
14. Մոսիա 27.14:
15. Վարդապետություն և Ուխտեր 14.6–7:
16. Վարդապետություն և Ուխտեր 59.2:
17. Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.17:
18. Մատթեոս ԺԱ.28:
19. Մատթեոս ԻԵ.21:

Ներկայացնող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բենյոն Այրինգը՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քեննեթ Փաքերը՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք՝ որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալեսն ազատվել է Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամի պաշտոնից:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել, խնդրում ենք, քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Երեց Ուլիսես Սոարեսը՝ որպես Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում է ազատել հետևյալ Տարածքային Յոթանասունականներին 2013թ. մայիսի 1-ից. Ռուբեն Վ. Ալիոդ, Սերժիո Մ. Անայա, Նոլան Դ. Արչիբալդ, Կարլոս Լ. Աստորգա, Հեկտոր Ավիլա, Մ. Էնթոնի Բըրնս, Դեյվիդ Կաբրերա, Միլտոն Կամարգո, Ռոբերտ Ե. Չամբերս, Վիկտոր Կահ Կենգ Չեն, Կուո Չիանգ Չանգ, Նելսոն Դ. Կորդովա, Գարի Լ. Քրիթենդեն, Էդվարդ Դյուբ, Մեթյու Յ. Այրինգ, Սիոն Մ. Ֆայնանգանոֆո, Ալֆրեդո Լ. Գեսատի, Ջեյմս Բ. Գիբսոն, Ջովենսիո Ա. Գուանզոն, Մերիո Ի. Գուերա, Լուիս Ս. Հերնանդեզ, Հերնան Ի. Հերերա, Ջավիեր Իբանեզ, Պաուլո Հ. Իտինոզ, Դուգլաս Վ. Ջեսոթ, Սթեֆեն Ս. Քեր, Ջոնի Լ. Քոչ, Ֆաուստինո Լոպեզ, Ռիչարդ Կ. Մելքին, Ֆրիբոդի Ա. Մենսա, Բենսոն Ե. Միսալուչա, Աբելարդո Մորալես, Վ. Տ. Դեյվիդ Մյուրեյ, Կ. Բրեթ Նաթրես, Ս. Գիֆորդ Նիլսեն, Սատոշի Նիշիհարա, Մայքլ Դ.

Փիքերդ, Վիլիամ Ֆ. Ռեյնոլդս, Մայքլ Ա. Ռոբերտս, Ֆերնանդո Ա. Ռ. Դա Ռոքա, Մանֆրեդ Շուլց, Թերենս Ս. Սմիթ, Ռուբեն Լ. Սպիտալ, Ջոշուա Սուբանդրիյո, Ֆրենկ Վ. Տրայթել, Միգել Ռ. Վալդեզ, Առնուլֆո Վալենզուելա, Կառլոս Ա. Ս. Վիլանովա, Թերենս Մ. Վինսոն, Լուիս Վեյդման և Ռիչարդ Ս. Զամբրանո:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրների հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է խորը երախտագիտության քվեով ազատել Քույրեր Էլեյն Ս. Դալտոնին, Մերի Ն. Քուքին և Էնն Մ. Դիբին Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունից:

Նմանապես ազատվում են Երիտասարդ Կանանց գերագույն խորհրդի բոլոր անդամները:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս քույրերին նրանց հիանալի ծառայության և նվիրվածության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Յոթանասունի Առաջին Քվորումի նոր անդամները. Էդվարդ Դյուբը, Ս. Գիլֆորդ Նիլսենը և Առնուլֆո Վալենզուելան, և Յոթանասունի Երկրորդ Քվորումի նոր անդամները. Թիմոթի Ջ. Դայչեսը, Ռենդի Դ. Ֆանկը, Քելվին Ս. Համիլտոնը, Ադրիան Օչոան և Թերենս Մ. Վինսոնը:

Ովքեր կողմ են, խնդրում ենք, քվեարկել:

Ովքեր դեմ են, նմանապես:

Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ կանչվելու կապակցությամբ, մենք նաև ազատում ենք Եղբայր Ադրիան Օչոային որպես երկրորդ խորհրդական Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդական:

Ովքեր ցանկանում են իրենց երախտագիտությունն հայտնել, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Տարածքային Յոթանասունականներ. Ռուբեն Ակոստա, Ֆրեդերիկ Օ. Ակինբո, Օմար Ա. Ալվարեզ, Բենեդիտո Անտունես, Ալեն Ս. Բաթ, Գրանտ Ս. Բենեթ, Ֆերնանդո Ե. Քալդերոն, Վիլսեն Բ. Քալդերոն, Հ. Մարսելո Քարդուս, Յոկ Սենգ (Ֆրեդի) Չեն, Քրիստոֆեր Չարլզ, Վալերի Վ. Քորդոն, Փոլ Ռ. Քովարդ, Մ. Տ. Բեն Դեյվիս, Մասիմո Դե Ֆեո, Մերիոն Բ. Դե Անտունանո, Ֆրանսիսկո Ջ. Ռուիզ դե Մենդոզա, Ռոբերտ Ա. Դրայդեն, Ռոբերտ Ջ. Դաղֆիլդ, Դենիոլ Ֆ. Դանիգան, Ջեֆրի Դ. Էրեկսոն, Ի. Խավիեր Էսպինոզա, Մելիուլա Մ. Ֆատա, Սեմ Մ. Գալվեզ, Կլոդ Ռ. Գամիեթ, Մերվին Ս. Գիդի, Ջաո Ռ. Գալ, Դեյվիդ Պ. Հոմեր, Դենիել Վ. Ջոնս, Ջոն Ա. Կորանտենգ, Սթիվեն Օ. Լենգ, Աքսել Հ. Լեյմեր, Գյուստավո Լոպեզ, Հոսե Ե. Մարավիլա, Ալֆրեդո Մայրոն, Հյուգո Մոնտոյա, Յոաքիմ Ջ. Մորեյրա, Կացույուկի Օտահարա, Հոսե Ս. Պինեդա, Գարի Ս. Փրայս, Միգել Ա. Ռեյես, Գարի Բ. Սաբին, Ալֆրեդո Լ. Սալաս, Նեցահուալկոյոթլ Սալինաս, Միրո Շմեյլ, Դ. Զաքարի Սմիթ, Մայքլ Լ. Սաութվորդ, Գ. Լորենս Սփեքմեն, Վերն Պ. Սթենֆիլ, Վիլիամ Հ. Սթոդարդ, Սթեֆեն Ե. Թոմսոն, Ջորջ Ջ. Թոբիաս, Այզեկ Կ. Տուկուաֆու, Ջակ Ա. Վան Ռենեն, Ռոլ Ս. Վիլանուեվա, Ալեն Ռ. Վոքեր, Քեյթ Պ. Վոքեր և Հոյ Սենգ Լեոնարդ Վու:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում են հաստատման. Բոննի Լի Գրին Օսկարսոնը՝ որպես Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ, Քերոլ Լուիս Ֆոլի Մակքոնկին՝ որպես առաջին խորհրդական և Էվելին Նիլ Ֆուտ Մերիոթը՝ որպես երկրորդ խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք, քվեարկել:

Ովքեր դեմ են, նմանապես:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի և մեզ համար ձեր մշտական հավատքի և աղոթքների համար:

Մենք հրավիրում ենք նոր կանչված Բարձրագույն Իշխանավորներին և Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությանը առաջ գալ և զբաղեցնել իրենց տեղերը բեմահարթակում: ■

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2012թ.

Ներկայացնող՝ Ռոբերտ Վ. Քանթվել
Եկեղեցու աուդիտի բաժնի գործադիր տնօրեն

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը թույլատրում է Տասանորդների տնօրինման խորհուրդը: Այդ խորհուրդը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից:

Այս խորհուրդն է հաստատում Եկեղեցու բաժինների և գործունեության բյուջեները և միավորներին կատարվող հատկացումները: Եկեղեցու բաժինները ծախսում են ֆոնդերը ըստ հաստատված բյուջեների և համաձայն Եկեղեցու քաղաքականությանը ու ընթացակարգերի:

Եկեղեցու աուդիտի բաժնին թույլ է տրվում օգտագործել այն բոլոր տվյալներն ու համակարգերը, որոնք անհրաժեշտ են ֆոնդերի ստացման, ծախսերի, ինչպես նաև Եկեղեցու ունեցվածքի պահպանման ուղղությամբ՝ համապատասխան վերահսկողությունը գնահատելու համար:

Եկեղեցու աուդիտի բաժինը գործում է Եկեղեցու մյուս բաժիններից և գործունեությունից անկախ, աշխատակազմը բաղկացած է հավաստագրյալ հանրային հաշվապահներից, ներքին հավաստագրյալ հաշվեստուգիչներից, հավաստագրյալ տեղեկատու համակարգերի հաշվեստուգիչներից և որակավորում ունեցող ու փորձառու այլ մասնագետներից:

Հիմնվելով կատարված հաշվեստուգումների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ բոլոր նյութական հարցերին առնչվող 2012թ. ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու նյութական ունեցվածքը գրանցվել և տնօրինվել են համապատասխան հաշվապահական գործառնությունների, հաստատված բյուջեի և Եկեղեցու քաղաքականության և ընթացակարգերի համաձայն:

Հարգանքով,
Եկեղեցու աուդիտի բաժին
Ռոբերտ Վ. Քանթվել
Գործադիր տնօրեն ■

Վիճակագրական հաշվետվություն, 2012թ.

Ներկայացնող՝ Բրուք Պ. Հեյլս
Առաջին Նախագահության Քարտուղար

Հ տեղեկություն Եկեղեցու անդամության վերաբերյալ, Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը Եկեղեցու աճի և կարգավիճակի մասին:

Եկեղեցու միավորներ

Ցցեր	3,005
Միսիաներ	347
Շրջաններ	591
Ծխեր և ճյուղեր	29,014

Եկեղեցու անդամություն

Անդամների ընդհանուր թիվը	14,782,473
2012թ. ընթացքում գրանցված երեխաներ	122,273
2012թ. ընթացքում մկրտված նորադարձներ	272,330

Միսիոներներ

Լիաժամկետ միսիոներներ	58,990
Եկեղեցու ծառայության մեջ գտնվող միսիոներներ	22,961

Տաճարներ

2012թ. ընթացքում նվիրագործված տաճարներ (Կանզաս Սիթ Միսսուրի, Մանաուս Բրազիլիա, Բրիգամ Սիթի Յուտա և Քալգարի Ալբերտա)	4
2012թ. ընթացքում վերանվիրագործված տաճարներ (Բուենոս Այրես Արգենտինա և Բոյզ Այդահո)	2
Գործող տաճարներ	140

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Որ խաղաղություն լինի տանը

Մեծագույն օրհնություններից մեկը, որ կարող ենք առաջարկել աշխարհին, Քրիստոսակենտրոն տան զորությունն է, որտեղ ուսուցանվում է ավետարանը, պահվում են ուխտերը և թևածում սերը:

Սիդնեյ, Ավստրալիա

Աշխարհում, որտեղ մենք ենք ապրում, բազմաթիվ ձայներ կոչ են անում մեզ ապրել խելահեղ տեմպով: Միշտ կարելի է ավելին անել և ավելին իրագործել: Սակայն ներքուստ մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի մի ապաստանի, որտեղ խաղաղություն և հանգստություն է տիրում, վայր, որտեղ կարող ենք հանգստանալ, վերականգնվել և վերազինվել, պատրաստվելով հետագա լարվածություններին:

Խաղաղության նման կատարյալ վայր կարող է հանդիսանալ մեր տունը, որտեղ հնարավորինս ամեն ինչ արել ենք Տեր Հիսուս Քրիստոսին կենտրոնում պահելու համար:

Որոշ տներ ունեն արժանի քահանայություն կրող հայր, հավատարիմ և նվիրված մայր: Նրանք միասին արդարակյաց տուն են ղեկավարում: Շատ տներ ունեն տարբեր կառուցվածք: Անկախ ձեր պայմաններից, կարող եք ձեր տունը և կյանքը կենտրոնացնել Տեր Հիսուս Քրիստոսի վրա, քանզի Նա է այս կյանքում ճշմարիտ խաղաղության աղբյուրը:

Եղեք վստահ, որ ձեր կայացրած որոշումները, լինեն դրանք նյութական թե հոգևոր, հիմնված լինեն Փրկչի կամքի վրա: Երբ նա ձեր տան կենտրոնն է, խաղաղություն և հանգստություն է տիրում: Կա վստահության ոգի, որ լցնում է տունը, և այն զգում են այդ տան բոլոր անդամները:

Այս խորհուրդը միայն ծնողները չէ, որ պետք է իրականացնեն, թեպետ նրանց է վերապահված տունը ղեկավարելու գործը: Երեխաները կարող են պատասխանատու լինել տանը Քրիստոսակենտրոն ջանքերը բարելավելու համար: Կարևորն այն է, որ ծնողներն ուսուցանեն երեխաներին գիտակցել, թե ինչպես են իրենց արարքները ազդում տանը բնակվող յուրաքանչյուր անհատի վրա: Երեխաները, ովքեր պատասխանատու են իրենց արարքների համար, լինեն դրանք արդար կամ անարդար, մեծանալով դառնում են Աստծո արքայության վստահելի քաղաքացիները:

Վստահ եմ, որ գիտեք այն հիմնարար սկզբունքները, որոնք ձեր տունը կենտրոնացնում են Փրկչի վրա: Մարգարեական խորհուրդը, որն է՝ կանոնավոր կերպով ամեն օր անձնապես և ընտանիքով աղոթքելը, ամեն օր սուրբ գրությունները ուսումնասիրելը և ամեն շաբաթ ընտանեկան երեկո անցկացնելը՝ Քրիստոսակենտրոն տան կառուցվածքի կարևոր, հիմնական հեծանները են, առանց որոնց դժվար կլինի գտնել ցանկալի և այնքան անհրաժեշտ խաղաղությունը և աշխարհից ապաստանը:

Եղեք հնազանդ մարգարեական ուսմունքներին, որոնց Քրիստոսը կուզենար որ հետևեիք: Մի խաթարեք ձեր ապագա երջանկությունը՝ ավետարանի ողջամիտ սկզբունքները կիրառելու փոխարեն ընտրելով կարճ ուղին: Հիշեք՝ փոքր բաները հանգեցնում են մեծ բաների: Թվացյալ աննշան անզգուշությունները կամ անհոգությունը կարող են մեծ խնդիրների առաջ կանգնեցնել: Իսկ պարզ, հետևողական, լավ սովորույթներն ուղղորդում են դեպի օրհնություններով լի կյանք:

Երեխաների Միության երեխաներ, երիտասարդների ծրագրերին մասնակցող երիտասարդ տղաներ և աղջիկներ, և այժմ ծառայություն կատարող քաջարի միսիոներներ, դուք ավելի արդյունավետ եք գործում, քան ես՝ ձեր տարիքում:

Նախամահկանացու կյանքում դուք ապացուցել եք, որ քաջարի եք, հնազանդ և մաքուր: Այնտեղ դուք տքնաջան աշխատել եք, որպեսզի զարգացնեք տաղանդներ և ունակություններ, պատրաստվելով մահկանացու կյանքն ապրել՝ քաջությամբ, արժանապատվությամբ, պատվով և հաջողությամբ:

Դուք նոր եք եկել մահկանացու կյանք այդ բոլոր հրաշալի ունակություններով և անվերջ հնարավորություններով: Սակայն կա իրական վտանգ ձեզ շրջապատող միջավայրում: Ձեր մեծ ներուժը և կարողությունը կարող է սահմանափակվել կամ խաթարվել, եթե ընկնեք ձեր շուրջը տիրող դիվական աղտոտվածության մեջ: Ինչևէ, սատանան չի կարող համեմատվել Փրկչի հետ: Սատանայի ճակատագիրը որոշված է: Նա գիտի, որ տանուլ է տվել, սակայն ցանկանում է հնարավորինս շատերին իր հետ տանել: Նա կփորձի կործանել ձեր բարությունը և կարողությունները՝ օգտագործելով ձեր թուլությունները: Մնացեք Տիրոջ կողքին, և դուք միշտ կհաղթեք:

Դուք ապրում եք մի աշխարհում, որտեղ տեխնոլոգիաները զարգանում են ապշեցուցիչ արագությամբ: Իմ սերնդակիցներից շատերի համար դժվար է այդ հնարավորություններին զուգընթաց քայլել: Տեխնոլոգիայի կիրառումի ձևից է կախված՝ այն կլինի օրհնություն, թե արգելափակում: Երբ ընկալվում և կիրառվում է արդար նպատակներով, տեխնոլոգիան դառնում է ոչ թե սպառնալիք, այլ նպաստում է հոգևոր հաղորդակցությունների զարգացմանը:

Օրինակ՝ մեզանից շատերն ունեն գրպանում տեղավորվող անձնական էլեկտրոնային սարք: Այն հիմնականում մեզ հետ է և օգտագործվում է օրվա մեջ շատ անգամներ: Ցավոք, այդ սարքերը կարող են լինել կեղտի և վատնված ժամանակի աղբյուր: Սակայն, ինչպես հարկն է օգտագործելու դեպքում, այդ տեխնոլոգիան կարող է լինել հասարակության վատթարագույն դրսևորումներից պաշտպանվելու գործիք:

Մի քանի տարի առաջ ո՞ւմ մտքով կանցներ, որ կանոնիկ աշխատությունները և գերագույն համաժողովների տարիների ուղերձները կտեղավորվեին ամբողջությամբ գրպանում: Գրպանում դրանք ունենալը ձեզ չի պաշտպանի, բայց ամեն օր հանգիստ պահերին դրանք լսելը, ուսումնասիրելը և դրանց շուրջ խորհելը կմեծացնի Հոգու հետ հաղորդակցությունը:

Խելամտորեն օգտագործեք տեխնոլոգիան: Ձեր սարքում նշեք կարևոր սուրբ գրությունները և հաճախ կրկնեք դրանց: Երիտասարդներ, եթե ամեն անգամ սուրբ գրության մի հատված կարդաք այնքան հաճախ, որքան տեքստային հաղորդագրություններ եք ուղարկում, շուտով անգիր կսովորեք սուրբ գրությունների հարյուրավոր հատվածներ: Կհամոզվեք, որ անհրաժեշտության դեպքում այդ ուղերձները կդառնան Սուրբ Հոգու ոգեշնչման և առաջնորդության հզոր միջոց:

Մեր տները Փրկչի վրա կենտրոնացնելու փորձերում անչափ կարևոր է, որ անենք հնարավորինս ամեն ինչ, Սուրբ Հոգու մեղմ, առաջնորդող ազդեցությունը մեր կյանք բերելու համար: Այդ հուշումներին հնազանդ ենթարկվելն անգամ ավելի շատ ուժ է տալիս մեզ:

Ավելի մեծ խաղաղություն կգտնեք, եթե հնազանդ լինելու ձեր ջանքերը զուգորդեք ձեր շրջապատի մարդկանց ծառայելու հետ: Այնքան շատ մարդիկ են, որ ըստ իրենց բնորոշմամբ աննշան տաղանդներ ունենալով, խոնարհ և մեծահոգաբար օգտագործում են դրանք՝ օրհնելու իրենց շրջապատում գտնվողների կյանքը: Եսասիրությունը մեծ չարիքի արմատն է: Այդ չարիքի հակաթույնը Փրկչի կյանքի օրինակն է: Նա ցույց է տալիս, թե ինչպես կենտրոնացնել մեր կյանքը ուրիշներին անշահախնդիր ծառայելու վրա:

Ես մի ճշմարտություն եմ սովորել, որն այնքան հաճախ է կրկնվել իմ կյանքում, որ համարում եմ բացարձակ օրենք: Դա ցույց է տալիս, թե ինչպես են հնազանդությունն ու ծառայությունը կապված Աստծո զորության հետ: Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու և Նրա զավակներին անձնուրաց ծառայելու բնական հետևանքը Աստծո զորությունն է, զորություն, որն օգնում է անել մեր ուժերից ավելին: Մեր ներըմբռնումները, տաղանդները, ունակություններն ավելանում են, որովհետև ստանում ենք ուժ ու զորություն Տիրոջից: Նրա զորությունը հանդիսանում է հիմնական բաղադրիչը խաղաղությամբ լի տուն հիմնելու համար:

Երբ ձեր տունը կենտրոնացնում եք Փրկչի վրա, այն բնականաբար կդառնա ապաստան ոչ միայն ձեր անձնական ընտանիքի, այլև ընկերների համար, ովքեր ապրում են առավել դժվար պայմաններում: Նրանց կգրավի այնտեղ տիրող հանգստությունը: Նման ընկերներին ընդունեք ձեր տանը: Նրանք կծաղկեն այդ Քրիստոսակենտրոն միջավայրում: Դարձեք ձեր երեխաների ընկերների ընկերները: Նրանց համար արժանավայել օրինակ ծառայեք:

Մեծագույն օրհնություններից մեկը, որ կարող ենք առաջարկել աշխարհին, Քրիստոսակենտրոն տան զորությունն է, որտեղ ուսուցանվում է ավետարանը, պահվում են ուխտերը և թևածում սերը:

Տարիներ առաջ, միսիոներական շրջագայությունից հետո, կինս՝ Ջենինը պատմեց մի երեցի մասին, որին հանդիպել էր: Ջենինը հարցրել էր նրան իր ընտանիքի մասին և զարմանքով իմացել, որ այդ տղան ընտանիք չուներ: Նա պատմել էր, որ ծնվելուց հետո մայրն իրեն հանձնել էր պետությանը: Նա իր մանկությունն անցկացրել էր տարբեր մանկատներում, և դեռահաս տարիքում օրհնվել էր՝ գտնելով ավետարանը: Ծխի մի սիրող ընտանիք օգնել էր, որ նա կարողանար միսիա ծառայել:

Ավելի ուշ Ջենինը միսիայի նախագահի կնոջից հարցրել էր այդ հրաշալի երեցի մասին: Նա իմացել էր, որ մի քանի ամիս առաջ այդ երեցը հիվանդության պատճառով մի քանի օր անցկացրել էր միսիայի տանը: Այդ ընթացքում նա իրենց

Նյու Յորք Սիթի, Նյու Յորք, ԱՄՆ

հետ էր անցկացրել ընտանեկան երեկոն: Նախքան կրկին իր ծառայությանն անցնելը նա խնդրել էր միսիայի նախագահին, որ թույլ տար իրեն իր միսիայի վերջում երկու-երեք օր անցկացնել միսիայի տանը: Նա ցանկացել էր տեսնել, թե ինչպես է Քրիստոսակենտրոն տունը գործում, որպեսզի իր ընտանիքը կարողանար նմանեցնել նրանց ընտանիքին:

Ձեր ուժերի սահմանում արեք ամեն բան այդպիսի տուն ունենալու համար: Ձեռք մեկնեք անբարենպաստ պայմաններում ապրողներին: Եղեք ճշմարիտ ընկեր: Նման տևական ընկերությունը նման է ասֆալտի, որը լցնում է կյանքի ճեղքերը և մեր ճամփորդությունը դարձնում ավելի հարթ ու հաճելի: Դա չպետք է լինի անձնական առավելության հասնելու միջոց, այլ գանձ, որը պետք է գնահատել և դրանից մասնաբաժին հանել: Ձեր տուն ընդունեք մյուսներին, ովքեր նման փորձառությունից ամրանալու կարիքն ունեն:

Վերջին մտքերս ուղղում եմ նրանց, ովքեր սիրում են ընտանիքի անդամին, որը լավ ընտրություններ չի կատարում: Դա կարող է փորձել մեր համբերությունը և տոկունությունը: Մենք պետք է վստահենք Տիրոջը և Նրա ժամանակին, որպեսզի մեր աղոթելու ու փրկելու ջանքերի դրական արձագանքն ի հայտ գա: Մենք անում ենք ամեն ինչ մեր ուժերի սահմանում ծառայելով, օրհնելով և խոնարհաբար ընդունելով Տիրոջ կամքն ամեն ինչում: Մենք հավատք ենք գործադրում և հիշում ենք, որ կան բաներ, որոնք պետք է թողնել Տիրոջը: Նա հրավիրում է մեզ մեր բեռը դնել Իր ոտքերի մոտ: Հավատքով մենք կարող ենք իմանալ, որ այդ սիրելի մարդը, որ մոլորվել է, լքված չէ, այլ գտնվում է սիրող Փրկչի հսկողության ներքո:

Մյուսների մեջ տեսեք ոչ թե բծեր, այլ լավ գծեր: Երբեմն բիծը մաքրելու համար անհրաժեշտ է ոչ միայն պատշաճ ուշադրություն դարձնել, այլև ապավինել տվյալ մարդու արժանիքներին:

Երբ զգում եք, որ հույսի միայն մի բարակ թել կա, իրականում դա ոչ թե թել, այլ զանգվածային կապող օղակ է, փրկարար օղակ, որն ամրացնում և բարձրացնում է ձեզ: Դա սփոփանք կպարգևի, որ այլևս չվախենաք: Ձգտեք ապրել արժանավայել և վստահել Տիրոջը:

Մենք անհանգստանալու կարիք չունենք, եթե միաժամանակ չենք կարողանում անել այն ամենը, ինչ Տերը խորհուրդ է տվել մեզ անել: Նա նաև խոսել է ամեն ինչի ժամանակի և եղանակի մասին: Ի պատասխան առաջնորդության համար ասված մեր անկեղծ աղոթքների՝ Նա կառաջնորդի մեզ այն ամենում, ինչը կարևոր է մեր կյանքի յուրաքանչյուր փուլում: Մենք կարող ենք սովորել, աճել և դառնալ Նրա պես՝ ամեն անգամ հաստատուն քայլ կատարելով:

Ես բերում եմ վկայություն, որ Հիսուս Քրիստոսի ավետարանում խորը արմատներ գցելով հնազանդ ապրելն առավելագույն վստահություն է պարգևում, որ մեր տներում կունենանք խաղաղություն և ապաստան: Դեռևս կլինեն շատ դժվարություններ կամ խոր կսկիծ, սակայն դժվարին պահերին անգամ կարող ենք ունենալ ներքին խաղաղություն և լիակատար երջանկություն: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի Քավությունն այդ լիառատ խաղաղության աղբյուրն է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Անձնական խաղաղությունն արդարության պարգևն է

Կյանքի փորձություններով հանդերձ՝ Փրկչի Քավության և Նրա ողորմածության շնորհիվ, արդար կյանքը կպարգևատրվի անձնական խաղաղությամբ:

Վերջերս ունեցած իմ փորձառությունները պատճառ հանդիսացան, որպեսզի ես խորհեմ խաղաղության հետ առնչվող վարդապետության մասին և, հատկապես, Հիսուս Քրիստոսի դերի մասին, որ օգնում է մեզանից յուրաքանչյուրին գտնել հարատև անձնական խաղաղություն:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում տեղի ունեցած երկու իրադարձություններ խորապես հուզեցին ինձ: Առաջինը, ես խոսեցի Էմիլի Փարկերի հուղարկավորության ժամանակ՝ մի թանկագին վեց տարեկան փոքրիկ, ով կորցրեց իր կյանքը Նյութաունի, Կոնեկտիկուտ, ողբերգական կրակոցի ժամանակ 25 ուրիշների հետ՝ որոնց թվում 19 երեխաներ էին: Ես սգացի նրա ընտանիքի հետ, և հասկացա, որ շատերն են զրկված խաղաղությունից: Ես ուժ ու հավատ տեսա նրա ծնողների՝ Ռոբերտ և Ալիսա Փարկերների մեջ:

Երկրորդը, Աբիդջանի Այվորի Քոստ քաղաքում ես հանդիպեցի Եկեղեցու հազարավոր հավատարիմ անդամների հետ:[1] Այս ֆրանսախոս արևմտա-աֆրիկյան երկիրը կրել է շատ տնտեսական դժվարություններ, ռազմական հեղաշրջում և վերջերս տեղի ունեցած երկու ռազմական պատերազմ, որ ավարտվեցին 2011-ին: Այնուամենայնիվ, մինչ նրանց հետ էի, զգում էի հատուկ խաղաղություն:

Հաճախ իրադարձություններն այնպես են ընթանում, որ զրկում են մեզ խաղաղությունից և ստիպում ավելի խոցելի զգալ:

Ո՞վ կարող է մոռանալ 2001թ.-ի սեպտեմբերի 11-ի կործանարար հարձակումները Միացյալ Նահանգների տարբեր տեղերում: Նման իրադարձությունները մեզ հիշեցնում են, թե որքան արագ մեր խաղաղության և ապահովության զգացումները կարող են փլուզվել:

Մեր ավագ որդին և նրա կինը, ովքեր սպասում էին իրենց առաջին երեխային, Նյու Յորքի համաշխարհային առևտրի կենտրոնից երեք թաղամաս այն կողմ էին ապրում, երբ առաջին ինքնաթիռը բախվեց Հյուսիսային Աշտարակին: Նրանք բարձրացան իրենց բազմաբնակարան շենքի կտուր և սարսափեցին, երբ տեսան այդ զարհուրելի պատահարը, ինչը նրանք կարծում էին, որ այդպես էր: Հետո նրանք ականատես եղան, թե ինչպես երկրորդ ինքնաթիռը բախվեց Հարավային Աշտարակին: Նրանք անմիջապես հասկացան, որ դա դժբախտ պատահար չէր, և կարծեցին, որ Մանհեթենի հարավային մասը ենթարկվում է հարձակումների: Երբ Հարավային Աշտարակը փլուզվեց, նրանց շենքը ծածկվեց փոշու ամպով, որը տարածվեց Մանհեթենի ողջ հարավային մասով:

Շփոթված լինելով այն ամենից, ինչին ականատես եղան, և մտահոգվելով հետագա հարձակումների մասին՝ նրանք տեղափոխվեցին ավելի ապահով տարածք և հետո Լինկոլնի կենտրոնում գտնվող Մանհեթեն ցցի Եկեղեցու շենք: Երբ նրանք հասան, տեսան, որ Հարավային Մանհեթենի տասնյակ այլ անդամներ կայացրել էին ցցի կենտրոնում հավաքվելու նույն որոշումը: Նրանք մեզ զանգահարեցին, որպեսզի տեղեկացնեն, թե որտեղ են: Ես հանգստացա, որ նրանք ապահով են, սակայն չզարմացա նրանց գտնվելու վայրի մասին: Ժամանակակից հայտնությունն ուսուցանում է, որ Սիոնի ցցերը պաշտպանություն և «ապաստան [են] փոթորկից ու ցասումից, երբ այն անխառն կթափվի ողջ երկրի վրա»:[2]

Նրանք չէին կարող վերադառնալ իրենց բնակարան ավելի քան մեկ շաբաթ և ցնցված էին անմեղ կյանքերի կորստից, սակայն նրանք չկրեցին որևէ հարատև վնաս:

Մինչ խորհում էի այս իրադարձությունների մասին, ինձ խորապես հուզեց համընդհանուր կամ

համաշխարհային խաղաղության և անձնական խաղաղության միջև եղած վարդապետական տարբերությունը:[3]

Փրկչի ծնվելու ժամանակ երկնավոր զորքի մի բազմություն օրհնում էին Աստծուն և վկայակոչում. «Փառք Աստուծոյ բարձունքումը, և երկրի վերայ՝ *խաղաղութիւն,* և մարդկանց մէջ հաճութիւն»:[4]

Այնուամենայնիվ, ցավալիորեն տեսնում ենք, որ նույնիսկ Աստծո Որդու ծննդյանը հետևող այս հավերժորեն նշանակալից ժամանակաշրջանում Հերովդես թագավորը կոտորեց Բեթլեհեմի անմեղ մանուկներին:[5]

Ընտրությունը կարևոր է երջանկության ծրագրում: Այն ի նկատի ունի սերը, զոհաբերությունը, անձնական զարգացումն ու փորձառությունը, որ անհրաժեշտ են մեր հավերժական առաջընթացի համար: Այս ընտրությունը նաև թույլ է տալիս, որ մենք մահկանացու կյանքում զգանք բոլոր ցավերն ու տառապանքները, նույնիսկ երբ դրանց պատճառ են հանդիսանում այնպիսի բաները, որ մենք չենք հասկանում, կամ ուրիշների չարամիտ կործանարար ընտրությունները: Երկնքում տեղի ունեցած պատերազմն ինքնին մղվում էր մեր բարոյական ընտրությունը պաշտպանելու համար և կարևոր է Փրկչի երկրային ծառայությունը հասկանալու համար:

Ինչպես ասվում է Մատթէոսի 10-րդ գլխում, Փրկիչը հրահանգներ տվեց Տասներկուսին, և ընդունեց, որ Իր առաքելությունը չի նվաճի համընդհանուր խաղաղություն այս մահկանացու կյանքում: Առաքյալներին ասվեց իրենց այցելած արժանի տների վրա թողնել խաղաղության օրհնություն, բայց զգուշացվեց, որ նրանք կլինեն «գայլերի մեջ . . . [և] ամենից կատուիք իմ անունի համար. բայց ով որ կհամբերէ մինչեւ վերջը, նա կապրի»:[6] Մի կարևոր արտահայտություն է արված 34-րդ հատվածում. «Մի կարծէք թէ ես եկայ երկրիս վերայ խաղաղութիւն գցելու»:[7] Ակնհայտ է, որ համընդհանուր խաղաղություն գոյություն չի ունեցել երկրի վրա



Քրիստոսի մահկանացու ծառայության ժամանակ, և ոչ էլ հիմա գոյություն ունի:

Վարդապետություն և Ուխտերի Տիրոջ նախաբանում մի քանի շատ կարևոր սկզբունքներ են ուսուցանվում: Ինչ վերաբերում է նրանց, ովքեր չեն ապաշխարում, Նրա Հոգին (Քրիստոսի Հոգին), որ տրվում է ամեն մարդու, ով աշխարհ է գալիս,[8] «միշտ չի տքնի մարդու հետ»:[9] Նաև «խաղաղությունը պիտի վերցվի երկրի վրայից»:[10] Մարգարեները հայտարարել են, որ խաղաղությունը իսկապես վերցվել է երկրի վրայից:[11] Լյուցիֆերը դեռ կապված չէ և իշխանություն է գործադրում այս աշխարհում:[12]

Ամենուրեք լավ մարդկանց արդար ցանկությունը միշտ եղել է ու կլինի աշխարհում խաղաղություն ունենալը: Մենք երբեք չպետք է հանձնվենք այս նպատակին հասնելու համար: Սակայն, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Խաղաղության և սիրո այդ ոգին երբեք չի կարող գալ աշխարհ . . . մինչև մարդկությունը չընդունի Աստծո ճշմարտությունն ու Աստծո ուղերձը . . . , և ճանաչի նրա զորությունն ու իշխանությունը, որն աստվածային է»:[13]

Մենք ողջ սրտով հույս ունենք և աղոթում ենք համընդհանուր խաղաղության համար, բայց դա մեր դերն է որպես անհատներ և ընտանիքներ նվաճել այնպիսի խաղաղություն, որը հանդիսանում է արդարության համար խոստացված պարգևը: Այս խաղաղությունը Փրկչի առաքելության և քավող զոհաբերության խոստացված պարգև է:

Այս սկզբունքը հակիրճ կերպով ներկայացված է Վարդապետություն և Ուխտերում. «Բայց իմացեք, որ նա, ով արդարության գործեր է անում, պիտի ստանա իր վարձքը, այսինքն՝ խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում»:[14]

Նախագահ Ջոն Թեյլորն ուսուցանել է, որ խաղաղությունը ոչ միայն ցանկալի է, այլ «այն Աստծո պարգևն է»:[15]

Այն խաղաղությունը, որ ես ի նկատի ունեմ, պարզապես ժամանակավոր հանգստություն չէ: Դա հարատև խորը երջանկություն է և հոգևոր բավարարվածություն:[16]

Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը Փրկչի խաղաղությունը նկարագրել է հետևյալ կերպ. «Նրա խաղաղությունը կմեղմացնի մեր տառապանքը, կսրտապնդի մեր կոտրված սրտերը, կհեռացնի մեր միջից ատելության զգացումները, մեր մեջ կծնի սեր մեր ընկերների նկատմամբ, որը կլցնի մեր հոգիները հանգստությամբ և երջանկությամբ»:[17] Էմիլի Փարկերի ծնողների հետ իմ հանդիպումների ընթացքում ես տեսա, որ Փրկչի խաղաղությունը մեղմացրել է նրանց տառապանքը և օգնում է սրտապնդել նրանց կոտրված սրտերը: Հատկանշական է, որ կրակոցից անմիջապես հետո Եղբայր Փարկերը ներում արտահայտեց ոճրագործի նկատմամբ: Ճիշտ այնպես, ինչպես Նախագահ Գրանտն է ասել, Փրկչի խաղաղությունը կարող է «հեռացնել մեր միջից ատելության զգացումները»: Դատաստանը Տիրոջինն է:

Այվորի Քոստի Սրբերը խաղաղություն գտան իրենց երկրում քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում՝ կենտրոնանալով Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու վրա՝ առանձնակի ուշադրություն հատկացնելով ընտանեկան պատմությանը և իրենց նախնիների համար տաճարային աշխատանքին:[18]

Մենք բոլորս խաղաղություն ենք փափագում: Խաղաղությունը

պարզապես ապահովություն կամ պատերազմի, բռնության, հակասության կամ անօրինության բացակայություն չէ: Խաղաղությունը գալիս է այն գիտելիքից, որ Փրկիչը գիտի, թե ով ենք մենք, և գիտի, որ մենք ունենք հավատք Նրա հանդեպ, սիրում ենք Նրան և պահում ենք Նրա պատվիրանները նույնիսկ և հատկապես կյանքի ջախջախիչ փորձությունների ու ողբերգությունների ժամանակ: Տիրոջ պատասխանը Մարգարե Ջոզեֆ Սմիթին Լիբերթիի բանտում մխիթարություն է բերում մեր սրտերին.

«Որդի՛ս, խաղաղություն քո հոգուն. քո ձախորդություններն ու քո չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ.

Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի»:[19]

Հիշեք, «Աստուած խռովութեան Աստուած չէ, այլ խաղաղութեան»:[20] Նրանց համար, ովքեր մերժում են Աստծուն, չկա խաղաղություն: Մենք բոլորս մասնակցեցինք երկնքի խորհուրդներին, որոնք ապահովեցին բարոյական ընտրությունը՝ գիտենալով, որ կլինի սարսափելի ցավ և նույնիսկ սոսկալի ողբերգություն, քանի որ մարդիկ ճիշտ չեն գործածի իրենց ընտրությունը: Մենք հասկացանք, որ սա կարող էր մեր զայրույթի, շփոթվածության, անպաշտպանության և խոցելիության պատճառ հանդիսանալ: Բայց մենք նաև գիտեինք, որ Փրկչի Քավությունը կհաղթահարեր և կփոխհատուցեր մահկանացու կյանքի բոլոր անարդարությունների համար և խաղաղություն կբերեր մեզ: Երեց Մարիոն Դ. Հենկսը իր տան պատին շրջանակով կախել էր Ուգո Բետիի կողմից արված հայտարարությունը. «Հավատալ Աստծուն նշանակում է գիտենալ, որ բոլոր կանոններն արդար կլինեն, և կլինեն հիանալի անակնկալներ»:[21]

Որո՞նք են խաղաղության աղբյուրները: Շատերը փնտրում են խաղաղություն աշխարհիկ ուղիներով, որ երբևէ հաջողության չեն հասել և չեն հասնի: Խաղաղություն չես գտնի՝ ձեռք բերելով մեծ հարստություն, իշխանություն կամ

հանրաճանաչություն:[22] Խաղաղություն չես գտնի հաճույքի, զվարճանքի կամ ժամանցի փնտրտուքի մեջ: Սրանցից ոչ մեկը, նույիսկ առատությամբ, չի կարող ստեղծել որևէ հարատև երջանկություն կամ խաղաղություն:

Էմմա Լու Թայնեի սիրելի օրհներգը տալիս է համապատասխան հարցեր. «Ու՞ր կարող եմ դիմել խաղաղության համար: Ու՞ր է իմ սփոփանքը, երբ մյուս բաներն ինձ չեն ամոքում»:[23] Պատասխանը Փրկիչն է, ով խաղաղության Աստվածն է: Նա «Խաղաղութեան իշխանն է»:[24]

Ինչպե՞ս ենք մոտ մնում Փրկչին: Աստծո առջև ինքներս մեզ հնազանդեցնելը, միշտ աղոթելը, մեղքերից ապաշխարելը, կոտրված սրտով և փշրված հոգով մկրտության ջրերը մտնելը և Հիսուս Քրիստոսի ճշմարիտ առաքյալներ դառնալը արդարության հիանալի օրինակներ են, որը պարգևատրվում է հարատև խաղաղությամբ:[25] Երբ Բենյամին Թագավորը Քրիստոսի Քավությանը վերաբերող իր հուզիչ ուղերձը հղեց, բազմությունն ընկավ գետնին: «Տիրոջ Հոգին եկավ նրանց վրա և նրանք լցվեցին ուրախությամբ, ստացած լինելով իրենց մեղքերին թողություն, և ունենալով *խղճմտանքի խաղաղություն* այն արտասովոր հավատքի շնորհիվ, որ նրանք ունեին Հիսուս Քրիստոսում»:[26] Ապաշխարությունը և արդար ապրելը բերում են *խղճմտանքի խաղաղություն*, որը կարևոր է բավարարվածության համար:[27] Մեծ օրինազանցության դեպքում անհրաժեշտ է խոստովանություն, որպեսզի խաղաղություն լինի:[28] Գուցե չկա ոչինչ, որ հնարավոր լինի համեմատել այն խաղաղության հետ, որը գալիս է մեղքից կքված հոգուց, երբ նա իր բեռը տալիս է Տիրոջը և հայցում է Քավության օրհնությունները: Ինչպես ասվում է Եկեղեցու հայտնի օրհներգերից մեկում՝ «Ես կթողնեմ իմ բեռը Նրա ոտքերի մոտ ու հետո երգելով կգնամ»:[29]

Իմ սիրտը հրճվում է, երբ ես տեսնում եմ, որ մեր օրերում տաս հազարավոր երիտասարդ տղամարդիկ, երիտասարդ կանայք ու տարեց միսիոներներ ընդունել են մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սուրհանդակները լինելու կանչը: Նրանք տանում են խաղաղության վերականգնված ավետարանն աշխարհին, միևնույն ժամանակ՝ մեկ հոգու և մեկ ընտանիքի,– արդարության աշխատանք, որը խաղաղություն է բերում Երկնային Հոր զավակներին:

Եկեղեցին ապաստարան է, որտեղ Քրիստոսի հետևորդները խաղաղություն են գտնում: Որոշ երիտասարդներ աշխարհում ասում են, որ նրանք հոգևոր են, բայց ոչ կրոնասեր: Հոգևոր զգալը լավ է որպես առաջին քայլ: Այնուամենայնիվ, դա Եկեղեցում է, որ մենք ընկերանում ենք, ուսուցանվում և սնուցվում Աստծո բարի խոսքով: Առավել կարևոր քահանայության իշխանությունն է Եկեղեցում, որը հնարավորություն է տալիս սրբազան արարողությունների և ուխտերի իրականացմանը, որոնք ընտանիքներ են կապում միասին և պատրաստում են մեզանից յուրաքանչյուրին վերադառնալ Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի մոտ սելեստիալ թագավորություն: Այս արարողությունները խաղաղություն են բերում, որովհետև դրանք ուխտեր են՝ կապված Տիրոջ հետ:

Տաճարներն այն վայրերն են, որտեղ այս սրբազան արարողություններից շատերը տեղի են ունենում, և նաև աշխարհից հեռու խաղաղ ապաստարանի աղբյուր են: Նրանք, ովքեր այցելում են տաճար կամ մասնակցում են տաճարային բաց դռներին, նույնպես զգում են այս խաղաղությունը: Մի փորձառություն, որի մասին ես շատ լավ եմ հիշում, կապված է Սուվա Ֆիջիի տաճարի բաց դռների և նվիրագործման հետ: Այդտեղ տեղի էին ունեցել քաղաքական խռովություններ, որոնց արդյունքում խռովարարներն այրել ու կողոպտել էին Սուվայի գործարար մասը՝ օկուպացնելով կառավարության շենքերը և պատանդ պահելով օրենսդիրներին: Երկիրը կառավարվում էր զինված ուժերի կողմից: Ֆիջիի զինվորականները Եկեղեցուն սահմանափակ թույլտվություն տվեցին հավաքել ժողովրդին բաց դռների օրվա համար և մի փոքր խումբ՝ նվիրագործման համար: Եկեղեցու անդամներն ընդհանուր առմամբ հրավիրված չէին իրենց անվտանգության պատճառով: Սա միակ տաճարային նվիրագործումն էր Նավույի նախնական Տաճարից հետո, որն անցկացվեց շատ դժվար պայմաններում:

Մի անձնավորություն, ով հրավիրված էր բաց դռների արարողությանը, հնդկական ծագումով մի հաճելի Հինդու կին էր՝ Խորհրդարանի անդամ, ում ի սկզբանե պատանդ էին պահել, բայց հետո բաց թողել, որովհետև նա կին էր:

Մելեստիալ սենյակում՝ աշխարհի անհանգստությունից հեռու, նա արտասվեց՝ իրեն պատած խաղաղության զգացմունքների մասին արտահայտվելիս: Նա զգաց Սուրբ Հոգու սփոփանքն ու տաճարի սրբազան էության մասին վկայությունը:

Փրկիչը ճշմարիտ խաղաղության աղբյուրն է: Կյանքի փորձություններով հանդերձ՝ Փրկչի Քավության և Նրա ողորմածության շնորհիվ, արդար կյանքը կպարգևատրվի անձնական խաղաղությամբ: Մտերիմ միջավայրում, որտեղ Զատիկն էին նշում, Փրկիչը խոստացավ Իր Առաքյալներին, որ նրանք կօրհնվեն «Մխիթարիչով՝ Սուրբ Հոգով» և հետո ասաց այս կարևոր բառերը. «Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ»:[30] Հետո, հենց Իր Միջնորդական Աղոթքից առաջ, ասաց. «Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կունենաք. բայց քաջացեք, ես յաղթել եմ աշխարհքին»:[31]

Էլիզա Ռ. Մնոուն շատ գեղեցիկ է գրել այս հասկացության վերաբերյալ.

Բարձրացրեք ձեր սրտերը զովք առ Աստված;
Թող ձեր ուրախությունը երբեք չդադարի:
Չնայած ձախողությունը տարածվում է աշխարհում,
Քրիստոսն ասում է. «Ինձանում խաղաղություն կունենաք»:[32]

Ես այսպես եմ վկայում Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Կոպենհագեն, Դանիա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 2013թ.-ի Փետրվարի 10-ին՝ կիրակի օրը, երկու համաժողով տեղի ունեցավ Աբիդջանում; ներկա էր 9,693 մարդ, որից 619 դեռ Եկեղեցու անդամ չէր: Եկեղեցու ընդհանուր անդամակցությունը Այվորի Քոստում կազմում է մոտ 19000:
2. Վարդապետություն և Ուխտեր 115.6:
3. The word *peace* has different meanings. In classical Greek it refers to cessation, discontinuance, or absence of hostilities between rival forces. In Hebrew the word has a more comprehensive meaning and sometimes is just a form of greeting. Peace is also a "state of existence that comes to man only upon the terms and conditions set by God" (Howard W. Hunter, in Conference Report, Oct. 1966, 14–17):
4. Ղուկաս 2.14; շեշտադրումն ավելացված է:
5. Տես Մատթէոս 2.16; տես նաև Ross Douthat, "The Loss of the Innocents," *New York Times,* Dec. 16, 2012, 12:
6. Մատթէոս 10.16, 22:
7. Մատթէոս 10.34:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.46:
9. Վարդապետություն և Ուխտեր 1.33:
10. Վարդապետություն և Ուխտեր 1.35:
11. Նախագահ Վուդրուֆը հայտարարել է սա 1894թ.-ին և կրկին 1896թ.-ին: Տես *The Discourses of Wilford Woodruff,* ed. G. Homer Durham (1946), 251–52; տես նաև Marion G. Romney, in Conference Report, Apr. 1967, 79–82.
12. Տես Joseph Fielding Smith, *The Predicted Judgments,* Brigham Young University Speeches of the Year (Mar. 21, 1967), 5–6. Այնուամենայնիվ, Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Մենք կարող ենք ունենալ ներքին խաղաղություն, նույնիսկ եթե խաղաղությունը վերցված լինի երկրից . . . [and] all things [are] in commotion» ("Behold, the Enemy Is Combined," *Ensign,* May 1993, 79):
13. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 400.
14. Վարդապետություն և Ուխտեր 59.23:
15. *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 151.
16. From the ancient Greeks to our own day, these words—*happiness* and *contentment*—have been parsed, dissected, and grappled with not only as to their meaning but also the guidance they give to our lives. See David Malouf, *The Happy Life: The Search for Contentment in the Modern World* (2011). See also a review of Mr. Malouf's book, in R. Jay Magill Jr., "How to Live Well," *Wall Street Journal,*

Jan. 26–27, 2013, C6.
17. *Teachings of Presidents of the Church: Heber J. Grant* (2002), 226.
18. «Այվորի Քոստի հինգ ցցերից երեքը Եկեղեցում առաջնային 25-ի մեջ են՝ ըստ չափահասների տոկոսաչափի, ովքեր ներկայացնում են ընտանիքի անդամների անուններ տաճարային արարողությունների համար», և Քոքոդի Քոթ դ'Այվորի Ցիցը ամենաբարձրն է (C. Terry Warner and Susan Warner, "Apostle Visits Ivory Coast, Is 'Impressed with Exceptional Spirit,'" *Church News,* Mar. 3, 2013, 4, 14): Հաշվի առնելով տեղի քաղաքացիական պատերազմը, և որ ամենամոտ տաճարը գտնվում էր Ակրայում, Գանա, ավտոբուսով 12 ժամ հեռավորության վրա, սա հավատքի զարմանալի ապացույց է և հանգեցրել է անձնական և ընտանեկան խաղաղության:
19. Վարդապետություն և Ուխտեր 121.7–8: Նախագահ Հարոլդ Բ. Լին ուսուցանել է. «Այսպիսով, մենք պետք է զտվենք; մենք պետք է փորձությունների ենթարկվենք, որպեսզի ապացուցենք այն ուժն ու զորությունը, որ կա մեր մեջ» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 208):
20. Ա. Կորնթացիս 14.33:
21. In Marion D. Hanks, "**A Loving, Communicating God,**" *Ensign,* Nov. 1992, 63.
22. Տես Jeffrey R. Holland, *For Times of Trouble* (2012), 79. Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը ուսուցանում է, որ «մարդկանց վիատեցնելու համար իսկական աղքատությունը կարող է շատ բան անել, քան որևէ այլ վիճակ, բացի մեղքից»: Սակայն փողի արդար օգտագործումը կարող է մեծացնել խաղաղությունը:
23. "Where Can I Turn for Peace?" *Hymns,* no. 129.
24. Եսայիա 9.6:
25. Ջոն Գրինլիֆ Վիթիերը պարզ ասել է. «Ուշադիր եղիր, թե ինչպես ես ապրում: Օրվա ընթացքում մի գործիր այնպես, որ գիշերը խաղաղություն չունենաս» ("Conduct [From the Mahabharata]," in *The Complete Poetical Works of John Greenleaf Whittier* [1802], 484):
26. Մոսիա 4.3; շեշտադրումն ավելացված է; տես նաև Marion G. Romney, in Conference Report, Apr. 1967, 79–82:
27. Խղճմտանքը բարոյական ուղեցույց է, որը տանում է դեպի խաղաղություն: Այն ձեռք է բերվում առնվազն երկու աղբյուրի միջոցով. Քրիստոսի Լույսի՝ փառահեղ պարգև Երկնային Հոր կողմից (տես Վարդապետություն և Ուխտեր 88.6–13; 93.2), և Սուրբ Հոգու պարգևի (տես Վարդապետություն և Ուխտեր 39.6):
28. «Օրինազանցություն կատարողին խաղաղություն բերելու համար անհրաժեշտ է երկու ներում՝ մեկը Տիրոջ Եկեղեցու պատշաճ իշխանություն կրողի կողմից, և մյուսը հենց Տիրոջ կողմից [տես Մոսիա 26.29]» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 41):
29. "How Gentle God's Commands," *Hymns,* no. 125.
30. Յովհաննու 14.26–27:
31. Յովհաննու 16.33:
32. "Though Deepening Trials," *Hymns,* no. 122.

Երեց Սթենլի Ջ. Էլլիս
Յոթանասունի Քվորումի անդամ

Տիրոջ ճանապարհը

Տիրոջ ճանապարհն այն է, որ մենք լսենք մեր ղեկավարների ուսմունքները, հասկանանք ճիշտ սկզբունքները, և ղեկավարենք ինքներս մեզ:

Յոթանասունական

Ես ծառայում եմ որպես Յոթանասունական: Յոթանասունականները կանչված են լինելու սուրհանդակներ՝ կիսվելու Տիրոջ խոսքով այնպես, ինչպես մենք ստանում ենք այն առաքյալներից , մարգարեներից ու Հոգուց և լինելու Քրիստոսի անվան հատուկ վկաները՝ քարոզելով ավետարանը ողջ աշխարհին, կառուցելով Եկեղեցին և կարգավորելով նրա գործերը (տես ՎևՈւ 107.25, 34):

Ագարակում մեծացած

Ես մեծացել եմ Այդահո նահանգի, Բրլի քաղաքին մոտ գտնվող ագարակում՝ իսկական Այդահոյացի հողագործ եմ: Որպես հողագործ՝ ես սովորել եմ.

1. Աշխատել՝ եթե չես ցանում, ապա չես հնձում:
2. Աշխատել խելացի՝ եթե ոռոգում ես և պարարտացնում, ավելին ես հնձում:
3. Ժամանակի կարևորությունը՝ եթե ճիշտ ժամանակին չես ցանում, վաղ ցրտահարությունը կարող է փչացնել բերքը:
4. Անել այն, ինչ անհրաժեշտ է կամ պետք է արվի, անկախ նրանից, թե ինչ է հաճելի, ցանկալի կամ հարմար. կովը կթում ես այն ժամանակ, երբ պետք է կթվի, այլ ոչ թե քո ցանկացած ժամանակ:
5. Ուղիղ լինել՝ ագարակի կենդանիների և մեքենաների հետ աշխատելիս ժամանակ չունես խոսքեր ընտրելու կամ մտածելու քաղաքավարության մասին: (Այս պարագայում, Եկեղեցում իմ ծառայության ընթացքում, ես հաճախ եմ հարցնում. «Դուք ուզում եք, որ ուղի՞ղ խոսեմ, թե՞ մեղմ»: Որպես կանոն՝ Սրբերը նախընտրում են «ուղիղ» խոսքը: Այսօր ես ուղիղ կխոսեմ):
6. Ի վերջո, որպես Այդահոյացի հողագործ՝ ես սովորել եմ կենտրոնանալ հիմնականի վրա:

Ոչինչ այնքան հիմնական չէ մեր և մեր վարդապետության համար, որքան հավատո հանգանակի առաջին կետը. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն» (Հավատո Հանգանակ 1.1):

Բացի այդ, Նա *մեր* Երկնային Հայրն է, ով գիտի մեզ, սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք վերադառնանք Նրա մոտ: Հիսուսը *մեր* Փրկիչն ու Քավիչն է, ով քավության միջոցով հնարավոր դարձրեց, որ

մենք հաղթահարենք մահը և նորից ապրենք, և հնարավոր դարձրեց *մեր* վեհացումն ու հավերժական կյանք ունենալը: Սուրբ Հոգին՝ *մեր* մխիթարիչը, հայտնողը, ուսուցիչը, վկայողն ու առաջնորդողն է:

Մտածեք այդ մասին եղբայրներ և քույրեր՝ մենք հոգևոր որբեր չենք: Մենք միայնակ չենք:

Ո՞րն է ծնող ունենալու առավելությունը՝ որբ չլինելը: Մենք կարող ենք սովորել նրանցից, օգտվել նրանց փորձից, խուսափել ծուղակներից, որոնց մասին նրանք նախազգուշացնում են և ավելի լավ են հասկանում՝ իրենց փորձից ելնելով: Մենք չպետք է մոլորվենք, շփոթվենք, խաբվենք կամ լինենք անարդյունավետ: Դա հատկապես ճշմարիտ է մեր Երկնային Հոր պարագայում, ով ցույց է տվել և ուսուցանել մեզ ոչ միայն ճանապարհներից մեկը, այլ *միակ* ճանապարհը:

Սիդնեյ, Ավստրալիա

Աստված ունի ճանապարհը

Իրականում Աստված ունի ճանապարհը՝ ապրելու,[1] սիրելու,[2] օգնելու,[3] աղոթելու,[4] զրուցելու,[5] միմյանց հետ շփվելու,[6] առաջնորդելու,[7] ամուսնանալու,[8] երեխաներ մեծացնելու,[9] սովորելու,[10] ճշմարտությունն իմանալու,[11] ավետարանով կիսվելու,[12] խելամտորեն ընտրելու ինչ ենք ուտում,[13] և այլն:

Սուրբ գրությունների հետ միասին կան Տիրոջ ճանապարհը գտնելու ուրիշ լավ աղբյուրներ, որոնց թվում են՝ *«Հավատքին հավատարիմ», «Երիտասարդներին զորացնելու համար»,* գրքույկները և կենդանի առաքյալների ու մարգարեների այլ ուսմունքներ:

1. Օրինակ, սուրբ գրություններում Տերը մեզ ուսուցանել է.

   «Որովհետեւ իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, եւ ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն,

   ասում է Տէրը. Այլ ինչպէս որ բարձր է երկինքը երկրից, նոյնպէս էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներիցը եւ իմ խորհուրդները ձեր խորհուրդներիցը» (Եսայիա 55.8–9):
2. Այս վերջին օրերում չարիքներից մեկն այն է, որ «ամեն մարդ քայլում է իր իսկ ճանապարհով» (ՎԵՌ 1.16): Առակաց գրքում մեզ զգուշացվում է «քո հասկացողութեանը մի վստահիր» և «Դու քո աչքի առաջին իմաստուն մի լինիր» (տես Առակաց 3.5–7):
3. Մենք ուսուցանվում ենք, որ եթե Տիրոջ ուղով ենք վարվում, Նա պարտավորվում է օրհնել մեզ, և մենք Նրա խոստումն ունենք, իսկ եթե ոչ Նրա ուղով, մենք խոստում չունենք (տես ՎԵՌ 82.10):
4. Տերը հակադրել է Իր ուղին մեր ուղու հետ՝ մարգարե Սամուելին հրահանգելու ժամանակ, ով ուղարկվել էր նոր թագավոր գտնելու. «Բայց Տէրը Սամուէլին ասեց. Նորա երեւոյթին եւ հասակի երկայնութեանը մի նայիր, որովհետեւ նորան անարգեցի. այն պատճառով որ այն չէ բանը որ տեսնում է մարդը. որովհետեւ մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տէրը սրտին է նայում» (Ա Թագավորաց 16.7):
5. Նույնիսկ աղքատին ու կարիքավորին օգնելու համընդհանուր ընդունված ցանկության հարցում Տերը համաձայնում է մեր նպատակների հետ, բայց զգուշացնում է. «Մակայն դա անպայման պետք է արվի իմ իսկ ձեռով» (ՎԵՌ 104.16): Այլապես, օգնելու մեր ջանքերը իրականում կարող են վնաս պատճառել: Տերը մեզ ուսուցանել է բարձրացնել ինքնապահովման մակարդակը: Նույնիսկ, երբ մենք կարող ենք օգնել, մենք չպետք է տանք կամ տրամադրենք այն, ինչ նրանք կարող են և պետք է անեն իրենց իսկ համար: Ամենուր փորձված է, որ աշխարհը սովորում է նպաստ ստանալու չարիքին: Իրավ, Աստված գիտի լավագույն ուղին:

Եկեք քննարկենք մի քանի այլ օրինակներ: Տերը ունի միսիոներություն անելու ճանապարհը: Այն կանոնակարգված է սուրբ գրություններում ու *Քարոզիր Իմ Ավետարանում* և իրագործվում է Սուրբ Հոգու ոգեշնչմամբ:

Տերը ունի սիրելու Իր ճանապարհը կամ *միակ* ճանապարհը: Աշխարհում ասում են, որ եթե երկու հոգի միմյանց սիրում են, մնացածը կարևոր չէ: Մեր Երկնային Հայրը ուսուցանում է, որ սիրելը կարևոր է, սակայն Նա ուսուցանում է ավելին. որ սերն արտահայտելու համար կա լիազորված ճանապարհ ու ժամանակ:

Ղեկավարել ինքներս մեզ

Իր երիտասարդության տարիներին Ջոզեֆ Սմիթին ուսուցանվել էր Տիրոջ ուղիները: Երբ նրան հարց էին տվել, թե ինչպես է նա ղեկավարում Եկեղեցին, նա պարզաբանել

է, որ նա անդամներին ուսուցանել է ճիշտ սկզբունքներ և նրանք իրենք են իրենց ղեկավարել:[14] Եղբայրներ և քույրեր, մեր կենդանի առաքյալներն ու մարգարեները դեռևս ուսուցանում են ճիշտ սկզբունքներ: Հարցը կայանում է հետևյալում՝ «Արդյո՞ք մենք օգտագործում ենք այդ սկզբունքները ինքներս մեզ կառավարելու համար»:

Մի բան, որ հաճախ մեզ ուսուցանում են այն է, որ ծաղկենք այնտեղ, որտեղ մեզ տնկել են: Սակայն, երբեմն, մենք գայթակղվում ենք վերաբնակվելու՝ ինչ-որ նոր տեղում, մտածելով, որ մեր երեխաները կունենան ավելի շատ ընկերներ և, հետևաբար, ավելի լավ երիտասարդական ծրագրեր:

Եղբայրներ և քույրեր, իսկապե՞ս մենք մտածում ենք, որ մեր երեխաների փրկության գործոնը այն շրջապատն է, որտեղ մենք ապրում ենք: Առաքյալներն ու մարգարեները հաճախ ուսուցանել են, որ այն ինչ տեղի է ունենում մեր տան ներսում շատ ավելի կարևոր է, քան այն ինչի հանդիպում են մեր երեխաները դրսում: *Ինչպես* ենք մենք մեծացնում մեր երեխաներին ավելի կարևոր է, քան այն, թե *որտեղ* ենք մենք նրանց մեծացնում:

Իհարկե, կան ուրիշ գործոններ, որոնք որոշում են, թե որտեղ ապրել, և, բարեբախտաբար, Տերը կառաջնորդի մեզ, եթե մենք փնտրենք Նրա հաստատումը:

Մյուս հարցն այն է, թե «Որտե՞ղ մեր կարիքն ունեն»: 16 տարի շարունակ ես ծառայել եմ՝ Հյուսթոն, Տեխասի հյուսիսային ցցի նախագահությունում: Այդ ընթացքում շատերն են տեղափոխվել մեր տարածք: Մենք հաճախ էինք հեռախոսազանգեր ստանում, երբ այդ տարածք տեղափոխվողները հարցնում էին, թե որ ծուխն է ամենալավը: 16 տարվա ընթացքում միայն մեկ անգամ ես ստացա հեռախոսազանգ, որտեղ ասվում էր. «Ո՞ր ծուխը ամուր ընտանիքի կարիք ունի: Որտե՞ղ մենք կարող ենք օգնել»:

Եկեղեցու վաղ շրջանում, Նախագահ Բրիգամ Յանգը և ուրիշները կանչում էին անդամներին գնալ որոշակի տեղ, որպեսզի Եկեղեցին

հիմնեն այնտեղ: Այսօր էլ մենք ունենք Եկեղեցու հավատարիմ անդամներ, ովքեր կգնան այնտեղ, որտեղ մարգարեն կասի նրանց: Մենք իսկապե՞ս ակնկալում ենք, որ Նախագահ Մոնսոնը անհատապես, մեզանից 14 միլիոնից ավելի մարդկանց կասի, թե որտեղ կա մեր ընտանիքի կարիքը: Տիրոջ ճանապարհն այն է, որ մենք լսենք մեր ղեկավարների ուսմունքները, հասկանանք ճիշտ սկզբունքները, և ղեկավարենք ինքներս մեզ:

Հատկապես կարևոր է

Այն ամենով հանդերձ, ինչ կատարվում է այսօր Եկեղեցում, և քանի որ Տերը ամեն կողմից արագացնում է Իր աշխատանքը, շատ ավելի կենսականորեն կարևոր է, որ այն ամենը ինչ մենք անում ենք, անենք նրա ձևով:

Հատկապես, փրկության աշխատանքի հարցում մենք սովորում ենք, որ «իր Որդու պարգևով Աստված պատրաստել է ավելի գերազանց ուղի» (Եթեր 12.11): Քրիստոսի վարդապետությունն « է ճանապարհը. և չկա ոչ մի այլ ճանապարհ, ոչ էլ անուն՝ երկնքի տակ տրված, որով մարդ կարողանա փրկվել Աստծո արքայությունում» (2 Նեփի 31.21):

Եզրափակում

Երբ մենք այսօր աշխարհում տեսնում ենք շատերին, որոնք ապրում են շփոթության մեջ կամ ինչն ավելի վատ է՝ թափառում են արգելված ուղիներում և տառապում են սխալ ընտրությունների անտեղի հետևանքներից, ես ցանկանում եմ Ալմայի նման բացականչել.

«Ա՜խ, երանի ես մի հրեշտակ լինեի, և կարողանայի ունենալ իմ սրտի իղձը, որ ես առաջ գնայի և խոսեի Աստծո փողով, երկիրը ցնցելու ձայնով, և ապաշխարություն աղաղակեի ամեն ժողովրդի:

Այո, ես ամեն հոգու կհայտարարեի . . . փրկագնման ծրագիրը, որպեսզի նրանք ապաշխարեին և գային դեպի մեր Աստվածը, որպեսզի ողջ երկրի երեսին այլևս վիշտ չլիներ» (Ալմա 29.1–2):

Կրկին, ես վկայում եմ, որ Տերը գիտի ճանապարհը: Մեր Երկնային Հայրը գիտի մեզ, սիրում է մեզ և ցանկանում է օգնել: Նա ամենալավը գիտի, թե ինչպես օգնել: Մենք հոգևոր որբեր չենք:

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսն է «ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (Հովհաննես 14.6; տես նաև Ալմա 38.9): Նրա ճանապարհը հիմնված է հավերժական ճշմարտության վրա և տալիս է մեզ «խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում» (ՎևՈւ 59.23): Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 5.27; Մոսիա 4.27; Ալմա 7.23–25:
2. Տես Ելից 20.14; Բ Օրինաց 6.5; Հովհաննես 13.34–35; Հռովմայեցիս 1.24–32; Ա Թեսաղոնիկեցիս 4.3; Ալմա 39.3–5:
3. Տես Մոսիա 4.21–27; Վարդապետություն և Ուխտեր 104.15–18:
4. Տես Մատթեոս 6.5–13; 2 Նեփի 32.8–9; 3 Նեփի 18.21; Վարդապետություն և Ուխտեր 10.5:
5. Տես Առակաց 15.1; Կողոսացիս 4.6; Հակոբոս 5.12; 3 Նեփի 11.29–30:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 64.10–11; 121.41–46:
7. Տես Մատթեոս 25.14–30; Հովհաննես 10.1–14; Վարդապետություն և Ուխտեր 50.26; 107.99–100; 121.34–40:
8. Տես Ծննդոց 2.24; Յակոբոս 2.27; Վարդապետություն և Ուխտեր 42.22;132.19:
9. Տես Մոսիա 4.14–15; Վարդապետություն և Ուխտեր 68.25–28:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 43.8–9; 88.77–79, 118:
11. Տես Մորոնի 7.15–19; 10.3–5; Վարդապետություն և Ուխտեր 9.7–9:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 33.8–10; 100.3–8:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 89:
14. Տես *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 284:

Երեց Ջոն Բ. Դիքսոն
Յոթանասունից

Ավետարանը ողջ աշխարհին

Եկեղեցին հաստատուն առաջ է շարժվում ողջ աշխարհում՝ ազգից ազգ, մշակույթից մշակույթ, ժողովրդից ժողովուրդ՝ ըստ Տիրոջ օրացույցի և Նրա ժամանակի:

Փրկչի մահկանացու ծառայությունն ավարտվել էր: Նրա տառապանքը Գեթսեմանիում և խաչի վրա վերջացել էր: Մենք սովորում ենք Գործքից, որ Նա ծառայել էր 40 օր Իր Հարությունից հետո, «երևալով» Առաքյալներին և «Աստուծոյ արքայության համար . . . խոսելով» (Գործք Ա.3):

Նա ասաց նրանց, որ «դուք զորութիւն կառնէք՝ երբ որ Հոգին ձեզ վերայ կգայ, եւ իմ վկաները կլինիք Երուսաղէմումը եւ բոլոր Հրէաստանի եւ Սամարիայի մէջ մինչեւ երկրի ծայրերը» (Գործք Ա.8):

Ոչ շատ անց. «վերացաւ. Եւ մի ամպ վեր առաւ նորան նորանց աչքերիցը:

Եւ դեռ որ նորանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս դէպի երկինքը նորա գնալին, ահա երկու մարդիկ երեւեցան նորանց սպիտակ հանդերձներով,

Որ եւ ասեցին. Ով Գալիլեացի մարդիկ, ի՞նչ էք կանգնել եւ մտիկ էք անում դեպի երկինքը. Այս Յիսուսը, որ ձեզանից վերացաւ երկինքը, այսպէս կգայ ինչպէս նորան տեսաք երկինքը գնալիս» (Գործք Ա.9–11):

Փրկիչն իսկապես կրկին գալու է Իր Երկրորդ Գալստյան ժամանակ, բայց այդ ընթացքում Հիսուս Քրիստոսի Ավետարանը պետք է գնա «մինչև երկրի ծայրերը»:

Մատթեոսից մենք սովորում ենք հատուկ պատվերի մասին, որը տրվեց Առաքյալներին ավետարանը բոլոր ազգերին տանելու վերաբերյալ.

«Եւ Յիսուսը մօտ գալով նորանց հետ խօսեց եւ ասեց, Ամեն իշխանութիւնն ինձ տրուեցաւ երկնքումն և երկրումս.

Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը» (Մատթեոս ԻԸ.18–19):

Եկեղեցու վաղ օրերին՝ ժամանակի գագաթնակետին, ավետարանը քարոզվում էր միայն Իսրայելի տանը. ապա հայտնություն եկավ Պետրոսին՝ ավագ Առաքյալին, որ ժամանակը եկել էր ավետարանը տարածելու Իսրայելից այն կողմ և Հեթանոսներին: Գործքի Ժ և ԺԱ գլուխներն օգնում են մեզ հասկանալ այն գործընթացն ու ձևը, որով Եկեղեցու այս անխուսափելի տարածումը Աստծո զավակներից ավելի շատերին հայտնի դարձվեց նրա նախագահող պաշտոնյաներին և ընդհանուր անդամակցությանը:

Օգտագործելով Կոռնելիոսին, որը Հեթանոս էր՝ մի հարյուրապետ, և լավ մարդ, Տերը հայտնեց Պետրոսին, որ ավետարանը գնալու էր դեպի Հեթանոսները, մի տեսակետ, որը նոր էր և տարօրինակ այդ օրերի Սրբերի համար: Հայտնությունը, որն առաջացրեց այս փոփոխությունը Եկեղեցու գործերում եկավ Պետրոսին, ավագ Առաքյալին: Մենք գիտենք, որ ավետարանն, այնուհետև, արագորեն գնաց Հեթանոսների ազգերին:

Այդ ժամանակվա Եկեղեցու տարածման մի օրինակ էր Պոդոսի դարձի գալը, որը դարձավ Հեթանոսների մեծ Առաքյալ: Նա տեսիլք ունեցավ, երբ Դամասկոսի ճանապարհին էր, որտեղ Նա լույս տեսավ և մի ձայն լսեց, ապաշխարեց իր մեղքերից և կանչվեց Աստծուց (տես Գործք 22.6–18) և այդ ժամանակ դարձավ մի վիթխարի ուժ Հիսուս Քրիստոսի ավետարանը տարածելիս:

Այժմ եկեք առաջ շարժվենք 1800 տարի՝ դեպի ավետարանի վերականգնման ժամանակը կամ բոլոր բաների վերահաստատումը՝ նախքան Երկրորդ Գալուստը: Ես վկայում եմ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Եկեղեցին վերականգնվեց և շարունակում է առաջ շարժվել Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարությամբ: Նրանց պատվերը նույնն է ինչպես հին ժամանակների Առաքյալներինը՝ ավետարանը տանել աշխարհին:

1830 թվականից՝ Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի Սրբերի Եկեղեցու կազմակերպումից սկսած, Եկեղեցին հաստատուն առաջ է շարժվում ողջ աշխարհում՝ ազգից ազգ, մշակույթից մշակույթ, ժողովրդից ժողովուրդ՝ ըստ Տիրոջ օրացույցի և Նրա ժամանակի:

1978 թվականին, հետևելով ավագ Առաքյալի միջոցով հայտնության

հաստատված ձևին, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին հայտնություն եկավ՝ այս անգամ քահանայության օրհնությունները հասանելի դարձնելու բոլոր արժանի տղամարդկանց: Սա նշանակում էր, որ ոչ միայն Երկնային Հոր բոլոր զավակները ողջ աշխարհում կարող են ճաշակել վերականգնված ավետարանի բոլոր օրհնություններից: Սա շատ պատշաճ քայլ է Աստծո արքայության համար՝ երկրի վրա Քրիստոսի Երկրորդ Գալստին մոտեցող օրերում:

Այժմ ես կկիսվեմ, թե դա ինչպես անձնապես ինձ առնչվեց: Ես հենց նոր էի կանչվել որպես միսիայի նախագահ և Քույր Դիքսոնը և ես պատրաստվում էինք տանել մեր ընտանիքը Մեքսիկա, երբ Երեց Ռիչարդ Գ. Սքոթը՝ այն ժամանակ Յոթանասունի անդամ, պատմեց ինձ այս հատուկ հայտնության ի հայտ գալու մասին: Հիշում եմ, թե ինչպես արցունքներ հոսեցին աչքերիցս, երբ նա պատմեց ինձ, թե ինչ էր տեղի ունեցել: Ես խոսքերով չէի կարող արտահայտել գոհունակությունս, քանի որ գիտեի, որ դա ճիշտ էր, և որ ժամանակը եկել էր ողջ մարդկության համար հասանելիություն ունենալ ավետարանի բոլոր արարողություններին, ուխտերին և օրհնություններին:

Դա գրեթե 35 տարի առաջ էր և ես քիչ բան գիտեի այդ ժամանակ, որ անցկացնելու էի որպես Յոթանասուն իմ ծառայության մի քանի տարին Եկեղեցու Աֆրիկայի Արևմտյան տարածաշրջանում՝ մի հավատացյալ, հավատարիմ ժողովրդի մեջ, որոնց կյանքն այնքան փոխվելու էր՝ քահանայության վերաբերյալ 1978 թվականի հայտնությունից: Քույր Դիքսոնը և ես ապրեցինք այնտեղ չորս տարի և դա սքանչելի և կյանք փոխող փորձառություն էր մեզ համար:

Որպես ժողովուրդ՝ Արևմտյան մասի Աֆրիկացիները հավատում են Աստծուն, բացարձակապես չեն ամաչում հայտարարել և կիսվել իրենց հավատքով ուրիշների հետ և ունեն հիանալի ղեկավարելու ունակություններ: Նրանք գալիս են Եկեղեցի հարյուրներով և գրեթե ամեն շաբաթ մի քանի ծխեր կամ ճյուղեր են ստեղծվում Աֆրիկայի արևմտյան տարածքի ինչ-որ մի վայրում, և գրեթե յուրաքանչյուր դեպքում, բոլորը Աֆրիկացի քահանայության և օժանդակ կազմակերպության ղեկավարություն ունեն:

Ինչպե՞ս կցանկանայի, որ դուք միանայիք Սրբերին Նիգերիայի Աբայի, կամ Գանայի Ակրայի տաճարում, որտեղ դուք կզգայիք Սրբերի նվիրվածությունը և կճանաչեիք ամբողջությամբ աֆրիկացի տաճարների նախագահություններին: Կամ որքան կցանկանայի ծանոթացնել ձեզ Աֆրիկայի Տարածքային Յոթանասունականների հետ, ովքեր այսօր հավաքվել են մեզ հետ այստեղ՝ Համաժողովների կենտրոնում, և որոնք իրավաբաններ, դասախոսներ, բիզնեսի կառավարիչներ են կամ ծանոթանայիք աֆրիկացի ցցի և ծխի ղեկավարների և նրանց ընտանիքների հետ:

Կիրակնօրյա դպրոցի, ժանդակ կազմակերպությունների կամ քահանայության դասերին միանալը

սրբազան փորձառություն է, որտեղ հետևում են Եկեղեցու ծրագրին և առկա է ավետարանի մեծ ըմբռնում, ուսուցում և Հոգու միջոցով ուսումնասիրություն:

Ավետարանը ամբողջ Աֆրիկայում քարոզվում է մի երջանիկ ժողովրդի, որը շատ մտահոգված չէ արտաքին բաներով, որն ազդում է շատերի կյանքի վրա Արևմուտքում: Նրանք մտահոգված չեն նյութական անվերջ ունեցվածքներ ունենալու մասին:

Աֆրիկացիների մասին ասում են, որ «նրանք շատ քիչ ունեն նրանից, ինչն քիչ նշանակություն ունի և շատ ունեն նրանից, ինչը շատ նշանակություն ունի»: Նրանց քիչ է հետաքրքրում հսկայական տները և լավագույն ավտոմեքենաները, բայց մեծ հետաքրքրություն են ցույց տալիս ճանաչելու իրենց Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և հավերժական ընտանիքներ ունենալը: Որպես իրենց հավատքի բնական արդյունք Տերը բարձրացնում է նրանց իմաստալի ուղիներով:

Ճանաչելով նրանց այնպես, ինչպես մենք ենք ճանաչում, մեզ համար զարմանալի չէ, որ նրանք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու այդքան կարևոր տարածումն են վերջին օրերում: Երբ Դանիելը՝ Հին Կտակարանի մարգարեն, տեսիլքով տեսավ Աստծո թագավորությունը վերջին օրերին «առաջ [գլորվելիս] մինչև աշխարհի ծայրերը, ինչպես մի քար, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կգլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը» (ՎԱՌՐ 65.2), շատ տեղին է, որ մեր հրաշալի աֆրիկացի եղբայրներն ու քույրերը լինեն այդ կարևոր մասը մարգարեության իրականացման մեջ, և որ հայտնությունները, որոնք դա հնարավոր են դարձնում, լինեն Տիրոջ կողմից սահմանված օրինակով:

Ես վկայում եմ, որ Երկնային Հայրը սիրում է բոլոր Իր զավակներին, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ ավետարանը հասանելի է բոլորին՝ ինչպես ողջերին, այնպես էլ մահացածներին: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն

Մաքրաբարոյության օրենքին հնազանդությունը կմեծացնի մեր երջանկությունը մահկանացու կյանքում և հնարավոր կդարձնի մեր առաջընթացը հավերժության մեջ:

Հոմ ուղերձը վերաբերում է մի հիմնադրույթային հարցի, որը հոգևոր մեծ հետևանք ունի. Ինչո՞ւ է մաքրաբարոյության օրենքն այդքան կարևոր: Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին հաստատի իմ շեշտադրած սկզբունքների ճշմարտացիությունը:

Հոր երջանկության ծրագիրը

Մաքրաբարոյության հավերժական կարևորությունը կարող է հասկացվել միայն Իր զավակների համար մեր Երկնային Հոր երջանկության ծրագրի լայնածավալ համատեքստի սահմաններում: «Բոլոր մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և. . . . ունի աստվածային բնույթ և ճակատագիր»: («Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129): Բոլոր տղամարդիկ և կանայք ապրել են Աստծո հետ որպես Նրա հոգևոր զավակներ, նախքան որպես մահկանացու էակներ այս երկիր գալը: Հոր ծրագիրը հնարավոր է դարձնում Նրա հոգևոր որդիներին և դուստրերին ձեռք բերել ֆիզիկական մարմիններ, ձեռք բերել մահկանացու կյանքի փորձառություն և առաջադիմել դեպի վեհացում:

Ֆիզիկական մարմնի կարևորությունը

Մեր ֆիզիկական մարմինը լայն բազմազանությամբ խորը և ուժեղ փորձառությունների հնարավորություն է ընձեռում, որոնք պարզապես հնարավոր չէր լինի ձեռք բերել նախամահկանացու գոյության ընթացքում: Այդպիսով՝ մեր փոխհարաբերությունները մյուս մարդկանց հետ, ճշմարտությունը ճանաչելու և դրա համաձայն գործելու մեր կարողությունը և Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին և արարողություններին հնազանդվելու մեր ունակությունը ուժեղանում է մեր ֆիզիկական մարմնի շնորհիվ: Մահկանացու կյանքի դպրոցում մենք վայելում ենք քնքշություն, սեր, բարություն, երջանկություն, վիշտ, հիասթափություն, ցավ և նույնիսկ ֆիզիկական

սահմանափակումների մարտահրավերներ այն ձևերով, որոնք մեզ պատրաստում են հավերժության համար: Պարզ ասած, կան դասեր, որ մենք պետք է սովորենք և փորձառություններ, որոնք պետք է ունենանք, ինչպես սուրբ գրքերն են նկարագրում «ըստ մարմնի» (1 Նեփի 19.6; Ալմա 7.12–13):

Ծննդարար զորությունը

Երկրի ստեղծումից հետո, Ադամը դրվեց Եդեմական Պարտեզում: Կարևոր էր, սակայն, որ Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը մենակ լինի» (Մովսես 3.18; տես նաև Ծննդոց Բ.18), և Եվան դարձավ Ադամի կինը և օգնականը: Անհրաժեշտ էր ինչպես արական այնպես էլ իգական սեռի հոգևոր, ֆիզիկական, մտավոր և հուզական կարողությունների առանձնահատուկ միավորում՝ երջանկության ծրագիրը գործարկելու համար: «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը» (Ա Կորնթացիս ԺԱ. 11): Տղամարդն ու կինը նախատեսված են, որ միմյանցից սովորեն, զորացնեն, օրհնեն և լրացնեն միմյանց:

Միջոցները, որով արարվում է մահկանացու կյանքը, նշանակված են աստվածայնորեն: «Առաջին պատվիրանը . . . որ Աստված տվեց Ադամին և Եվային վերաբերում էր որպես ամուսին և կին նրանց ծնող լինելու ներուժին (*Լիահոնա,* նոյ. 2010, 129): Շատանալու և երկիրը լցնելու պատվիրանը ուժի մեջ է ցայսօր: Այսպիսով տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը այն լիազորված ուղին է, որի միջոցով նախամահկանացու ոգիները մտնում են մահկանացու կյանք: Լիակատար սեռական զսպվածությունը նախքան ամուսնությունը և լիարժեք հավատարմությունն ամուսնության մեջ՝ պաշտպանում են այդ սրբազան աղբյուրի սրբությունը:

Ծննդարար զորությունը հոգևոր առումով կարևոր է: Այդ զորության սխալ օգտագործումը խափանում է Հոր ծրագիրը և մեր մահկանացու գոյությունը: Մեր Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին արարիչներ են և մեզանից յուրաքանչյուրին վստահվել է Իրենց արարչագործ զորությունից մի մաս: Կյանք ստեղծելու ունակության ճիշտ օգտագործման հատուկ ուղենիշները կենսական տարրեր են Հոր ծրագրում: Այն, թե ինչպես ենք զգում և օգտագործում այդ երկնային զորությունը, ընդհանուր առմամբ կորոշի մեր երջանկությունը մահկանացու կյանքում և մեր ճակատագիրը հավերժության մեջ:

Երեց Դալլին Հ. Օքսը բացատրել է.

«Մահկանացու կյանք ստեղծելու զորությունը ամենավեհ զորությունն է, որ Աստված տվել է Իր զավակներին: Դրա օգտագործումը պահանջվում է առաջին պատվիրանում, բայց մեկ այլ կարևոր պատվիրան է տրված՝ արգելելու դրա սխալ օգտագործումը: Մաքրաբարոյության օրենքի վրա մեր շեշտադրումը բացատրվում է Աստծո ծրագրի իրականացման մեջ ծննդարար ուժերի նպատակների մեր ըմբռնմամբ . . . :

Ամուսնական կապերից դուրս, ծննդարար ուժերի ցանկացած ձևի օգտագործումը մեղք է և այս կամ այն չափով նվաստացնում և այլասերում է տղամարդկանց և կանանց ամենաաստվածային հատկանիշը» (“The Great Plan of Happiness,” *Ensign,* նոյ. 1993, 74):

Սեռական բարոյականության չափանիշը

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի սեռական բարոյականության եզակի, անփոփոխ չափանիշ՝ ինտիմ հարաբերությունները պատշաճ են միայն տղամարդու և կնոջ միջև՝ ամուսնական կապի մեջ, որը նշանակված է Աստծո ծրագրում: Այդպիսի հարաբերությունները, պարզապես, հետազոտական հետաքրքրասիրություն չեն, ո՛չ ցանկությունների բավարարման, ո՛չ էլ հանգստի կամ զվարճության ինչ-որ ձև են՝ եսասիրաբար հետամուտ լինելու համար:Դրանք նվաճում չեն, որին պիտի հասնենք, ոչ էլ պարզապես գործողություն, որ պիտի կատարենք: Դրանք ավելի շուտ մահկանացու կյանքում մեր աստվածային էության և ներուժի բարձրագույն արտահայտություններն են՝ ամուսնու և կնոջ միջև զգացմունքային և հոգևոր կապերի զորացման մի ուղի: Մենք բարոյական ազատ կամքով օրհնված գործակալներ ենք և բնորոշվում ենք որպես Աստծո զավակներ՝ մեր աստվածային ժառանգությամբ, և ոչ թե սեռական վարքագծերով, ժամանակակից դիրքորոշումներով կամ աշխարհիկ փիլիսոփայություններով:

Բնական մարդը

Թագավոր Բենյամինի կողմից նկարագրվող բնական մարդը

ինչ-որ չափով ապրում է և կենդանի է յուրաքանչյուրիս մեջ (տես Մոսիա 3.19)։ Բնական տղամարդը կամ կինը չապաշխարող է, մարմնական և զգայական (տես Մոսիա 16.5; Ալմա 42.10; Մովսես 5.13), բավականություններով տարվող և շվայտ, հպարտ է ու եսասեր։ Ինչպես Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն է ուսուցանել. «բնական մարդը» «բիրտ մարդն» է, որը թույլ է տալիս, որ կոպիտ կենդանական կրքերը նսեմացնեն իր հոգևոր հակումները» (“Ocean Currents and Family Influences,” *Ensign*, Nov. 1974, 112)։

Ի հակադրություն՝ «Քրիստոսի մարդը [նաև կինը]» (Հելաման 3.29) հոգևոր է և սանձում է բոլոր կրքերը (տես Ալմա 38.12), ժուժկալ է ու զուսպ, և բարեգործ է ու անձնազոհ։ Քրիստոսի տղամարդիկ և կանայք կառչում են Աստծո խոսքից, իրենց մոռանում են և վերցնում Նրա խաչը (տես Մատթեոս ԺԶ.24; Մարկոս Ը.34; Ղուկաս Թ.23; ՎԱՈՒ 56.2), և առաջ մղվում հավատարմության, հնազանդության և նվիրվածության անձուկ և նեղ ուղով դեպի Փրկիչն ու Նրա ավետարանը։

Որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ մենք ժառանգել ենք աստվածային հատկություններ Նրանից։ Բայց մենք ներկայումս ապրում ենք անկում ապրած աշխարհում։ Այն նյութերն իսկ, որոնցից ստեղծվել են մեր մարմինները, բնությամբ անկում են ապրել և միշտ ենթակա են մեղքի, քայքայման և մահվան ազդեցության։ Հետևաբար, Ադամի անկումը և դրա հոգևոր և ֆիզիկական հետևանքները մեզ վրա ամենաուղղակիորեն ազդում են մեր ֆիզիկական մարմինների միջոցով։ Սակայն մենք երկակի էակներ ենք, քանի որ մեր հոգին, որը մեր հավերժական մասն է, բնակվում է ֆիզիկական մարմնում, որն Անկման է ենթակա։ Ինչպես Հիսուսն է շեշտել Պետրոս Առաքյալին.«Հոգին յօժար է, բայց մարմինը տկար» (Մատթեոս ԻԶ.41)։

Ուրեմն մահկանացու կյանքի ստուգարքի ճշգրիտ բնույթը կարելի է ամփոփել հետևյալ հարցով. Արդյոք ես կարձագանքե՞մ բնական մարդու հակումներին, թե ես կենթարկվեմ Սուրբ Հոգու հորդորներին և կհանեմ բնական մարդուն ու կդառնամ սուրբ՝ Տեր Քրիստոսի քավությամբ (տես Մոսիա 3.19)։ Սա է ստուգարքը։ Բնական մարդու ամեն ախորժակ, ցանկություն, հակում և մղում կարելի է հաղթահարել Հիսուս Քրիստոսի Քավությամբ։ Մենք այստեղ՝ երկրի վրա ենք, որպեսզի զարգացնենք աստվածանման հատկանիշներ և սանձենք մարմնական բոլոր կրքերը։

Հակառակորդի մտադրությունը

Հոր ծրագիրը նախագծված է՝ ուղղություն ապահովելու համար Իր զավակներին, օգնելու նրանց երջանիկ դառնալ և նրանց անվտանգ տուն բերելու Նրա մոտ՝ հարություն առած, վեհացած մարմնով։ Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք միասին լինենք լույսի մեջ և լցված լինենք հույսով։ Ի հակադրություն՝ Լյուցիֆերը աշխատում է դարձնել Աստծո որդիներին և դուստրերին շփոթված և դժբախտ և խանգարել նրանց հավերժական առաջընթացին։ Մտերի հոր համապարփակ մտադրությունն է, որ մենք բոլորս դառնանք «թշվառ ինչպես ինքը» (2 Նեփի 2.27)։ Լյուցիֆերը կամենում է, որ մենք լիովին մենակ լինենք՝ խավարում և առանց հույսի։

Սատանան անողոքաբար աշխատում է խորտակել Հոր ծրագրի ամենակարևոր տարրերը։ Նա չունի մարմին, և նրա հավերժական առաջընթացը կանգ է առել։ Ճիշտ ինչպես գետի հունով հոսող ջուրը կանգնեցվում է պատնեշով, այնպես էլ հակառակորդի հավերժական առաջընթացը խափանվել է, որովհետև նա չունի ֆիզիկական մարմին։ Իր ապստամբության պատճառով՝ Լյուցիֆերն իրեն զրկել է բոլոր մահկանացու կյանքի օրհնություններից և փորձառություններից, որոնք հնարավոր են միս ու ոսկորից մարմնի միջոցով։ Նա չի կարող սովորել դասերը, որոնք կարող է միայն մարմնավորված հոգին սովորել։ Նա վրդովվում է ողջ մարդկության տառացի և համընդհանուր հարության իրականությունից։ *«Նզովված»* բառի սուրբգրային համոզիչ իմաստներից մեկը բացատրվում է նրա զարգացումը շարունակելու և մեր Երկնային Հորը նմանվելու անկարողությամբ։

Քանի որ ֆիզիկական մարմինը այդքան կարևոր է Հոր երջանկության ծրագրի և մեր հոգևոր զարգացման համար, Լյուցիֆերը ձգտում է խանգարել մեր առաջընթացին՝ գայթակղելով մեզ՝ մեր մարմինները անպատշաճ ձևով օգտագործելու միջոցով։ Հավերժության ծայրահեղ հեգնանքներից մեկն այն է, որ հակառակորդը, որը թշվառ է, հատկապես ֆիզիկական մարմին չունենալու պատճառով, գայթակղում է մեզ կիսել իր թշվառությունը՝ մեր մարմինների անպատշաճ օգտագործմամբ։ Հենց այն գործիքը, որը նա չունի, այսպիսով դառնում է գայթակղելու նրա փորձերի գլխավոր նպատակակետը՝ մեզ դեպի հոգևոր կործանում տանելու համար։

Մաքրաբարոյության օրենքը խախտելը դառնաղետ մեղք է և մեր ֆիզիկական խորանների սխալ օգտագործում։ Փրկության ծրագիրը իմացողների և հասկացողների համար՝ մարմինը պղծելը ապստամբության գործողությունը է (տես Մոսիա 2.36–37; ՎԱՈՒ 64.34–35) և որպես Աստծո որդիներ ու դուստրեր մեր ճշմարիտ ինքնության ուրացում։ Երբ նայում ենք մահկանացու կյանքից այն կողմ՝ դեպի հավերժություն, հեշտ է զանազանել, որ հակառակորդի կողմից առաջարկվող կեղծ ընկերակցությունը ժամանակավոր է և սին։

Մաքրաբարո լինելու օրհնությունները

Ալման խորհուրդ է տվել իր որդի Սիբլոնին «սանձել բոլոր [իր] կրքերը, որ [նա] լցվի սիրով» (Ալմա 38.12)։ Մեզանից յուրաքանչյուրի մեջ բնական մարդուն կարգավարժելը նշանակալիորեն հնարավոր է դարձնում ավելի հարուստ, ավելի խորը և ավելի մշտատև սեր Աստծո և Նրա զավակների հանդեպ։ Սերը մեծանում է արդար զսպվածության միջոցով և նվազում է, երբ մենք տեղի ենք տալիս գայթակղություններին։

Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին հայտարարել է.

«Ես չեմ կարող մտածել այլ օրհնությունների մասին, որոնք ավելի ջերմեռանդորեն փափագված լինեն, քան նրանք, որոնք խոստացված են մաքուր և առաքինի մարդկանց: Հիսուսը խոսեց տարբեր արժանիքների համար հասանելի առանձնահատուկ պարգևների մասին, բայց պահեց մեծագույնը, ինձ այսպես է թվում՝ սրտով մաքուրների համար, «քանզի նրանք, – ասաց Նա, – կտեսնեն Աստծուն» (Մատթեոս Ե.8): Եվ նրանք ոչ միայն կտեսնեն Տիրոջը, այլև նրանք կզգան իրենց ինչպես տանը Նրա ներկայությամբ:

Սիա . . . Փրկչի խոստումը. «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար, այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ» (ՎԿՈՒ 121.45) (“Trust in the Lord,” *Ensign,* May 1979, 42):

Մեզ նաև խոստացված է, որ երբ հետևենք առաքինության ուղուն, «Սուրբ Հոգին կլինի [մեր] մշտական ընկերը» (ՎԿՈՒ 121.46): Այսպիսով, մաքրաբարոյության օրենքով ապրելը բերում է որոշ մեծագույն օրհնություններ, որոնք տղամարդիկ և կանայք կարող են ստանալ մահկանացու կյանքում՝ պատշաճ հոգևոր վստահություն ընտանիքի, ընկերների, Եկեղեցու հավատակիցների և, ի վերջո, Փրկչի մոտ: Պատկանելու մեր ներքին մղումը իրականություն է դառնում արդարությամբ, երբ մենք հույսով քայլում ենք լույսի մեջ:

Ապաշխարության սկզբունքը

Ձեզանից ոմանք, ովքեր ստանում են այս ուղերձը պետք է ապաշխարեն սեռական կամ այլ մեղքերից: Փրկիչը հաճախ ակնկալվում է որպես Մեծ Բժիշկ և այս անվանումն ունի ինչպես խորհրդանշական այնպես էլ տառացի նշանակություն: Մենք բոլորս ճաշակել ենք ցավ, որն ուղեկցել է ֆիզիկական վնասվածքին կամ վերքին: Երբ ցավի մեջ ենք, մենք, սովորաբար, որոնում ենք հանգիստ և շնորհակալ ենք դեղերի և բուժման համար, որոնք օգնում են թեթևացնել մեր տառապանքը: Համարեք մեղքը որպես հոգևոր վերք, որը հանցանքի զգացում կամ ինչպես Ալման է նկարագրում իր որդի Կորիանթոնին՝ «խղճի խայթ» է առաջացնում (Ալմա 42.18): Հանցանքը մեր հոգու համար նույնն է, ինչ ցավը մեր մարմնի համար՝ նախազգուշացնում վտանգի մասին և պաշտպանություն հավելյալ վնասից: Փրկչի Քավությունից հոսում է հանգստացնող յուղաքսուք, որը կարող է բժշկել մեր հոգևոր վերքերը, վերացնել հանցանքը: Սակայն այդ յուղաքսուքը կարող է միայն կիրառվել առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի, ապաշխարության և հետևողական հնազանդության սկզբունքով: Անկեղծ ապաշխարության արդյունքն է խղճի խաղաղություն, հանգստություն և հոգևոր ապաքինում և վերածնունդ:

Ձեր եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը հոգևոր բժշկի օգնականն է, որը լիազորված է օգնել ձեզ ապաշխարել և ապաքինվել: Խնդրում ենք հիշեք, այնուամենայնիվ, որ ձեր ապաշխարության չափն ու ուժգնությունը պետք է համապատասխան լինի ձեր մեղքերի բնույթին և սաստկությանը, հատկապես Վերջին Օրերի Սրբերի համար, ովքեր սրբազան ուխտի տակ են: Լուրջ հոգևոր մեղքերը պահանջում են հետևողական բուժում և ժամանակ լիովին և վերջնական ապաքինման համար:

Խոստում և վկայություն

Վարդապետությունը, որ ես նկարագրել եմ, կարող է թվալ հնացած և ժամանակն անցած շատ մարդկանց համար աշխարհում, որը գնալով ավելի շատ է ծաղրում ծննդարար զորության սրբազանությունը և նվազեցնում է մարդկային կյանքի արժեքը: Բայց Տիրոջ ճշմարտությունը չի փոխվում քմահաճույքներից, հանրաճանաչությունից կամ հասարակական կարծիքի քվեների ընդհանուր քանակից: Ես խոստանում եմ, որ մաքրաբարոյության օրենքին հնազանդությունը կմեծացնի մեր երջանկությունը մահկանացու կյանքում և հնարավոր կդարձնի մեր առաջընթացը հավերժության մեջ: Մաքրաբարոյությունը և առաքինությունը միշտ եղել էլ է, միշտ կլինի և այժմ էլ «ամենաթանկն է ու ամենաարժեքավորը՝ բոլոր բաներից առավել» (Մորոնի 9.9): Այդ մասին ես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Բաց մի թողեք ալիքի վրա լինելու հնարավորությունը

Փառք Աստծուն և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին, Վերականգնման և Նրա զորության համար, որը երկրի վրա ճշմարտության և արդարակեցության հրաշալի ալիք է բարձրացրել:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ես միանում եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և մյուսներին՝ գովաբանելով նրանց, ովքեր արձագանքեցին ավելի շատ արժանի միսիոներներ ունենալու մարգարեի կոչին: Այժմ խանդավառ միսիոներական աշխատանքի աննախադեպ ալիք է բարձրանում ամբողջ աշխարհում: Անցյալ հոկտեմբերին Նախագահ Մոնսոնի պատմական հայտարարությունից հետո, հազարավոր երեցներ, քույրեր և զույգեր կանչվեցին, շատերն էլ՝ պատրաստվում են:[1] Այժմ մեզ հարցնում են՝ ի՞նչ եք անելու այս միսիոներների հետ: Պատասխանը պարզ է: Նրանք անելու են այն, ինչ միսիոներներն են անում՝ քարոզելու են ավետարանը, օրհնելու են Ամենազոր Աստծո զավակներին:

Երիտասարդ տղաներ և աղջիկներ, ձեզանից շատերը բաց չեն թողնի ալիքի վրա լինելու հնարավորությունը, եթե ձգտեն արժանի լինել միսիայի կանչին: Դուք կընդունեք դա որպես ճշմարտության և արդարակեցության ալիք: Դուք կտեսնեք ալիքի կիզակետում գտնվելու հնարավորությունը:

Դեռահասներ, ընդունեք ձեր նոր ծրագիրը և միմյանց ուսուցանեք Հիսուս Քրիստոսի վարդապետությունը: Այժմ պետք է պատրաստվեք ուսուցանելու մյուսներին Աստծո բարեգթության մասին:



Երիտասարդ տղաներ և աղջիկներ, ձեր կրթությունը շատ կարևոր է՝ մեր, ձեր և Աստծո համար: Որտեղ հնարավոր է, եթե միսիայից *հետո* ցանկանում եք ուսանել քոլեջում կամ համալսարանում, մենք խրախուսում ենք ձեզ դիմել ձեր նախընտրած ուսումնական հաստատություն՝ *նախքան* միսիան սկսելը: Շատ բարձրագույն հաստատություններ ապագա միսիոներներին տրամադրում են 18–30 ամսվա տարեկետում: Երեցներ և քույրեր, սա ձեզ հնարավորություն կտա ծառայել առանց մտահոգվելու, թե որտեղ եք շարունակելու ձեր կրթությունը: Մենք շատ երախտապարտ ենք կրթական հաստատությունների այն ղեկավարներին, ովքեր հնարավոր են դարձնում նման պլանավորումը:

Ծնողներ և ուսուցիչներ, բաց մի թողեք ալիքի վրա լինելու հնարավորությունը՝ պատրաստելով մեր աճող սերնդին արժանի լինել միսիոներական ծառայությանը: Միևնույն ժամանակ, ձեր օրինակելի կյանքը կշարժի ձեր ընկերների և հարևանների հետաքրքրությունը: Պատրաստ եղեք հետաքրքրվողներին ասելու, թե ինչու եք այդպես ապրում, նաև ասելու պատճառը այն հույսի և ուրախության, որ նրանք կտեսնեն ձեր մեջ:[2] Նման հարցերին կարող եք պատասխանել այսպես՝ «Եկեք հարցնենք միսիոներներին, նրանք կօգնեն մեզ: Իսկ եթե ցանկանում եք, ես կլինեմ ձեր կողքին, երբ միսիոներները պատասխանեն և ուսուցանեն ձեզ»:

Մեծահասակներ, բաց մի թողեց հնարավորությունը՝ օգնելու ապագա միսիոներներին հոգևոր, ֆիզիկական և ֆինանսական առումով: Դարձրեք սովորություն գումար խնայելը: Տարեց զույգեր, պլանավորեք մի օր միսիա ծառայել: Մենք շատ երախտապարտ կլինենք ձեր ծառայության համար: Մինչ այդ, գուցե ձեզանից ոմանք կարող են գումարներ ուղարկել միսիաներին՝ նվիրաբերելով ընդհանուր միսիոներական ֆոնդին, ինչպես այս առավոտյան առաջարկեց Նախագահ Մոնսոնը:[3]

Մեծաթիվ ընտրյալ տղամարդիկ և նրանց սիրելի կողակիցները

բաց չեն թողել ալիքի վրա լինելու հնարավորությունը, կանչվելով նախագահելու Եկեղեցու միսիաներում: Այդ ծառայության ընթացքում նրանք կկերտեն ծնված և չծնված սերունդների ճակատագրերը: Միսիայի նախագահները կրում են իրենց միսիոներների բարօրության, ապահովության և հաջողության պատասխանատվությունը: Իր միսիայի ցցի և շրջանի նախագահների հետ խորհրդակցելով՝ յուրաքանչյուր միսիայի նախագահ հանձնարարում է միսիոներներին ծառայել որոշակի ցցերում, ծխերում և ճյուղերում:

Ցցերի նախագահները և եպիսկոպոսները բաց չեն թողնում հնարավորությունը՝ ավելի շատ ժամանակ տրամադրելով ապագա միսիոներների հետ հարցազրույցներ անցկացնելուն: Այդ քահանայության ղեկավարները կրում են իրենց միավորներում միսիոներական աշխատանքի համար պատասխանատվության բանալիները և նրանք ոգեշնչում են անդամներին մասնակցել:

Յուրաքանչյուր ծխի խորհրդի եղբայրները և քույրերը սկսում են օգտվել հնարավորությունից: Այդ խորհրդից է ծխի միսիայի ղեկավարը:[4] Ծխի միսիայի ղեկավարներ, ես ցանկանում եմ հատուկ խոսել ձեզանից յուրաքանչյուրի հետ: Դուք կանչվել եք ձեր եպիսկոպոսի կողմից՝ ղեկավարելու ծխի միսիոներական աշխատանքը: Եվ ձեզանից շատերն այնքան հաջողակ են, որ ձեզ օգնելու նպատակով օգնական է կանչվել: Ծխի խորհրդի մյուս անդամների հետ միասին դուք գտնում եք քիչ ակտիվ անդամներին, ընտանիքներին և հետաքրքրված հարևաններին: Դուք հաճախակի հանդիպում եք լիաժամկետ միսիոներների հետ: Խորհուրդ եք տալիս և աջակցում եք միսիոներներին: Խնդրում եմ, օգնեք նրանց ամենօրյա գրաֆիկը լցնել կենտրոնացած և իմաստալից ուսուցման հնարավորություններով: Դա ձեր պարտականությունն է: Այս աշխատանքի կարևորության մեջ ձեր դերը իրոք շատ կարևոր է: Եթե օգտվեք հնարավորությունից և խանդավառությամբ աշխատեք, մյուսները ձեզ կհետևեն: Որպես ծխի միսիայի ղեկավար, դուք անդամներին և միսիսներներին կապող *օղակն* եք Աստծո զավակներին փրկելու այս սուրբ գործում:[5]

Մեր հավատքին չպատկանող հետաքրքրվող ընկերներն ու հարևանները ևս կարող են բաց չթողնել հնարավորությունը: Մենք խրախուսում ենք նրանց պահել ամեն լավ ու ճշմարիտ բան իրենց կյանքում: Եվ հրավիրում ենք նրանց ստանալ ավելին, հատկապես փառահեղ ճշմարտությունը, որ Աստծո հավերժական ծրագրի օգնությամբ ընտանիքները կարող են հավերժ միասին լինել:[6]

Ճշմարտության և արդարության այդ ալիքը հրաշալի է: Դա մարդու կողմից *չի* ստեղծվել: Այն գալիս է Տիրոջից, ով ասել է. «Ես կարագացնեմ իմ աշխատանքը իր ժամանակին»:[7] Այդ ալիքը թափ է ստացել 193 տարի առաջ կատարված աստվածային հայտարարությամբ, այն ունի միայն յոթ բառ՝ «Սա է իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:[8] Ամենազոր Աստծո կողմից արտասանված այդ հայտարարությամբ երիտասարդ Ջոզեֆ Սմիթին ներկայացվեց Տեր Հիսուս Քրիստոսը: Այդ յոթ բառով սկսվեց Նրա ավետարանի Վերականգնումը: Ինչո՞ւ: Որովհետև մեր կենդանի Աստվածը սիրող Աստված է: Նա ցանկանում է, որ Իր զավակները ճանաչեն Իրեն և Հիսուս Քրիստոսին, ում Նա ուղարկել է:[9] Եվ Նա ցանկանում է, որ Իր զավակները ձեռք բերեն անմահություն և հավերժական կյանք:[10]

Այս փառահեղ նպատակի համար են մեր միսիոներներն ուսուցանում Վերականգնման մասին: Նրանք գիտեն, որ մոտ 2000 տարի առաջ Տերը հաստատել է Իր Եկեղեցին: Նրա Խաչելությունից և Նրա Առաքյալների մահից հետո, մարդիկ փոխեցին Եկեղեցին և վարդապետությունը: Ապա, հոգևոր խավարի սերունդներից հետո, և ըստ նախորդ մարգարեների կանխատեսման,[11] Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը վերականգնեցին Եկեղեցին, վարդապետությունը և քահանայության իշխանությունը: Այդ Վերականգնման շնորհիվ կրկին գիտելիք և փրկության ու վեհացման կարևոր ծեսեր հասանելի դարձան բոլոր մարդկանց:[12] Ի վերջո, այդ վեհացումը թույլ է տալիս մեզանից յուրաքանչյուրին մեր ընտանիքների հետ հավերժ ապրել Աստծո և Հիսուս Քրիստոսի ներկայությամբ:

Ես չեմ կարող Վերականգնման մասին խոսել հանգիստ տոնով: Այս պատմական փաստը ուղղակի ցնցող է: Դա անհավատալի է և անչափ ոգևորող: Որքան ապշեցուցիչ է այն փաստը, որ երկնքից սուրհանդակներ են եկել իշխանություն և զորություն պարգևելու այս գործին:

Մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը բազմաթիվ անգամներ հայտնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթին:[13] Նրանց ղեկավարությամբ երկնային այլ սուրհանդակներ ևս

եկան՝ յուրաքանչյուրն առանձնահատուկ նպատակով: Օրինակ՝

- Մորոնի հրեշտակը հայտնեց Մորմոնի Գրքի մասին:[14]
- Հովհաննես Մկրտիչը վերականգնեց Ահարոնյան Քահանայությունը:[15]
- Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը վերականգնեցին Մելքիսեդեկյան Քահանայությունը:[16]
- Մովսեսը շնորհեց Իսրայելը հավաքելու բանալիները:[17]
- Եղիասը շնորհեց Աբրահամի մասին գիտելիքի բանալիները:[18]
- Եղիան վերականգնեց կնքման իշխանության բանալիները:[19]

Բացի դա, Վերականգնումն ավելացրեց այն գիտելիքը, որ Սատանան հնում ուներ: Տերը տվեց նոր սուրբ գրություն: Սուրբ Աստվածաշնչին Նա ավելացրեց Մորմոնի Գիրքը՝ ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: Դա մարգարեությունների և հնագույն Ամերիկայի ժողովրդին հարություն առած Տիրոջ ծառայության մասին մի հիշատակարան է: Այն բացատրում է Աստծո երջանկության մեծ ծրագիրը՝[20] փրկության ծրագիրը:[21] Մորմոնի Գիրքը լիակատար ներդաշնակության մեջ է Աստվածաշնչի հետ: Երկու սուրբ հիշտակարաններն էլ հաստատում են Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտությունը և Նրա Քավության կարևորությունը:[22]

Վերականգնումը իրականացնում է աստվածաշնչյան շատ մարգարեություններ: Օրինակ, Եսայիան մարգարեացավ, որ Տիրոջ տունը պետք է հաստատվի սարերի գլխին:[23] Մորմոն պիոներների մեկնումը դեպի արևմտյան Ամերիկայի լեռներ զոհաբերության և հավատքի ավանդապատման իրականացումն էր: Եսայիան նաև կանխատեսել էր, որ Աստված կկատարի «զարմանալիք և զարմանք»:[24] Դա այժմ իրականանում է մեր միսիոներների աճող բանակի սրբազան աշխատանքով:

Տասանորդի վերաբերյալ Հին Կտակարանի ուսմունքները վերականգնվեցին:[25] Արդյունքում, ավելի շատ տասանորդ վճարողներ օրհնվեցին իրենց հնազանդության համար: Մելքիսեդեկի վերաբերյալ հղումները պարզաբանվեցին Վերականգնման սուրբ գրությունների միջոցով:[26] Իրականացան մարգարեությունները Հովսեփի փայտի (Մորմոնի Գրքի) և Հուդայի փայտի (Աստվածաշնչի) մասին, որոնք պետք է մեկ դառնային Աստծո ձեռքում:[27]

Վերականգնումը նաև պարզաբանում է Նոր Կտակարանի սուրբ գրությունները: Մկրտության մասին տողերն այժմ ավելի լավ են հասկացվում:[28] Մեր մահացած նախնիների համար ծեսերն այժմ կատարվում են փոխանորդների միջոցով ողջ աշխարհի 141 տաճարներում: Սա միակ ուղին է փրկություն առաջարկելու մեր նախնիներին, ովքեր մահացել են առանց ավետարանի մասին գիտելիքի:[29] Հովհաննես Հայտնիչի տեսիլքը, որտեղ «մեկ այլ հրեշտակ [թռչում էր] երկնքի մեջ, որ հավիտենական ավետիք ուներ, որ ավետարաներ երկրի վրա բնակվողներին», կանխագուշակում էր Մորոնի հրեշտակի և Մորմոնի Գրքի առաքելությունը:[30]

Մորմոնի Գիրքը վերականգնման գլխավոր զարդն է: Այն գրվել, պահպանվել և փոխանցվել է Տիրոջ ղեկավարության ներքո: Այն թարգմանվել է «Աստծո պարգևով և զորությամբ»:[31] Վարդապետություն և Ուխտերը պարունակում է լրացուցիչ հայտնություններ՝ տրված Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Նրա միջոցով մենք ստացել ենք սուրբ գրությունների ավելի շատ լրացուցիչ էջեր, քան որևէ այլ մարգարեից: Նավույում, Իլինոյսում, խոսքն ուղղելով Սրբերին նա ասել է. «Ես երբեք ձեզ չեմ ասել, որ կատարյալ եմ, բայց ոչ մի սխալ չկա այն հայտնություններում, որոնք ես ուսուցանել եմ»:[32]

Անդամներն ու միսիոներները միասին հրավիրում են բոլորին սովորել Աստծո, Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Յուրաքանչյուր հետաքրքրվող անհատ պետք է ջանասիրաբար փնտրի և ջերմեռանդ աղոթի հավաստիանալու համար, որ այդ ամենը ճիշտ է: Ճշմարտությունը կհայտնվի Սուրբ Հոգու զորությամբ:[33]

Փառք Աստծուն և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին, Վերականգնման և նրա զորության համար, որը երկրի վրա ճշմարտության և արդարակեցության հրաշալի ալիք է բարձրացրել: Թող որ լինենք այդ ալիքի վրա և իրագործենք ավետարանը «յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի»[34] տանելու Տիրոջ պատվիրանը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հաստատ կանգնեք սուրբ տեղերում

Հնազանդ և հաստատ կանգնելով մեր Աստծո վարդապետությունում, մենք կանգնում ենք սուրբ տեղերում, քանի որ Նրա վարդապետությունը սրբազան է և չի փոխվի:

Եղբայրներ, պատիվ է լինել Աստծո թագավորական քահանայությունը կրողների հետ: Մենք ապրում ենք վերջին օրերում՝ «չար ժամանակներում»:[1] Որպես քահանայություն կրողներ մենք պատասխանատվություն ունենք ամուր կանգնել հավատքի վահանը վերցրած, որով կկարողանանք հանգցնել հակառակորդի բոլոր կրակոտ նետերը: Մենք օրինակ ենք աշխարհին, պաշտպանելով Աստվածատուր իրավունքներն ու ազատությունները, որոնք չեն կարող վերցվել: Մենք կանգնած ենք ի պաշտպանություն մեր տների և մեր ընտանիքների:

Երբ իններորդ դասարանում էի, ես վերադարձա առաջին բեյսբոլի խաղից, որն իմ ավագ դպրոցի թիմի հետ խաղացել էինք ուրիշ քաղաքում: Հայրս նկատեց, որ ավտոբուսով երկար ճանապարհորդության ընթացքում ես ականատես էի եղել խոսելաձևի և վարքագծի, որը ներդաշնակության մեջ չէր ավետարանի չափանիշների հետ: Լինելով արհեստավարժ նկարիչ՝ նա նստեց և նկարեց ասպետի նկար՝ մի զինվորի, որը կարող էր պաշտպանել ամրոցներ և թագավորություններ:

Երբ նա նկարեց և կարդաց սուրբ գրություններից, ես սովորեցի թե ինչպես հավատարիմ քահանայություն կրող լինեմ՝ պահպանելու և պաշտպանելու Աստծո թագավորությունը: Պողոս Առաքյալի խոսքերն իմ ուղեցույցն էին:

«Սորա համար Ատուծոյ սպառազինութիւնն առէք, որ կարող լինիք հակառակ կենալ չարութեան օրումը, եւ ամենը կատարելով հաստատ *կանգնել*:

Արդ *հաստատ կանգնեցէք* ձեր մէջքերը ճշմարտութեամբ գոտեւորուած, եւ արդարութեան զրահը հագած,

Եվ ձեր ոտները կոշիկ հագած խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնովը,

Եւ ամենի վերայ հաւատքի վահանն առէք. որով կարող լինիք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Թոմաս Ս. Մոնսոն, «Ողջույնի խոսք», *Լիահոնա,* նոյ. 2012, 4–5:
2. Տես 1 Peter 3:15.
3. Տես Թոմաս Ս. Մոնսոն, «Կրկին համաժողով է», *Լիահոնա,* մայիս 2011, 6:
4. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 5.1.
5. Մենք երախտապարտ ենք այն Սրբերի համար, ովքեր անկեղծորեն ձգտում են սրբագործման: Նրանք փորձում են լինել ավելի սուրբ: Նրանք ձգտում են «նախ կառուցել Աստծո արքայությունը, և հաստատել նրա արդարությունը» (Զոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 6.38 [Մատթեոս 6.33-ում, տողատակի ծանոթագրություն *ա*]):
6. Տես "Families Can Be Together Forever," *Hymns,* no. 300; լրացուցիչ պարզաբանում կարող եք գտնել Վարդապետություն և Ուխտեր 132.7, 19:
7. Վարդապետություն և Ուխտեր 88.73:
8. Զոզեֆ Սմիթ–Պատմություն 1.17:
9. Տես Հովհաննես 17.3:
10. Տես Մովսես 1.39:
11. Տես Մատթեոս 17.11; Գործք 3.20–21; Եփեսացիս 1.10; 2 Նեփի 30.8; Վարդապետություն և Ուխտեր 132.40, 45:
12. Տես 3 Նեփի 27.13–14, 21; Վարդապետություն և Ուխտեր 39.6; Հավատո Հանգանակ 1.4:
13. Տես Karl R. Anderson, *The Savior in Kirtland* (2012), 228–43:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 27.5; տես նաև Զոզեֆ Սմիթ–Պատմություն 1.33–34:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 13:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.2–3; 27.12; 128.20; տես նաև Larry C. Porter, "Dating the Restoration of the Melchizedek Priesthood," *Ensign,* June 1979, 4–10:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.11:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.12:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.13–16:
20. Տես Ալմա 42, հատկապես հատված 8:
21. Տես, օրինակ, Ալմա 12.28–30:
22. Տես, օրինակ, Ա Կորնթացիս 15.22; Ալմա 34.9:
23. Տես Եսայիա 2.2:
24. Եսայիա 29.14:
25. Տես Ծննդոց 14.18–20; Մաղաքիա 3.8–10; Վարդապետություն և Ուխտեր 119–20:
26. Տես Ծննդոց 14.18; Սաղմոս 110.4; տես նաև Ալմա 13.14–18; Վարդապետություն և Ուխտեր 84.14–22:
27. Տես Եզեկիել 37.16, 19; Վարդապետություն և Ուխտեր 27.5:
28. Տես Ա Կորնթացիս 15.29; Վարդապետություն և Ուխտեր 128:
29. Տես Վարդապետություն և Ուխտեր 137.7; 138.31–34:
30. Հայտնություն 14.6; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 133.36–39:
31. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ, հեղինակել է Մորոնին; Վարդապետություն և Ուխտեր 135.3:
32. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները՝ Զոզեֆ Սմիթ* (2007), 522:
33. Տես Մորոնի 10.4–5:
34. Հայտնություն 14.6; տես նաև 1 Նեփի 19.17; Վարդապետություն և Ուխտեր 133.37:

Եւ փրկութեան սաղավարտն առէք, եւ Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է»:[2]

Եղբայրներ, եթե մենք հավատարիմ լինենք քահանայությունում, այդ սպառազինությունը կտրվի մեզ որպես պարգև Աստծուց: Մեզ անհրաժեշտ է այդ սպառազինությունը:

Երիտասարդ տղամարդիկ, ձեր հայրերը և պապերը երբեք չեն դիմակայել այն գայթակղություններին, որոնց դուք եք դիմակայում կանոնավորապես: Դուք ապրում եք վերջին օրերում: Եթե ձեր հայրը ցանկանար դժբախտության մեջ ընկներ, նա պետք է այն որոնելու գնար: Դա այլևս այդպես չէ: Այսօր գայթակղությունը ինքն է գտնում ձեզ: Խնդրում եք հիշեք այդ: Սատանան ուզում է ձեր հոգուն տիրանալ և «մեղքը դռան շեմին է»:[3] Ինչպե՞ս կդիմադրեք նրա հարձակվողական ռազմավարությանը: Հագեք Աստծո ողջ սպառազինությունը:

Թույլ տվեք ուսուցանել ձեզ իմ կյանքի մեկ այլ փորձառությունից.

1982թ. հունվարին ես խոսեցի ԲՅՀ-ի մասնաշենքում, Պրովո քաղաքում՝ Յուտա: Ես կոչ արեցի ուսանողներին պատկերացնել, որ Եկեղեցին ամբիոնի մի կողմում էր, այստեղ, իսկ աշխարհը մեկերկու քայլ հեռավորության վրա՝ մյուս կողմում: Դա ներկայացնում էր «այն կարճ տարածությունը, որը կար աշխարհի և Եկեղեցու չափանիշների միջև», երբ ես քոլեջում էի: Այդ ժամանակ, կանգնելով ուսանողների առջև 30 տարի անց, ես ձեռքերիս նույն շարժումով բացատրեցի. «Աշխարհը գնացել է շատ հեռու [այն տեղաշարժվել է, այն ոչ մի տեղից չի երևում], այն առաջ է գնացել, այն դուրս է եկել ճանապարհից, հեռվացել է այս [շենքից] և [տեսանելիության սահմաններից դուրս] . . . : Մի բան, որը մենք, մեր երեխաները և մեր թոռները պետք է հիշենք այն է, որ Եկեղեցին կմնա կայուն, [այն դեռևս տեղում է, բայց] աշխարհը կշարունակի շարժվել՝ այդ անդունդը [դառնում] է ավելի ու ավելի լայն . . . : Ուստի շատ զգույշ եղեք: Եթե դուք դատեք ձեր գործողությունները և Եկեղեցու չափանիշները, հիմնվելով նրա վրա, թե որտեղ է աշխարհը և թե ուր է գնում այն, դուք կգտնեք, որ այնտեղ չեք, որտեղ պետք է գտնվեք»:[4]

Այն ժամանակ անցյալում ես չէի կարող պատկերացնել, թե որքան հեռու և որքան արագ աշխարհը կհեռանար Աստծո կողմից տրված վարդապետությունից, սկզբունքներից և պատվիրաններից, դա անհնար էր հասկանալ: Բայց և այնպես Քրիստոսի և Նրա Եկեղեցու չափանիշները չեն շարժվել: Ինչպես Նա է ասել. «Ճշմարտությունը *մնում* է հավիտյանս հավիտենից»:[5] «Երբ մենք հասկանանք և ընդունենք այս, մենք պատրաստված կլինենք դիմակայել հասարակական ճնշմանը, ծաղրին և նույնիսկ խտրականությանը, որը կգա աշխարհից և նրանցից, ովքեր իրենց կոչում են ընկերներ:

Մեզանից շատերը գիտեն ինչ-որ մեկին, որն ասում է. «Եթե ուզում ես ընկերս լինել, դու պետք է ընդունես իմ արժեքները»: Ճշմարիտ ընկերը չի խնդրում մեզ ընտրել ավետարանի և իր ընկերության միջև: Ես կպատասխանեի Պողոսի խոսքերով. «Նորանցից էլ ետ քաշուիր»:[6] Ճշմարիտ ընկերը զորացնում է մեզ՝ մնալու նեղ և անձուկ ճանապարհին:

Ավետարանի ուխտերի, պատվիրանների և արարողությունների ուղու վրա մնալը պաշտպանում է մեզ և պատրաստում կատարելու Աստծո գործն այս աշխարհում: Երբ մենք հնազանդվում ենք Իմաստության Խոսքին, մեր ազատ կամքը պաշտպանվում է այնպիսի նյութերի հանդեպ հակվածությունից,

ինչպիսիք են՝ ալկոհոլը, թմրադեղերը և ծխախոտը: Երբ մենք վճարում ենք մեր տասանորդը, ուսումնասիրում սուրբ գրությունները, ստանում մկրտություն և հաստատում, ապրում ենք Սուրբ Հոգու մշտական ընկերակցությամբ, հաղորդությունը արժանիորեն վերցնում, հնազանդվում ենք մաքրաբարոյության օրենքին, պատրաստվում և ստանում Մելքիսեդեկյան Քահանայություն և կապում սրբազան ուխտեր տաճարում, այդ ժամանակ մենք պատրաստ ենք ծառայելու:

Տաճարում մենք պատրաստվում ենք և խոստանում ապրել նվիրաբերման օրենքով: Ունակ Երիտասարդ տղամարդիկ սկսում են ապրել այս օրենքով՝ ձգտելով միսիոներական կանչի, տալով տասանորդ իրենց կյանքի առաջին տարիներից Տիրոջ լիաժամկետ ծառայությունում: Այդ զոհաբերությունը զորացնում է նրանց՝ առաջ գնալ դեպի ավելի բարձր ուխտերի կյանքում, շատերի համար դա կլինի տաճարում կնքվելը և հավերժական ընտանիք սկսելը:

Երբ մենք առաջ ենք մղվում նեղ ու անձուկ ճանապարհի երկայնքով, մենք կառուցում ենք առաջադեմ հոգևոր ուժ՝ ուժ, որ օգտագործենք մեր ազատ կամքը մեր ինքնուրույն գործելու համար: Երիտասարդ տղամարդկանց և կանանց համար այդ աճը օժանդակվում է, երբ նրանք վարդապետություն են սովորում և կիսվում են իրենց վկայությամբ նոր՝ *Եկ, հետևեիր ինձ* առցանց ծրագրի միջոցով:

Բացի այդ, օգտագործեք ձեր ազատ կամքը՝ ինքներդ ձեզ անձնապես զարգացնելու համար: Երբ հայտնաբերեք ձեր պարգևներն ու տաղանդները, հիշեք, որ ծնողներն ու ուսուցիչները կարող են աջակցել ձեզ, բայց դուք պետք է թույլ տաք, որ Հոգին առաջնորդի ձեզ: Ընտրեք և գործեք ինքնուրույն:

Ներքին մղումով գործեք: Ծրագիր կազմեք ձեր կյանքի համար, այդ թվում նաև կրթության կամ մասնագիտական ուսուցման համար: Հետաքրքրություններ ու հմտություններ զարգացրեք: Աշխատեք և դարձեք ինքնապահովող: Նպատակներ դրեք, հաղթահարեք սխալները, ձեռք բերեք փորձառություն և ավարտի հասցրեք այն, ինչ սկսում եք:

Ճանապարհին ուշադիր եղեք մասնակցելու ընտանեկան, քվորումի, դասարանի և Միացյալի միջոցառումներին: Վայելեք միասին առողջ զվարճանքը: Այս փորձառությունների միջոցով դուք կսկսեք հարգել և գնահատել մեկդ մյուսի հոգևոր պարգևներն ու Աստծո որդիների և դուստրերի հավերժական, միմյանց լրացնող հատկանիշները:

Բացի այդ բոլորից, ունեցեք հավատք Փրկչի հանդեպ: Մի՛ վախեցեք: Երբ ջանասիրաբար ապրում ենք ավետարանով, մենք դառնում ենք ամուր Տիրոջով: Նրա ուժով մենք կարողանում ենք մերժել հակաքրիստոսին, որն ասում է. «Կերեք, խմեք և զվարճացեք. Այնուամենայնիվ, վախեցեք Աստծուց, նա կարդարացնի [ձեզ] մի փոքր մեղք գործելը . . . սրանում ոչ մի վնաս չկա . . . . քանզի վաղը մեռնելու ենք»:[7] Տիրոջ ուժով մենք կարող ենք դեմ կանգնել ամեն փիլիսոփայության կամ տեսակետի, որը մերժում է Փրկչին և հակառակվում Աստծո բոլոր զավակների համար երջանկության հավերժական մեծ ծրագրին:

Մենք լիազորված չենք սակարկելու այդ հավերժական ծրագրի պայմանները: Հիշեք Նէեմիային, որին հանձնարարված էր պատ կառուցել Երուսաղեմը պաշտպանելու համար: Ոմանք ուզում էին, որ նա վար իջներ և հրաժարվեր իր պաշտոնից, բայց Նէեմիան մերժեց: Նա անհանդուրժողական չէր ուրիշների հանդեպ, նա ուղղակի բացատրեց. «Ես մեծ գործով զբաղված եմ, եւ չեմ կարող իջնել. ի՞նչու համար գործը դադարէ»:[8]

Երբեմն, մենք դառնում ենք ուշադրության կենտրոն և պետք է «դիմանանք ծաղր ու ծանակի»,

ամուր կառչելով Աստծո չափանիշներից և կատարելով Նրա գործը: Ես վկայում եմ, որ մենք չպետք է վախենանք, եթե մենք հիմնվում ենք Նրա վարդապետության վրա: Մենք կարող է տանենք թյուրըմբռնում, քննադատություն և նույնիսկ կեղծ մեղադրանք, բայց երբեք միայնակ չենք: Մեր Փրկիչը «մարդկանց կողմից արհամարհված և մերժված էր»:[9] «Մեր սրբազան պարտքն է կանգնել Նրա հետ»:

Հեգնական է, բայց հաստատ կանգնելը, երբեմն, նշանակում է խուսափել և նույնիսկ փախչել աշխարհից: Փրկիչը հայտարարեց «Գնա յետս, սատանայ»:[10] Եգիպտոսի Հովսեփը փախավ Պետափրէսի կնոջ գայթակղությունից,[11] իսկ Լեքին ետևում թողեց Երուսաղեմը և իր ընտանիքն անապատ տարավ:[12]

Համոզված եղեք, որ բոլոր մարգարեները մեզանից առաջ հաստատ են կանգնել իրենց օրում.

Նեփին կատարեց Տիրոջ արտասովոր գործը, չնայած սատանայի հարվածների և իր եղբայրների՝ Լամանի ու Լեմուելի հալածանքների:[13]

Աբինադին վկայեց Քրիստոսի մասին, չնայած կասկածներին, արհամարհանքին և անխուսափելի մահվանը:[14]

2000 ռազմիկները պաշտպանեցին իրենց ընտանիքներին նրանց դեմ, ովքեր արհամարհում էին ավետարանական արժեքները:[15]

Մորոնին բարձրացրեց ազատության դրոշը պաշտպանելու իր ժողովրդի ընտանիքները և կրոնական ազատությունը:[16]

Սամուելը կանգնեց պատի վրա և մարգարեացավ Քրիստոսի գալուստը, չնայած քարերն ու նետերը սլանում էին նրա վրա:[17]

Մարգարե Ջոզեֆ Սմիթը վերականգնեց Փրկչի ավետարանը, կնքելով իր վկայությունը իր արյամբ:[18]

Եվ Մորմոն ռահվիրաները հաստատ կանգնեցին դեմ հանդիման, երբ նրանք տանում էին սոսկալի ընդդիմություն և դժվարություններ, հետևելով մարգարեին իրենց մեծ գաղթի ժամանակ և արևմուտքում բնակություն հաստատելիս:

Աստծո այս մեծ ծառաներն ու Սրբերը կարողացան կանգնել հաստատ, որովհետև նրանք կանգնեցին Փրկչի հետ: Մտածեք թե ինչպես հաստատ կանգնեց Փրկիչը:

Երբ երիտասարդ տղամարդ էր, Հիսուսը հավատարմորեն անցավ Իր Հոր գործին, տաճարում քարոզելով ավետարանը ուսյալ մարդկանց:[19] Իր ողջ ծառայության ընթացքում Նա իրականացրեց քահանայության աշխատանքը՝ ուսուցանելով, բժշկելով, ծառայելով, օրհնելով և բարձրացնելով մյուսներին: Հարկ եղած դեպքում Նա համարձակորեն դեմ էր կանգնում չարին, նույնիսկ մաքրելով տաճարը:[20] Նա միշտ պաշտպանում էր ճշմարտությունը՝ լիներ խոսքերով, թե արժանապատիվ լռությամբ: Երբ գլխավոր քահանայապետերը մեղադրեցին Նրան Կայիափայի առջև, Հիսուսն իմաստությամբ և քաջաբար հրաժարվեց պատասխանել և Իր խաղաղությունը պահեց:[21]

Գեթսեմանիի պարտեզում մեր Փրկիչն ու Քավիչը չընկրկեց Քավության դառը բաժակը խմելուց:[22] Իսկ խաչի վրա Նա կրկին տառապեց Իր Հոր կամքը կատարելու համար, մինչև, վերջապես, Նա կարողացավ ասել. «Կատարուած է»:[23] Նա համբերեց մինչև վերջ: Ի պատասխան Փրկչի հաստատորեն կանգնելու կատարյալ հնազանդությանը, մեր Երկնային Հայրը հայտարարեց. «Սիա իմ Սիրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը»:[24]

Քահանայության իմ սիրելի երիտասարդ և տարեց եղբայրներ, եկեք փառավորենք Աստծո անունը կանգնելով հաստատ մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի հետ: Ես բերում եմ իմ հատուկ վկայությունը, որ Նա ապրում է և որ մենք «կանչված ենք սուրբ կոչումով» մասնակցելու Նրա աշխատանքին:[25] Ուստի, կանգնեք սուրբ տեղերում, և մի շարժվեք»:[26] Հնազանդ և հաստատ կանգնելով մեր Աստծո վարդապետությունում, մենք կանգնում ենք սուրբ տեղերում, քանի որ Նրա վարդապետությունը սրբազան է և չի փոխվի մեր օրերի հասարակական և քաղաքական քամիներից: Ես հայտարարում եմ ինչպես Պողոս Առաքյալը. «Արթուն եղէք, հաստատ կացէք հաւատքումը. [տղամարդու պես պահեք ձեզ] եւ ուժովացէք»:[27] Սա իմ ջերմեռանդ աղոթքն է ձեզ համար, Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բ Տիմոթեոս Գ.1:
2. Եփեսացիս Զ.13–17; շեշտադրումն ավելացված է:
3. Մովսես 5.23:
4. Robert D. Hales, "This Is the Way; and There Is None Other Way," in *Brigham Young University 1981–82 Speeches* (1982), 3–4; available at speeches.byu.edu.
5. Վարդապետություն և Ուխտեր 1.39; շեշտադրումն ավելացված է:
6. Բ Տիմոթեոս Գ.5:
7. 2 Նեփի 28.8:
8. Նէեմիա Զ.3:
9. Եսայիա ԾԳ.3; Մոսիա 14.3:
10. Ղուկաս Դ.8:
11. Տես Ծննդոց 39.7–12:
12. Տես 1 Նեփի 2:
13. Տես, օրինակ, 1 Նեփի 18:
14. Տես Մոսիա 11–17:
15. Տես Ալմա 53, 56–58:
16. Տես Ալմա 46.11–13:
17. Տես Հելաման 13–16:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 135:
19. Տես Ղուկաս Բ.46–49:
20. Տես Մատթեոս ԻԱ.12–13:
21. Տես Մատթեոս ԻԶ..57, 59–63:
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.16–19:
23. Հովհաննես ԺԹ.30:
24. 3 Նեփի 11.7:
25. Ալմա 13.3; տես նաև Բ Տիմոթեոս Ա.9:
26. Վարդապետություն և Ուխտեր 87.8:
27. Ա Կորնթացիս ԺԶ.13:

Երեց Թեդ Ռ. Քալիսթեր
Յոթանասունի Նախագահությունից

Քահանայության զորությունը պատանու մեջ

Քահանայությունը պատանու մեջ նույնքան զորեղ է, որքան քահանայությունը տղամարդու մեջ, եթե այն արդարությամբ է օգտագործվում:

1878թ. իմ մեծ պապ Ջորջ Ֆ. Ռիչարդսը 17 տարեկան էր: Ինչպես երբեմն պատահում էր այդ ժամանակ, նա արդեն կարգվել էր որպես երեց: Մի Կիրակի նրա մայրը հառաչում էր ուժեղ ցավից: Քանի որ նրա հայրը բացակայում էր, եպիսկոպոսը և մի քանի ուրիշներ հրավիրվել էին նրան օրհնություն տալու, սակայն ցավը չհանգստացավ: Հետևաբար, նա դիմեց իր որդի Ջորջին և խնդրեց նրան օրհնություն տալ: Նա իր օրագրում գրել է. «Արցունքն աչքերիս՝ մորս տառապանքների և քահանայության սպասավորում կատարելու հանձնարարության պատճառով, որը երբեք չէի կատարել, ես առանձնացա մեկ այլ սենյակում, որտեղ լաց եղա ու աղոթեցի»:

Երբ նա հավաքեց իրեն, նա ձեռքերը դրեց նրա գլխին և տվեց նրան շատ պարզ օրհնություն: Հետագայում նա նշել է, որ «Մայրիկիս հառաչանքը դադարեց և նրա ցավերը հանգստացան մինչ իմ ձեռքերը նրա գլխին էին»: Հետագայում նա իր օրագրում արձանագրեց այս ամենախորաթափանց դիտարկումը: Նա ասաց, որ միշտ մտածել էր, որ պատճառը, որ եպիսկոպոսի օրհնությունից հետո իր մայրը չի լավացել, այն չէր, որ Տերը չէր հարգել եպիսկոպոսի օրհնությունը, այլ այն, որ Տերը վերապահել էր այդ օրհնությունը տղայի համար, որպեսզի նրան դաս տար, որ պատանու ունեցած քահանայությունը նույնքան զորեղ է, որքան տղամարդու ունեցած քահանայությունը, եթե այն արդարությամբ է գործադրվում:

Այսօր ես կուզենայի խոսել այդ զորության մասին: Չնայած ես կդիմեմ սարկավագների քվորումի նախագահներին, քննարկվող սկզբունքները վերաբերում են բոլոր Ահարոնյան քահանայության երիտասարդներին և նրանց անմիջական ղեկավարներին, այդ թվում, մեր ուսուցիչների քվորումի նախագահներին ու քահանաների քվորումի նախագահի օգնականներին:



Հոգևորը և ղեկավարումը

Երբ ծառայում էի որպես միսիայի նախագահ, ես նկատեցի, որ հոգևոր և ղեկավարման հմտությունների կտրուկ աճ է նկատվում երիտասարդ տղաների մոտ իրենց միսիայի տարիների ընթացքում: Եթե մենք ինչ-որ կերպ կարողանայինք այդ հատկանիշները չափեինք իրենց Ահարոնյան քահանայության տարիներին ունեցած հատկանիշների հետ, միգուցե այն նման կլիներ ներկայացվող գրաֆիկի կտրուկ աճող գծին: Իմ մտքում կան առնվազն երեք հիմնական գործոններ, որոնք միսիայի ընթացքում նպաստում են այդպիսի կտրուկ աճին. (1) մենք վստահում ենք այդ երիտասարդներին ավելի շատ, քան նախկինում, (2) Մենք ունենք բարձր, բայց սիրով լի ակնկալիքներ նրանցից, և (3) մենք ուսուցանում ու վերապատրաստում ենք նրանց, որպեսզի նրանք զերազանցությամբ կարողանան իրականացնել այդ սպասելիքները:

Մեկը կարող է արդարացիորեն հարցնել, թե «Ինչո՞ւ չի կարելի այդ նույն սկզբունքները կիրառել սարկավագների քվորումի նախագահների դեպքում»: Եթե դա արվեր, գուցե աճը սկսվեր ավելի վաղ և ավելի շատ նման լիներ սրան: Թույլ տվեք մի պահ խոսել, թե ինչպես այս հատկանիշները կարող են կիրառվել սարկավագների քվորումի նախագահների դեպքում:

Առաջինը վստահությունն է: Մենք կարող ենք մեծ պատասխանատվությամբ վստահել մեր սարկավագների քվորումի նախագահներին: Անշուշտ, Տերը անում է դա, ինչպես որ ցույց է տրված Իր պատրաստակամության մեջ՝ նրանց շնորհելու բանալիներ, որը նշանակում է ունենալ իրավունք նախագահելու և վարելու քվորումի

գործերը: Որպես այդ վստահության ապացույց՝ մենք սարկավագների քվորումի նախագահներին կանչում ենք հայտնությամբ, այլ ոչ թե քվորումում ավագության կամ նման գործոններից ելնելով: Այս Եկեղեցու յուրաքանչյուր ղեկավար, այդ թվում սարկավագների քվորումի նախագահը, իրավունք ունի իմանալու, և պետք է իմանա, որ նա կանչվել է հայտնությամբ: Այդ վստահեցումը օգնում է նրան համոզվել, որ Աստված և՛ վստահում է իրեն, և՛ աջակցում է իրեն:

Երկրորդ և երրորդ հատկանիշները փոխկապակցված են միմյանց: Մեծ ակնկալիքները և հարակից ուսուցումը լրացնում են միմյանց: Միսիայում ես սովորեցի մի մեծ դաս. միսիոներները, սովորաբար, բարձրանում կամ իջնում են միսիայի նախագահի ակնկալիքների մակարդակին, և դա այդպես է նաև սարկավագների քվորումի նախագահի դեպքում: Եթե նրանցից ակնկալում են միայն վարել քվորումի ժողովները և մասնակցել նախագահության երիտասարդների ժողովներին, ապա դա այն ամենն է, ինչ նրանք կանեն: Բայց դուք՝ որպես առաջնորդներ, կարող եք նրանց ավելի մեծ տեսլական տալ՝ Տիրոջ տեսլականը: Իսկ ինչո՞ւ է այդ տեսլականը այդքան կարևոր: Որովհետև մեծացող տեսլականի հետ մեծանում է շարժառիթը:

Այս Եկեղեցու յուրաքանչյուր ծառայության հիմքում ընկած է հայտնություն ստանալը: Հետևաբար, այդ սարկավագների քվորումի նախագահները պետք է իմանան, որ նրանք ունեն իրավունք՝ ստանալու հայտնություն առաջարկելու իրենց խորհրդականներին, իրավունք՝ ստանալու հայտնություն կորածներին փրկելու վերաբերյալ, և իրավունք՝ ստանալու հայտնություն քվորումի անդամներին իրենց պարտականություններում ուսուցանելու համար:

Իմաստուն ղեկավարը սարկավագների քվորումի նախագահին կուսուցանի այն սկզբունքները, որոնք հայտնություն ստանալիս օգտակար կլինեն: Նա կարող է նրանց ուսուցանել Տիրոջ

պարզորոշ խոստումը. «Եթե խնդրես, դու կստանաս հայտնություն հայտնության վրա» (ՎևՈւ 42.61): Տերը շատ առատաձեռն է հայտնություն տալիս: Արդյոք Նա չէ Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին հիշեցրել, որ «Այնքան հաճախ, որքան հարցրել ես ինձ, դու հրահանգներ ես ստացել իմ Հոգուց» (ՎևՈւ 6.14): Եվ դա կարող է նաև լինել ձեզ հետ՝ սարկավագների քվորումի նախագահներ: Տերը սիրում է ձեզ և ցանկանում է ձեր առաջ բացել Իր միտքը և կամքը: Կարո՞ղ եք երբևէ պատկերացնել Տիրոջը՝ խնդիր ունենալիս, որը Նա չի կարողանում լուծել: Ես չեմ կարող պատկերացնել: Քանի որ դուք լիազորված եք հայտնություն ստանալ, Նա կարող է օգնել ձեզ լուծելու ցանկացած մտահոգություն, որը ունեք որպես ձեր քվորումի նախագահ, եթե դուք փնտրեք Նրա օգնությունը:

Դուք՝ հիանալի ղեկավարներդ, կարող եք ուսուցանել սարկավագների քվորումի նախագահին, որ հայտնությունը չի փոխարինում քրտնաջան աշխատանքին և տնային վարժությանը: Մի անգամ Նախագահ Հենրի Բ. Այրինգը հարցրել է Նախագահ Հարոլդ Բ. Լիին, թե «Ինչպե՞ս ես ստանամ հայտնություն»: Նախագահ Լին պատասխանել է, որ «Եթե ցանկանում ես հայտնություն ստանալ, ապա կատարի՛ր քո տնային աշխատանքը»:[1] Իմաստուն ղեկավարը իր սարկավագների քվորումի նախագահի հետ կարող է քննարկել որոշ հոգևոր տնային աշխատանքներ, որոնք նա կարող է անել, որպեսզի նախապատրաստվի առաջարկել իր խորհրդականներին: Նա կարող է հարցեր տալ և պատասխանել դրանց, ինչպիսիք են. Ո՞վ կարող է լինել լավ օրինակ, որպեսզի կարողանա ոգեշնչել մյուս տղաներին: Կամ, ո՞վ կարող է զգայուն լինել հատուկ դժվարություններ ունեցող մարդկանց կարիքներին:

Եվ վերջապես, իմաստուն ղեկավարը կարող ե ուսուցանել նրան, թե ինչպես ճանաչել և գործել ըստ այդ հայտնության, երբ այն գալիս է: Մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որը լի է արագ ու հետաքրքիր իրադարձություններով, որտեղ վառ լույսերը ու բարձր ձայնով բարձրախոսները ընդունված բան են: Սակայն մեր երիտասարդ տղամարդիկ պետք է իմանան, որ դա աշխարհի ճանապարհն է, այլ ոչ թե Տիրոջ ճանապարհը: Փրկիչը ծնվեց համեմատաբար անծանոթ մսուրում, Նա իրագործեց բոլոր ժամանակների ամենափառահեղ ու անհամեմատելի արարքը մի լուռ այգում, և Ջոզեֆը տեսավ իր առաջին տեսիլքը մի մեկուսացված պուրակում: Աստծո պատասխանները գալիս են մեղմ հանդարտ ձայնով՝ խաղաղության ու մխիթարության զգացմամբ, բարին գործելու ցանկությամբ, մտքի լուսավորմամբ, երբեմն մտքի փոքր սերմերի տեսքով, որը եթե հարգենք ու սնուցենք, կարող է դառնալ հոգևոր մեծ ծառ: Երբեմն, այդ զգացումներն ու մտքերը կարող են պատճառ հանդիսանալ, որ ձեր սարկավագների

քվորումի նախագահներն իրենց խորհրդական առաջարկեն կամ հանձնարարություն տան մի երիտասարդ տղամարդու, ով ներկայումս ոչ ակտիվ է:

Տարիներ առաջ, որպես ցցի նախագահություն, մենք ոգեշնչում զգացինք կանչելու մի բարի մարդու, որպես ցցի գործավար: Այդ ժամանակ նա ժամանակավորապես դժվարանում էր կանոնավոր կերպով հաճախել Եկեղեցի: Այնուամենայնիվ, մենք գիտեինք, որ եթե նա ընդուներ կոչումը, նա հրաշալի աշխատանք կկատարեր:

Մենք փոխանցեցինք կոչումը, բայց նա պատասխանեց «Ոչ, ես չեմ կարծում, որ ես կարող եմ դա անել»:

Այնուհետև մի ոգեշնչում ստացա: Ես ասացի. «Դե, կարծում եմ, այդ դեպքում Գլենդելի ցիցը չի ունենա ցցի գործավար»:

Նա ցնցված պատասխանեց. «Ի՞նչ եք ասում: Դուք պարտավոր եք ունենալ ցցի գործավար»:

Ես պատասխանեցի. «Դուք ուզո՞ւմ եք, որ մենք մեկ ուրիշին կանչենք որպես ցցի գործավար, այն դեպքում, երբ Տերը ներշնչել է մեզ, որպեսզի ձեզ կանչենք»:

«Դե լավ, – ասաց նա, – ես կանեմ դա»:

Եվ նա արեց այդ: Կան ոչ միայն շատ տղամարդիկ, այլև շատ տղաներ, ովքեր կպատասխանեն կանչին, եթե իմանան, որ Տերը կանչում է նրանց, և որ Տերը նրանց կարիքն ունի:

Հաջորդը, դուք կարող եք տեղեկացնել այդ սարկավագների քվորումի նախագահին, որ Տիրոջ ակնկալիքներից մեկը նրանից, կորածներին փրկելն է, և՛ ոչ ակտիվներին և՛ ոչ անդամներին: Տերը հայտարարել է Իր հիմնական առաքելությունը հետևյալ կերպ. «Որովհետեւ մարդի Որդին եկաւ, որ ապրեցնէ կորածը» (Մատթեոս 18.11): Եթե կորածներին փրկելը Տիրոջ համար առաջնահերթություն է, եթե դա առաջնահերթություն է Նախագահ Թոմաս Ս Մոնսոնի համար, որ դա անի, որն արտացոլված է իր ողջ կյանքի մեջ, արդյոք դա չպե՞տք է լինի առաջնահերթություն յուրաքանչյուր ղեկավարի համար, այս Եկեղեցու յուրաքանչյուր սարկավագների քվորումի նախագահի համար, որպեսզի նույն կերպ վարվեն: Մեր ղեկավարության առանցքում, որպես մեր ծառայության կենտրոնական մաս, պետք է լինի կրակ, ջիղ, անողորմ վճռականություն՝ գտնելու և ետ բերելու կորածներին:

Մի երիտասարդ տղամարդ, ով հյուրընկալել է իր քվորումի անդամներին, ասել է. «Մեծ անակնկալ էր այսօր, երբ. . . . 30 մարդ եկավ իմ տուն. . . . Դա ինձ մոտ ցանկություն առաջացրեց այսուհետ գնալ եկեղեցի»: Ինչպե՞ս կարող է երիտասարդությունը դիմադրել այդպիսի սիրուն և ուշադրությանը:

Ես ուրախանում եմ, երբ լսում եմ շատ պատմություններ սարկավագների քվորումի նախագահների մասին, ովքեր ըմբռնել են տեսլականը և, երբեմն, իրենց քվորումներում դասավանդում են ամբողջ դասը կամ դասի մի մասը: Մի քանի շաբաթ առաջ ես այցելեցի սարկավագների քվորումի դասին: 12 տարեկան մի տղա ունեցավ 25 րոպեանոց դաս Քավության մասին: Նա սկսեց իր դասը, հարցնելով իր ընկեր սարկավագներին, թե ինչ են մտածում Քավության մասին: Այնուհետև՝ նա կիսվեց մի քանի իմաստալից հատվածներով և տվեց մտածված հարցեր, որոնց նրանք պատասխանեցին: Հասկանալով, որ ավելի շատ ժամանակ կար, քան մնացած դասի նյութը, նա բավական խելացի գտնվեց և, հավանաբար, օգտագործելով հոր նախազգուշացումը, հարցեր ուղղեց իր ներկա ղեկավարներին, թե միսիայի ընթացքում նրանց ինչ հարցեր էին տրվել Քավության վերաբերյալ, և թե ինչ էին նրանք պատասխանել: Այնուհետև՝ նա ավարտեց դասն իր վկայությունը բերելով: Ես հարգանքով լսում էի: Մտածեցի ինքս ինձ, թե «Ես չեմ հիշում, որ երբևէ լսած լինեի նման հիանալի դաս, երբ ես Ահարոնյան քահանայության երիտասարդ էի»: Մենք կարող ենք բարձրացնել սանդղակը և տեսլականը այս երիտասարդ տղաների համար, և նրանք կարձագանքեն:

Դուք, ղեկավարնե՛ր, լավագույն ձևով ոգեշնչում եք այդ սարկավագների քվորումի նախագահներին, երբ ետ կանգնում և թույլ եք տալիս, որ նրանք առաջնորդեն: Դուք մեծարում եք ձեր կոչումը, ոչ միայն այն ժամանակ, երբ հիանալի դաս եք վարում, այլ երբ դուք օգնում եք նրանց հիանալի դաս վարել, ոչ թե այն ժամանակ, երբ դուք փրկարար ձեռք եք մեկնում մեկ հոգու, այլ երբ դուք օգնում եք նրանց անելու դա:

Հին ասացվածք կա. Մի մահացեք երաժշտությունը ձեր մեջ: Նույն կերպ ես կասեի ավագ ղեկավարներին, ձեր կոչումից մի ազատվեք ղեկավարման հմտությունները ձեր մեջ: Յուրաքանչյուր հնարավորության դեպքում ուսուցանեք մեր երիտասարդներին, ուսուցանեք ինչպես պատրաստել օրակարգ, ինչպես վարել ժողովները արժանապատվությամբ և բարությամբ, ինչպես փրկարար ձեռք մեկնել մեկ հոգու, ինչպես պատրաստել և մատուցել ոգեշնչված ելույթ, և ինչպես ստանալ հայտնություն: Սա կլինի ձեր հաջողության չափանիշը, եթե ղեկավարման հմտություններն ու հոգևորը թողնեք արմատացած այդ երիտասարդ տղաների սրտերում և մտքերում:

Եթե դուք՝ սարկավագների քվորումի նախագահներդ, մեծարեք ձեր կոչումը, դուք կլինեք գործիքներ Աստծո ձեռքում, նույնիսկ այժմ, քանի որ քահանայությունը պատանու մեջ նույնքան զորեղ է, որքան քահանայությունը տղամարդու մեջ, եթե այն արդարությամբ է օգտագործվում: Իսկ հետո, երբ դուք տաճարային ուխտեր եք կապում և դառնում միսիոներներ ու այս Եկեղեցու ապագա ղեկավարներ, դուք իմանում եք ինչպես ստանալ հայտնություն, ինչպես փրկել մեկին, և ինչպես ուսուցանել արքայության վարդապետությունը՝ զորությամբ ու իշխանությամբ: Այնուհետև՝ դուք կդառնաք պատվավոր անդրանիկության երիտասարդություն: Այս ամենի մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ով աշխարհի փրկիչն ու քավիչն է, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. In Henry B. Eyring, “Waiting upon the Lord,” in *Brigham Young University 1990–91 Devotional and Fireside Speeches* (1991), 17.

Դեյվիդ Լ. Բեք
Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահ

Ծառայելու ձեր սրբազան պարտականությունը

Դուք ստացել եք ծառայելու զորություն, իշխանություն և սրբազան պարտք այն պահին, երբ կարգվել եք քահանայության:

Ծառայելու ուրախությունը

Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդիկ, դուք Աստծո սիրելի որդիներն եք, և Նա մեծ աշխատանք ունի ձեզ համար: Այդ աշխատանքն իրականացնելու համար, դուք պետք է կատարեք մյուսներին ծառայելու ձեր սրբազան պարտքը:[1]

Դուք գիտե՞ք, ինչ է նշանակում ծառայել: Մտածեք այս հարցի մասին, մինչ ես կպատմեմ ձեզ Չայ Ջոնսոն անունով աղջկա մասին:

Երբ Չայը սկսեց հաճախել ավագ դպրոց, նա դարձավ դաժան վերաբերմունքի և անմիտ հալածանքի զոհ: Երբ նա դասարան էր մտնում, նրան վիրավորում էին, հրում և ծաղրում, որոշ ուսանողներ անգամ աղբ էին նետում նրա վրա: Դուք, մի գուցե, հանդիպել եք նման վերաբերմունքի արժանացած մարդկանց ձեր դպրոցում:

Շատերի համար դեռահաս տարիները միայնակության և վախի տարիներ են: Բայց, պարտադիր չէ, որ այդպես լինի: Չայի բախտից, նրա դպրոցում կային երիտասարդ տղամարդիկ, ովքեր հասկանում էին, թե ինչ է նշանակում ծառայելը:

Չայի մայրը խնդրեց նրա դպրոցի ուսուցիչներին օգնել կանգնեցնել հալածանքը, սակայն այն շարունակվում էր: Այնուհետև նա զանգահարեց Քարսոն Ջոնսին՝ Ահարոնյան Քահանայություն կրող ֆուտբոլի թիմի սկսնակ անկյունային խաղացողին: Նա խնդրեց նրան օգնել գտնել հալածողներին:

Քարսոնը համաձայնեց օգնել, սակայն սրտի խորքում զգում էր, որ կարող էր անել շատ ավելի, քան պարզապես գտնելը հալածողներին: Հոգին հուշեց նրան, որ Նա պետք է օգներ Չային սիրված զգալ:

Քարսոնը խնդրեց իր թիմակիցներին միանալ իրեն Չային ծառայելիս: Նրանք հրավիրեցին նրան իրենց հետ նստել ցերեկվա նախաճաշին: Նրանք ուղեկցում էին նրան դասասենյակ, հետևելով, որ նա ապահով լիներ: Զարմանալի չէ, որ ֆոտբոլիստ մոտ ընկերներ ունեցող Չային ոչ ոք այլևս չէր հալածում:

Ֆուտբոլի թիմի համար դա հետաքրքիր ժամանակ էր: Սակայն հաղթական ոգևորությամբ լի այդ ժամանակաշրջանում երիտասարդները չէին մոռանում Չայի մասին: Նրանք հրավիրում էին նրան միանալ թիմին դաշտում խաղերից հետո: Չայն իրեն սիրված և գնահատված էր զգում: Նա իրեն ապահով էր զգում: Նա երջանիկ էր:

Ֆուտբոլի թիմը նվաճեց նահանգի գավաթը: Սակայն այդ դպրոցում տեղի ունեցավ շատ ավելի, քան ֆուտբոլի առաջնությունը: Այդ երիտասարդ տղաների օրինակը ոգեշնչեց մյուս



ուսանողներին լինել ավելի ընդունող, ավելի ընկերական: Այժմ նրանք վերաբերվում են միմյանց ավելի մեծ բարությամբ և հարգանքով:

Ազգային լրատվամիջոցները իմացան, թե ինչ են արել այդ երիտասարդ տղաները, և տարածեցին այդ պատմությունը ողջ երկրով մեկ: Այն, ինչ սկիզբ առավ որպես մեկին ծառայելու ջանք, ոգեշնչեց հազարավորներին անել նույնը:

Չայի մայրը այդ երիտասարդ տղաներին կոչում է «թաքնված հրեշտակներ»: Քարսոնը և նրա ընկերները միշտ ասում են, որ Չայն օրհնեց իրենց կյանքը շատ ավելին, քան իրենք օրհնեցին նրանը: Ահա, թե ինչ է պատահում, երբ դուք ինքնամոռաց ծառայում եք ուրիշներին՝ դուք գտնում եք ինքներդ ձեզ:[2] Դուք փոխվում և աճում եք այնպես, ինչպես այլ ճանապարհով հնարավոր չէր: Այս երիտասարդ տղաները զգացին ծառայելու ուրախությունը և շարունակում են ուրիշներին օրհնելու հնարավորություններ փնտրել: Նրանք անհամբեր սպասում են գալիք ամիսներին ծառայություն մատուցելուն, երբ կծառայեն որպես լիաժամկետ միսիոներներ:[3]

Կարիք և պարտք

Աշխարհում կան հազարավոր Չայ Ջոնսոններ՝ մարդիկ, ովքեր կարիք ունեն զգալու Երկնային Հոր սերը: Նրանք ձեր դպրոցներում են, ձեր քվորումներում, անգամ, ձեր ընտանիքում: Ոմանք արագ են գալիս մեր միտքը: Մյուսները ունեն ավելի քիչ տեսանելի կարիքներ: Գրեթե յուրաքանչյուրը, ում դուք ճանաչում եք, կարող է որևէ ձևով օրհնվել ձեր ծառայության միջոցով: Տերն ապավինում է ձեզ՝ նրանց օգնելու հարցում:

Պետք չէ, որ դուք հայտնի սպորտսմեն լինեք՝ մյուսներին ծառայելու համար: Դուք ստացել եք ծառայելու զորություն, իշխանություն և սրբազան պարտք այն պահին, երբ կարգվել եք քահանայության: Նախագահ Ջեյմս Ֆ. Ֆաուստն ուսուցանել է. «Քահանայությունը իշխանություն է, փոխանցված մարդուն՝ Աստծո անունով *գործելու* համար»:[4] Սիարոնյան Քահանայությունը կրում է հրեշտակների սպասավորման բանալիները:[5]

Եթե դուք սիրեք Նրա զավակներին, Երկնային Հայրը կառաջնորդի ձեզ և հրեշտակները կօգնեն ձեզ:[6] Ձեզ կտրվի կյանքեր օրհնելու և հոգիներ փրկելու զորություն:

Հիսուս Քրիստոսը ձեր օրինակն է: Նա «չեկաւ որ իրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ»:[7] Ծառայել նշանակում է սիրել և հոգալ մյուսների մասին: Դա նշանակում է բավարարել նրանց ֆիզիկական և հոգևոր կարիքները: Պարզ ասած, դա նշանակում է անել այն, ինչ Փրկիչը կաներ, եթե այստեղ լիներ:

Ձեր ընտանիքը

Սկսեք ձեր սեփական ընտանիքից: Այստեղ է, որ դուք կարող եք կատարել ձեր առավել կարևոր ծառայությունը:[8]

Ցանկանո՞ւմ եք մի հետաքրքիր փորձ կատարել: Հաջորդ անգամ, երբ ձեր մայրը խնդրի ձեզ օգնել տան գործերով, ասացեք. «Շնորհակալություն խնդրելու համար, մայրիկ: Ես սիրով կօգնեմ»: Ապա հետևեք նրա արձագանքին: Ձեզանից ոմանք, հնարավոր է, դա փորձելուց առաջ կարիք ունենան վերհիշելու առաջին օգնության հմտությունները: Դուք կարող եք շոկի մեջ նրան զցել: Նրան ուշքի բերելուց հետո, դուք կնկատեք նրա հետ ձեր հարաբերությունների նկատելի բարելավում և Հոգու ազդեցության աճ ձեր տանը:

Դա միայն մի ձև է ձեր ընտանիքին ծառայելու համար, կան շատ այլ ձևեր: Դուք ծառայում եք, երբ բարի խոսքեր եք ասում ձեր ընտանիքի անդամներին: Դուք ծառայում եք, երբ վերաբերվում եք ձեր քույրերին և եղբայրներին ձեր լավագույն ընկերների պես:

Հավանաբար, ամենակարևորն է, երբ դուք ծառայում եք, օգնելով ձեր հորը ձեր տան հոգևոր առաջնորդի նրա պարտականությունները կատարելիս: Լիարժեք աջակցություն և խրախուսանք տվեք ընտանեկան երեկոյի կազմակերպմանը, ընտանեկան աղոթքին և սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրությանը: Արեք ձեր մասը, որպեսզի Հոգին ներկա լինի ձեր տանը: Դա ամրացնի ձեր հորը նրա դերի մեջ և կպատրաստի ձեզ մի օր հայր լինելուն: Եթե հայր չունեք, ձեր ընտանիքին ծառայելու ձեր պարտականությունն էլ ավելի անհրաժեշտ է:

Ձեր քվորումը

Դուք պարտականություն ունեք ծառայելու ձեր քվորումում:

Քահանայությունը տարածվում է ողջ աշխարհով: Ձեզանից շատերը հետևել են Նախագահ Մոնսոնի փրկելու կոչին: Այսօր Միարոնյան Քահանայության ակտիվ կրողների թիվը գերազանցում է Եկեղեցու պատմության մեջ երբևէ եղած թվին: Ինչևէ, դեռ կան այնպիսիները, ովքեր ակտիվ չեն և ունեն ձեր կարիքը:

Անցած հունիս, երբ ստեղծվեց նոր ճյուղ Բանգալորում, Հնդկաստան, քահանայության ժողովին ներկա միակ երիտասարդ տղամարդը Գլեդվին անունով վերջերս կարգված սարկավագն էր:

Գլեդվինը՝ Երիտասարդ Տղամարդկանց նախագահի և ճյուղի նախագահի հետ, սկսեց զանգահարել քիչ ակտիվ երիտասարդ տղաներին և այցելել նրանց տներում: Շուտով երկրորդ երիտասարդը՝ Սեմուելը, սկսեց նորից հաճախել Եկեղեցի:

Ամեն շաբաթ Գլադվինը և Սեմյուելը զանգահարում էին նրանց, ովքեր չէին հաճախում քվորումի ժողովին, և կիսվում էին նրանց հետ իրենց սովորածով: Նրանք նաև զանգահարում կամ այցելում էին նրանց ծննդյան օրերին: Մեկ առ մեկ քիչ ակտիվ երիտասարդ տղաները դարձան նրանց ընկերները և սկսեցին ընդունել հրավերները՝ գալու քվորումի միջոցառումներին, հաճախելու քվորումի ժողովներին և, ի վերջո, կատարելու իրենց ծառայությունը: Այսօր ճյուղի բոլոր երիտասարդ տղաները ակտիվ են Եկեղեցում:

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ Միարոնյան Քահանայության քվորումները պետք է նստեն և շենացնեն՝ կամ կառուցեն և ամրացնեն միմյանց:[9] Դուք շենացնում եք, երբ ուսուցանում եք ավետարանի ճշմարտությունները, կիսվում եք հոգևոր փորձառություններով և բերում եք ձեր վկայությունը: Երիտասարդների ուսումնական ծրագիրը խրախուսում է այս տեսակի շփումները քվորումների ժողովներին, սակայն դա կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ քվորումի յուրաքանչյուր անդամ իրեն սիրված և հարգված է զգում: Ծաղրելը և նվաստացնելը տեղ չունեն քվորումի ժողովում, հատկապես, երբ ազատ զգացմունքներ են արտահայտվում: Քվորումների նախագահությունները պետք է վերահսկեն, որպեսզի քվորումների ժողովները ապահով վայր լինեն բոլորի մասնակցության համար:

Պողոս Առաքյալը հորդորել է. «Ոչ մի զէշ խօսք չ՚դուրս գայ ձեր բերանիցը. բայց այն՝ որ բարի է՝ շինութեան համար հարկաւոր, որ շնորհք տայ լսողներին»:[10]

Քահանայություն կրողները երբեք չեն օգտագործում գռեհիկ կամ կեղտոտ լեզու: Նրանք երբեք չեն նվաստացնում կամ վիրավորում մյուսներին: Նրանք միշտ բարձրանում և ամրացնում են մյուսներին: Սա ծառայելու պարզ, սակայն զորեղ եղանակ է:

Բոլոր ժամանակներում

Ծառայելու աշխատանքը չի սահմանափակվում արարողություններով կամ տնային ուսուցանման այցերով, կամ պատահական ծառայության ծրագրերով: Մենք միշտ ենք քահանայության այրեր, ոչ միայն կիրակի օրը և ոչ միայն այն ժամանակ, երբ կրում ենք սպիտակ վերնաշապիկ և փողկապ: Մենք ունենք ծառայելու պարտականություն, որտեղ էլ որ լինենք: Ծառայությունը դա այն չէ, ինչ մենք անում ենք, այն սահմանում է մեր ով լինելը:

Ծառայեք ամեն օր: Հնարավորությունները ձեր շուրջն են: Փնտրեք դրանք: Խնդրեք Տիրոջն օգնել հասկանալ դրանք: Դուք կտեսնեք, որ մեծամասամբ, դրանք փոքր անկեղծ գործեր են, որոնք օգնում են մյուսներին դառնալ Հիսուս Քրիստոսի հետևորդները:[11]

Զգտելով արժանի լինել Հոգուն, դուք կհասկանաք մտքերը և զգացումները, որոնք հուշում են ձեզ ծառայել: Գործելով ըստ այդ հուշումների, դուք ավելի շատ հուշումներ կստանաք, և ծառայելու ձեր հնարավորությունները և ունակությունը կմեծանան և կընդլայնվեն:

Իմ երիտասարդ եղբայրներ, ես վկայում եմ, որ ձեզ տրվել է հրաշագործ Միարոնյան Քահանայության իշխանությունը և զորությունը՝ Աստծո անունով գործելու համար:

Ես վկայում եմ, որ դա անելով, դուք գործիք կլինեք Աստծո ձեռքերում՝ ուրիշներին օգնելու համար: Ձեր կյանքը կլինի ավելի հարուստ և ավելի իմաստալի: Դուք կգտնեք ավելի մեծ ուժ՝ չարին դիմակայելու համար: Դուք կգտնեք իրական երջանկություն, որը կարող են իմանալ միայն Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները:

Թող որ դուք զգաք ծառայելու ձեր սրբազան պարտքը կատարելու ուրախությունը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.111:
2. Տես Մարկոս 8.35:
3. Տես Trent Toone, “Kindness of Arizona High School QB Carson Jones and Teammates Has Gone Viral,” *Deseret News,* Nov. 9, 2012, deseretnews.com/article/865566351/Kindness-of-Arizona-high-school-QB-Carson-Jones-and-teammates-has-gone-viral.html:
4. Ջեյմս Ի. Ֆաուստ, «Ուղերձ իմ թոռներին», *Լիահոնա,* մայիս 2007, 54; շեշտադրումն ավելացված է:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 13.1:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.88:
7. Տես Մատթեոս 20.27–28:
8. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 2.4.5:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.85:
10. Եփեսացիս 4.29:
11. Տես *Handbook 2,* 3.2.3:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Չորս կոչում

Ես ցանկանում եմ առաջարկել չորս կոչում, . . . որոնք կարող են օգնել մեզ հասկանալ մեր դերը Աստծո հավերժական ծրագրում և մեր ներուժը՝ որպես քահանայություն կրողներ:

Իմ թանկագին եղբայրներ և սիրելի ընկերներ, սիրտս լցված է երախտագիտությամբ և ուրախությամբ, որ ձեզ հետ եմ այսօր: Ես գովաբանում եմ ձեզ՝ հայրեր և պապեր, որ բերել եք ձեր որդիներին ու թոռներին: Շնորհավորում եմ ձեզ, երիտասարդ տղաներ, այստեղ գալու ընտրության առթիվ: Սա այն տեղն է, որտեղ դուք պետք է լինեք: Հուսով եմ, որ դուք կկարողանաք զգալ այն եղբայրությունը, որ միավորում է մեզ, իմ աղոթքն է, որ այստեղ, ձեր եղբայրների շրջապատում, դուք գտնեք ընդունելություն, աջակցություն և ընկերություն:

Տղամարդիկս, երբեմն, մեզ բնորոշում ենք կոչումներով: Մեզանից շատերն ունեն բազմաթիվ կոչումներ և յուրաքանչյուրն ինչ-որ մի կարևոր բան է ասում մեր ինքնության մասին: Օրինակ, որոշ կոչումներ բնութագրում են մեր դերը ընտանիքում, ինչպիսիք են՝ *որդի, եղբայր, ամուսին* և *հայր* կոչումները: Կան կոչումներ, որոնք նկարագրում են մեր մասնագիտությունն աշխարհում, ինչպիսիք են՝ *բժիշկ, զինվոր* կամ *արհեստավոր* կոչումները: Կան նաև կոչումներ, որոնք նկարագրում են մեր դիրքը Եկեղեցում:

Այսօր ես ցանկանում եմ առաջարկել չորս կոչում, որոնք կարծում եմ, վերաբերում են բոլոր քահանայություն կրողներին՝ աշխարհով մեկ, կոչումներ, որոնք կարող են օգնել մեզ ճանաչել մեր դերը Աստծո հավերժական ծրագրում և հասկանալ մեր ներուժը՝ որպես քահանայություն կրողներ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Երկնային Հոր Որդի

Մի կոչում, որն առավել հիմնարար ձևով բնորոշում է բոլորիս՝ *Երկնային Հոր որդի* կոչումն է: Անկախ նրանից, թե ինչ պետք է մենք անենք կյանքում, մենք երբեք չպետք է մոռանանք, որ մենք, բառացիորեն, Աստծո հոգևոր զավակներն ենք: Մենք Նրա զավակներն էինք նախքան այս աշխարհ գալը, և մենք ընդմիշտ նրա զավակները կլինենք: Այս հիմնարար ճշմարտությունը պետք է փոխի այն, թե ինչպես ենք մենք վերաբերվում ինքներս մեզ, մեր եղբայրներին ու քույրերին և առհասարակ կյանքին:

Ցավոք, մեզանից ոչ ոք չի ապրում այդ կոչման համապատասխան, «որովհետեւ ամենքը մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքիցը պակասուած են»:[1]

Գիտելիքը, որ Աստծո որդի ես, բայց այդ կոչման չափով չես կարողանում ապրել, կարող է, երբեմն, հուսահատեցնող լինել: Հակառակորդը սիրում է օգտվել այդ զգացումներից: Սատանան ցանկանում է, որ ինքդ քեզ բնորոշես քո մեղքերով, այլ ոչ թե քո աստվածային ներուժով: Եղբայրներ, մի՛ լսեք նրան:

Բոլորս տեսել ենք մանուկին քայլել սովորելիս: Նա մի փոքրիկ քայլ է անում և երերում է: Նա ընկնում է: Արդյոք մենք հանդիմանո՞ւմ ենք նման փորձը: Իհարկե, ո՛չ: Ո՞ր Հայրը կպատժի իր մանուկին սայթաքելու համար: Մենք խրախուսում ենք, ողջունում ենք և գովաբանում ենք, քանի որ յուրաքանչյուր փոքր քայլի հետ երեխան ավելի շատ է նմանվում իր ծնողներին:

Արդ, եղբայրներ, եթե համեմատենք Աստծո կատարելության հետ, մենք՝ մահկանացուներս, նկուն, անվստահ մանուկներ ենք: Բայց մեր սիրող Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք ավելի շատ նմանվենք Իրեն և դա, իմ թանկագիր եղբայրներ, պետք է լինի նաև մեր Հավերժական նպատակը: Աստված հասկանում է, որ մենք դրան հասնում ենք ոչ թե մի ակնթարթում, այլ քայլ առ քայլ:

Ես չեմ հավատում այնպիսի Աստծո, որը ստեղծած կլիներ կանոններ ու պատվիրաններ միայն նրա համար, որ մենք ձախողվեինք, իսկ Նա մեզ պատժեր: Ես հավատում եմ Երկնային Հոր, որը սիրող և հոգատար է, և որն ուրախանում է մեր ոտքի կանգնելու և նրա ուղղությամբ քայլելու բոլոր ջանքերով: Նույնիսկ երբ սայթաքում ենք, նա մեզ կոչ է անում չհուսալքվել, երբեք չհանձնվել, ոչ էլ փախչել մեզ բաժին ընկած ծառայության դաշտից, այլ քաջ լինել, հավատքը վերգտնել և շարունակել ջանք գործադրել:

Մեր Երկնային Հայրը դաստիարակում է իր երեխաներին և հաճախ անտեսանելի երկնային օգնություն է ուղարկում նրանց, ովքեր ցանկանում են հետևել Փրկչին:

Հիսուս Քրիստոսի աշակերտ

Եվ դա մեզ բերում է դեպի հաջորդ կոչման, որը բոլորս կիսում

ենք. բոլոր նրանք, ովքեր լրջորեն ձգտում են հետևել Քրիստոսին, համարվում են Նրա *աշակերտները:* Թեև ընդունում ենք, որ մեզանից ոչ ոք կատարյալ չէ, մենք չենք օգտագործում այդ փաստը որպես արդարացում, որպեսզի իջեցնենք մեր ակնկալիքները՝ ապրենք մեր արտոնություններից ցածր, հետաձգենք մեր ապաշխարությունը կամ հրաժարվենք աճել՝ մեր Վարդապետի և Թագավորի ավելի լավը, ավելի կատարյալ, ավելի մաքուր հետևորդներ դառնալով:

Հիշեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին չի հիմնվել կատարյալ տղամարդկանց և կանանց համար, ոչ էլ նրանց համար, ովքեր կատարյալ են կամ ազատված են մահկանացու գայթակղություններից, այլ ինձ և ձեր նման մարդկանց համար: Եվ այն կառուցված է մեր Քավչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի վեմի[2] վրա, ում Քավությամբ մենք կարող ենք մաքրվել և դառնալ «Աստծո ընտանիքի համաքաղաքացիներ»:[3]

Առանց Հիսուս Քրիստոսի Քավության, կյանքը կլիներ մահվան մատնված ճանապարհ՝ առանց հույսի կամ ապագայի: Իսկ երբ կա Քավությունը, կյանքը ազվացնող, ոգեշնչող՝ աճի և զարգացման ճանապարհ է, որը տանում է դեպի հավերժական կյանք մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

Մինդեռ Քավությունը նախատեսված է մեզ օգնելու, որ ավելի շատ նմանվենք Քրիստոսին, այն նախատեսված չէ բոլորիս նույնը դարձնելու համար: Երբեմն, մենք շփոթում ենք անձի տարբերությունը մեղքի հետ: Մենք կարող ենք նույնիսկ սխալվել, մտածելով, որ քանի որ մեկը տարբերվում է մեզանից, նշանակում է, նա հաճելի չէ Աստծոն: Մտածողության այդ ուղին տանում այն համոզմունքին, որ Եկեղեցին բոլոր անդամներին ցանկանում է ստեղծել մի կաղապարից, որպեսզի յուրաքանչյուրն ունենա նույն արտաքին տեսքը, նույն բանը զգա, նույն ձևով մտածի և բոլորի նման վարվի: Դա հակասում է Աստծո հանճարին, որը յուրաքանչյուր տղամարդու ստեղծել է իր եղբորից



տարբեր, յուրաքանչյուր որդու՝ իր հորից տարբեր: Նույնիսկ միանման երկվորյակները նույնը չեն իրենց անձի ու հոգու էությամբ:

Այն հակասում է նաև Հիսուս Քրիստոսի Եկեղեցու մտադրությանն ու նպատակին, որն ընդունում և պաշտպանում է Աստծո զավակներից յուրաքանչյուրի կամքի բարոյական ազատությունը՝ իր բոլոր հեռու գնացող հետևանքներով: Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ՝ մենք միասնական ենք վերականգնված ավետարանի մեր վկայությամբ և Աստծո պատվիրանները պահելու մեր պարտավորությամբ: Բայց մենք տարբեր ենք մեր մշակութային, սոցիալական և քաղաքական նախասիրություններով:

Եկեղեցին բարգավաճում է, երբ մենք օգտվում ենք այս բազմազանությունից և խրախուսում միմյանց զարգացնել և օգտագործել մեր տաղանդները, որպեսզի բարձրացնենք և ամրապնդենք մեր ընկերակից աշակերտներին:

Եղբայրներ, աշակերտությունը Փրկչին հետևելու կյանքի տևողությամբ ճամփորդություն է: Բեթլեհեմից Գողգոթա տանող այլաբանական մեր ճամփորդության ժամանակ շատ առիթներ կլինեն ճանապարհից հրաժարվելու: Երբեմն մեզ կթվա, որ ճանապարհը մեր հուսացածից ավելին է պահանջում: Սակայն որպես քահանայության տղամարդիկ, պետք է քաջություն ունենանք հետևելու մեր Քավչին, նույնիսկ այն ժամանակ, երբ մեր խաչը կրելը շատ ծանր է թվում:

Աստծո Որդուն հետևելու ամեն քայլափոխին մենք հնարավոր է հիշենք, որ դեռ կատարյալ չենք: Բայց եկեք լինենք կայուն և հաստատակամ աշակերտներ: Եկեք չհանձնվենք: Եկեք հավատրիմ լինենք մեր ուխտերին: Եկեք երբեք չկորցնենք մեր Բարեխոսի ու Քավչի հորիզոնը մինչ քայլում ենք դեպի Նա՝ առաջ գնալով անկատար քայլերով:

Հոգիներ բժշկող

Եղբայրներ, եթե իրապես հետևում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին, մենք պետք է ընդունենք երրորդ՝ *հոգիներ բժշկողի* կոչումը: Մենք, որ կարգվել ենք Աստծո քահանայության, կոչված ենք տիրապետելու «բժշկելու արվեստին»:[4]

Մեր գործն է կառուցել, վերանորոգել, ամրացնել, բարձրացնել և ամբողջական դարձնել: Մեր հանձնարարականն է՝ հետևել Փրկչի օրինակին և օգնության հասնել նրանց, ովքեր տառապում են: Մենք «սգում ենք նրանց հետ, ովքեր սգում են. . . . և մխիթարում ենք նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության»:[5] Մենք կապում ենք չարչարվածի վերքերը: Մենք «սատարում ենք թույլերին, բարձրացնում ընկած ձեռքերը և ամրացնում տկար ծնկները»:[6]

Մենք բժշկող ենք՝ որպես տնային ուսուցիչներ: Մենք բժշկող ենք՝ որպես քահանայության ղեկավարներ: Մենք պետք է հավատարիմ և նվիրված բժշկող լինենք՝ որպես հայրեր, որդիներ, եղբայրներ և ամուսիններ: Մի ձեռքում մենք կրում ենք նվիրագործված յուղի սրվակ՝ հիվանդին օրհնելու համար. մյուս ձեռքում ունենք մի նկանակ հաց՝ սովածին կերակրելու համար. իսկ մեր սրտում կրում ենք Աստծո խաղաղ խոսքը, որը «բժշկում է վիրավոր հոգին»:[7]

Դա մեր առաջնային և գլխավոր պատասխանատվությունն է՝ որպես

քահանայություն կրողներ, և դա վերաբերում է և՛ Ահարոնյան, և՛ Մելքիսեդեկյան քահանայություն կրողներին: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը կյանքեր է օրհնում ոչ միայն այն ժամանակ, երբ մենք հավատում ենք, այլ ավելի շատ այն ժամանակ, երբ ապրում ենք հավատքով: Ավետարանի սկզբունքների կիրառման ժամանակ է որ անհատները և ընտանիքներն ուժեղանում են: Մեր արտոնությունն ու պատասխանատվությունն է՝ ոչ միայն ճիշտը խոսել, այլ նաև ճիշտը գործել:

Փրկիչը գործում է հրաշքներ: Նա մեծ Բժիշկն է: Նա մեր օրինակն է, մեր լույսը, նույնիսկ ամենամութ պահերին, և Նա մեզ ցույց է տալիս ճիշտ ճանապարհը:

Եկեք հետևե՛նք Նրան: Եկեք բարձրանանք հասնենք մեր կոչմանը և դառնանք բժշկող՝ ծառայելով Աստծուն և մեր մերձավորին:

Հավերժական կյանքի ժառանգորդ

Չորրորդ կոչումը, որը բոլորս կիսում ենք, մեզ վերադարձնում է մեր ցուցակի առաջին կոչմանը: Որպես մեր Երկնային Հոր զավակներ՝ բոլորս *ժառանգներ* ենք այն ամենի, ինչ Նա ունի:

«Նոյն ինքն Հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք:

Եւ եթէ որդիք՝ ապա ժառանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ. որ եթէ նորա չարչարանքներին կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք»:[8]

Մտածեք այս մասին, սիրելի եղբայրներ: Մենք Քրիստոսի ժառանգակիցնե՛ր ենք:

Ուրեմն իմաստ ունի՞, որ մեզանից շատերը մեր արժեքավոր ժամանակից, մտքերից, միջոցներից ու էներգիայից այդքան շատ ծախսում ենք, հետամուտ լինելով հեղինակության կամ ունեցվածքի, կամ էլ թույլ ենք տալիս, որ նորագույն ու զարմանահրաշ էլեկտրոնային հարմարանքներն այդքան շատ զվարճեցնեն մեզ:

Տերը մեր առջև դրել է աստվածային խոստում, որ «ովքեր հավատարիմ են այս երկու քահանայությունները ստանալու. . . . և իրենց կոչումը մեծարելու. . . . ընդունում են ինձ, ասում է Տերը. . . . Եվ նա, ով ընդունում է ինձ, ընդունում է իմ Հորը. . . . Հետևաբար, այն ամենն, ինչ իմ Հայրն ունի, կտրվի նրան»:[9]

Իմ մտքի զորությունից վեր է պատկերացնել այն ամենն, ինչ այդ խոստումը ներառում է: Սակայն գիտեմ, որ այն մեծ է, այն աստվածային է, այն հավերժական է, և դրա համար արժե ներդնել մեր կյանքի բոլոր ջանքերը:

Իմանալով դա, ինչպե՞ս կարող ենք հաճույքով ու ուրախությամբ չծառայել Տիրոջը և մեր մերձավորներին և ինչպե՞ս կարող ենք չապրել Աստծո քահանայության մեր պարտականությունների բարձրության վրա:

Սա ամենավսեմ աշխատանքն է, որը կպահանջի մեր բոլոր զգայարանները և կլարի մեր բոլոր կարողությունները: Մենք ցանկանո՞ւմ ենք տեսնել երկինքները բաց և նկատել, թե ինչպես են Սուրբ Հոգու հուշումները ճանապարհը ցույց տալիս մեզ: Ուրեմն, եկեք վերցնենք մեր մանգաղը և ողջ մեր զորությունը ներդնենք այս մեծ աշխատանքի համար՝ աշխատանք, որն շատ ավելի՛ մեծ է, քան մենք ինքներս:

Աստծուն և մեր մերձավորին ծառայելը կպարտավորեցնի և կփոխակերպի մեզ՝ դարձնելով մեր պատկերացրածից շատ ավելի լավը:

Գուցե մտածում եք, որ ձեր կարիքն առանձնապես չի զգացվում, որ դուք անտեսված եք կամ ցանկալի չեք, որ դուք տեղ չունեք:

Ինձ համար մեծ ցավ կլինի իմանալ, որ որևէ քահանայություն կրող այսպես է զգում իրեն: Անկասկած, դուք ցանկալի եք ձեր Երկնային Հոր համար, և Նա չի անտեսել ձեզ: Նա սիրում է ձեզ: Եվ ես ձեզ վստահեցնում եմ, որ դուք պե՛տք եք նաև ձեր եկեղեցուն:

Դուք գիտե՞ք, որ «Այս աշխարհքի յիմարներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ իմաստուններին. Եւ աշխարհքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ զօրաւորներին»:[10]

Գուցե ճիշտ է, որ մենք թույլ ենք: Գուցե մենք իմաստուն չենք, ոչ էլ հզոր: Բայց երբ Աստուած գործում է մեր միջոցով, ոչ ոք և ոչինչ չի կարող դեմ կանգնել մեզ:[11]

Սա է պատճառը, որ ձեր կարիքը կա: Դուք ունեք ուրույն ներդրում կատարելու ձեր մասը և Աստված

կարող է մեծացնել այդ ներդրումը զորավոր ձևով: Ներդրում կատարելու ունակությունը կախված չէ եկեղեցական ձեր կոչումից: Ծառայելու ձեր հնարավորություններն անվերջ են: Եթե դուք սպասում եք ներս մտնելու հրավերի, ես ձեզ կոչ եմ անում խաղաղաշտ մտնել:

Մի սպասեք որոշակի կոչման Աստծո արքայության կառուցման գործում լիովին ներգրավված լինելու համար: Որպես քահանայություն կրող՝ դուք արդեն կանչված եք աշխատելու: Ուսումնասիրեք Աստծո խոսքն ամեն օր, աղոթեք Երկնային Հորն ամեն օր, յուրացրեք վերականգնված ավետարանի սկզբունքները, գոհություն հայտնեք Աստծուն և խնդրեք Նրա առաջնորդությունը: Այնուհետև, ապրեք ըստ ձեր սովորածի, նախ՝ ձեր ընտանիքում, բայց նաև ձեր կյանքի բոլոր իրավիճակներում:

Մեծ Ստեղծագործողի սիմֆոնիայում դուք ունեք ձեր ուրույն մասը՝ կատարելու, ձեր ուրույն նոտաները՝ նվագելու: Եթե ձեր մասը չկատարեք, վստահաբար, սիմֆոնիան կշարունակվի: Բայց եթե ոտքի կանգնեք և միանաք նվագախմբին և թույլ տաք, որ Աստծո զորությունը գործի ձեր միջոցով, դուք կտեսնեք, որ «երկնքի պատուհանները» բացվում են և Նա «ձեզ համար օրհնութիւն է թափում՝ մինչեւ որ դրա համար տեղ չլինի»:[12] Բարձրացե՛ք, հասեք ձեր իրական ներուժին՝ որպես Աստծո որդիներ, և դուք կարող եք բարու ուժ լինել ձեր ընտանիքի, ձեր տան, ձեր համայնքի, ձեր ժողովրդի և իրապես աշխարհի համար:

Եվ այդ ընթացում, երբ «կորցնում եք ձեր անձը»[13] մերձավորի ծառայության մեջ, դուք կաճեք և կզարգանաք, մինչև որ հասնեք «Քրիստոսի կատարյալ հասակի չափին»:[14] Այն ժամանակ դուք պատրաստ կլինեք Քրիստոսի հետ ժառանգելու այն ամենն, ինչ ձեր Հայրն ունի:

Դուք կարևոր եք Աստծո համար

Իմ սիրելի եղբայրներ, իմ սիրելի եղբայրներ, դուք կարևոր եք: Դուք սիրված եք: Դուք անհրաժեշտություն եք: Այս աշխատանքը ճշմարիտ է: Քահանայությունը, որ դուք պատիվ ունեք կրելու, իրապես Աստծուց է:

Ես աղոթում եմ, որ երբ դուք խորհեք քահանայություն կրողի բազմաթիվ արժանի կոչումների համար, դուք աստվածային զով քամի զգաք ձեր մեջքին, որը ձեզ շարունակ բարձրացնում է վեր՝ դեպի ձեր մեծ ժառանգությունը, որը Երկնային Հոր կողմից պահված է ձեզ համար: Ես թողնում եմ ձեզ այս օրհնությունը և իմ վկայությունը՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հռովմայեցիս 3.23:
2. Տես Հելաման 5.12:
3. Եփեսացիս 2.19:
4. “Lord, I Would Follow Thee,” *Hymns,* no. 220.
5. Մոսիա 18.9:
6. Վարդապետություն և Ուխտեր 81.5:
7. Հակոբ 2.8:
8. Հռովմայեցիս 8.16–17:
9. Վարդապետություն և Ուխտեր 84.33, 35, 37–38:
10. Ա Կորնթացիս 1.27:
11. Տես Հռովմայեցիս 8.31:
12. Մաղաքիա 3.10:
13. Մատթեոս 16.25:
14. Եփեսացիս 4.13:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Մենք մեկ ենք

Ես աղոթում եմ, որ ուր էլ որ լինենք և ինչ պարտականություններ էլ որ ունենանք Աստծո քահանայությունում, մենք միավորված լինենք ավետարանը ողջ աշխարհին բերելու գործում:

Տերը հստակ դարձրեց այս վերջին տնտեսության հենց սկզբում, որ մենք պետք է տանենք ավետարանը ողջ աշխարհին: Այն, ինչ նա ասաց մի քանի քահանայություն կրողների 1831 թվականին, Նա ասում է շատերին այժմ: Ինչպիսին էլ որ լինի մեր տարիքը, կարողությունը, Եկեղեցու կոչումը կամ տեղանքը, մենք կանչված ենք որպես մեկ աշխատելու՝ օգնելու Նրան հոգիների բերքահավաքում, մինչև որ Նա կրկին գա: Նա ասել է այգում այն առաջին աշխատողներին.

«Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ. Ես տալիս եմ ձեզ պատվիրան, որ ամեն մարդ՝ թե երեց, քահանա, ուսուցիչ և թե անդամ, սկսի իր զորությամբ, նախապատրաստի և իրագործի այն բաները, որոնք ես պատվիրել եմ:

Եվ թող ձեր քարոզը լինի նախազգուշացնող ձայն, ամեն մարդ իր մերձավորին, մեղմությամբ ու հեզությամբ:

Եվ դուրս եկեք ամբարիշտների միջից: Փրկվե՛ք: Մաքուր եղեք, ով Տիրոջ սպասները կրողներ»:[1]

Արդ դո՛ւք,Ահարոնյան Քահանայության անդամներ, կարող եք տեսնել, որ Տիրոջ պատվիրանը ներառում է ձեզ: Քանի որ դուք գիտեք, որ Տերը միշտ պատրաստում է ուղի պահելու Իր պատվիրանը, դուք կարող եք ակնկալել, որ Նա կանի այդ ձեզանից յուրաքանչյուրի համար:

Թույլ տվեք պատմել ձեզ, թե ինչպես Նա արեց այդ՝ մի տղայի համար, որն այժմ կրում է Ահարոնյան Քահանայության քահանայի պաշտոնը: Նա 16 տարեկան է: Նա ապրում է մի երկրում, որտեղ միսիոներներն առաջին անգամ ժամանեցին ուղիղ մեկ տարի առաջ: Նրանց հանձնարարված էր երկու քաղաք, բայց ոչ այն քաղաքը, որտեղ տղան էր ապրում:

Երբ նա շատ փոքր էր նրա ծնողները բերեցին նրան Յուտա ապահովության համար: Ընտանիքը ուսուցանվեց և մկրտվեց միսիոներների կողմից: Նա չմկրտվեց Եկեղեցում, որովհետև դեռ ութ տարեկան չկար:

Նրա ծնողները մահացան վթարից: Այդպիսով, նրա տատիկը ետ վերադարձրեց նրան իր տուն՝ օվկիանոսից այն կողմ, վերադառնալով այն քաղաքը, որտեղ նա ծնվել էր:

Նա քայլում էր փողոցով մարտ ամսին՝ ուղիղ մեկ տարի առաջ, երբ զգաց, որ պետք է խոսի մի կնոջ հետ, որին նա չգիտեր: Նա խոսեց նրա հետ անգլերենով, որը դեռ հիշում էր: Նա բուժքույր էր, որն ուղարկվել էր միսիայի նախագահի կողմից այդ քաղաքը՝ որոնելու տուն և բժշկական խնամք միսիոներների համար, որոնք այնտեղ շուտով նշանակվելու էին: Նա և կինը ընկերացան, երբ զրուցում էին: Երբ կինը վերադարձավ միսիայի գրասենյակ, նա պատմեց միսիոներներին տղայի մասին:

Առաջին երկու երեցները ժամանեցին 2012թ. սեպտեմբերին: Որբ տղան նրանց առաջին մկրտությունն էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Այս տարվա մարտին նա արդեն չորս ամսվա անդամ էր: Նա կարգվեց որպես Ահարոնյան Քահանայության քահանա և այդպիսով, կարող էր մկրտել երկրորդ նորադարձին Եկեղեցում: Նա քահանայության առաջին ռահվիրան էր՝ հավաքելու Երկնային Հոր մյուս զավակներին՝ իր հետ հիմնադրելու Եկեղեցին մոտ 130000 բնակչությամբ մի քաղաքում:

2013թ. մարտի 31-ին՝ Զատիկի կիրակի օրը, Եկեղեցու անդամակցությունն ահռելիորեն աճել էր վեց անդամով այդ քաղաքում: Նա միակ տեղացի անդամն էր, ով մասնակցում էր այդ կիրակնօրյա ժողովին: Նրա ծունկը վնասվել էր մեկ օր առաջ, բայց նա վճռել էր այնտեղ լինել: Նա աղոթել էր, որ կարողանար քայլել մինչև եկեղեցի: Եվ ահա, նա այստեղ է: Հաղորդությամբ նա կիսվեց չորս երիտասարդ երեցների և մի միսիոներական զույգի հետ՝ ամբողջ հավաքվածները դա էին:

Այս պատմությունը նշանակալից չի թվում, եթե դրանում չնկատես Իր արքայությունը կառուցելիս Աստծո միջամտության օրինաչափությունը: Ես դա տեսել եմ շատ անգամ:

Ես տեսել եմ դա Նյու Մեքսիկոյում, երբ երիտասարդ տղամարդ էի: Սերունդների ընթացքում մարգարեներն ասել են մեզ, որ մենք պետք է օգնենք միսիոներներին գտնել և ուսուցանել սրտով ազնիվներին և հետո սիրել նրանց, ովքեր գալիս են արքայություն:

Ես ինքս եմ տեսել թե ինչ կարող են անել հավատարիմ քահանայության առաջնորդներն ու անդամները: 1955թ. ես դարձա Միացյալ Նահանգների Օդային Ուժերի սպա: Իմ եպիսկոպոսը տանն ինձ օրհնություն տվեց առաջին հանձնարարությանը մեկնելուց հենց առաջ, որը Ալբուկերկեում էր՝ Նյու Մեքսիկո:

Իր օրհնության մեջ նա ասաց, որ իմ ժամանակը օդային ուժերում միսիոներական ծառայություն էր լինելու: Ես ժամանեցի եկեղեցի Ալբուկերկեի առաջին ճյուղ իմ առաջին կիրակին: Մի մարդ մոտեցավ ինձ, ներկայացավ որպես շրջանի նախագահ և ասաց ինձ, որ պատրաստվում է կանչել ինձ ծառայելու որպես շրջանի միսիոներ:

Ես ասացի, որ այնտեղ ուսումնավաժանքի էի լինելու ընդամենը մի քանի շաբաթ, իսկ հետո նշանակվելու էի որևէ ուրիշ տեղ աշխարհում: Նա ասաց. «Ես այդ մասին չգիտեմ, բայց մենք պետք է կանչենք ձեզ ծառայելու»: Իմ զինվորական ուսումնավարժությունների մեջտեղում, որը թվաց պատահականություն, ուսումնավարժություններ անցնող հարյուրավոր սպաներից ես ընտրվեցի՝ զբաղեցնելու հանկարծամահ եղած մի սպայի տեղը:

Այդպիսով, երկու տարի ես այնտեղ էի, ես աշխատեցի իմ կոչումում: Երեկոների մեծ մասը և ամեն շաբաթավերջին ես ուսուցանում էի Հիսուս Քրիստոսի ավետարանը մարդկանց, որոնց անդամներն էին բերում մեզ:

Իմ ընկերները և ես միջինը ամսական 40 ժամից ավելի միսիոներական ծառայություն էինք մատուցում առանց մեկ իսկ անգամ ստիպված լինելու թակել դռները՝ գտնելու որևէ մեկին ուսուցանելու համար: Անդամներն այնքան զբաղված էին պահում մեզ, որ մենք հաճախ ուսուցանում էինք երկու ընտանք մեկ երեկոյի ընթացքում: Ես ինձ վրա տեսնում էի այն զորությունն ու օրհնությունը, մարգարեների կրկնվող կոչի, որն ասում է. յուրաքանչյուր անդամ միսիոներ է:

Վերջին կիրակին, նախքան Ալբուկերկեից իմ մեկնելը, առաջին ցիցը ձևավորվեց այդ քաղաքում: Այժմ այնտեղ սրբազան տաճար կա՝ Տիրոջ տունը, մի քաղաքում, որտեղ մենք մի ժամանակ հանդիպում էինք Սրբերի հետ ժողովարանում, ովքեր ընկերներ էին բերում մեզ մոտ՝ ուսուցանվելու և զգալու Հոգու վկայությունը: Այդ ընկերները Տիրոջ ճշմարիտ Եկեղեցում զգում էին սիրալիր ընդունող օջախ:

Հաջորդը ես տեսա դա Նոր Անգլիայում, երբ գնացի սովորելու համալսարանում: Ես կանչվեցի որպես շրջանի մի մեծ նախագահի խորհրդական, որը եկեղեցու հանդեպ չհետաքրքրված լինելուց դարձել էր հոգևոր մեծ ուժով մի մարդ: Նրա տնային ուսուցիչը նրան բավականաչափ սիրում էր, որ անտեսեր նրա սիգարը և տեսներ այն, ինչ Աստված կարող էր տեսնել նրա մեջ: Շրջանի նախագահն ու ես մեքենայով շրջում էինք բլուրներով և ծովափով այցելելով փոքրիկ ճյուղերը, որոնք սփռված էին Մասաչուսեթսում և Ռոդ Այլնդում՝ կառուցելով և օրհնելով Աստծո թագավորությունը:

Այդ մեծ առաջնորդի հետ ծառայելու տարիներին մենք տեսնում էինք, թե ինչպես էին մարդիկ ընկերներին գրավում Եկեղեցով՝ իրենց օրինակով և միսիոներներին լսելու իրենց հրավերով: Ինձ համար այդ ճյուղերի աճը թվում էր դանդաղ և անկայուն: Բայց հինգ տարի անց իմ մեկնելու կիրակին, երկու Առաքյալներ եկան կազմավորելու մեր շրջանը՝ դարձնելով այն ցից Լոնգֆելլոյի Պարկի ժողովատանը Քեմբրիջում:

Տարիներ անց ես վերադարձա վարելու ցցի համաժողովն այնտեղ: Ցցի նախագահն ինձ տարավ տեսնելու մի ժայռապատ բլուր Բելմոնտում: Նա ասաց, որ դա կատարյալ վայր էր Աստծո տաճարի համար: Այնտեղ այժմ վեր է խոյանում մի տաճար: Երբ ես նայում եմ դրան, ես հիշում եմ

Լոս Անջելես, Կալիֆոռնիա, ԱՄՆ

խոնարհ անդամներին, որոնց հետ ես նստում էի փոքրիկ ճյուղերում, հարևաններին, ում նրանք հրավիրում էին և միսիոներներին, ովքեր նրանց ուսուցանում էին:

Այստեղ այս երեկո մի նոր սարկավագ կա: Ես նրա հետ էի նույն Զատկի կիրակի օրը, որ քահանան, որի հետ ես նախապես խոսել էի, եկավ իր մեկ անդամից բաղկացած ժողովին: Սարկավագը ժպտաց ուրախ, երբ նրա հայրն ասաց, որ նա լինելու է այս քահանայության ժողովին իր հետ այդ երեկո: Նրա հայրը մեծ միսիոներ էր նույն միսիայում, որտեղ նրա պապը նախագահ էր եղել: Ես տեսա 1937 թվականի նրա մեծ պապի *Միսիոներական Հեռնարկը*: Մարդկանց Եկեղեցի բերելու նրա ժառանգությունը խորն արմատներ ուներ:

Ես խոսեցի այդ սարկավագի եպիսկոպոսի հետ՝ իմանալու թե ինչ փորձառություններ տղան կարող է ակնկալել քահանայության պարտականությունը կատարելիս՝ հոգիներ հավաքելով Տիրոջ համար: Ես գիտեի, որ ծուխը լի էր փորձառու և նվիրված անդամներով: Եպիսկոպոսը խանդավառ էր, երբ նկարագրում էր, թե ինչպես էր ծխի միսիոներների ղեկավարը հետևում հետաքրքրվողների առաջընթացով: Նա ստանում է այդ տեղեկությունը՝ կանոնավորապես կապվելով միսիոներների հետ:

Եպիսկոպոսը և նրա ծխի խորհուրդը քննարկում է ամեն ուսումնասիրողի առաջադիմությունը: Նրանք որոշում են, թե ինչ կարող են անել յուրաքանչյուր անձնավորության և նրանց ընտանիքների համար՝ օգնելու նրանց դառնալու ընկերներ նախքան մկրտությունը, ընդգրկելու նրանց միջոցառումների մեջ և խնամք տանելու նրանց, ովքեր մկրտվել են: Նա ասաց, որ միսիոներները հարկ եղած դեպքում, երբ ուսուցանելու համար անհրաժեշտ է լինում տարբեր տեսակցությունների գնալ, բաժանվում են՝ տանելով Ահարոնյան քահանայություն կրողներին որպես զուգընկերներ:

Ծխի միսիոներական ծրագիրը ներառում է քվորումների նպատակները՝ հրավիրելու նրանց, ում իրենք գիտեն, հանդիպելու միսիոներների հետ: Սարկավագների քվորումի նախագահությունը նույնիսկ հրավիրվում է նպատակներ դնել և ծրագրել՝ իրենց քվորումի անդամներին օգնելու՝ Աստծո թագավորություն բերել նրանց, ում իրենք գիտեն:

Այժմ, սարկավագն ուժեղ ծխում և նոր քահանան՝ նորադարձը փոքրիկ խմբում, կարող է թվալ քիչ ընդհանուր բան ունեն միմյանց հետ կամ ձեզ հետ: Եվ դուք գուցե չտեսնեք մեծ նմանություն ձեր փորձառության հետ Եկեղեցին կառուցելիս, ինչ ես տեսա որպես հրաշքներ Նյու Մեքսիկոյում և Նոր Անգլիայում: Դուք, գուցե, նույնիսկ մտածեք, որ այդ նոր սարկավագի ծխում կատարվող միսիոներական աշխատանքի ձևը կարող է լինել հիասթափեցնող օրինակ, թե ինչպես կատարել միսիոներական աշխատանք քահանայի համար, որը չունի ճյուղի նախագահ և որի միակ միսիոներական ժառանգությունը իր ծնողների հավատքն է:

Բայց կա մի ուղի, որում մենք մեկ ենք քահանայությունում մեր պարտականության մեջ: Մենք սրբագործում ենք մեզ և կատարում մեր անձնական պարտականությունները՝ ավետարանը մեր Երկնային Հոր բոլոր զավակներին տանելու պատվիրանի վերաբերյալ:

Մենք կիսվում ենք փորձառություններով այն ձևով, որով Տերը կառուցում է Իր թագավորությունը երկրի վրա: Իր Եկեղեցում բոլոր սքանչելի միջոցներով և կազմակերպությամբ հանդերձ, որը մեզ տրվել է, դեռ կա մի արմատական ճշմարտություն, որն ուսուցանվել է մարգարեների կողմից, թե ինչպես մենք պետք իրականացնենք միսիոներական աշխատանք

կատարելու մեր քահանայության պարտականությունը:

1959 թվականի ապրիլյան համաժողովում Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ուսուցանել է այս սկզբունքը, ինչպես նրա օրերում արել էին մարգարեները, ներառյալ Թոմաս Ս. Մոնսոնը: Նախագահ Մակքեյն իր եզրափակիչ դիտողություններում նշել է, որ 1923 թվականին Բրիտանական Միսիայում մի ընդհանուր հրահանգ էր ուղարկվել Եկեղեցու անդամներին: Նրանց ասվել էր, որ փող չծախսեն ազդագրերի վրա, որպեսզի փոխեն մարդկանց մոտ բացասական վերաբերմունքը Եկեղեցու հանդեպ: Նախագահ Մակքեյն ասաց, որ որոշում էր ընդունվել. «Պարտականություն դնել Եկեղեցու յուրաքանչյուր անդամի վրա, որ 1923 թվականին՝ եկող տարում, յուրաքանչյուր անդամ կլինի միսիոներ: Յուրաքանչյուր անդամ միսիոնե՛ր: Դուք գուցե բերեք ձեր մայրիկին Եկեղեցի, կամ կարող է դա լինի ձեր հայրը, գուցե ձեր աշխատակիցը աշխատանքային վայրում: Ինչ-որ մեկը կլսի ճշմարտության բարի լուրը ձեր միջոցով»:

Եվ Նախագահ Մակքեյը շարունակեց. «Եվ սա է ուղերձն այսօր: *Յուրաքանչյուր անդամ*, – մեկ միլիոն և կես, – *միսիոներ է*:[2] Կարծում եմ սա այն է, ինչ Տերն ուներ մտքում, երբ նա տվեց այդ հրաշալի հայտնությունը Եկեղեցու կառավարման վերաբերյալ, ինչպես այն գրանցված է Վարդապետություն և Ուխտերի 107-րդ բաժնում: Նա նկարագրում է Մելքիսեդեկյան Քահանայությունը և մարդկանց, ովքեր կանգնած են այդ քահանայության գլխին և Ահարոնյան Քահանայությունը և Ահարոնյան Քահանայության նախագահությունը, նրանք ովքեր ակտիվ են քահանայության քվորումներում, ինչպես Մելքիսեդեկյան, այնպես էլ Ահարոնյան»2:

2002 թվականին, երբ հայտարարվեց, որ միսիոներական աշխատանքը դառնալու է եպիսկոպոսների պարտականությունը, ես զարմացա: Ինձ թվաց՝ նրանք արդեն կրում էին ծայրաստիճան ծանր բեռ՝ ծառայելով անդամներին և ղեկավարելով կազմակերպությունները ծխում:

Իմ իմացած եպիսկոպոսներից մեկը համարեց դա ոչ թե հավելյալ պարտականություն այլ մի պարտականություն, որը ծխին կմիավորեր մի մեծ գործում, որտեղ ամեն անդամ դառնում է միսիոներ: Նա կանչեց ծխի միսիոներական [աշխատանքի] ղեկավար: Նա ինքն էլ էր հանդիպում միսիոներների հետ ամեն շաբաթ օր, իմանալու նրանց աշխատանքի մասին, քաջալերելու նրանց և տեղեկանալու նրանց աշխատանքի առաջընթացի մասին: Ծխի խորհուրդը գտավ ուղիներ կազմակերպությունների և քվորումների համար օգտագործել ծառայության փորձառությունները որպես միսիոներական նախապատրաստություն: Եվ որպես Իսրայելում դատավոր՝ նա օգնեց երիտասարդներին զգալ Քավության օրհնությունները՝ նրանց մաքուր պահելու համար:

Վերջերս ես հարցրեցի նրան, թե ինչպես էր բացատրում նորադարձների մկրտությունների թվի բուռն աճը իր ծխում և երիտասարդների թվի աճը, ովքեր պատրաստ էին և ձգտում էին Հիսուս Քրիստոսի ավետարանը տանել աշխարհ: Նա ասաց, որ դա որևէ մեկի կողմից պարտականությունների կատարման արդյունքը չէր: Դա իրենց խանդավառությամբ մեկ դառնալու ուղին էր՝ բերելու մարդկանց Սրբերի համայնք, որը նրանց այդպիսի երջանկություն էր բերել:

Ոմանց համար այդ էր պատճառը և էլի ինչ-որ այլ բան: Մոսիայի որդիների նման նրանք զգացել էին մեղքի ազդեցությունները իրենց սեփական կյանքում և Քավության սքանչելի բժշկությունը Աստծո Եկեղեցում: Փրկչի կողմից իրենց տրված պարգևի համար սիրուց և երախտագիտությունից ելնելով, նրանք ուզում էին օգնել ամենքին, ում կարող էին, խուսափելու մեղքի տրտմությունից, զգալու ներման ուրախությունը, և հավաքվելու իրենց հետ ապահովության մեջ Աստծո թագավորությունում:

Աստծո հանդեպ սերն էր և սերն իրենց ընկերների և հարևանների հանդեպ, որը միավորեց նրանց ծառայելու մարդկանց: Նրանք ցանկանում էին տանել ավետարանը ամեն մեկին աշխարհի իրենց մասում: Եվ նրանք պատրաստում էին իրենց երեխաներին արժանի լինել՝ կանչվելու Տիրոջ կողմից ուսուցանելու, վկայելու և ծառայելու Նրա այգու մյուս մասերում:

Լինի դա մեծ ծխում, որտեղ նոր սարկավագը կկատարի ավետարանով կիսվելու իր պարտականությունը և կկառուցի թագավորությունը, թե հեռվում գտնվող փոքրիկ խմբում, որտեղ ծառայում է նոր քահանան, նրանք մեկ կլինեն նպատակով: Սարկավագը կոգեշնչվի Աստծո սիրով օգնության հասնելու որևէ ընկերոջ, որը դեռ անդամ չէ: Նա կընդգրկի ընկերոջը Եկեղեցու ինչ-որ ծառայության կամ միջոցառման մեջ, իսկ հետո կհրավիրի նրան և նրա ընտանիքին ուսուցանվել միսիոներների կողմից: Նրանց համար, ովքեր մկրտված են, նա կլինի այն ընկերը, որի կարիքը նրանք կունենան:

Քահանան կհրավիրի ուրիշների միանալ իրեն Սրբերի փոքրիկ խմբում, որտեղ նա զգացել է Աստծո սերը և Քավության օրհնյալ խաղաղությունը:

Եթե նա հավատարմորեն շարունակի իր քահանայության պարտականությունում, նա կտեսնի խումբը ճյուղ դառնալիս, իսկ հետո Սիոնի ցիցը կգա նրա քաղաք: Կլինի ծուխ հոգատար եպիսկոպոսով: Կարող է նրա որդիներից կամ թոռներից մեկը տանի Աստծո մի ծառայի մոտակա բլուրը և ասի. «Սա հիանալի տեղ կլինի տաճարի համար»:

Աղոթում եմ, որ ուր էլ որ լինենք և ինչ պարտականություններ էլ որ ունենանք Աստծո քահանայությունում, մենք միավորված լինենք ավետարանը ողջ աշխարհին բերելու գործում, և որ մենք քաջալերենք մարդկանց, ում սիրում ենք, մաքրվենք մեղքից և լինենք երջանիկ մեզ հետ Աստծո թագավորությունում: Հիսուս Քրիստոսի անունով, որի Եկեղեցին է սա, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 38.40–42:
2. David O. McKay, in Conference Report, Apr. 1959, 122.

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Եկեք, Աստծո որդիք

Եղբայրներ, թող որ մեզանից յուրաքանչյուրը ջանասիրաբար քննի սուրբ գրությունները, նպատակային ծրագրի իր կյանքը, վկայությամբ ուսուցանի ճշմարտությունը և սիրով ծառայի Տիրոջը:

Տարվա մեջ երկու անգամ այս հրաշակերտ Համաժողովների Կենտրոնը, կարծես, իր համոզիչ ձայնով մեզ ասում է. «Եկեք, Աստծո որդիք, քահանայության այրեր»:[1] Մի առանձնահատուկ ոգի է թևածում Եկեղեցու քահանայության գերագույն ժողովին:

Այս երեկո մեր շարքերում կան շատ-շատերը ողջ աշխարհում, ովքեր ծառայում են Տիրոջը որպես Իր միսիոներներ: Ինչպես նշեցի իմ այսօրվա առավոտյան ելույթում, մենք ունենք ավելի քան 65000 միսիոներ, հազարավորներ էլ սպասում են, որպեսզի մտնեն միսիոներների պատրաստման կենտրոն, իսկ շատերի դիմումներն էլ այժմ ընթացքի մեջ են: Մենք սիրում և գովաբանում ենք նրանց, ովքեր ցանկություն ունեն և ձգտում են ծառայել:

Սուրբ գրություններում չկա առավել արդիական կոչ, առավել պարտադրող պատասխանատվություն, առավել ուղղակի հրահանգ, քան հարություն առած Տիրոջ կողմից տրված հրամանը, երբ Նա հայտնվեց տասնմեկ առաքյալներին Գալիլեայում: Նա ասաց.

«Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով.

Նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ պատուիրեցի՝ պահեն. և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհքի վերջը»:[2]

Փառահեղ խոստումով զուգորդված այս աստվածային պատվիրանը մեր նշանաբանն է այսօր, ինչպես որ ժամանակների գագաթնակետում էր: Միսիոներական աշխատանքը միշտ եղել է, կա և կլինի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բնորոշ առանձնահատկությունը: Ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթն է հայտարարել. «Այն ամենից հետո ինչ ասվել է, մեծագույն և կարևորագույն պարտականությունը՝ ավետարանը քարոզելն է»:[3]

Այժմ Աստծո այս թագավորական բանակում երկու կարճ տարի ծառայելուց հետո բոլոր լիաժամկետ միսիոներներն, ավարտելով իրենց աշխատանքը, կվերադառնան տուն՝ իրենց սիրելիների մոտ: Երեցներին կփոխարինեն այս երեկո Եկեղեցու Ահարոնյան Քահանայության շարքերը համալրող տղաները: Երիտասարդներ, դուք պատրա՞ստ եք արձագանքելու, ցանկանո՞ւմ եք աշխատել, պատրա՞ստ եք ծառայելուն:

Լավագույն միսիոներական աշխատանքը պահանջում է ապրելակերպի կտրուկ փոփոխություն: Անհրաժեշտ է երկար ժամերի տրամարդում և մեծ նվիրվածություն, անձնուրաց զոհաբերություն և ջերմեռանդ աղոթք: Արդյունքում նվիրված միսիոներական ծառայությունը հատուցվում է հավերժական ուրախությամբ, որը տևում է մահկանացու կյանքում և հավերժության մեջ:

Կոչն է՝ լինել Տիրոջ այգու առավել արդյունավետ ծառայողներ: Դա վերաբերում է ոչ միայն որպես լիաժամկետ միսիոներ ծառայելուն պատրաստվողներին, այլ մեզ բոլորիս, անկախ տարիքից, քանզի յուրաքանչյուրիս է վերաբերվում ավետարանով կիսվելու Քրիստոսի պատվիրանը:

Ուզում եմ ներկայացնել մեր հաջողության բանաձևը. առաջինը՝ **ջանասիրաբար քննեք սուրբ գրությունները**, երկրորդ՝ **նպատակային ծրագրեք ձեր կյանքը** (ես կավելացնեի անկախ ձեր տարիքից), երրորդ՝ **վկայությամբ ուսուցանեք ճշմարտությունը**, և չորրորդ՝ **սիրով ծառայեք Տիրոջը**:

Եկեք դիտարկենք այս բանաձևի չորս մասերը:

Առաջինը՝ **ջանասիրաբար քննեք սուրբ գրությունները**:

Սուրբ գրությունները վկայում են Աստծո մասին և պարունակում են հավերժական կյանքի խոսքեր: Դրանք դառնում են մեր ուղերձի հիմքը:

Եկեղեցու ուսումնական ծրագրերում հիմնականում շեշտը դրվում է սուրբ գրությունների վրա, որոնք մշակվել և համակարգվել են փոխկապակցված ջանքերով: Նաև խրախուսվում ենք ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները՝ անհատապես և ընտանիքով:

Ուզում եմ մեկ հղում կատարել, որն անմիջական կիրառում ունի մեր կյանքում: Մորմոնի Գրքի Ալմա 17 գլխում կարդում ենք Ալմայի ուրախության մասին, երբ նա կրկին տեսավ Մոսիայի որդիներին և նկատեց ճշմարտության գործում ցուցաբերած նրանց հաստատակամությունը: Հիշատակարանն ասում

է մեզ, որ «նրանք դարձել էին ուժեղ ճշմարտության իմացության մեջ. քանզի նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին, և նրանք քննել էին սուրբ գրքերը ջանասիրաբար, որպեսզի կարողանային իմանալ Աստծո խոսքը:

Բայց այս բոլորը չէ. նրանք տվել էին իրենց շատ աղոթքի ու ծոմի. այդ պատճառով նրանք ունեին մարգարեության ոգին ու հայտնության ոգին, և երբ նրանք սովորեցնում էին, նրանք սովորեցնում էին Աստծո զորությամբ ու իշխանությամբ»:[4]

Եղբայրներ, **ջանասիրաբար քննեք սուրբ գրությունները**:

Մեր բանաձևի երկրորդ կետն է՝ **ծրագրեք ձեր կյանքը նպատակով**:

Հավանաբար, ոչ մի սերունդ նման հեռահար որոշումների առաջ չի կանգնել, որքան այսօրվա երիտասարդները: Պետք է նախապատրաստվել ուսմանը, միսիային և ամուսնությանը: Շատերը պետք է պատրաստվեն նաև զինվորական ծառայությանը:

Միսիային պատրաստվելը սկսվում է վաղ տարիքից: Իմաստուն ծնողը բացի հոգևոր պատրաստությունից, միջոցներ կտրամադրի, որպեսզի իր որդին սկսի կուտակել իր անձնական միսիոներական ֆոնդը: Լավ կլիներ, որ նա քաջալերվեր և տարիների ընթացքում օտար լեզու ուսումնասիրեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում կիրառեր իր լեզվի ունակությունները: Ի վերջո, գալիս է փառահեղ օրը, երբ եպիսկոպոսը և ցցի նախագահը հրավիրում են այդ երիտասարդին իրենց մոտ: Հաստատվում է արժանիությունը, լրացվում է միսիոների երաշխավորագիրը:

Այդ ընթացքում ողջ ընտանիքն անհամբեր սպասում է փոստատարին և նամակին, որն ունի հետադարձ հասցե՝ *47 East South Temple,Salt Lake City*, *Utah*: Նամակը գալիս է, սպասումն ավարտվում է և հայտնի է դառնում կանչը: Ինչևէ, անկախ ծառայության վայրից, պատրաստված և հնազանդ միսիոների արձագանքը նույնն է՝ ես կծառայեմ:

Սկսվում են մեկնումի պատրաստությունները: Երիտասարդներ, հուսով եմ, գնահատում եք զոհաբերությունները, որ ձեր ծնողները պատրաստակամորեն կատարում են, որպեսզի դուք ծառայեք: Նրանց ջանքերը կաջակցեն ձեզ, նրանց հավատքը կքաջալերի ձեզ, նրանց աղոթքները նեցուկ կլինեն ձեզ: Միսիան ընտանեկան գործ է: Ձեր սրտերը միասին են բաբախում, թեպետ մայրցամաքներ կամ օվկիանոսներ են բաժանում ձեզ:

Եղբայրներ, ծրագրելով ձեր կյանքը նպատակով, հիշեք, որ ձեր միսիոներական հնարավորությունները չեն սահմանափակվում պաշտոնական կանչված ժամանակահատվածով: Ովքեր զինվորական ծառայության մեջ են գտնվում, այդ ժամանակը կարող է և պետք է շահավետ օգտագործվի: Ամեն տարի մեր զինվորական երիտասարդները շատ հոգիներ են բերում Աստծո արքայություն՝ պատվելով իրենց քահանայությունը, ապրելով Աստծո պատվիրաններով և Տիրոջ աստվածային խոսքը ուսուցանելով մյուսներին:

Աչքաթող մի արեք միսիոներ լինելու ձեր արտոնությունը, մինչ շարունակում եք ձեր ուսումը: Որպես Վերջին Օրերի Սուրբ ձեր օրինակը կնկատեն, կկշռադատեն և հաճախ էլ ձեզ կընդօրինակեն:

Եղբայրներ, անկախ ձեր

տարիքից, ձեր պայմաններից, ես հորդորում եմ ձեզ, որ **նպատակային ծրագրեք ձեր կյանքը**:

Այժմ անցնենք մեր բանաձևի երրորդ կետին՝ **վկայությամբ ուսուցանեք ճշմարտությունը**:

Հետևեք Պետրոս Առաքյալի խորհրդին. «Միշտ պատրաստ եղեք հեզությամբ և երկյուղածությամբ պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե»:[5] Բարձրացրեք ձեր ձայնը և վկայեք Աստվածաշնչի բուն էության մասին: Հայտարարեք Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունը: Հաղորդեք փրկության ծրագրի փառահեղ և գեղեցիկ ճշմարտությունները:

Երբ 50 տարի առաջ ծառայում էի որպես միսիայի նախագահ Կանադայում, մի երիտասարդ միսիոներ, որ եկել էր փոքր գյուղական համայնքից, ապշած էր Տորոնտոյի չափերից: Նա հասակով կարճ էր, բայց բարձր էր իր վկայությամբ: Իր ժամանումից շատ չանցած, իր զուգընկերոջ հետ նա մտավ Ելմեր Փոլլանդի տուն Օշավայում, Օնտարիո, Կանադա: Պր. Փոլլանդը միսիոներներին տուն հրավիրեց, կարեկցելով երիտասարդներին, ովքեր կուրացնող փոթորկին գնում էին տնից տուն: Նրանք ներկայացրեցին իրենց ուղերձը: Նա չզգաց հոգին: Եվ խնդրեց տղաներին, որ հեռանան և այլևս չվերադառնան: Երբ տղաները իջնում էին տան դիմացի աստիճաններով, նա ծաղրանքով ասաց երեցների ետևից. «Դուք չեք կարող ասել, որ իսկապես հավատում եք, որ Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարեն էր»:

Դուռը փակվեց: Երեցները քայլում էին ճանապարհով: Մեր գյուղացի տղան ասաց իր զուգընկերոջը. «Երեց, մենք չպատասխանեցինք Պր. Փոլլարդին: Նա ասաց, որ մենք չենք հավատում, որ Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե էր: Արի վերադառնանք և բերենք մեր վկայությունները նրան»: Սկզբում ավելի փորձառու միսիոները տատանվեց, սակայն, ի վերջո, համաձայնվեց միանալ ընկերոջը»: Վախը պատեց նրանց սիրտը, երբ մոտեցան դռանը, որտեղից իրենց դուրս էին վռնդել: Նրանք թակեցին դուռը, Պր. Փոլլարդը բացեց, մի սարսափելի պահ ապրեցին, ապա հոգուց ծնված զորությամբ մեր անփորձ միսիոները խոսեց. «Պր. Փոլլարդ, դուք ասացիք, որ մենք իրականում չենք հավատում, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն *էր*: Ես վկայում եմ ձեզ, որ Ջոզեֆը մարգարե էր: Նա թարգմանել է Մորմոնի Գիրքը: Նա տեսավ Հայր Աստծուն և Որդի Հիսուսին: Ես գիտեմ դա»:

Որոշ ժամանակ անց, Պր. Փոլլարդը, այժմ Եղբայր Փոլլարդը, կանգնած քահանայության ժողովին հայտնեց. «Այդ գիշեր ես չկարողացա քնել: Իմ ականջներում հնչում էին խոսքերը. «Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր: Ես գիտեմ դա: Ես գիտեմ դա: Ես գիտեմ դա»: Հաջորդ օրը ես զանգահարեցի միսիոներներին և խնդրեցի վերադառնալ: Վկայություններով համեմված նրանց ուղերձը փոխեց իմ և իմ ընտանիքի կյանքը»: Եղբայրներ, **վկայությամբ ուսուցանեք ճշմարտությունը**:

Մեր բանաձևի չորրորդ կետն է՝ **սիրով ծառայեք Տիրոջը**: Մերը ոչնչով չի կարելի փոխարինել: Հաջողակ միսիոներները սիրում են իրենց ընկերներին, միսիայի ղեկավարներին և այն թանկագին անձանց, ում ուսուցանում են: Վարդապետություն և Ուխտերի չորրորդ բաժնում Տերը սահմանել է ծառայության

գործում աշխատողների հատկանիշները: Եկեք կարդանք մի քանի հատված.

«Ո՜վ դուք, որ մտնում եք Աստծո ծառայության մեջ, տեսեք, որ ձեր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով ծառայեք նրան, որ վերջին օրը դուք կարողանաք անարատ կանգնել Աստծո առաջ:. . .

Եվ հավատքը, հույսը, գթությունը և սերը, պարզ աչքով ուղղված Աստծո փառքին, որակում են նրան գործի համար:

Հիշեք, հավատք, առաքինություն, գիտություն, ժուժկալություն, համբերություն, եղբայրասիրություն, աստվածայնություն, գթություն, խոնարհություն, ջանասիրություն»:[6]

Այսպիսով, ամենքդ, որ լսում եք իմ ձայնը, հարցրեք ինքներդ ձեզ՝ «Արդյո՞ք այսօր ես մեծացրեցի իմ հավատքը, առաքինությունը, գիտելիքը, բարեպաշտությունը, սերը»:

Տանը, թե դրսում, ձեր հավատարիմ նվիրվածության շնորհիվ, զուցե, օգնեք փրկել նրանց, ում ամենաշատն եք սիրում:

Տարիներ առաջ իմ սիրելի ընկերները՝ Քրեյգ Սադբերին և նրա մայրը, Փըրլը, եկան իմ գրասենյակ, Քրեյգի Ավստրալիա Մելբուրն միսիա մեկնելուց առաջ: Քրեյգի հայրը՝ Ֆրեդ Սադբերին, նրանց հետ չէր: Քսանհինգ տարի առաջ Քրեյգի մայրն ամուսնացել էր Ֆրեդի հետ, ով չէր կիսում Եկեղեցու հանդեպ կնոջ սերը և, անշուշտ, անդամ չէր:

Քրեյգը վստահեցրեց ինձ, որ խորը և մշտական սեր է տածում իր ծնողների հանդեպ, և հույս հայտնեց, որ ինչ-որ կերպ իր հորը կդիպչի Հոգին և կբացի նրա սիրտը Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ: Ես աղոթեցի, որպեսզի ոգեշնչում ստանայի, թե ինչպես նման ցանկությունը կարող էր իրականանալ: Ոգեշնչումը եկավ և ես Քրեյգին ասացի. «Ծառայիր Տիրոջը քո ողջ սրտով: Եղիր հնազանդ քո սուրբ կոչմանը: Ամեն շաբաթ նամակ գրիր քո ծնողներին, և երբեմն անձնապես գրիր հայրիկիդ, և ասա նրան, թե որքան ես նրան սիրում, և թե ինչու ես երախտապարտ նրա որդին լինելու համար»: Նա շնորհակալություն հայտնեց ինձ, և մայրիկի հետ նրանք դուրս եկան իմ գրասենյակից:

Մոտ 18 ամիս էր, չէի տեսել Քրեյգի մայրիկին, երբ նա եկավ իմ գրասենյակ և արցունքն աչքերին ասաց. «Երկու տարի է արդեն, որ Քրեյգը միսիայում է: Նա ամեն շաբաթ մեզ նամակ է գրել: Վերջերս ամուսինս՝ Ֆրեդը, առաջին անգամ կանգնեց վկայության ժողովին և զարմացրեց ինձ և ներկաներին, հայտարարելով, որ որոշել է Եկեղեցու անդամ դառնալ: Նա նշեց, որ ինձ հետ կգնա Ավստրալիա Քրեյգի մոտ, նրա միսիայի ավարտին, որպեսզի Ֆրեդը լիներ վերջին մկրտությունը, որ կկատարեր Քրեյգը՝ որպես լիաժամկետ միսիոներ»:

Ոչ մի միսիոներ այնքան հպարտ չէր կանգնել, որքան Քրեյգ Սադբերին, երբ հեռավոր Ավստրալիայում օգնեց իր հայրիկին մտնել ջուրը, և բարձրացնելով իր աջ ձեռքը կրկնեց այս սուրբ խոսքերը. «Ֆրեդերիկ Չարլզ Սադբերի, լիազորված Հիսուս Քրիստոսի կողմից, ես մկրտում եմ քեզ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»:

Մերը հաղթեց: **Սիրով ծառայեք Տիրոջը**:

Եղբայրներ, թող որ մեզանից յուրաքանչյուրը **ջանասիրաբար քննի սուրբ գրությունները, նպատակային ծրագրի իր կյանքը, վկայությամբ ուսուցանի ճշմարտությունը** և **սիրով ծառայի Տիրոջը**:

Հոգիների կատարյալ Հովիվը, մարդկությանը փրկագնած միսիոները, տվել է մեզ Իր աստվածային հավաստիացումը.

«Եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք զեթ մեկ հոգի, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում:

Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ»:[7]

Նրա մասին, ով ասել է այդ խոսքերը, ես բերում եմ իմ վկայությունը՝ Նա է Աստծո Որդին, մեր Քավիչը և մեր Փրկիչը:

Ես աղոթում եմ, որ մենք միշտ արձագանքենք Նրա մեղմ կանչին՝ «Դու իմ ետևիցը եկ»:[8] Նրա, այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Եկեք Աստծո որդիք», *Hymns,* no. 322:
2. Մատթեոս 28.19–20:
3. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 330.
4. Ալմա 17.2–3:
5. Ա Պետրոս 3.15:
6. Վարդապետություն և Ուխտեր 4.2, 5–6:
7. Վարդապետություն և Ուխտեր 18.15–16:
8. Հովհաննես 21.22:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Աստծո լույսի հույսը

Երբ մենք փորձենք մեծացնել մեր սերն առ Աստված և ձգտենք սիրել մեր մերձավորին, ավետարանի լույսը կշողա մեր շուրջը և կբարձրացնի մեզ:

Լուսավորության մուտքը

Իմ գրասենյակում ես ունեմ մի սիրելի նկար, որի անվանումն է *Լուսավորության մուտքը*: Այն իմ ընկերոջ՝ դանիացի նկարիչ Ջոն Բենթինի գործն է, ով առաջին ցցի նախագահն է եղել Կոպենհագենում, Դանիա:

Նկարում պատկերված է մի մութ սենյակ, որի դուռը բաց է, որտեղից էլ լույս է շողում: Ինձ համար հետաքրքրական է այն փաստը, որ դռնից եկող լույսը չի լուսավորում ողջ սենյակը, այլ միայն անմիջապես դռան դիմացի հատվածը:

Ինձ համար այս նկարի խավարը և լույսը կյանքի փոխաբերություններն են խորհրդանշում: Որպես մահկանացու էակներ մեր էության մի մասն է կազմում երբեմն զգալը, կարծես, թե մենք շրջապատված ենք խավարով: Միգուցե մենք կորցրել ենք սիրած էակին, երեխան շեղվել է ճիշտ ուղուց, մենք միգուցե ստացել ենք անհանգստացնող բժշկական ախտորոշում, մենք միգուցե ունենք աշխատանքի հետ կապված խնդիրներ և բեռնված ենք կասկածներով կամ վախերով, կամ մենք կարող ենք միայնակ զգալ կամ չսիրված:

Սակայն չնայած, որ մենք կարող ենք մոլորված զգալ մեր ներկայիս պայմաններում, Աստված խոստանում է Իր լույսի հույսը, Նա խոստանում է լուսավորել մեր ճանապարհը և ցույց տալ, թե ինչպես դուրս գալ խավարից:

Խավարով լցված սենյակը

Ես ցանկանում եմ պատմել ձեզ մի կնոջ մասին, ով մեծացել է խավարով լցված սենյակում, ես կկոչեմ նրան Ջեյն:

Երեք տարեկանից սկսած Ջեյնին շարունակաբար ծեծել են, նվաստացրել և բռնացել: Նրան սպառնացել են և ծաղրել: Նա ամեն առավոտ արթնացել է՝ չիմանալով, թե արդյոք կկարողանա գոյատևել մինչև հաջորդ օրը: Մարդիկ, ովքեր պետք է պաշտպանեին նրան, նրանք էին, ովքեր չարչարում էին նրան կամ թույլ էին տալիս, որ բռնությունը շարունակվեր:

Ինքն իրեն պաշտպանելու համար Ջեյնը սովորեց անզգայանալ: Նա չուներ փրկության ոչ մի հույս, ուստի նա կարծրացրեց իրեն իր իրականության սարսափի դեմ: Չկար ոչ մի լույս նրա աշխարհում, ուստի նա դարձավ խավարին ենթարկվող: Անզգայացման հետ մեկտեղ, որը կարող է գալ միայն չարի հետ շարունակական և անգութ շփումից, նա ընդունեց այն փաստը, որ ցանկացած պահը կարող է լինել նրա վերջինը:

Ապա, 18 տարեկանում Ջեյնը գտավ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Վերականգնված ավետարանի ուրախությունը և հույսը թափանցեցին նրա սիրտը և նա ընդունեց մկրտվելու իրավերը: Առաջին անգամ լույս շողաց նրա կյանքում և նա տեսավ լուսավոր ուղի իր առջև: Նա թողեց իր աշխարհի խավարը և որոշեց ուսում ստանալ իր բռնակալից շատ հեռու գտնվող մի վայրում: Ի վերջո, նա զգաց, որ ազատվել է խավարի և չարի միջավայրից, ազատ՝ վայելելու Փրկչի քաղցր խաղաղությունը և հրաշագործ բժշկումը:

Այնուամենայնիվ, տարիներ անց, նրա բռնակալի մահից հետո, Ջեյնին կրկին անհանգստացնում էին իր պատանեկության ժամանակ տեղի ունեցած սարսափելի իրադարձությունները: Մեծ տխրությունը և զայրույթը սպառնում էին կործանել հրաշալի լույսը, որը նա գտել էր ավետարանում: Նա հասկացավ, որ եթե թույլ տար այդ խավարին սպառել իրեն, նրան չարչարողը կտոներ վերջնական հաղթանակը:

Նա փնտրեց խորհրդատվություն և բժշկական օգնություն և սկսեց հասկանալ, որ իր համար բուժման լավագույն ուղին կայանում էր նրանում, որ հասկանար և ընդուներ խավարի գոյությունը, սակայն չկենտրոնացներ իր ուշադրությունը դրա վրա: Քանզի, ինչպես նա այժմ գիտեր, լույսը նույնպես գոյություն ունի, և դա այն է, ինչի վրա նա որոշեց կենտրոնացնել իր ուշադրությունը:

Իր խավար անցյալի պատճառով Ջեյնը կարող էր հեշտությամբ դառնալ քինոտ, չարակամ կամ նույնիսկ դաժան: Սակայն նա չարեց դա: Նա դիմակայեց բարկությանը, ցավին և ցինիզմին բախվելու միջոցով խավարը տարածելու գայթակղությանը: Դրա փոխարեն նա կենտրոնացավ հույսի վրա, որ Աստծո օգնությամբ նա կարող էր բժշկվել: Նա որոշեց

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռաբենդ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Թեդ Ռ. Քալիսթեր

Ռիչարդ Ջ. Մեյնզ

Քրեյգ Ս. Քրիչենսեն

Ուլիսես Սոարես

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ

(այբենական կարգով)

Մարկոս Ա. Այդուկայտիս, Հոսե Լ. Ալոնսո, Կարլոս Հ. Ամադո, Յան Ս. Արդերն, Մերվին Բ. Առնոլդ, Դեյվիդ Ս. Բաքստեր, Շեյն Մ. Բոուեն, Քրեյգ Ա. Քարդոն, Յուն Հվան Չոյի, Դոն Ռ. Քլարկ

Քարլ Բ. Քուք, Լորենս Ե. Քորբրիջ, Կլաուդիո Ռ. Մ. Կոստա, Լեզռան Ռ. Քրոտիզ Կրտս., Բենջամին դե Հոյոս, Ջոն Բ. Դիքսոն, Էդվարդ Դյուբ, Քեվին Ռ. Դանքըն, Լարի Ջ. Էքո Հոք, Սթենլի Գ. Էլիս

Դեյվիդ Ֆ. Էվանս, Էրիկկե Ռ. Ֆալաբելլա, Էդուարդո Գավարենտ, Ռոբերտ Ս. Գայ, Կարլոս Ա. Գոդոյ, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Ջերիթ Վ. Գոնգ, Վոլթեր Ֆ. Գոնզալես, Ս. Սքոթ Գրոու, Ջեյմս Ջ. Համուլա

Դանիել Լ. Ջոնսոն, Փոլ Վ. Ջոնսոն, Պատրիկ Քիրոն, Փոլ Ե. Քոլիքեր, Էրիկ Վ. Կոպիչկե, Մարկոս Բ. Նաշ, Ս. Գիֆորդ Նիլսեն, Բրենտ Հ. Նիլսոն, Ալլան Ֆ. Փաքեր, Քեվին Վ. Փիրսոն

Էնթոնի Դ. Փերքինս, Փոլ Բ. Փիփեր, Ռաֆայել Ի.Փինո, Բրուս Դ. Փորթեր, Դեյլ Գ. Ռենլանդ, Մայքլ Տ. Ռինգվուդ, Լին Գ. Ռոբինս, Ջոզեֆ Վ. Սիտատի, Սթիվեն Ե. Սմոու, Մայքլ Ջոն Ու. Թեհ

Հոսե Ա. Թեքսեյրա, Խուան Ա. Ուսերդա, Առնուլֆո Վալենզուելա, Ֆրանսիսկո Ջ. Վինաս, Վ. Քրիստոֆեր Վադել, Վիլիամ Ռ. Վոքեր, Ֆ. Մայքլ Վատսոն, Սքոթ Դ. Վայթինգ, Կազուհիկո Յամաշիտա, Ջորջ Ֆ. Զեբալոս

Կլաուդիո Դ. Ջիվիկ, Վ. Քրեյգ Ցվիք

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ

(այբենական կարգով)

Վիլֆորդ Վ. Անդերսեն, Կոիչի Սոյազի, Ռանդալ Կ. Բենեթ, Բրուս Ա. Քարլսոն

Ջ. Դեվն Քորնիշ, Տիմոթի Ջ. Դայքես, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Ռենոլդ Դ. Ֆանկ

Օ. Վինսենթ Հալեք, Քեվին Ս. Համիլտոն, Լարի Ռ. Լորենս, Փեր Գ. Մալմ

Ջեյմս Բ. Մարտինո, Ջայրո Մազագարդի, Աղրիան Օչոա, Քենտ Ֆ. Ռիչարդս

Գրեգորի Ա. Շվիցեր, Տերենս Մ. Վինսոն, Քենտ Դ. Վատսոն, Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ

Ջեռալդ Կոսե Առաջին Խորհրդական, Գարի Ի. Սթիվենսոն Նախագահող Եպիսկոպոս, Դին Մ. Դեյվիս Երկրորդ Խորհրդական

Ամբողջ աշխարհում Վերջին Օրերի Սրբերը հավաքվում են 183-րդ ամենամյա գերագույն համաժողովին: Ժամացույցի սլաքի ուղղությամբ վերևի ձախից պատկերված են Եկեղեցու անդամները և միսիոներները Գուայաքիլում, Էկվադոր; Պրետորիայում, Հարավային Աֆրիկա; Սանտիագոյում, Չիլի; Կոպենհագենում, Դանիա; Նյու Յորք Սիթիում, Նյու Յորք, ԱՄՆ; Բրազիլիայում, Բրազիլիա և Էդինբուրգում, Շոտլանդիա:

լույս արձակել և նվիրաբերել իր կյանքն ուրիշներին օգնելուն: Այս որոշումը թույլ տվեց նրան հետևում թողնել անցյալը և քայլել դեպի փառահեղ պայծառ ապագան:

Նա դարձավ ուսուցչուհի, և այսօր, տասնամյակներ անց, նրա սերն իր ազդեցությունն է թողել հարյուրավոր երեխաների կյանքի վրա, օգնելով նրանց իմանալ, որ իրենք ունեն արժեք, որ իրենք կարևոր են: Նա դարձել է թույլերի, զոհ դարձածների և հուսալքվածների անխոնջ պաշտպանը: Նա զորացնում, ամրացնում և ոգեշնչում է իր շրջապատի բոլոր մարդկանց:

Ջեյնը հասկացավ, որ ապաքինումը տեղի է ունենում, երբ մենք հեռանում ենք խավարից և քայլում ենք դեպի պայծառ լույսի հույսը: Հավատքի, հույսի և գթասրտության կիրառման միջոցով էր, որ նա փոխեց ոչ միայն իր սեփական կյանքը, այլ հավերժորեն օրհնեց շատերի կյանքը:

Լույսը հարում է լույսին

Ձեր մեջ կարող են լինել ոմանք, ովքեր զգում են, որ խավարն աստիճանաբար իջնում է իրենց վրա: Դուք կարող եք բեռնված զգալ անհանգստությամբ, վախով կամ կասկածով: Ձեզ համար և մեզ բոլորիս համար ես կրկնում եմ հրաշալի և անտարակուսելի ճշմարտությունը՝ Աստծո լույսն իրական է: Այն հասանելի է բոլորին: Այն լույս է տալիս բոլոր բաներին:[1] Այն զորություն ունի թուլացնելու ամենախորը վիրավորանքի թույնը: Այն կարող է բժշկող սպեղանի լինել մեր հոգիների միայնակության և հիվանդության համար: Հուսահատության ակոսներում այն կարող է պայծառ հույսի սերմեր դնել: Այն կարող է լուսավորել մեր միտքը նույնիսկ ամենախորը վշտի ժամանակ: Այն կարող է լուսավորել մեր ուղին և առաջնորդել մեզ ամենախավար գիշերով դեպի նոր լուսաբացի խոստումը:

«Հիսուս Քրիստոսի Հոգին» է, որ «լույս է տալիս ամեն մարդու, ով աշխարհ է գալիս»:[2]

Այնուամենայնիվ, հոգևոր լույսը հազվադեպ է տրվում նրանց, ովքեր պարզապես նստում են խավարում՝ սպասելով, որ ինչ-որ մեկը լույսը կվառի: Այն պահանջում է, որ մենք հավատքով գործենք, որպեսզի մեր աչքերը բացվեն և մենք տեսնենք Քրիստոսի լույսը: Հոգևոր լույսը հնարավոր չէ տեսնել ֆիզիկական աչքերով: Հիսուս Քրիստոսն Ինքն ուսուցանել է. «Ես եմ լույսը, որը շողում է խավարում, և խավարը չի ըմբռնում այն»:[3] Քանի որ «շնչավոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք հիմարություն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»:[4]

Այսպիսով, ինչպե՞ս մենք կարող ենք բացել մեր աչքերը Աստծո լույսի հույսի համար:

Առաջինը, սկսեք այնտեղից, որտեղ գտնվում եք:

Հրաշալի չէ՞ արդյոք իմանալը, որ մեր Երկնային Հոր օրհնությունները և պարգևները ստանալը մեզանից չի պահանջում կատարյալ լինել: Մենք ստիպված չենք սպասել մինչև վերջնագծին հասնելը, որպեսզի ստանանք Աստծո օրհնությունները: Դեռ ավելին, երկինքները սկսվում են բացվել և երկնքի օրհնությունները սկսում են թափվել մեզ վրա սկսած առաջին իսկ քայլերից, որոնք մենք կատարում ենք դեպի լույսը:

Սկսելու համար լավագույն տեղն այն է, որտեղ դուք այժմ գտնվում եք: Կարևոր չէ, թե, ձեր կարծիքով, դուք որքան անկատար եք կամ որքանով եք դուք ձեզ ուրիշներից ետ մնացած զգում: Այն պահին, երբ դուք սկսում եք փնտրել ձեր Երկնային Հորը, այդ պահին Նրա լույսի հույսը կսկսի արթնացնել, աշխուժացնել և ավելի արժեքավոր դարձնել ձեր հոգին:[5] Խավարը կարող է միանգամից չցրվել, սակայն ինչպես անտարակուսելի է այն փաստը, որ գիշերը միշտ իր տեղը զիջում է լուսաբացին, լույսը կգա:

Երկրորդը, ձեր սրտերը դարձրեք դեպի Տերը:

Աղոթքի միջոցով դուրս թափեք ձեր հոգին և բացատրեք ձեր Երկնային Հորը, թե ինչ եք դուք զգում: Ընդունեք ձեր թերությունները: Դուրս թափեք ձեր սիրտը և արտահայտեք ձեր երախտագիտությունը: Թույլ տվեք Նրան իմանալ դժվարությունների մասին, որոնց դուք հանդիպել եք: Աղերսեք Նրան Քրիստոսի անունով, որ տա ձեզ ուժ և աջակցություն: Խնդրեք, որ ձեր ականջները բացվեն, որ դուք կարողանաք լսեք Նրա ձայնը: Խնդրեք, որ ձեր աչքերը բացվեն, որ դուք կարողանաք տեսնել Նրա լույսը:

Երրորդը, քայլեք լույսի մեջ:

Ձեր Երկնային Հայրը գիտի, որ դուք սխալներ թույլ կտաք: Նա գիտի, որ ձեր ոտքը քարին կդիպչի, և հավանաբար շատ անգամներ: Սա տխրեցնում է Նրան, սակայն Նա սիրում է ձեզ: Նա չի ցանկանում կոտրել ձեր հոգին: Ընդհակառակը, Նա ցանկանում է, որ դուք ոտքի ելնեք և դառնաք այն անձնավորությունը, ով նախատեսված էիք լինել:

Այդ իսկ պատճառով Նա ուղարկեց Իր Որդուն երկիր, որ լուսավորեր ուղին և ցույց տար մեզ, թե ինչպես ապահով կերպով շրջանցել մեր ճանապարհին դրված գայթակղության քարերը: Նա տվել է մեզ ավետարանը, որը սովորեցնում է մեզ աշակերտության ուղին: Այն սովորեցնում է մեզ բաները, որոնք մենք պետք է իմանանք, անենք և լինենք, որ քայլենք Իր լույսով՝ հետևելով Նրա Սիրելի Որդու՝ մեր Փրկչի ոտնահետքերին:

Լույսը հաղթահարեց խավարը

Այո, մենք սխալներ թույլ կտանք:

Այո, մենք կտատանվենք:

Սակայն, երբ մենք փորձենք մեծացնել մեր սերն առ Աստված և ձգտենք սիրել մեր մերձավորին, ավետարանի լույսը կշողա մեր շուրջը և կբարձրացնի մեզ: Խավարն անշուշտ կցրվի, քանի որ այն չի կարող գոյություն ունենալ լույսի ներկայության մեջ: Երբ մենք մոտենանք Աստծուն, Նա կմոտենա մեզ:[6] Եվ օրըստօրե Աստծո լույսի հույսը կմեծանա մեր մեջ, որն «ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»:[7]

Բոլոր նրանց, ովքեր զգում են, որ իրենք քայլում են խավարում, ես հրավիրում եմ հույսը դնել այն անխախտ խոստումի վրա, որը տվել է մարդկության Փրկիչը. «Ես եմ աշխարհքի լույսը. ով որ իմ ետևից գա, նա խավարումը չի գնալ, այլ կյանքի լույսը կընդունի»:[8]

Լույս Աֆրիկայում

Տարիներ առաջ իմ կինը՝ Հարրիեթը, և ես հիշարժան փորձառություն ունեցանք, տեսնելով այս խոստումի իրականացումը: Մենք գտնվում էինք Արևմտյան

Աֆրիկայում՝ աշխարհի մի գեղեցիկ մասում, որտեղ Եկեղեցին աճում է և Վերջին Օրերի Սրբերը հիանալի են: Այնուամենայնիվ, Արևմտյան Աֆրիկան նույնպես շատ դժվարություններ ունի: Ես հատկապես վշտացա, տեսնելով այնտեղի աղքատությունը: Քաղաքներում գործազրկությունը մեծ է, և ընտանիքները հաճախ դժվարանում են ապահովել իրենց առօրյա կարիքները և անվտանգությունը: Միրտս փշրվեց, երբ իմացա, որ մեր Եկեղեցու թանկագին անդամներից շատերն ապրում են այդպիսի կարիքի մեջ: Սակայն, ես նաև իմացա, որ այս լավ անդամներն օգնում են միմյանց թեթևացնել իրենց բեռները:

Մենք վերջապես ժամանեցինք մեծ քաղաքի մոտ գտնվող մեր ժողովատներից մեկը: Սակայն բեռնավորված և խավարով հափշտակված մարդկանց գտնելու փոխարեն մենք գտանք ուրախ մարդկանց, ովքեր լույս էին արձակում: Ուրախությունը, որը նրանք զգում էին ավետարանի համար, տարածվեց մեզ վրա և բարձրացրեց մեր հոգիները: Սերը, որ նրանք արտահայտեցին մեր հանդեպ, խոնարհեցնող էր: Նրանց ժպիտներն անկեղծ էին և վարակիչ:

Ես հիշում եմ, որ խորհում էի այդ ժամանակ, թե արդյոք հնարավոր էր, որ մոլորակի վրա լինեին ավելի ուրախ մարդիկ: Չնայած այս թանկագին Սրբերը շրջապատված էին դժվարություններով և փորձություններով, նրանք լցված էին լույսով:

Ժողովը սկսվեց, և ես սկսեցի խոսել: Սակայն շուտով շենքի լույսերն անջատվեցին, և մենք մնացինք կատարյալ խավարի մեջ:

Որոշ ժամանակ ես դժվարանում էի որևէ մեկին տեսնել ժողովրդի մեջ, սակայն ես կարողանում էի տեսնել և զգալ մեր Սրբերի պայծառ և գեղեցիկ ժպիտները: Օհ, որքան ես սիրեցի այս հրաշալի ժողովրդի հետ լինելը:

Ժողովատանը շարունակում էր մթություն տիրել, և ուստի ես նստեցի իմ կնոջ կողքին և սպասեցի, որ լույսերը վերականգնեին: Մինչ մենք սպասում էինք, ինչ-որ ուշագրավ բան տեղի ունեցավ:

Մի քանի ձայներ սկսեցին երգել Վերականգնման օրհներգերից մեկը: Եվ հետո ուրիշները միացան նրանց: Եվ հետո ավելի շատերը: Շուտով ժողովատունը լցվեց երգչախմբի քաղցր և հզոր ձայներով:

Եկեղեցու այս անդամները երգարանների կարիք չունեին. նրանք գիտեին իրենց երգած յուրաքանչյուր օրհներգի յուրաքանչյուր բառը: Եվ նրանք իրար հետևից երգում էին երգերն այնպիսի եռանդով և հոգով, որ հոգիս հուզվեց:

Ի վերջո, լույսերը կրկին վառվեցին և սենյակը ողողեցին լույսով: Հարրիեթը և ես նայեցինք իրար, մեր այտերի վրայով արցունքներ էին հոսում:

Մեծ խավարի մեջ այս գեղեցիկ ու հրաշալի Սրբերը այս Եկեղեցու շենքը և մեր հոգիները լույսով լցրեցին:

Սա մեզ համար շատ հուզիչ պահ էր, որը Հարրիեթը և ես երբեք չենք մոռանա:

Եկեք դեպի լույսը

Այո, ժամանակ առ ժամանակ մեր կյանքում կարող է հանդիպենք

խավարի, կամ նույնիսկ այն կարող է լցվել խավարով: Երբեմն մեզ շրջապատող գիշերը կարող է ճնշող, հուսալքող և ահաբեկող թվալ:

Իմ սիրտը ցավում է շատ տառապանքների համար, որոնց հանդիպում են ձեզանից ոմանք, ցավալի միայնակության և հոգնեցնող վախերի համար, որոնք դուք միգուցե զգում եք:

Այնուամենայնիվ, ես վկայում եմ, որ մեր ապրող հույսն առ Հիսուս Քրիստոսն է: Նա է աստվածային լուսավորության ճշմարիտ, մաքուր և զորեղ մուտքը:

Ես վկայում եմ, որ Քրիստոսի ներկայության դեպքում խավարը չի կարող հաջողության հասնել: Խավարը չի հաղթի Քրիստոսի լույսին:

Ես վկայում եմ, որ խավարը չի կարող դիմանալ կենդանի Աստծո Որդու պայծառ լույսին:

Ես հրավիրում եմ ձեզանից յուրաքանչյուրին բացել ձեր սիրտը Նրա առաջ: Փնտրեք Նրան սովորելու և աղոթքի միջոցով: Եկեք Նրա Եկեղեցին՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, սովորեք Նրա և Նրա ավետարանի մասին, ակտիվորեն մասնակցեք, օգնեք միմյանց և ուրախությամբ ծառայեք մեր Աստծուն:

Եղբայրներ և քույրեր, նույնիսկ ամենախավար գիշերից հետո աշխարհի Փրկիչը կառաջնորդի ձեզ դեպի աստիճանաբար բացվող, քաղցր և պայծառ լուսաբացը, որն անկասկած կծագի ձեր մեջ:

Երբ դուք քայլեք դեպի Աստծո լույսի հույսը, դուք կբացահայտեք սիրող Երկնային Հոր կարեկցանքը, սերը և բարությունը, ում մեջ «ոչ մի խավար չկա»:[9] Ես վկայում եմ այս ամենի մասին Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.11–13:
2. Վարդապետություն և Ուխտեր 84.45–46:
3. Վարդապետություն և Ուխտեր 6. 21:
4. Ա Կորնթացիս Բ.14:
5. Տես Ալմա 34.31:
6. Տես Հակոբոս Դ.8; Վարդապետություն և Ուխտեր 88.63:
7. Վարդապետություն և Ուխտեր 50.24:
8. Հովհաննես Ը.12:
9. Ա Հովհաննես Ա.5:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Սա հրաշք է

Եթե դուք լիաժամկետ միսիոներ չեք, ով իր բաճկոնին ամրացված կրծքանշան ունի, այժմ ժամանակն է, որ մի նշան գրեք ձեր սրտի վրա, ինչպես Պողոսն է ասում, «գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստուծոյ Հոգովը»:

Հիսուս Քրիստոսի մահկանացու կյանքը լի էր հրաշքներով՝ կույս մայր, նոր աստղ, հովիվներին հայտնվող հրեշտակներ, տեսնող կույրեր, քայլող կաղեր, հրեշտակներ Գեթսեմանիում և գերեզմանում, և բոլոր հրաշքներից ամենամեծը՝ Նրա փառահեղ Հարությունը:

Կարո՞ղ եք պատկերացնել Գալիլիայի մոտ գտնվող սարի վրա տասնմեկ Առաքյալների տեսարանը, երբ հարություն առած Տերը եկավ նրանց մոտ և ասաց. «Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը»:[1] «Գնացէք բոլոր աշխարհք, աւետարանը քարոզեցէք ամեն արարածի»:[2]

«Բոլոր ազգե՞րը»: «Բոլոր աշխա՞րհք»: «Ամեն արարածի՞»: Դա հնարավո՞ր էր: Չնայած, որ Հիսուսը հորդորեց նրանց, նրանք զարմանում էին, թե ինչպես հրաշքներն իսկապես կառաջնորդեին իրենց ավետարանը տարածելիս:[3]

Հավատքը հաղթահարեց կասկածը, և Պետրոսը բարձրացրեց իր ձայնը՝ ասելով.

«Ամենքդ՝ որ բնակուած էք Երուսաղէմումը, . . . իմ խօսքերին ականջ դրէք. . . .

Յիսուս Նազովրեցին, . . . [ում] առաք անօրէնների ձեռով փայտի վերայ բեւեռած, սպանեցիք. . . .

Սոյն այս Յիսուսին Աստուած յարութիւն տուաւ որի վկաներն ենք մենք ամենքս»:[4]

Այդ օրը անհերքելի հոգևոր զեղում տեղի ունեցավ և 3000 հոգի մկրտվեցին: Ինչպես խոստացել էր Հիսուսը, նշանները և հրաշքները հետևում էին հավատացյալների հավատքին:

Երբ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվեց 183 տարի առաջ, Տերը պատվիրեց Իր հետևորդների փոքրիկ խմբին դարեր առաջ արձագանքած Իր խոսքերը. «Եվ նախազգուշացնող ձայնը պիտի գնա բոլոր ժողովուրդներին»:[5] «Քանզի, ճշմարիտ, ձայնն առաջ պիտի գնա . . . դեպի ողջ աշխարհը, և դեպի երկրի ծայրամասերը»:[6]

«Բոլոր ժողովուրդների՞ն»: «Ողջ աշխա՞րհք»: «Երկրի ծայրամասե՞րը»: Դա հնարավո՞ր էր:

Տերը հորդորեց Իր Վերջին Օրերի Սրբերին,[7] սակայն կարո՞ղ էին նրանք կանխատեսել այս զարմանալի գործի հաջողությունը և ճակատագիրը: Նրանք, երևի թե, մտածել են այն մասին, թե արդյոք հրաշքները կառաջնորդեն իրենց

ավետարանը տարածելիս:

Կրկին, հավատքը հաղթահարեց կասկածը, և հազարավոր մարդիկ մկրտվեցին: Անգլիայում Երեց Վիլֆորդ Վուդրուֆը գտավ մի ամբողջ համայնք, որ սպասում էր իր գալուստին: Տիրոջ Հոգին իջավ նրանց վրա, և նա մկրտեց 45 քարոզիչների և մի քանի հարյուր անդամների Բենբո ագարակում անցկացրած իր առաջին ամսվա ընթացքում:[8]

Մեր օրերը չեն տարբերվում այդ օրերից: Երբ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը և ես միսիոներներ էինք մոտավորապես 40 տարի առաջ (և ես կարող եմ վստահեցնել ձեզ, որ մենք ամենատարեցները չենք վերադարձած միսիոներների մեջ, ովքեր նստած են կարմիր աթոռներին). այդ ժամանակ կային 16000 միսիոներներ: Ինչպես երեկ զեկուցեց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, այժմ մենք ունենք 65000՝ ավելին, քան երբևէ նախկինում: Այն ժամանակ կային 562 ցցեր: Այսօր դրանք 3000-ից ավելի են: Այն ժամանակ, մենք ծխեր և ճյուղեր ունեինք 59 երկրներում: Այսօր մենք համայնքներ ունենք աշխարհի 224 երկրներից և տարածքներից 189-ում: Մենք թվով քիչ ենք, ճիշտ ինչպես մարգարեացել է Նեփին:[9] Սակայն միևնույն ժամանակ, դուք և ես կենդանի վկաներն ենք Դանիելի մարգարեական խոսքերի. «քար կտրուեցաւ՝ առանց ձեռքի . . . [և լցնում է] բոլոր երկիրը»:[10]

Մեր օրերը հրաշքների ուշագրավ ժամանակաշրջան է: Վեց ամիս առաջ, երբ Նախագահ Մոնսոնը հայտարարեց տարիքային փոփոխությունը երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց համար, ովքեր ցանկանում են միսիա ծառայել, անհերքելի հոգու զեղում տեղի ունեցավ: Հավատքը հաղթահարեց կասկածը, և երիտասարդ տղամարդիկ ու երիտասարդ կանայք առաջ շարժվեցին: Համաժողովին հաջորդող հինգշաբթի օրն ինձ հանձնարարված էր Առաջին Նախագահությանը ներկայացնել միսիոներական կանչերը: Ես զարմացած էի տեսնելով 18-ամյա տղաների և 19-ամյա աղջիկների դիմումները, ովքեր արդեն իսկ

կարգավորել էին իրենց ծրագրերը, այցելել էին իրենց բժիշկներին, հարցազրույց էին ունեցել իրենց եպիսկոպոսների և ցցի նախագահների հետ և ներկայացրել էին իրենց միսիոներական դիմումները, և այդ ամենն ընդամենը հինգ օրում: Այժմ նրանց միացել են հազարավորներ ուրիշները: Սա հրաշք է:

Մենք շնորհակալ ենք մեր քույրերի եռանդուն հավատքի համար, միսիոներների թվի աճի համար աշխարհով մեկ, և ծառայելու պատրաստ զույգերի քանակի աճի համար: Հիսունութ նոր միսիաներ են հայտարարվել և, ի լրումն մեր Պրովոյի միսիոներական կենտրոնի, նոր միսիոներական կենտրոն է բացվում Մեխիկո Սիթիում:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Մենք առանձնահատուկ լրջությամբ ենք ընդունում Փրկչի կոչը. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը»»:[11] «Այս գործը կշարունակի առաջ գնալ, փոխելով և օրհնելով կյանքեր: Ամբողջ աշխարհում չկա ոչ մի ուժ, ոչ մի պատճառ, որը կարող է կանգնեցնել Աստծո աշխատանքը»:[12]

Մենք ականատես ենք լինում Տիրոջ հրաշքներին, մինչ Նրա ավետարանը տարածվում է աշխարհով մեկ:

Եղբայրներ և քույրեր, ճիշտ ինչպես Տերը ոգեշնչել է ավելի շատ միսիոներների, որպեսզի ծառայեն, Նա նաև ավելի շատ լավ և ազնիվ մարդկանց մտքերն է արթնացնում և սրտեր է բացում, որ ընդունեն Իր միսիոներներին: Դուք արդեն իսկ ճանաչում եք նրանց կամ կճանաչեք նրանց: Նրանք ձեր ընտանիքում են և ապրում են ձեր հարևանությամբ: Փողոցում նրանք անցնում են ձեր կողքով, դպրոցում նստում են ձեր կողքին և կապվում են ձեզ հետ համացանցում: Դուք նույնպես կարևոր մասն եք այդ զարգացող հրաշքի:

Եթե դուք լիաժամկետ միսիոներ չեք, ով իր բաճկոնին ամրացված կրծքանշան ունի, այժմ ժամանակն է, որ մի նշան գրեք ձեր սրտի վրա, ինչպես Պողոսն է ասում, «գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստուծոյ Հոգովը»:[13] Իսկ դո՛ւք, վերադարձա՛ծ միսիոներներ, գտեք ձեր հին միսիոներական կրծքանշանը: Մի կրեք այն, սակայն դրեք այն մի տեղ, որ կարող եք տեսնել: Տերն այժմ ավելի շատ, քան երբևէ, ունի ձեր կարիքը, որ լինեք գործիք Նրա ձեռքում: Բոլորս պետք է ներդրում կատարենք այս հրաշքի իրականացման գործում:

Եկեղեցու յուրաքանչյուր արդար անդամ մտածել է, թե ինչպես կիսվի ավետարանով: Ոմանք հեշտությամբ են կիսվում ավետարանով, և մենք շատ բան կարող ենք սովորել նրանցից:[14] Ոմանք դժվարանում են և խորհում, թե ինչպես ավելի լավ դա անել, հուսալով, որ մեղավոր լինելու զգացողությունը, որ, երբեմն, ունենում ենք, կհեռանա մեզանից:

Ավետարանով կիսվելու մեր ցանկությունը բոլորիս էլ բերում է մեր ծնկների վրա, և դա այդպես էլ պետք է լինի, քանի որ մենք ունենք Տիրոջ օգնության կարիքը:

Նախագահ Մոնսոնը խնդրել է, որ մենք աղոթենք «այն տարածքների համար, որտեղ մեր ազդեցությունը սահմանափակ է և որտեղ մեզ թույլ չի տրվում այսօր ազատ քարոզել ավետարանը»:[15] Երբ մենք անկեղծորեն և միասնաբար աղոթենք մեր Երկնային Հորը, Տերը կշարունակի կարևոր դռներ բացել մեզ համար:

Մենք նաև աղոթում ենք ավետարանը կիսելու մեր անձնական հնարավորությունների համար: Պետրոս Առաքյալն ասել է. «Միշտ պատրաստ եղեք. . . . պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե»:[16]

Ամուսնանալով ուրբաթ օրը և մկրտվելով իրենց ավագ երեխաների հետ շաբաթ օրը, Մոզամբիկից այս զույգերը ընտրել են հետևել Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Աշխարհի այսօրվա մոլորված[17] ու խառնաշփոթ[18] վիճակում զարմանալի չէ, որ քիչ մարդիկ են այցելում իրենց երկրպագության վայրերը: Չնայած շատերն են ուզում մոտ լինել Աստծուն և ավելի լավ հասկանալ կյանքի նպատակը, նրանք ունեն անպատասխան հարցեր: Շատերն ունեն ճշմարտության համար բաց սրտեր, բայց ինչպես նկարագրում է Ամովս մարգարեն. «նրանք [ման են գալիս] Տիրոջ խոսքը որոնելու համար և [չեն գտնում]»:[19] Դուք կարող եք օգնել նրանց գտնել իրենց հարցերի պատասխանները: Ձեր ամենօրյա զրույցներում դուք կարող եք ավելացնել նրանց հավատքն առ Քրիստոս:[20]

Փրկիչն ասել է. «Բարձր պահեք ձեր լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Ահա, ես եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք»:[21]

Ես խոստանում եմ ձեզ, երբ դուք աղոթեք իմանալու համար, թե ում հետ խոսեք, անուններն ու դեմքերը կգան ձեր մտքին: Հենց նույն պահին ձեզ կտրվեն այն խոսքերը, որոնք պետք է ասվեն:[22] Հնարավորություններ կբացվեն ձեզ համար: Հավատքը կհաղթահարի կասկածը, և Տերը կօրհնի ձեզ ձեր իսկ հրաշքներով:

Տերն ուսուցանել է մեզ, թե ինչպես կիսվել ավետարանով: Ես սիրում եմ Անդրեասի պատմությունը, ով հարցրեց. «Ռաբբի, ո՞րտեղ ես կենում»:[23] Հիսուսը կարող էր ի պատասխան ասել Իր ապրելու վայրը: Սակայն, դրա փոխարեն նա ասաց. «Եկեք և տեսեք»:[24] Ինձ հաճելի է մտածել, որ Փրկչի ասածը սա էր. «Եկեք և տեսեք ոչ միայն թե որտեղ եմ ապրում, այլ թե ինչպես եմ ապրում: Եկեք և տեսեք, թե ով եմ ես: Եկեք և զգացեք Հոգին»: Մենք ամեն ինչ չէ, որ գիտենք այդ օրվա մասին, սակայն գիտենք, որ երբ Անդրեասը գտավ իր եղբայր Սիմոնին, նա հայտարարեց. «Քրիստոսը գտել ենք»:[25]

Մենք կարող ենք հետևել Փրկչի օրինակին և մեր զրույցների ժամանակ հետաքրքրություն ցուցաբերած մարդկանց հրավիրենք՝ «եկեք և տեսեք»: Ոմանք կընդունեն մեր հրավերը, և ոմանք էլ չեն ընդունի: Մենք բոլորս էլ գիտենք մեկին, ում հրավիրել են մի քանի անգամ, մինչև որ ընդունել է «եկեք և տեսեք» հրավերը: Եկեք նաև մտածենք նրանց մասին, ովքեր մի ժամանակ մեզ հետ էին, սակայն այժմ մենք հազվադեպ ենք նրանց տեսնում, հրավիրելով նրանց վերադառնալ և տեսնել ևս մեկ անգամ:

Մենք հարգում ենք յուրաքանչյուր անձնավորության ընտրությունը և ժամանակը: Տերն ասել է. «Թող ամեն մարդ իր համար ընտրի»:[26] Մարդու հետաքրքրության պակասը չպետք է վնասի մեր ընկերությանը և սիրուն: Անկախ այն բանից, թե հրավերն ընդունվում է, թե ոչ, երբ դուք հրավիրում եք ուրիշներին «գալ և տեսնել», դուք կզգաք Տիրոջ հավանությունը և այդ հավանության հետ մեկտեղ ձեր հավատքը կմեծանա, որ կիսվեք ձեր համոզմունքներով կրկին և կրկին:

Նրանց համար, ովքեր օգտվում են Ինտերնետից կամ բջջային հեռախոսներից, նոր եղանակներ կան, որոնցով կարող են հրավիրել ուրիշներին «գալ և տեսնել»: Եկեք համացանցով մեր հավատքը կիսելը դարձնենք մեր առօրյա կյանքի մասը: LDS.org-ը, Mormon.org-ը, Facebook-ը, Twitter-ը, – սրանք

բոլորն էլ հնարավորություններ են ընձեռում:

Ավետարանով կիսվելու համար Բոստոնի երիտասարդ անդամները բացել են մի քանի բլոգեր:[27] Նրանք, ովքեր միացել էին Եկեղեցուն, սկսել էին իրենց ուսումնասիրությունները համացանցում, որին հետևել էին միսիոներների հետ ունեցած հարցազրույցները: Այդ փորձառությունը ևս օգնեց երիտասարդներին, որ ավելի մեծ հավատք կիրառեն անձամբ ավետարանի մասին խոսելիս: Նրանցից մեկն ասել է. «Սա միսիոներական աշխատանք չէ: Սա միսիոներական հաճելի ժամանց է»:[28]

Մենք բոլորս էլ ներգրավված ենք այս աշխատանքում: Ծխի մեր անդամների և միսիոներների հետ միասին մենք ծրագրում և աղոթում և օգնում ենք միմյանց: Խնդրում ենք լիաժամկետ միսիոներներին պահեք ձեր մտքում և աղոթեք նրանց համար: Վստահեք նրանց ձեր ընտանիքներին և ընկերներին: Տերը վստահում է նրանց և կանչել է նրանց ուսուցանել և օրհնել նրանց, ովքեր փնտրում են Իրեն:

Նախագահ Պաուլո Քրեթլին Մոզամբիկի Մապուտո Միսիայից կիսվել է այս փորձառությամբ. «Մոզամբիկում ընդունված երևույթ է, երբ զույգերը միասին են ապրում առանց ամուսնանալու, քանի որ աֆրիկյան ավանդույթը պահանջում է թանկարժեք օժիտ ամուսնանալու համար, օժիտ, որը զույգերի մեծամասնությունը չեն կարող ապահովել»:[29]

Անդամները և միսիոներները մտածեցին և աղոթեցին այն մասին, թե ինչպես օգնել:

Նրանց աղոթքների պատասխանն այն էր, որ պետք է շեշտեին մաքրաբարոյության օրենքը և ամուսնության կարևորությունը և հավերժական ընտանիքները: Եվ մինչդեռ օգնում էին զույգերին ապաշխարել և օրենքով ամուսնանալ, նրանք սովորեցնում էին այն երջանկության մասին, որը գալիս է միայն Հիսուս Քրիստոսին հետևելու միջոցով:

Սա Մոզամբիկի երկու տարբեր քաղաքների զույգերի նկարներն են: Ամուսնանալով ուրբաթ օրը, նրանք իրենց ավագ երեխաների հետ մկրտվեցին կիրակի օրը:[30] Ընկերները և ընտանիքները հրավիրված էին՝ «գալու և տեսնելու», և հարյուրավոր մարդիկ «եկան և տեսան»:

Մկրտությունից հետո քույրերից մեկն ասաց. «Մենք պետք է ընտրեինք հետևել մեր հայրերի ավանդույթներին կամ հետևել Հիսուս Քրիստոսին: Մենք ընտրեցինք հետևել Քրիստոսին»:[31]

Դուք գուցե չեք ապրում Մոզամբիկում, սակայն ձեր իսկ ձևով, ձեր իսկ մշակույթում դուք կարող եք կիսվել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով:

Աղոթեք ձեր Երկնային Հորը: Սա Նրա սուրբ գործն է: Նա ձեզ ուղղություն կտա, թե ինչ անեք: Նա կբացի դռները, կհեռացնի խոչընդոտները և կօգնի ձեզ հաղթահարել դժվարությունները: Տերը հայտարարել է. «Նախազգուշացնող ձայնը պիտի գնա բոլոր ժողովուրդներին, իմ աշակերտների բերանով. . . . և ոչ ոք ետ չի պահի նրանց»:[32]

Ես վկայում եմ, որ «Տիրոջ ձայնը [կգնա] աշխարհի ծայրերը, որպեսզի բոլորը, ովքեր կամենում են լսել, կարողանան լսել»:[33] Դա հրաշք է: Դա, իսկապես, հրաշք է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 28.19:
2. Մարկոս 16.15:
3. Տես Մատթեոս 28.20, Մարկոս 16.17–18:
4. Գործք 2.14, 22–23, 32:
5. Վարդապետություն և Ուխտեր 1.4:
6. Վարդապետություն և Ուխտեր 58.64:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.5:
8. Տես *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 89–92:
9. Տես 1 Նեփի 14.12:
10. Դանիել 2:34–35:
11. Թոմաս Ս. Մոնսոն, «Բարի գալուստ համաժողովին», *Լիահոնա,* մայիս 2009, 5:
12. Թոմաս Ս. Մոնսոն, «Կրկին հավաքվելով» *Լիահոնա,* մայիս 2012, 4:
13. Բ Կորնթացիս 3.3:
14. Տես Clayton M. Christensen, *The Power of Everyday Missionaries: The What and How of Sharing the Gospel* (2013).
15. Թոմաս Ս. Մոնսոն, «Բարի գալուստ համաժողովին» *Լիահոնա,* նոյ. 2009, 6:
16. Ա Պետրոս 3.15:
17. Ժամանակով ստուգված ճշմարտությունները վերասահմանվում և անտեսվում են. տես Վարդապետություն և Ուխտեր 1.16, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 132.8:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.26, 88:91:
19. Մոմոն 8.12:
20. Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Երիցականներն ունե՞ն որևէ ճշմարտություն: Այո: Մկրտականները, մեթոդականները և այլոք ունե՞ն որևէ ճշմարտություն: Այո: . . . Մենք պետք է հավաքենք աշխարհի բոլոր լավ և ճշմարիտ սկզբունքները և փայփայենք դրանք» (*History of the Church,* 5:517): «Մենք չենք խնդրում որևէ մարդու մի կողմ դնել իրենց ունեցած լավը. . .. մենք միայն խնդրում ենք նրանց գալ և ավելին ունենալ: Ի՞նչ կպատահի, եթե ողջ աշխարհն ընդունի այս Ավետարանը: Այդ ժամանակ նրանք դեմ հանդիման կտեսնեն, և Աստծո օրհնությունները կթափվեն ժողովրդի վրա, որն իմ ողջ հոգու ցանկությունն է» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 155): Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Թույլ տվեք ասել, որ մենք գնահատում ենք բոլոր եկեղեցիներում եղած ճշմարտությունը և լավ բաները, որ նրանք անում են: Մենք պարզապես մարդկանց ասում ենք՝ դուք ձեզ հետ բերեք այն ամբողջ լավը, որ դուք ունեք, և հետո թույլ տվեք տեսնել, թե կարող ենք մենք ավելացնել դրա վրա: Դա է այս աշխատանքի ոգին: Դա է մեր միսիոներական ծառայության էությունը» (“Words of the Living Prophet,” *Liahona,* Apr. 1999, 19): «Մենք պետք է լինենք ընկերասեր ժողովուրդ: Մենք պետք է լավը նկատենք բոլոր մարդկանց մեջ: Մեր նպատակը չէ քննադատել մյուս եկեղեցիներին: Մենք քարոզում և ուսուցանում ենք լավատեսությամբ և հաստատակամությամբ: Մենք ասում ենք այլ հավատքի մարդկանց. «դուք ձեզ հետ բերեք այն ամբողջ լավը, որ դուք ունեք և թույլ տվեք տեսնել, եթե մենք կարող ենք ավելացնել դրա վրա»: Դա է հիմնականում մեր հրաշալի միսիոներական ծրագրի էությունը և այն արդյունքներ է տալիս» (“Messages of Inspiration from President Hinckley,” *Church News,* Nov. 7, 1998, 2. տես ldschurchnews.com):
21. 3 Նեփի 18.24:
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.85, 100.6:
23. Հովհաննես Ա.38:
24. Հովհաննես Ա.39:
25. Հովհաննես Ա.41:
26. Վարդապետություն և Ուխտեր 37.4:
27. Տես, օրինակ, youngandmormon.com:
28. Հեռախոսային խոսակցություն Զաքսոն Հեյթի հետ մարտի 22-ին, 2013թ.:
29. Անձնական հաղորդագրություն Նախագահ Պաուլո Վ. Քրեթլիի կողմից, մարտի 6-ին, 2013թ.:
30. Նախագահ Պաուլո Վ. Քրեթլիի կողմից տրամադրված նկարներ: Առաջին խումբը Մապուտոյից էր. նրանք ամուսնացել էին նոյեմբերի 30-ին, 2012թ., և մկրտվել էին դեկտեմբերի 1-ին, 2012թ.: Երկրորդ խումբը Բեյրայից էր. Նրանք ամուսնացել էին մարտի 1-ին, 2013թ., և մկրտվել էին մարտի 2-ին, 2013թ.:
31. Անձնական հաղորդագրություն Նախագահ Պաուլո Վ. Քրեթլիի կողմից, մարտի 6-ին, 2013թ.:
32. Վարդապետություն և Ուխտեր 1.4–5:
33. Վարդապետություն և Ուխտեր 1.11:

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Երեխաների Միության Գերագույն Նախագահ

Բառերը, որ մենք խոսում ենք

Թե ինչպես ենք մենք խոսում մեր երեխաների հետ և ինչպիսի բառեր ենք կիրառում խոսելիս, կարող է խրախուսել և ոգևորել նրանց, ամրացնել նրանց հավատքը:

Մի երիտասարդ հայր վերջերս լսեց իր երկրորդ դասարանի արտասովոր ուսուցչուհու մահվան մասին: Ի հիշատակ նրա՝ նա գրեց. «Իմ հիշած բոլոր զգացումներից ու փորձառություններից, զգացումը, որի մասին ես ամենից հաճախ եմ մտածում, դա «սփոփանքն» է»: Նա ինձ գուցե ուսուցանել է ուղղագրություն, քերականություն և մաթեմատիկա, բայց, շատ ավելի կարևոր, նա ինձ սովորեցրել է սիրել մանկությունը: Նրա դասարանում դա նորմալ էր երբեմն բառը սխալ կազմել: «Մենք կաշխատենք դրա վրա»,- կասեր նա: Նորմալ էր թափթփել, կամ պատռել, կամ կեղտոտել: «Մենք կուղղենք դա և կմաքրենք»,- կպատասխաներ նա: Նորմալ էր փորձել, նորմալ էր ջանալ, նորմալ էր երազել և վայելել աննշան բաներից եկող հաճույքները, որոնք միայն երեխաների համար են ոգևորիչ»:

Ամենամեծ ազդեցություններից մեկը, որ մարդ կարող է ունենալ այս աշխարհում, երեխայի վրա ազդեցություն ունենալն է: Երեխաների համոզմունքները և ինքնագնահատականը ձևավորվում են իրենց կյանքի վաղ շրջանում: Յուրաքանչյուր ոք, ով ինձ լսում է հիմա, իր արտաբերած բառերի միջոցով երեխայի վստահությունը իր անձի նկատմամբ բարձրացնելու և երեխայի հավատքը առ Երկնային Հայր և Հիսուս Քրիստոս մեծացնելու զորություն ունի:

Հելամանի հինգերորդ գլխում մենք կարդում ենք. «Եվ, այժմ, իմ որդինե՛ր, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը»:[1]

Սրանք այն *բառերն* բառերն էին, որ Հելամանն ուսուցանեց իր որդիներին: Եվ մենք շարունակում ենք կարդալ. «Եվ նրանք հիշում էին նրա *խոսքերը*. և . . . նրանք առաջ գնացին . . . ուսուցանելու Աստծո խոսքը . . . ողջ ժողովրդի մեջ»:[2]

Թեև Հելամանի որդիներին հալածեցին ու բանտարկեցին, իրենց լսած բառերն երբեք հուսախաբ չարեցին նրանց: Նրանք պաշտպանված էին և օղակված էին մի կրակե սյունով: Հետո մի ձայն եկավ՝ ասելով իրենց կալանողներին.

«Ապաշխարեք, ապաշխարեք, և այլևս մի ջանացեք կործանել իմ ծառաներին: . . .

Դա մի որոտի ձայն չէր, ոչ էլ մի բարձր աղմկոտ ժխորի ձայն, այլ ահա, դա կատարյալ մեղմության մի հանդարտ ձայն էր, կարծես մի շշուկ, և այն թափանցեց մինչև հոգու խորքը»:[3]

Մենք կարող ենք սովորել երկնքից եկող այդ ձայնից: Դա բարձր չէր, հանդիմանող չէր, ոչ էլ նվաստացնող. դա կատարյալ մեղմության մի հանդարտ ձայն էր, որը հաստատուն հրահանգի հետ մեկտեղ տալիս էր հույս:

Թե ինչպես ենք մենք խոսում մեր երեխաների հետ և ինչպիսի բառեր ենք կիրառում խոսելիս, կարող է խրախուսել և ոգևորել նրանց, ամրացնել նրանց հավատքը, որպեսզի մնան Երկնային Հոր մոտ վերադառնալու ճանապարհին: Նրանք գալիս են այս աշխարհ՝ պատրաստ լսելու:

Երեխայի լսելու հետ կապված մի օրինակ տեղի ունեցավ կտորեղենի խանութում: Խանութը լեփ-լեցուն էր գնորդներով, երբ բոլորը նկատեցին, որ մի մայր խուճապի է մատնվել,

որովհետև կորցրել է իր փոքրիկ որդուն: Սկզբում նա կանչում էր նրա անունը: «Քոնոր»,- ասում էր նա՝ խանութով մեկ արագ քայլելով: Ժամանակի անցնելու հետ մեկտեղ նրա ձայնը ավելի բարձրացավ և ավելի խելահեղ դարձավ: Շուտով այդ մասին տեղեկացրեցին խանութի անվտանգության աշխատակիցներին, և ամեն ոք խանութում ներգրավված էր երեխայի որոնման մեջ՝ թե դրսում, թե ներսում: Մի քանի րոպե անցավ առանց նրան գտնելու հաջողության: Ժամանակն անցնելու հետ մեկտեղ՝ Քոնորի մայրը հասկանալիորեն ավելի խելահեղ էր դառնում, և շտապ գոռում էր նրա անունը կրկին ու կրկին:

Մի գնորդ լուռ աղոթք ասելուց հետո մտածեց, որ Քոնորը գուցե վախեցել է իր մոր բղավոցը լսելիս, որը կանչում էր իր անունը: Նա ասաց այս միտքը մեկ այլ կնոջ, ով ներգրավված էր որոնման մեջ, և նրանք արագ ծրագիր մշակեցին: Նրանք միասին սկսեցին քայլել կտորի սեղանների միջև՝ հանգիստ կրկնելով հետևյալ բառերը. «Քոնոր, եթե դու լսում ես իմ ձայնը, ասա՝ ես այստեղ եմ»: Երբ նրանք դանդաղ քայլում էին դեպի խանութի հետնամասը՝ կրկնելով այդ արտահայտությունը, նրանք իսկապես լսեցին մի երկչոտ, մեղմ ձայն՝ ասելիս. «Ես այստեղ եմ»: Քոնորը թաքնվել էր կտորի գլանների միջև՝ սեղանի տակ: Դա կատարյալ մեղմության մի ձայն էր, որ քաջալերեց Քոնորին պատասխանել:

Աղոթեք երեխայի կարիքներն իմանալու համար

Երեխայի սրտի հետ խոսելու համար պետք է իմանանք երեխայի կարիքները: Եթե աղոթենք այդ կարիքներն իմանալու համար, հենց այն բառերը, որ մենք կասենք, իրենց սրտերի վրա ազդելու զորություն կունենան: Մեր ջանքերը մեծանում են, երբ մենք փնտրում ենք Սուրբ Հոգու առաջնորդությունը: Տերն ասել է.

«Ասեք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտում . . .

Քանզի այն նույն ժամին, այո, այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք»:[4]



Անջատեք սարքավորումները և սիրով լսեք

Դժբախտաբար, այս աշխարհի անհանգստությունները թույլ չեն տալիս, որ շատ երեխաներ լսեն քաջալերող խոսքեր, որոնք կձևավորեին իրենց ինքնարժեքը:

Բժիշկ Նիլ Հալֆոնը, ով ղեկավարում է Լոս Անջելոսի Կալիֆորնիայի համալսարանի Առողջ երեխաներ, ընտանիքներ և համայնքներ կենտրոնը, վերագրում է սա որպես «ծնողական բարեգութ անտեսում»: Մի օրինակ կապված է 18 ամսեկան երեխայի և նրա ծնողների հետ.

Նրանց որդին երջանիկ է թվում, ակտիվ և զբաղված, ամբողջովին վայելում է ժամանակը և պիցցան իր ծնողների հետ: . . . Ճաշն ավարտելուց հետո մայրը գնում է ինչ-որ հանձնարարություն կատարելու՝ թողնելով, որ հայրը հոգ տանի երեխայի մասին:

«Հայրը . . . սկսում է կարդալ հեռախոսային հաղորդագրություններ՝ մինչ փոքրիկը պիցցայի չորուկներ նետելու միջոցով պայքարում է ստանալ նրա ուշադրությունը: Հետո հայրը կրկին ուշադրությունը դարձնում է դեպի իր որդին՝ նայելով նրան և խաղալով նրա հետ: Թեև շուտով նա երեխայի հետ խաղալու փոխարեն, սկսում է նրա հետ նայել իր հեռախոսի տեսահոլովակը, մինչև կինը վերադառնում է:

[Բժիշկ] Հալֆոն նկատել է երեխայի ներքին լույսի պակասում, ծնողի և երեխայի միջև հաղորդակցման նվազում»:[5]

Մեր աղոթքի պատասխանը, թե ինչպես բավարարենք երեխաների կարիքները, կարող է լինել էլեկտրական սարքավորումների ավելի քիչ օգտագործումը: Մեր երեխաների հետ շփվելու և զրուցելու հնարավորության թանկագին րոպեները կորում են, երբ մենք զբաղված ենք լինում կողմնակի գործողություններով: Ինչու՞ ամեն օր չընտրել տեխնիկայից անջատվելու և միմյանց հետ միանալու ժամանակ: Պարզապես անջատեք ձեր բոլոր էլեկտրական սարքավորումները: Երբ սա անեք, ձեր տունը սկզբում կարող է հանգիստ թվալ, նույնիսկ հնարավոր է չիմանաք ինչ անել կամ ինչ ասել: Հետո, երբ ողջ ուշադրությունը հատկացնեք ձեր երեխաներին, զրույցը կսկսվի, և կարող եք հաճույք ստանալ միմյանց լսելուց:

Գրենք մեր երեխաներին համոզելու համար

Մենք նաև կարող ենք ներգործել մեր երեխաների վրա այն բառերի միջոցով, որ գրում ենք նրանց: Նեփին գրում է. «Մենք աշխատում ենք ջանասիրաբար՝ գրելու և համոզելու մեր զավակներին . . . հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ»:[6]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվեց Ջեյ Հեսի՝ մի ռազմական օդաչուի փորձառության մասին, ում ինքնաթիռը խփվեց Հյուսիսային Վիետնամի տարածքում 1960-ական թթ-ին. «Նրա ընտանիքը երկու տարի շարունակ տեղյակ չէր նա կենդանի է, թե մահացած: Հանդիպում նրան գերության մեջ պահողներն ի վերջո թույլ տվեցին նրան գրել տուն, սակայն քսանհինգ բառով սահմանափակեցին նրա նամակը»: Նախագահ Մոնսոնը հարցնում է. «Ի՞նչ կասեինք դուք և ես մեր ընտանիքներին, եթե նման իրավիճակում հայտնվեինք, երբ արդեն երկու տարի է, ինչ չենք տեսել նրանց և չգիտենք երբևէ կրկին կտեսնենք նրանց, թե ոչ: Ցանկանալով այնպես գրել, որ իր ընտանիքն իմանա, որ դա իր կողմից է, և նաև ցանկանալով նրանց արժեքավոր խորհուրդ տալ, եղբայր Հեսը գրեց [հետևյալ բառերը]. «Հետևյալ

բաները կարևոր են՝ տաճարային ամուսնություն, միսիա, քոլեջ: Առաջ գնացեք, նպատակներ դրեք, պատմություն գրեք, տարին երկու անգամ լուսանկարվեք»:[7]

Ի՞նչ բառեր կգրեիք ձեր երեխաներին, եթե կարողանայիք գրել 25 բառ կամ ավելի քիչ:

Երիտասարդ հայրը, ում մասին ես խոսեցի ավելի շուտ, ով գրել էր իր երկրորդ դասարանի ուսուցչուհու հետ կապված հիշողությունների մասին, հիմա մեծացնում է մի զեղեցիկ փոքրիկ դուստ: Նա զգում է երկնային վստահությունը, որը տրվել է նրան: Երբ նա մեծանա, ինչպիսի՞ն կլինի նրա ապագան: Ի՞նչ պետք է նա ասի, որ խորապես տպավորվի նրա մեջ: Ո՞ր բառերը կխրախուսեն նրան, կբարձրացնեն նրան և կօգնեն նրան մնալ ճանապարհին: Ինչ-որ բան կփոխվի՞, եթե նա կանգ առնի ու շշնջա. «Աստծո զավակն ես դու»: Մի օր նա կհիշի՞, որ իր հայրը հաճախ ասում էր հետևյալ բառերը. «Ես սիրում եմ այն ամենը, ինչ կապված է քեզ հետ»:

Մի՞թե դա այն չէ, ինչ մեր Երկնային Հայրն ասում էր Իր Որդուն և մեզ բոլորիս, երբ Նա ասաց. «Դա է իմ սիրելի որդին» և հետո ավելացրեց, «որին ես հավանեցի»:[8]

Հուսով եմ, այն բառերը, որ մենք ասում և գրում ենք մեր երեխաներին, արտացոլում են այն սերը, որ մեր Երկնային Հայրն ունի Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի ու մեր նկատմամբ: Եվ հետո, թող որ մենք կանգ առնենք լսելու համար, քանզի երեխան, ի պատասխան, շատ ունակ է խոսելու մեծ ու զարմանալի բաներ: Ես սա ասում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հելաման 5.12:
2. Հելաման 5.14; շեշտադրումն ավելացված է:
3. Հելաման 5.29–30:
4. Վարդապետություն և Ուխտեր 100.5–6:
5. Lois M. Collins, "Baby's Development Potentially Harmed by Parents Texting," *Deseret News,* June 4, 2012, deseretnews.com/article/print/865556895/Babys-development-potentially-harmed-by-parents-texting.html.
6. 2 Նեփի 25:23:
7. Թոմաս Ս. Մոնսոն, «Ուրախություն գտնել ճանապարհին», *Լիահոնա,* նոյ. 2008, 86:
8. Մատթէոս 3.17:

Երեց Լ. Ուիթնի Քլեյթոն
Յոթանասունի Նախագահությունից

Ամուսնություն՝ նայիր և սովորիր

Տիրոջ խոստումները տարածվում են բոլոր նրանց վրա, ովքեր հետևում են կյանքի այն ձևին, որը կառուցում է երջանիկ, սուրբ ամուսնական հարաբերություններ:

Մի քանի տարի առաջ մի երեկո ես և կինս այցելության էինք գնացել մեր որդիներից մեկի, նրա կնոջ ու երեխաների տուն՝ ճաշի: Դա փոքր երեխաներ ունեցող ընտանիքի համար բնորոշ միջավայր էր, խիստ աղմկոտ և, նույնիսկ, ավելի շատ զվարճալի: Ճաշից անմիջապես հետո մեր չորս տարեկան թոռնիկը՝ Աննան և ես դեռ նստած էինք սեղանի մոտ: Հասկանալով, որ նա ուներ իմ լիակատար ուշադրությունը նա ուղիղ կանգնեց նստարանին և աչքերը հառեց ինձ վրա: Երբ համոզվեց, որ ես նայում էի նրան, նա հանդիսավոր ձևով հրամայեց՝ «նայի՛ր և սովորի՛ր»: Ապա՝ նա պարեց և մի երգ երգեց ինձ համար:

Աննայի «նայիր և սովորիր» հրահանգը իմաստություն էր մանկան բերանից: Մենք *կարող* ենք սովորել այնքան շատ բան՝ նայելով և ապա մտածելով, թե ինչ ենք տեսել և զգացել: Այդ ոգով, թույլ տվեք կիսվել ձեզ հետ մի քանի սքանչելի, հավատարիմ ամուսնություններից՝ նայելով և սովորելով իմ դիտարկած սկզբունքներով: Այդ սկզբունքները կառուցում են ուժեղ, զոհացնող ամուսնություններ, որոնք համապատասխանում են երկնային սկզբունքներին: Ես հրավիրում եմ ձեզ նայել և սովորել ինձ հետ:

Առաջինը՝ ես դիտարկել եմ, որ ամենաերջանիկ ամուսնությունները նրանք են, երբ ինչպես ամուսինը, այնպես էլ կինը իրենց փոխհարաբերությունը համարում են թանկագին մարգարիտ՝ անսահման արժեք ունեցող գանձ: Նրանք երկուսն էլ թողնում են իրենց հորը և մորը և սկսում միասին կառուցել ամուսնությունը, որը կբարգավաճի հավերժության համար: Նրանք հասկանում են, որ քայլում են աստվածայնորեն կարգված ուղով: Նրանք գիտեն, որ ուրիշ ոչ մի տեսակի հարաբերություն չի բերի այնքան ուրախություն, չի գոյացնի այնքան շատ բարիք, ոչ էլ կառաջացնի այնքան շատ անձնական հոկում: Նայեք և սովորեք՝ լավագույն ամուսնական զույգերը անգին են համարում իրենց ամուսնությունները:

Հաջորդը՝ հավատքն է: Հաջող հավերժական ամուսնությունները կառուցվում են առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի հիմքի և Նրա ուսմունքներին հարելու

սկզբունքների վրա:[1] Ես նկատել եմ, որ այն զույգերը, որոնք իրենց ամուսնություններն անգին են դարձնում, գործադրելով հավատքի օրինակներ, նրանք հաճախում են հաղորդության և մյուս ժողովները ամեն շաբաթ, անցկացնում են ընտանեկան երեկոներ, միասին և անհատապես աղոթում և ուսումնասիրում են սուրբ գրությունները, վճարում են ազնիվ տասանորդ: Նրանց համատեղ որոնումներն ուղղված են հնազանդ և բարի լինելուն: Նրանք պատվիրանները չեն համարում բուֆետ, որտեղից կարող են ջոկել ու ընտրել միայն ամենագրավիչ ուտեստները:

Հավատքը բոլոր առաքինությունների հիմքն է, որոնք զորացնում են ամուսնությունը: Հավատքը զորացնելով՝ զորացնում ենք ամուսնությունը: Հավատքն աճում է, երբ մենք պահում ենք պատվիրանները և աճում է նաև ներդաշնակությունը, ուրախությունը ամուսնության մեջ: Այսպիսով՝ պատվիրանները պահելն էական է ուժեղ հավերժական ամուսնություններ հիմնադրելու համար: Նայեք և սովորեք՝ հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս երջանիկ հավերժական ամուսնությունների հիմքն է:

Երրորդը՝ ապաշխարությունն է: Ես նկատել եմ, որ երջանիկ ամուսնությունները հենվում են ապաշխարության պարգևի վրա: Այն կարևոր տարր է յուրաքանչյուր լավ ամուսնական փոխհարաբերության մեջ: Զույգերը, որոնք կանոնավորապես վարում են ազնիվ ինքնազննում, ճշգրտորեն կատարում են անհրաժեշտ քայլեր ապաշխարելու և բարեփոխվելու համար, զգում են բժշկող բալասան իրենց ամուսնություններում: Ապաշխարությունն օգնում է վերականգնել և պահպանել ներդաշնակությունը և խաղաղությունը:

Խոնարհությունն ապաշխարության էությունն է: Խոնարհությունն անեսասեր է, ոչ թե եսամոլ: Այն չի պահանջում իր իսկ ուղին կամ խոսում բարոյական գերազանցությամբ: Ընդհակառակը խոնարհությունը պատասխանում է մեղմորեն[2] և լսում բարությամբ՝ հասկանալու, ոչ թե արդարացնելու համար: Խոնարհությունն ընդունում է, որ ոչ ոք չի կարող փոխել որևէ մեկին, բայց հավատքով, ջանասիրությամբ և Աստծո օգնությամբ, *մենք* կարող ենք ենթարկվել *մեր իսկ* սրտի հզոր փոփոխությանը:[3] Սրտի հզոր փոփոխություն զգալը ստիպում է մեզ՝ մյուսներին, հատկապես, մեր կողակիցներին վերաբերվել հեզությամբ:[4] Խոնարհությունը նշանակում է, որ ամուսիններն ու կանայք երկուստեք ձգտում են օրհնել, օգնել և բարձրացնել միմյանց, դնելով մյուսին առաջին տեղում ամեն որոշումում: Նայեք և սովորեք՝ ապաշխարությունը և խոնարհությունը կառուցում են երջանիկ ամուսնություններ:

Չորրորդը՝ հարգանքն է: Ես նկատել եմ, որ հիանալի, երջանիկ ամուսնություններում ամուսիններն ու կանայք վերաբերվում են միմյանց որպես հավասար կողմեր: Այն գործերում, ցանկացած տեղ կամ ցանկացած ժամանակ, երբ ամուսինները զերիշխում են կանանց կամ վերաբերվել նրանց որևէ ձևով որպես երկրորդական կարգի գործընկեր ամուսնությունում, աստվածային օրենքին համապատասխան չեն և պետք է փոխարինվեն ճիշտ սկզբունքներով և վարվելաձևով:

Ամուսիններն ու կանայք լավ ամուսնություններում որոշումներ են ընդունում միաձայն, նրանցից յուրաքանչյուրը գործելով որպես լիարժեք մասնակից և հավասար ձայնի և քվեի իրավունք ունենալով:[5] Նրանք առաջինը կենտրոնանում են տան համատեղ պարտականություններում միմյանց օգնելու վրա:[6] Նրանց ամուսնությունները հիմնված են համագործակցության վրա, ոչ թե բանակցությունների: Նրանց ճաշի ժամը և ընտանեկան ժամանակը, որը հետևում է դրան, դառնում է նրանց օրվա կենտրոնական մասը և նրանց լավագույն ջանքերի առարկան: Նրանք անջատում են էլեկտրոնային սարքերը, հրաժարվում անձնական զվարճություններից,

որպեսզի օգնեն տնային պարտականություններում: Հնարավորության դեպքում, նրանք կարդում են իրենց երեխաների հետ ամեն գիշեր և երկուսով մասնակցում՝ տանելով փոքրիկներին քնեցնելու: Նրանք միասին են գնում քնելու: Եթե նրանց պարտականությունները և հանգամանքները թույլ են տալիս, ամուսիններն ու կանայք աշխատում են կողք կողքի անելով ամենակարևոր գործը՝ աշխատանքը, որ մենք անում ենք մեր տներում:

Որտեղ կա հարգանք, այնտեղ կա նաև թափանցիկություն, որը կարևոր տարրն է երջանիկ ամուսնությունների: Ամուսնական հարցերի վերաբերյալ գաղտնիքներ չկան, երբ դրանք հիմնված են փոխադարձ հարգանքի և թափանցիկության վրա: Ամուսիններն ու կանայք ընդունում եմ ֆինանսների հետ կապված բոլոր որոշումները միասին և երկուսին էլ հասանելի են ողջ տեղեկությունները:

Հավատարմությունը հարգանքի մի ձև է: Մարգարեներն ուսուցանում են, որ բարեհաջող ամուսնություն ունեցող զուգընկերները «շատ նվիրված են միմյանց»:[7] Նրանք ամեն կողմից լիովին արժանավոր ձևով են օգտագործում իրենց սոցիալական ցանցերը: Նրանք իրենց թույլ չեն տալիս գաղտնի ինտերնետային փորձառություններ: Նրանք ազատորեն կիսվում են միմյանց հետ իրենց սոցիալական ցանցերի գաղտնաբառերով: Նրանք չեն նայում ոչ մեկի անձնական եթերային տեղեկությունները, որը կարող է դավաճանել իրենց կողակցի սրբազան վստահությունը: Նրանք երբեք չեն անում կամ ասում որևէ բան, որը մոտ է անպատշաճ երևալուն՝ ո՛չ եթերային, ո՛չ էլ անմիջական շփումներում: Նայեք և սովորեք՝ սքանչելի ամուսնությունները լիովին հարգալիր են, թափանցիկ և նվիրված:

Հինգերորդը՝ սերն է: Ամենաերջանիկ ամուսնությունները, որ ես տեսել եմ, ճառագում են հնազանդություն ամենաերջանիկ պատվիրաններից մեկին, որ «մենք ապրենք միասին սիրով»:[8] Խոսելով ամուսինների հետ, Տերը պատվիրել է. «Սիրիր կնոջդ քո



ողջ սրտով ու հարիր նրան և ուրիշ ոչ մեկի»:[9] Եկեղեցու ձեռնարկն ուսուցանում է. «*Հարել* բառը նշանակում է լիովին նվիրված և հավատարիմ լինել որևէ մեկին: Ամուսնացած զույգերը հարում են Աստծուն և միմյանց, ծառայելով և սիրելով իրար, պահելով ուխտերը՝ լինելով լիովին հավատարիմ միմյանց և Աստծո հանդեպ»: Թե՛ ամուսինները, թե՛ կանայք «հրաժարվում են իրենց առանձին անհատական կյանքից և իրենց ամուսնությունը դարձնում են կյանքի առաջնահերթություն: Նրանք թույլ չեն տալիս, որ որևէ այլ անձ կամ շահ ավելի մեծ տեղ զբաղեցնի իրենց կյանքում, քան այն ուխտերը, որ նրանք կապել են Աստծո և միմյանց հետ»:[10] Նայեք և սովորեք՝ բարեհաջող զույգերը սիրում են միմյանց լիակատար նվիրումով:

Կան այնպիսիք, ում ամուսնություններն այնքան էլ երջանիկ չեն, ինչպես իրենք կկամենային, կան այնպիսիք, ովքեր երբեք չեն ամուսնացել, բաժանված են, միայնակ ծնողներ են կամ տարբեր պատճառներով այն վիճակում են, որ չեն կարող ամուսնանալ: Այս հանգամանքները կարող են լի լինել մարտակոչով և սրտաբեկությամբ, բայց դրանք չպետք է հավերժական լինեն: Ձեզանից նրանց, ովքեր նման պայմաններում են, ովքեր այնուամենայնիվ, հաստատակամորեն «զվարթորեն անում են բոլոր բաները, որոնք [ձեր] ուժերում են»,[11] թող երկինքն օրհնի ձեզ առատորեն: Ձգտեք հավերժական ամուսնություն կազմելու կատարելատիպին, ներառյալ՝ ձգտելով կամ պատրաստվելով արժանավոր կողակից լինել: Պահեք պատվիրանները և վստահեք Տիրոջը ու ձեր հանդեպ Նրա կատարյալ սիրուն: Մի օր ամեն խոստացված օրհնություն ամուսնության վերաբերյալ կլինի ձերը:[12]

Մորմոնի Գրքի ամենաքաղցր հատվածներից մեկում պարզապես նշվում է. «Եվ նրանք ամուսնանում էին, և ամուսնացնում, և օրհնվում էին՝ ըստ այն մեծաքանակ խոստումների, որոնք Տերը տվել էր նրանց»:[13] Տիրոջ խոստումները տարածվում են բոլոր նրանց վրա, ովքեր հետևում են կյանքի այն ձևին, որը կառուցում է երջանիկ, սուրբ ամուսնական հարաբերություններ: Այսպիսի օրհնությունները գալիս են որպես Հիսուս Քրիստոսի ավետարանով հավատարմորեն ապրելու սքանչելի, կանխատեսելի հետևանքներ:

Ես երախտապարտ եմ իմ սքանչելի կնոջ՝ Քեթիի համար, որն իմ կյանքի սերն է:

Ամուսնությունը Աստծո պարգևն է մեզ, մեր ամուսնությունների որակը մեր կողմից պարգև է Նրան: Ես բերում եմ իմ վկայությունը մեր Երկնային Հոր հիասքանչ ծրագրի մասին, որն ապահովում է հավերժական, հրաշալի ամուսնություն: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
2. Տես Առակաց ԺԵ.1:
3. Տես Ալմա 5.11–12, 26–31:
4. Տես Մորոնի 7.43–48; 8.25–26:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.27–31:
6. Տես «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», 129:
7. Տես Թոմաս Ս. Մոնսոն «Քահանայության զորությունը», *Լիահոնա,* մայիս 2011, 68; Գորդոն Բ. Հինքլի, "Life's Obligations," *Լիահոնա,* մայիս 1999, 4:
8. Վարդապետություն և Ուխտեր 42.45:
9. Վարդապետություն և Ուխտեր 42.22:
10. *Ձեռնարկ 2. Եկեղեցին ապրեցնել* (2010), 1.3.1:
11. Վարդապետություն և Ուխտեր 123.17:
12. Տես *Ձեռնարկ 2,* 1.3.3:
13. 4 Նեփի 1.11:

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորումից

Օրենքին հնազանդությունն ազատություն է

Տղամարդիկ և կանայք ստանում են իրենց ազատ կամքը որպես պարգև Աստծուց, բայց նրանց ազատությունը և իր հերթին նրանց հավերժական երջանկությունը գալիս է Նրա օրենքներին հնազանդությունից:

Ես մի հատուկ նվեր ստացա անցյալ Սուրբ Ծննդին, որն իր հետ շատ հիշողություններ արթնացրեց: Այն ինձ տվեց քրոջս աղջիկը: Դա այն իրերի մեջ էր եղել, որոնք ես թողել էի մեր հին ընտանեկան տանը, երբ ես դուրս էի եկել այնտեղից՝ ամուսնանալուց հետո: Նվերն այս փոքրիկ շաբաթական գրքույկն է, որը ես պահել եմ ձեռքումս: Սա մի գիրք է, որ տրվում էր ՎՕՍ զինծառայողներին, ովքեր մտնում էին զինված ուժեր II Համաշխարհային Պատերազմի ժամանակ: Ես անձնապես գիրքը համարում եմ նվեր Նախագահ Հեբեր Ջ. Գրանտից և նրա խորհրդականներից՝ Ջ. Ռուբեն Քլարկ կրտսերից և Դեյվիդ Օ. Մակքեյից:

Գրքի սկզբում, Աստծո այս երեք մարգարեները գրել են. «Զինվորական ծառայության իրադարձությունները մեզ թույլ չեն տալիս մշտական անհատական կապ պահել ձեզ հետ, թե ուղղակիորեն, թե անձնապես ներկայանալու միջոցով: Մեր հաջորդ լավագույն ելքը ձեր ձեռքում այնպիսի քանակությամբ ժամանակակից հայտնություններ և Ավետարանի սկզբունքների բացատրություններ դնելն է, որոնք կբերեն ձեզ, ուր էլ որ լինեք, նորոգված հույս և հավատք, ինչպես նաև հանգստություն, մխիթարություն և հոգու խաղաղություն»:[1]

Այսօր մենք գտնվում ենք մեկ այլ պատերազմում: Դա ռազմական զենքերով պատերազմ չէ, այն մտքերով, խոսքերով և գործողություններով է: Դա պատերազմ է մեղքի դեմ և ավելի քան երբևէ, մենք պատվիրանների հիշեցման կարիքն ունենք: Աշխարհիկությունը դառնում է սահմանված կարգ և դրա հավատամքների և գործառույթների մեծամասնությունը ուղղակի հակադրության մեջ են նրանց հետ, որոնք հաստատվել են անձնապես Տիրոջ կողմից՝ Իր զավակների օգտի համար:

Շաբաթական գրքույկում, անմիջապես Առաջին Նախագահության նամակից հետո, կա մի Ներածական նշում՝ ուղղված ծառայության մեջ գտնվող տղամարդկանց, որը վերնագրված է. «Օրենքին հնազանդությունն ազատություն է»: Հիշեցումը զուգահեռներ է անցկացնում ռազմական օրենքի, որը «բոլոր նրանց բարօրության համար է, ովքեր ծառայության մեջ են» և աստվածային օրենքի միջև:

Հիշեցումն ասում է. «Տիեզերքում ևս, որտեղ Աստված է տնօրինում, կա օրենք՝ տիեզերական, հավերժական օրենք, որոշակի օրինություններով և անփոփոխ տույժերով»:

Հիշեցման վերջին բառերը կենտրոնանում են Աստծո օրենքին հնազանդվելու վրա. «Եթե ուզում եք վերադառնալ ձեր սիրելիների մոտ բաց ճակատով. . . . եթե ուզում եք տղամարդ լինել և ապրել լիարժեք կյանքով, ապա հետևեք Աստծո օրենքին: Այդպես անելով, դուք այն անգին ազատությունների վրա, որոնք պահպանելու համար դուք պայքարում եք, կարող եք ավելացնել մեկ ուրիշը, որից մյուսները կարող են բավականին կախվածություն ունենալ՝ ազատությունը մեղքից, քանզի իրոք «օրենքին հնազանդությունը՝ ազատություն է»:[2]

Ինչո՞ւ «օրենքին հնազանդությունն ազատություն է» արտահայտությունը այդպես ճշմարտ հնչեց ինձ համար այդ ժամանակ: Ինչո՞ւ է այն ճշմարիտ հնչում բոլորիս համար այժմ:

Գուցե այն պատճառով, որովհետև մենք բացահայտել ենք մեր նախամահկանացու պատմության գիտելիքը: Մենք ընդունում ենք, որ ժամանակների սկզբում, երբ Աստված՝ Հավերժական Հայրը մեզ ներկայացրեց իր ծրագիրը, սատանան կամեցավ փոխել ծրագիրը: Նա ասաց, որ կփրկեր ողջ մարդկությանը: Ոչ մի հոգի չէր կորչի և սատանան վստահ էր, որ նա կարող էր իրականացնել իր առաջարկը: Բայց կար մի անընդունելի գին՝ մարդու

ազատ կամքի կործանումը, որն Աստծո կողմից տրված պարգև էր և է (տես Մովսես 4.1–3)։ Այս պարգևի մասին Հարոլդ Բ. Լին ասել է. «Կյանքից հետո ազատ կամքը Աստծո մեծագույն պարգևն է մարդկությանը»։[3] Այնուհետև, փոքր բան չէր սատանայի համար նսեմացնել մարդու ազատ կամքը։ Փաստորեն դա դարձավ հիմնական հարցը, որի պատճառով Պատերազմ մղվեց Երկնքում։ Երկնքում մղված Պատերազմի հաղթանակը, հաղթանակ էր մարդու ազատ կամքի համար։

Սակայն, սատանան չհանգստացավ։ Նրա պահուստային ծրագիրը՝ ծրագիր, որը նա գործարկում է Ադամի և Եվայի ժամանակից սկսած՝ տղամարդկանց և կանանց գայթակղելն է, հիմնականում ապացուցելու, որ մենք արժանի չենք Աստծո կողմից տրված ազատ կամքի պարգևին։ Սատանան ունի շատ պատճառներ անելու այն, ինչ նա անում է։ Երևի ամենահզոր դրդապատճառը վրեժխնդրությունն է, բայց նա ուզում է դարձնել տղամարդկանց և կանանց թշվառ, ինչպես ինքն է թշվառ։ Մեզանից ոչ ոք երբեք չպետք է թերագնահատի սատանայի հաջողության հասնելու շարժառիթները։ Աստծո հավերժական ծրագրում նրա դերը «բոլոր բաներում հակադրություն» ստեղծելն է (2 Նեփի 2.11) և մեր ազատ կամքը ստուգելը։ Յուրաքանչյուր ընտրություն, որ դուք և ես կատարում ենք, մեր ազատ կամքի ստուգումն է, արդյոք մենք ընտրում ենք լինել հնազանդ, թե Աստծո պատվիրաններին անհնազանդ, փաստորեն ընտրություն է տեղի ունենում «ազատության և հավերժական կյանքի» և «գերության և մահվան» միջև։

Այս հիմնադրույթային վարդապետությունը հստակորեն ուսուցանվել է 2 Նեփիի երկրորդ գլխում. «Ուստի, մարդիկ ազատ են՝ ըստ մարմնի. և բոլոր բաները, որոնք անհրաժեշտ են մարդկանց, տրված են նրանց։ Եվ նրանք ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրելու գերություն և մահ, ըստ դևի գերության և զորության. Քանզի նա

ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.27)։

Շատ կողմերից այս աշխարհը միշտ պատերազմի մեջ է եղել։ Ես հավատում եմ, որ երբ Առաջին Նախագահությունն ուղարկեց ինձ այս փոքրիկ գրքույկը, նրանք ավելի մտահոգված էին ավելի մեծ պատերազմով, քան II Համաշխարհային Պատերազմը։ Ես նաև հավատում եմ, նրանք հույս ունեին, որ գիրքը հավատքի վահան կլինի սատանայի և նրա բանակի դեմ այս ավելի մեծ պատերազմում՝ մեղքի դեմ պատերազմում, և ինձ կծառայի որպես հիշեցում՝ ապրել Աստծո պատվիրաններով։

Ինքներս մեզ գնահատելու և մեզ նախորդ սերունդների հետ համեմատելու համար, մարդուն հայտնի հնագույն չափանիշներից մեկը՝ Տասը Պատվիրանների միջոցով է։ Քաղաքակիրթ աշխարհի մեծ մասի համար, հատկապես Հուդա-Քրիստոնեական աշխարհի համար Տասը Պատվիրանները ամենաընդունված և հարատևողսահմանազատումն է բարու և չարի միջև։

Իմ կարծիքով Տասը Պատվիրաններից չորսին ավելի լրջորեն են վերաբերվում, քան երբևէ։ Որպես մշակույթ՝ մենք արհամարհում ենք և դատապարտում սպանությունը, գողությունը և ստախոսությունը և մենք դեռ հավատում ենք իրենց ծնողների հանդեպ երեխաների պատասխանատվությանը։

Բայց որպես ավելի լայն հասարակություն, մենք սովորաբար բաց ենք թողնում մյուս վեց պատվիրանները։

- Եթե աշխարհիկ առաջնահերթությունները ինչ-որ ախտանիշներ են իրենցից ներկայացնում, իհարկե, մենք ունենք «ուրիշ աստվածներ», որոնց առաջ ենք դնում ճշմարիտ Աստծուց։
- Մենք կուռքեր ենք սարքում նշանավոր մարդկանց, կենսառճը, հարստությունը և այո, երբեմն, քանդակված պատկերներ կամ առարկաներ։
- Մենք օգտագործում ենք Աստծո անունը ամեն տեսակի պիղծ ձևերով, ներառյալ մեր բացականչությունները և մեր հայհոյանքները։
- Մենք օգտագործում ենք Հանգստության օրը մեր ամենամեծ խաղերի, մեր ամենալուրջ զվարճությունների, մեր ամենաշատ առևտրի և, փաստորեն, ամեն այլ բաների համար, բացի երկրպագությունից։
- Մենք վերաբերում ենք ամուսնությունից դուրս սեռական

հարաբերություններին որպես հանգստի և զվարճության ձև:
- Իսկ ագահությունը դարձել է կյանքի խիստ սովորական ձև (Տես Ելից Ի.3–17):

Մարգարեները բոլոր տնտեսությունների հետևողականորեն նախազգուշացրել են երկու առավել լուրջ պատվիրանների խախտումների դեմ՝ սպանության և շնության վերաբերյալ: Ես տեսնում եմ ընդհանուր հիմքեր այս երկու կարևոր պատվիրանների համար՝ հավատք առ այն, որ կյանքն ինքնին Աստծո արտոնությունն է, և որ մեր ֆիզիկական մարմինները՝ մահկանացու կյանքի մեր տաճարները, պետք է կառուցվեն Աստծո կողմից կարգված սահմաններում: Կյանքի երկու ծայրերում էլ մարդու կողմից Աստծո օրենքները փոխարինելը իր իսկ կանոններով հանդգնության բարձրագույն աստիճան է և մեղքի խորություն:

Ամուսնության սրբության հանդեպ արժեզրկող վերաբերմունքի հիմնական ազդեցությունները ընտանիքների համար բերում են հետևանքներ՝ ընտանիքների ուժը վատթարանում է տագնապալի չափով: Այդ վատթարացումը համատարած վնաս է բերում հասարակությանը: Ես տեսնում եմ անմիջական պատճառն ու հետևանքը: Երբ մենք հրաժարվում ենք պարտավորությունից և մեր ամուսնական զուգընկերոջը հավատարիմ լինելուց, մենք վերացնում ենք սոսինձը, որը հասարակությունը միասնական է պահում:

Պատվիրանների մասին օգտակար ձև է մտածել, որ դրանք իմաստուն, ամենազետ Երկնային Հորից սիրառատ խորհուրդներ են: Նրա նպատակը մեր հավերժական երջանկությունն է և նրա պատվիրանները ճանապարհի քարտեզն է, որը Նա տվել է մեզ՝ վերադառնալու Իր մոտ, որը մեզ հավերժորեն երջանկացնելու միակ ուղին է: Որքան կարևոր է տունն ու ընտանիքը մեր հավերժական երջանկության համար: Իմ փոքրիկ շագանակագույն գրքույկի 141-րդ էջում նշվում է. «Իսկապես, մեր երկինքը մի քիչ ավելին է, քան մեր տների և ընտանիքների նախագծումը հավերժության մեջ»:[4]

Ընտանիքի և տան վարդապետությունը վերջերս հստակորեն և ուժգնորեն է վերաշարադրվել «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հռչակագրում: Այն հայտարարեց ընտանիքների հավերժական բնույթը և ապա բացատրեց կապը տաճարային երկրպագության հետ: Հայտարարությունը նաև հռչակում է օրենքը, որի վրա ստորոգվում է ընտանիքների հավերժական երջանկությունը, այսինքն. «Ծննդաստեղծ սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին»:[5]

Աստված հայտնում է Իր մարգարեներին, որ կան բարոյական ճշմարտություններ: Մեղքը միշտ էլ մեղք կլինի: Տիրոջ պատվիրաններին անհնազանդությունը մեզ միշտ կզրկի Նրա օրհնություններից: Աշխարհը փոխվում է անընդհատ և արհեստականորեն, բայց Աստված՝ Նրա պատվիրանները և խոստացված օրհնությունները չեն փոխվում: Դրանք վերջնական են և անփոփոխ: Տղամարդիկ և կանայք ստանում են իրենց ազատ կամքը որպես պարգև Աստծուց, բայց նրանց ազատությունը և իր հերթին նրանց հավերժական երջանկությունը գալիս է Նրա օրենքներին հնազանդությունից: Ինչպես Ալման է պատվիրել իր մոլորված որդի Կորիանթոնին. «Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել» (Ալմա 41.10):

Ավետարանի լրիվության վերականգման այս օրերին Տերը կրկին հայտնել է մեզ այն օրհնությունները, որոնք խոստացված են մեզ Իր պատվիրաններին հնազանդ լինելու համար.

Վարդապետություն և Ուխտեր 130-ում կարդում ենք.

«Կա օրենք, երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները,

Եվ եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն» (ՎԵՈՒ 130.20–21):

Անկասկած չի կարող լինել որևէ վարդապետություն սուրբ գրություններում ավելի ուժգնորեն արտահայտված, քան Տիրոջ անփոփոխ պատվիրանները և դրանց կապը մեր երջանկության և բարօրության հետ որպես անհատներ, որպես ընտանիքներ և որպես հասարակություն: Կան բարոյական ճշմարտություններ: Տիրոջ պատվիրաններին անհնազանդությունը մեզ միշտ կզրկի Նրա օրհնություններից: Այս բաները չեն փոխվում:

Մի աշխարհում, որտեղ հասարակության բարոյական ուղեցույցը փոփոխվում է, Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանը չպետք է երբեք սասանվի, ոչ էլ դրա ցցերը և ծխերը, դրա ընտանիքները, ոչ էլ անհատ անդամները: Մենք չպետք է ջոկենք և ընտրենք, թե որ պատվիրաններն ենք կարծում, որ կարևոր է պահել, այլ պետք է ընդունենք Աստծո բոլոր պատվիրանները: Մենք պետք է կանգնենք ամուր և անսասան՝ ունենալով կատարյալ հավատք Տիրոջ հետևողականության և կատարյալ վստահություն Նրա խոստումների հանդեպ:

Թող որ մենք լույս լինենք բլրի վրա, օրինակ՝ պատվիրանները պահելիս, որոնք երբեք չեն փոխվել և երբեք չեն փոխվելու: Ճիշտ ինչպես այս փոքրիկ գրքույկը քաջալերեց ՎՕՍ զինծառայողներին կանգնել բարոյապես ամուր՝ պատերազմի ժամանակներում, թող որ այս վերջին օրերի պատերազմում մենք լինենք մի փարոս ողջ աշխարհի և, հատկապես, Աստծո զավակների համար, ովքեր ձգտում են Տիրոջ օրհնություններին: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Առաջին Նախագահություն, *Principles of the Gospel* (1943), i:
2. *Principles of the Gospel,* v, vii, viii.
3. *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 4.
4. Stephen L Richards, in *Principles of the Gospel,* 141.
5. «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Հնազանդությունը օրհնություններ է բերում

Ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք հնազանդ ենք Աստծո պատվիրաններին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան երախտապարտ եմ այս առավոտ ձեզ հետ լինելու համար: Պատիվ ունենալով խոսքս հղել ձեզ, ես ակնկալում եմ ձեր հավատքն ու աղոթքները:

Դարերի ընթացքում տղամարդիկ և կանայք գիտելիք և հասկացողություն են փնտրել այս մահկանացու գոյության, դրանում իրենց ունեցած տեղի և նպատակի մասին, փնտրելով խաղաղություն և երջանկություն: Մեզանից յուրաքանչյուրը փնտրում է այդ ամենը:

Այդ գիտելիքն ու հասկացողությունը մատչելի են ողջ մարդկությանը: Դրանք պարփակված են հավերժական ճշմարտությունների մեջ: Վարդապետություն և Ուխտեր, բաժին 1, հատված 39-ում կարդում ենք. «Ահա տես, Տերն Աստված է, և Հոգին վկայություն է բերում, և վկայությունը ճշմարիտ է, և ճշմարտությունը մնում է հավիտյանս հավիտենից»:

Բանաստեղծը գրել է.

Կանցնի երկինքը, կանցնի երկիրը,
Բայց կյանքի հիմքը և էությունը՝
Ճշմարտությունը կա հավիտյան:[1]

Ոմանք կհարցնեն. «Որտե՞ղ կարող ենք նման ճշմարտություն գտնել, և ինչպե՞ս հասկանանք այն»: 1833թ. մայիսին Օհայոյի Կիրկլանդում Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից տրված հայտնության մեջ Տերը հայտարարել է.

«Ճշմարտությունը գիտություն է բաների մասին, ինչպես որ կան, և ինչպես որ կային, և ինչպես որ կլինեն. . . .

Ճշմարտության Հոգին Աստծուց է: . . .

Եվ ոչ մի մարդ չի ստանում լրիվությունը, մինչև չի պահում նրա պատվիրանները:

Նա, ով պահում է [Աստծո] պատվիրանները, ստանում է ճշմարտություն և լույս, մինչև որ փառավորվի ճշմարտությամբ և իմանա բոլոր բաները»:[2]

Ինչպիսի փառահեղ խոստում: «Նա, ով պահում է [Աստծո] պատվիրանները, ստանում է ճշմարտություն և լույս, մինչև որ փառավորվի ճշմարտությամբ և իմանա բոլոր բաները»:

Այս լուսավորվածության դարաշրջանում, երբ ավետարանի լրիվությունը վերականգնվել է, դուք և ես կարիք չունենք ճամփորդելու անհայտ ծովերով և ճանապարհներով՝ ճշմարտության փնտրտուքներում: Սիրող Երկնային Հայրը գծել է մեր ուղին և տվել հուսալի ուղեցույց, որն է՝ *հնազանդությունը*: Ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք հնազանդ ենք Աստծո պատվիրաններին:

Մեր կյանքի ընթացքում մենք հնազանդություն ենք սովորում: Սկսած մանկուց, մեզ համար պատասխանատվություն կրողները ուղեցույցներ և կանոններ են սահմանում մեր ապահովության համար: Կյանքն ավելի հեշտ կլինի բոլորիս համար, եթե անվարան հնազանդվենք այդ կանոններին: Ինչևէ, մեզանից շատերն իրենց փորձից են սովորում հնազանդ լինելու իմաստությունը:

Երբ ես մեծանում էի, ամեն ամառ՝ հուլիսի սկզբից մինչև սեպտեմբերի սկիզբը մեր ընտանիքն ապրում էր Յուտայի Պրովո կիրճի Վիվյեն պուրակում գտնվող մեր տնակում:

Այդ անհոգ օրերի իմ լավագույն ընկերներից մեկը Դենի Լարսենն էր, նրանց ընտանիքը ևս սեփական տուն ուներ Վիվյեն պուրակում: Ամեն օր մենք երկուսով թափառում էինք այդ տղայի դրախտում, ձուկ որսալով առվակում և գետում, քարեր և այլ գանձեր հավաքելով, արշավելով, մագլցելով և պարզապես վայելելով ամեն օրվա ամեն ժամի ամեն րոպեն:

Մի առավոտ Դենին և ես որոշեցինք այդ օրը խառույկ վառել կիրճի մեր բոլոր ընկերների հետ: Մենք պետք է մաքրեինք մոտակա դաշտի տարածքը, որտեղ կարող էինք բոլորս հավաքվել: Դաշտը ծածկող հունիսյան խոտը չորացել էր և դարձել էր փշոտ, տեղանքն անհարմար դարձնելով մեր նպատակի համար: Սկսեցինք քաղել բարձր

խոտը, որպեսզի մաքրեինք մի մեծ կլոր տարածք: Ամբողջ ուժով ձգում ու քաշում էինք խոտը, բայց կարողացանք միայն շատ քիչ կամակոր մոլախոտեր հանել: Տեսնելով, որ դա մեր ամբողջ օրը կխլի, մեր եռանդն ու խանդավառությունն արդեն թույլանում էր:

Այդ պահին իմ ութամյա միտքն եկավ մի կատարյալ լուծում: Դենիին ասացի. «Կարող ենք վառել այս մոլախոտերը: Մենք պետք է *վառենք* այս շրջանակի մոլախոտերը»: Նա համաձայնեց և ես վազեցի մեր տնակ մի քանի լուցկի բերելու:

Եթե ձեզանից շատերը մտածեցին, որ այդ վաղ տարիքում մեզ թույլատրվել էր լուցկի օգտագործել, ասեմ, որ ինձ էլ, Դենիին էլ չէր թույլատրվում դրանք օգտագործել առանց մեծերի հսկողության: Մեզ երկուսիս էլ մշտապես զգուշացրել էին կրակի հետ խաղալու վտանգի մասին: Ինչևէ, ես գիտեի, թե որտեղ է մեր ընտանիքը պահում լուցկիները, և մենք պետք է մաքրեինք դաշտը: Առանց երկար մտածելու ես վազեցի մեր տնակ և վերցրեցի մի քանի լուցկու հատիկ, վստահ լինելով, որ ոչ ոք չտեսավ: Ես դրանք արագ թաքցրեցի գրպանումս:

Ես վազեցի Դենիի մոտ ոգևորված, որ իմ գրպանում ունեմ մեր խնդրի լուծումը: Հիշում եմ, մտածում էի, որ կրակը կայրի միայն այնքան, որքան մենք էինք ուզում, և ապա ինչ-որ կերպ հրաշքով ինքն իրեն կմարի:

Ես լուցկու հատիկը քսելով քարին, սկսեցի վառել հունիսյան խոտը: Այն այնպես բոցավառվեց, որ կարծես բենզինով ներծծված լիներ: Սկզբում Դենին և ես ոգևորվեցինք, տեսնելով ինչպես են մոլախոտերն անհետանում, բայց շուտով ակնհայտ դարձավ, որ կրակն ինքն իրեն չի հանգչի: Մենք խուճապի մատնվեցինք, երբ հասկացանք, որ չենք կարողանում այն մարել: Անկառավարելի կրակի բոցերը սկսեցին լափել լեռան լանջի վայրի խոտը, վտանգի ենթարկելով սոճիները և իրենց ճանապարհին ամեն ինչ:

Ի վերջո, մենք չունենալով ոչ մի տարբերակ, վազեցինք օգնություն կանչելու: Շուտով Վիվյեն պուրակի բոլոր տղամարդիկ և կանայք արագ ետ ու առաջ էին վազում խոնավ կտավներով հարվածելով կրակի բոցերին՝ փորձելով մարել այն: Մի քանի ժամ անց վերջին ածուխները մարեցին: Դարավոր սոճիները փրկվեցին, ինչպես նաև տները, որոնց արդեն հասնում էին կրակի բոցերը:

Այդ օրը Դենին և ես մի քանի բարդ, բայց կարևոր դասեր քաղեցինք, որոնց թվում էր հնազանդության կարևորությունը:

Կանոններ և օրենքներ կան, որոնք օգնում են պահպանել մեր ֆիզիկական գոյությունը: Նմանապես, Տերը տվել է ուղեցույցներ և պատվիրաններ, որոնք ապահովում են մեր հոգևոր անվտանգությունը, որպեսզի հաջողությամբ անցնենք այս ուխտադրուժ մահկանացու գոյությունը և, ի վերջո, վերադառնանք մեր Երկնային Հոր մոտ:

Դարեր առաջ, կենդանու զոհաբերության ավանդույթի մեջ ընկղմված սերնդին, Սամուելը համարձակորեն հայտարարեց. «Հնազանդությունը՝ զոհից լավ է, և ականջ դնելը՝ խոյերի ճարպիցը»:[3]

Այս ժամանակաշրջանում Մարգարե Ջոզեֆ Սմիթին Տերը հայտնել է, որ պահանջում է «սիրտն ու պատրաստակամ միտքը. և պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»:[4]

Հին և նոր մարգարեները իմացել են, որ հնազանդությունը կարևոր է մեր փրկության համար: Նեփին հայտարարել է. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»:[5] Թեպետ մյուսները երերում էին իրենց հավատքի և հնազանդության մեջ, Նեփին երբեք չթերացավ անել Տիրոջ կամքը: Արդյունքում, անթիվ սերունդներ օրհնվեցին:

Հնազանդության վերաբերյալ հուզիչ պատմություն է Աբրահամի և Իսահակի պատմությունը: Որքան ցավալի պետք է լիներ Աբրահամի համար, որը հնազանդվելով Աստծո պատվիրանին, Մորիայի երկիր տարավ զոհաբերելու իր սիրելի Իսահակին: Կարո՞ղ ենք պատկերացնել Աբրահամի սրտի ցավը, երբ նա գնում էր նշված վայրը: Անշուշտ, տառապանքը կեղեքում էր նրա մարմինը և տանջում նրա միտքը, երբ կապելով Իսահակին դրեց զոհասեղանի վրա և վերցրեց դանակը, որպեսզի սպաներ նրան: Առ Տերն ունեցած անսասան հավատքով և անվերապահ վստահությամբ, նա պատասխանեց Տիրոջ հրամանին: Որքա՜ն փառահեղ էր վճիռը և ինչպիսի՜ ուրախությամբ այն ընդունվեց. «Զեռքդ տղային մի դպցնիր, և նորան բան մի անիր, որովհետև հիմա իմացա, որ դու Աստուածանից վախենում ես. և քո մեկ հատիկ որդին ինձանից չխնայեցիր»:[6]

Աբրահամը փորձվեց և ստուգվեց, և իր հավատարմության ու հնազանդության համար Տերը նրան այս փառահեղ խոստումը տվեց. «Երկրի բոլոր ազգերը քո սերունդովը կօրհնուին. նորա համար որ իմ ձայնին ականջ դրիր»:[7]

Թեպետ մեզ չի պատվիրվում ապացուցել մեր հնազանդությունը նման ծանր և սրտակեղեք ձևով, մեզանից ևս պահանջվում է հնազանդություն:

1873թ. հոկտեմբերին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հայտարարել է. «Հնազանդությունը երկնային առաջին օրենքն է»:[8]

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Վերջին Օրերի Սրբերի երջանկությունը, խաղաղությունը, առաջընթացը, բարգավաճումը և այս ժողովրդի հավերժական փրկությունն ու վեհացումը պայմանավորված են Աստծո խորհուրդներին հնազանդորեն հետևելով»:[9]

Հնազանդությունը մարգարեների բնորոշ գիծն է, դարեր շարունակ այն ուժ և գիտելիք է տվել նրանց: Կարևոր է, որ գիտակցենք, որ մենք ևս իրավասու ենք ունենալ ուժի և գիտելիքի այդ աղբյուրը: Այսօր այն հասանելի է մեզանից յուրաքանչյուրին, եթե հնազանդվենք Աստծո պատվիրաններին:

Տարիների ընթացքում ես անթիվ մարդկանց եմ ճանաչել, ովքեր առանձնահատուկ ձևով հավատարիմ և հնազանդ են եղել: Ես օրհնվել և ոգեշնչվել եմ նրանցով:



Կուզենայի պատմել նրանցից երկուսի մասին:

Վոլտեր Կրաուսեն Եկեղեցու ամուր անդամ էր, ով իր ընտանիքի հետ ապրում էր Երկրորդ Համաշխարհայինից հետո այսպես կոչված Արևելյան Գերմանիայում: Թեպետ այդ ժամանակ աշխարհի այդ մասում ազատության պակասի պատճառով Եղբայր Կրաուսեն շատ դժվարությունների էր դիմակայել, նա սիրում և ծառայում էր Տիրոջը: Նա հավատարմորեն և բարեխղճորեն էր կատարում իրեն տրված յուրաքանչյուր հանձնարարություն:

Մյուս մարդը՝ Ջոհան Դենդորֆերը, որը ծննդով Հունգարիայից էր, Եկեղեցուն էր միացել Գերմանիայում և մկրտվել էր 1911 թվին՝ 17 տարեկան հասակում: Դրանից հետո շուտով նա վերադարձել էր Հունգարիա: Երկրորդ Համաշխարհայինից հետո նա բանտարկյալ էր իր հայրենի երկրի Դեբրեսեն քաղաքում: Հունգարիայի ժողովուրդը ևս կորցրել էր իր ազատությունը:

Եղբայր Վոլտեր Կրաուսեին, որը չէր ճանաչում Եղբայր Դենդորֆերին, հանձնարարություն ստացավ լինելու նրա տնային ուսուցիչը և կանոնավոր այցելելու նրան: Եղբայր Կրաուսեն զանգահարեց տնային ուսուցման իր զուգընկերոջը և ասաց. «Մեզ հանձնարարվել է այցելել Եղբայր Ջոհան Դենդորֆերին: Կկարողանա՞ք այս շաբաթ ինձ հետ գալ

նրան տեսակցելու և ավետարանի ուղերձը հանձնելու»: Ապա ավելացրեց. «Եղբայր Դենդորֆերն ապրում է Հունգարիայում»:

Նրա սարսափած զուգընկերը հարցրել էր. «Ե՞րբ ենք մեկնում»:

«Վաղը», - եղել էր Եղբայր Կրաուսեի պատասխանը:

«Ե՞րբ ենք տուն վերադառնալու»,- հարցրել էր զուգընկերը:

Եղբայր Կրաուսեն պատասխանել էր. «Մոտ մեկ շաբաթից, եթե տեղ *հասնենք*»:

Երկու տնային ուսուցիչները ճանապարհ ընկան, որպեսզի այցելեն Եղբայր Դենդորֆերին: Նրանք Գերմանիայի հյուսիս-արևելյան տարածքից գնացքով և ավտոբուսով հասան Հունգարիայի Դեբրեսեն քաղաք: Եղբայր Դենդորֆերը տնային ուսուցիչներ չէր ունեցել պատերազմից հետո: Այժմ, տեսնելով Տիրոջ ծառաներին, նա հուզվեց: Սկզբում նա չկամեցավ սեղմել նրանց ձեռքը, այլ գնաց ննջասենյակ և փոքր պահարանից հանեց մի տուփ, որտեղ պահում էր տարիների ընթացքում հավաքած տասանորդը: Նա տասանորդը տալով իր տնային ուսուցիչներին ասաց. «Այժմ, պարտավորություններ չունեմ Տիրոջ հանդեպ: *Հիմա* արժանի եմ սեղմել Տիրոջ ծառաների ձեռքը»: Ավելի ուշ Եղբայր Կրաուսեն ասաց ինձ, որ խոսքերը չեն կարող ներկայացնել իր հուզմունքը, երբ մտածում է, որ այդ հավատարիմ եղբայրը, որն Եկեղեցու հետ կապ չուներ երկար տարիներ, հնազանդորեն և կանոնավոր իր չնչին եկամտից պահել էր 10 տոկոսը, որպեսզի վճարեր իր տասանորդը: Նա հավաքել էր այդ գումարը չիմանալով, թե երբ պատիվ կունենար վճարել այն:

Եղբայր Կրաուսեն մահացավ ինը տարի առաջ 94 տարեկան հասակում: Իր կյանքի ընթացքում նա հավատարմորեն և հնազանդորեն է ծառայել և եղել է ոգեշնչման աղբյուր իմ և բոլոր իրեն ճանաչողների համար: Հանձնարարություններ ստանալիս նա երբեք հարցեր չէր տալիս, չէր տրտնջում և երբեք չէր արդարանում:

Իմ եղբայրներ և քույրեր, այս կյանքի մեծագույն փորձությունը

հնազանդությունն է: Տերն ասել է. «Դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:[10]

Փրկիչը հայտարարել է. «Քանզի բոլոր նրանք, ովքեր կամենում են օրհնություն ստանալ իմ ձեռքից, պիտի մնան օրենքի մեջ, որը նշանակվել է այդ օրհնության համար, և նրա պայմանների մեջ, ինչպես որ հաստատվել է աշխարհի հիմնադրումից առաջ»:[11]

Հնազանդության մեծագույն օրինակ է հանդիսանում մեր Փրկիչը: Նրա մասին Պողոսն ասել է.

«Թեև Որդի էր, այն չարչարանքներիցը հնազանդությունը սովորեց:

Եվ երբոր կատարուեցավ բոլոր իրան հնազանդողների համար հավիտենական փրկության պատճառ եղավ»:[12]

Փրկիչն Աստծո անկեղծ սերն է դրսևորել, ապրելով կատարյալ կյանքով, պատվելով Իր սրբազան առաքելությունը: Նա երբեք չի եղել գոռոզ, երբեք չի հպարտացել, երբեք չի դավաճանել: Միշտ եղել է խոնարհ, անկեղծ և հնազանդ:

Թեպետ Նա գայթակղվեց խաբեության վարպետի, այսինքն՝ դևի կողմից, թեպետ 40 օր ու գիշեր պահած ծոմից հետո ֆիզիկապես թույլ էր և քաղցած, երբ չարը Հիսուսին հրապուրիչ և գայթակղիչ առաջարկություններ արեց, Նա մեզ համար հնազանդության աստվածային օրինակ ծառայեց՝ հրաժարվելով շեղվել Իր իմացած ճիշտ ուղուց:[13]

Գեթսեմանիի հոգևարքի մեջ, երբ Նա կրում էր այնպիսի ցավ, որ Իր քրտինքը արյան մեծ կաթիլներով թափվում էր գետնին[14], Նա հնազանդ Որդու օրինակ ծառայեց ասելով. «Հայր, եթե կամիս այս բաժակը անցրու ինձանից. սակայն ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»:[15]

Ինչպես Փրկիչը հրահանգել է Իր վաղեմի Առաքյալներին, նույնկերպ Նա հրահանգում է ձեզ և ինձ. «Դու իմ ետևիցը եկ»: Արդյո՞ք մենք կամենում ենք հնազանդվել:[16]

Գիտելիքը, որ փնտրում ենք, պատասխանները, որ փափագում ենք, ուժը, որ ցանկանում ենք այսօր դիմակայելու բարդ ու փոփոխվող աշխարհի մարտահրավերներին, կարող ենք ձեռք բերել, պատրաստակամորեն հնազանդվելով Տիրոջ պատվիրաններին: Մեկ անգամ ևս մեջբերում եմ Տիրոջ խոսքերը. «Նա, ով պահում է [Աստծո] պատվիրանները, ստանում է ճշմարտություն և լույս, մինչև որ փառավորվի ճշմարտությամբ և իմանա բոլոր բաները»:[17]

Իմ խոնարհ աղոթքն է, որ մենք օրհնվենք հնազանդներին խոստացված հարուստ պարգևներով: Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. “Oh Say, What Is Truth?” *Hymns,* no. 272.
2. Վարդապետություն և Ուխտեր 93.24, 26–28:
3. Ա Թագավորաց 15.22:
4. Վարդապետություն և Ուխտեր 64.34:
5. 1 Նեփի 3.7:
6. Ծննդոց 22.12:
7. Ծննդոց 22.18:
8. Joseph F. Smith, “Discourse,” *Deseret News,* Nov. 12, 1873, 644.
9. Gordon B. Hinckley, “If Ye Be Willing and Obedient,” *Ensign,* Dec. 1971, 125.
10. Աբրահամ 3.25:
11. Վարդապետություն և Ուխտեր 132.5:
12. Եբրայեցիս 5.8–9:
13. Տես Մատթեոս 4.1–11:
14. Ղուկաս 22.44:
15. Ղուկաս 22.42:
16. Հովհաննես 21.22:
17. Վարդապետություն և Ուխտեր 93.28:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների քվորումի անդամ

«Հաւատո՛ւմ եմ, Տէր»

Անկեղծորեն ընդունեք ձեր հարցերն ու մտահոգությունները, բայց նախ՝ թեժացրեք ձեր հավատքի կրակը, քանի որ ամեն բան կարելի է նրանց, որ հավատում են:

Մի առիթով Հիսուսը հանդիպեց միխումբ մարդկանց, որոնք տաքացած վիճում էին իր աշակերտների հետ։Երբ Փրկիչը հետաքրքրվեց, թե ինչն էր պատճառը, մի չարչարված երեխայի հայր առաջ եկավ, ասելով, որ իր երեխային բերել էր, որ Հիսուսի աշակերտներն օրհնություն տան, բայց նրանք չէին կարողացել։ Տեսնելով որդուն ատամները կրճտացնելիս, բերանը փրփրելիս և գետինն ընկած թավալվելիս՝ հայրը դիմում է Հիսուսին, հավանաբար, հուսահատության վերջին ճիգի ձայնով.

«Եթէ մի բան կարող ես,- ասաց նա,- օգնիր մեզ՝ գթալով մեզ վերայ։

Յիսուսն էլ նորան ասեց. «Այն՝ եթէ կարող ես հաւատալ, ամեն բան կարելի է հաւատացողին։

Եւ շուտով տղայի հայրն աղաղակեց եւ արտասուքով ասեց, Հաւատում եմ, Տէր, իմ անհաւատութեանն օգնիր»։[1]

Այս մարդու նախնական համոզմունքը, ըստ իր խոստովանության, սահմանափակ է։ Բայց նա ունի հրատապ, ազդու ցանկություն իր միակ երեխայի համար։ Մեզ ասվել է, որ սկզբի համար դա բավական է. «Եթե դուք չեք կարող ավելին, քան *ցանկանալ հավատալ,*–հայտարարում է Ալման, – թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեր մեջ, մինչև որ դուք հավատաք»։[2] Չունենալով որևէ այլ հույս, այս հայրը հաստատում է իր ունեցած հավատը և աղերսում է աշխարհի Փրկչին. «Եթէ *դումի բան* կարող ես, օգնիր *մեզ*՝ գթալով *մեզ* վերայ»։[3] Ես հազիվ եմ կարդում այդ խոսքերն առանց լաց լինելու։ *Մեզ* հոգնակի դերանունն ակնհայտորեն միտումնավոր է օգտագործվում։ Այդ տղամարդու ասածն, իրականում, սա է. «Մեր ողջ ընտանիքն է աղերսում։ Մեր մաքառումը երբեք չի դադարում։ Մենք հյուծվել ենք։ Մեր որդին ընկնում է ջուրը։ Նա ընկնում է կրակի մեջ։ Նա մշտապես վտանգի մեջ է, և մենք միշտ վախեցած ենք։ Մենք չգիտենք ուրիշ ում դիմել։ Կարո՞ղ եք *դուք* օգնել մեզ։ Մենք երախտապարտ կլինենք *ցանկացած* օգնության համար՝ մասնակի օրհնություն, հույսի մի շող, այն բեռի մի փոքր բարձրացում, որ տանում է այս տղայի մայրն ամեն օր իր կյանքում»։

«Եթէ *դումի բան* կարող ես», հոր այս խոսքերին հնչում է. «Եթէ *դու* կարող ես *հաւատալ*» պատասխանը Վարդապետի կողմից։[4]

«Շուտով» ասում են սուրբ գրությունները՝ ո՛չ դանդաղ, ո՛չ թերահավատորեն, ո՛չ էլ քամահրանքով, այլ «շուտով» հայրը աղաղակում է իր անպաճույճ ծնողական ցավով. «Հաւատում եմ, Տէր, իմ անհաւատութեանն օգնիր»։[5]

Սուրբ գրային պատմության այս նրբազգաց ֆոնի վրա ես ցանկանում եմ դիմել անմիջապես եկեղեցու երիտասարդներին՝ թե տարիքով երիտասարդ, թե անդամության տարիներով երիտասարդ, թե հավատքի տարիներով երիտասարդ։ Այսպես, թե այնպես, այն պետք է որ ներառի գրեթե բոլորին։

Այս պատմության վերաբերյալ թիվ մեկ դիտարկումն այն է, որ կյանքի մարտահրավերին դիմակայելիս հայրը նախ՝ գործադրում է իր ուժերը, և հետո միայն խոստովանում իր թուլությունը։ Նրա առաջին հայտարարությունը դրական է և անվարան. «Հաւատում

եմ, Տէր»: Ես կասեի բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ավելացնել հավատքը, հիշե՛ք այս տղամարդուն: Վախի, կասկածի կամ մտահոգիչ ժամանակներում, կանգնեք այն հիմքի վրա, որն արդեն ունեք, նույնիսկ, եթե այդ հիմքը սահմանափակ է: Մահկանացու կյանքի աճի փորձառության ժամանակ՝ այս տղայի չարչարանքի հոգևոր համարժեքը կամ այս ծնողների հուսահատությունը բոլորիս կարող է վրա հասնել: Երբ այդ պահերը գան ու խնդիրներ ջրի երես գան, որոնց լուծումն անմիջապես չի ստացվում, *ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիքներ կգան:* Հենց այս միջադեպի առիթով, այս հրաշքի վերաբերյալ էր, որ Հիսուսն ասաց. «Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենաք, այս սարին կասեք փոխադրվիր այստեղից այնտեղ, ևնակփոխադրվի. կոչինչանկարելի չի լինի ձեզ համար»:[6] Հարցը ձեր հավատքի չափը կամ գիտելիքի աստիճանը չէ,– հարցը նվիրվածությունն է, որ դուք դրսևորում եք ձեր արդեն ունեցած հավատքի և ձեր արդեն իմացած ճշմարտության նկատմամբ:

Երկրորդ դիտարկումն առաջինի մեկ այլ տարբերակն է: Երբ խնդիրներ և հարցեր են առաջանում, հավատքի ձեր որոնումները մի սկսեք, ասելով, թե որքան շատ է այն ձեր մոտ *պակասում՝* կարծես «թերահավատություն» դրսևորելով: Դա նման է նրան, որ փորձենք հնդուհավը լցոնել կտուցի միջով: Թույլ տվեք պարզ ասել. ես ձեզ չեմ խնդրում չունեցած հավատք ձևացնել: *Իմ* խնդրանքը ձեր *ունեցած* հավատքին հավատարիմ լինելն է: Երբեմն, մենք կարծում ենք, որ կասկածի ազնիվ հայտարարությունը բարոյական քաջության ավելի բարձր դրսևորում է, քան հավատքի ազնիվ հայտարարությունը: Դա այդպես չէ: Այնպես որ եկեք բոլորս հիշենք սուրբ գրության պատմության հստակ ուղերձը. ձեր ունեցած հարցերի վերաբերյալ անկեղծ եղեք, ինչպես հարկն է. կյանքում դրանք շատ են՝ տարբեր թեմաներով: Մակայն, եթե դուք և ձեր ընտանիքը ցանկանում եք բժշկվել, թույլ մի տվեք, որ այդ հարցերը խոչընդոտեն հրաշք գործելու հավատքի ճանապարհը:

Բացի այդ, դուք ավելի շատ հավատք ունեք, քան կարծում եք՝ այն բանի շնորհիվ, ինչ Մորմոնի Գիրքը անվանում է «բազում ապացույցներ»:[7] «Իրենց պտուղներից նրանց ճանաչեք», ասել է Հիսուսը,[8] և Ավետարանով ապրելու ակնհայտ պտուղները ակնհայտ են Վերջին Օրերի Սրբերի կյանքում ամենուրեք: Ինչպես մի անգամ Պետրոսն ու Հովհաննեսն ասացին իրենց ունկնդիրներին, ես էլ ասում եմ ձեզ. «Մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չխոսել», և այն, ինչ տեսել ու լսել ենք «մի երևելի նշան է եղել» միլիոնավոր Եկեղեցու անդամների կյանքում: Դա հնարավոր չէ ժխտել:[9]

Եղբայրներ և քույրեր, սա աստվածային աշխատանք է՝ ընթացքի մեջ, որի նշաններն ու օրհնությունները առատորեն դրսևորվում են ամեն ուղղությամբ, ուստի, խնդրում եմ, պետք չէ չափազանց անհանգստանալ, երբ ժամանակ առ ժամանակ առաջանում են խնդիրներ, որոնք պետք է ուսումնասիրել, հասկանալ և լուծել: Խնդիրներ կան և կլինեն: *Այս եկեղեցում, այն, ինչ մենք գիտենք, միշտ ավելի կարևոր է նրանից, ինչ մենք չգիտենք: Եվ հիշեք, այս աշխարհում բոլորս պետք է քայլենք հավատքով:*

Ուստի, բարի եղեք մարդկային թուլությունների հանդեպ՝ ինչպես ձեր,այնպես էլ նրանց թուլությունների, ովքեր ձեզ հետ ծառայում են Եկեղեցում՝ կամավոր, մահկանացու տղամարդկանց և կանանց ղեկավարությամբ: Բացառությամբ իր կատարյալ Միածին Որդու, Աստծո ողջ ունեցածը անկատար մարդիկ են, ում հետ պետք է աշխատենք: Դա պետք է որ մեծ հուսախափություն լինի Նրա համար, բայց նա չի ընկճվում: Մենք էլ չպետք է ընկճվենք: Եվ երբ տեսնում եք անկատարություն, հիշեք, որ մարդկային սահմանափակումը այս աստվածային աշխատանքի էությունը *չէ*: Ինչպես առաջարկել է մի տաղանդավոր գրող, երբ աստվածային լիությունը հորդում է ցած, յուղի կորստի մեղքը յուղինը չէ, եթե պատճառը անոթների սահմանափակ տարողությունն է:[10] Այդ սահմանափակ անոթները ներառում են և՛ ինձ, և՛ ձեզ, այնպես որ եղեք համբերատար, բարի ու ներողամիտ:

Վերջին դիտարկումը՝ երբ կասկածը կամ դժվարությունը վրա են հասնում, մի՛ վախեցեք օգնություն խնդրել: Եթե փափագենք նույն խոնարհությամբ ու անկեղծությամբ, ինչպես տղայի

հայրն էր փափագում, մենք կարող ենք ստանալ: Այդպիսի ջերմեռանդ ցանկությունը սուրբ գրություններն անվանում են «անկեղծ միտում», որից հետևում է «սրտի ողջ նվիրվածությամբ, չգործել ոչ կեղծավորություն, ոչ էլ խաբեություն Աստծո առաջ»:[11] Ես վկայում եմ, որ ի պատասխան *նմանատիպ* թախանձանքի՝ Աստված օգնություն կուղարկի վարագույրի երկու կողմերից մեր համոզմունքն ամրապնդելու համար:

Ես ասացի, որ խոսքս հղում եմ երիտասարդներին: Ես էլ եմ դեռ երիտասարդ: 14-ամյա մի տղա վերջերս ինձ ասաց մի քիչ անվստահ. «Եղբայր Հոլանդ, ես դեռ չեմ կարող ասել, թե գիտեմ, որ Եկեղեցին ճշմարիտ է, բայց հավատում եմ, որ ճշմարիտ է»: Ես տղային ուժեղ գրկեցի, մինչև որ շնչակտուր էր լինում: Ես սրտիս ողջ կորովով ասացի նրան, որ *հավատքը* արժեքավոր բառ է, նույնիսկ ավելի թանկ գործողություն է, և նա երբեք չպետք է ներողություն խնդրի «միայն հավատալու» համար: Ես նրան ասացի, որ Քրիստոսն Ինքն ասաց. «Մի վախենար, բայց միայն հավատա»,[12] մի արտահայտություն, որը երիտասարդ Գորդոն Բ. Հինքլիին օգնեց ծառայել միսիան մինչև վերջ:[13] Այդ տղային ասացի, որ հավատքը միշտ համոզմունքին հասնելուառաջին քայլն է, և որ մեր հավաքական հավատքի հանգանակի յուրաքանչյուր կետ զորությամբ կրկնում է՝ «Մենք հավատում ենք»[14] արտահայտությամբ: Եվ ես ասացի նրան, թե որքան հպարտ եմ նրա ազնիվ որոնումների համար:

Այժմ, մոտ 60 տարի առաջադիմելով այն ժամանակից, երբ ես նոր հավատացող 14-ամյա պատանի էի, այժմ ես հայտարարում եմ որոշ բաներ, որոնք այժմ գիտեմ: Ես գիտեմ, որ Աստված մեր սիրող, ներողամիտ Երկնային Հայրն է՝ բոլոր ժամանակներում և բոլոր ձևերով և բոլոր պայմաններում: Ես գիտեմ, որ Հիսուսը Նրա միակ կատարյալ զավակն էր, ում կյանքը զոհաբերվեց սիրով՝ և՛ Հոր և՛ Որդու կամքի համաձայն, մեզանից բոլոր մնացածների փրկագնման համար, ովքեր կատարյալ չենք: Ես գիտեմ, որ Նա մահից հարություն է առել, որ կրկին ապրի, և Նրա շնորհիվ ես և դուք նույնպես կապրենք: Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը, ով խոստովանում էր, որ կատարյալ չէ,[15] այնուամենայնիվ, ընտրված գործիք էր Աստծո ձեռքում հավիտենական ավետարանը երկրի վրա վերականգնելու համար: Ես նաև գիտեմ, որ այդ գործը կատարելով, մասնավորապես, Մորմոնի Գիրքը թարգմանելով, նա ինձ ավելի շատ բան է սովորեցրել Աստծո սիրո, Քրիստոսի աստվածայնության և քահանայության զորության մասին, քան որևէ այլ մարգարե, ում ես կարդացել եմ, ում ճանաչել եմ, ում լսել եմ ողջ կյանքի փնտրտուքների ընթացքում: Ես գիտեմ, որՆախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, որն

անձնվիրաբար և ծածանվելով մոտենում է որպես Առաքյալ կարգման իր 50-ամյակին, մարգարեական այդ թիկնոցի լիիրավ իրավահաջորդն է այսօր: Այս համաժողովին մենք կրկին անգամ տեսանք այդ թիկնոցը նրա վրա: Ես գիտեմ, որ 14 մարդիկ, ում դուք աջակցում եք որպես մարգարեների, տեսանողների և հայտնողների,նրան աջակցում են իրենց ձեռքով, իրենց սրտով և անհատական առաքելական բանալիներով:

Այս բաները ես հայտարարում եմ ձեզ այն համոզմունքով, որը Պետրոսն անվանում էր «մարգարեական ավելի հաստատ խոսք»:[16] Այն, ինչ ժամանակին ինձ համար հավատքի փոքրիկ սերմ էր, աճելէ՝ կյանքի ծառ դարձել, այնպես որ, եթե ձեր հավատքը մի քիչ փորձվում է այսպահին կամ երբևէ ապագայում, ես հրավիրում եմ ձեզ հենվել իմ հավատքին: Ես գիտեմ, որայս աշխատանքը Աստծո իրական ճշմարտությունն է, և ես գիտեմ, որ միայն դժվար պահերին մենք թույլ կտանք, որ կասկածը կամ դևերը հեռացնեն ձեզ ճանապարհից: Շարունակե՛ք հուսալ: Շարունակեք առաջ գնալ: Անկեղծորեն ընդունեք ձեր հարցերն ու մտահոգությունները, բայց նախ և մշտապես՝ թեժացրեք ձեր հավատքի կրակը, քանի որ ամեն բան կարելի է նրանց, որ հավատում են: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մարկոս 9.22–24; տես նաև 14–21 հատվածները:
2. Ալմա 32.27; շեշտադրումն ավելացված է:
3. Մարկոս 9.22; շեշտադրումն ավելացված է:
4. Մարկոս 9.22, 23; շեշտադրումն ավելացված է:
5. Տես Մարկոս 9.24–27:
6. Մատթեոս 17.20:
7. Հելաման 5.50:
8. Մատթեոս 7.16:
9. Տես Գործք 4.16, 20:
10. Adapted from Alfred Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah,* 2 vols. (1883), 2:108.
11. 2 Նեփի 31.13:
12. Մարկոս 5.36:
13. Տես Gordon B. Hinckley, in Conference Report, Oct. 1969, 114.
14. Տես Հավատո Հանգանակը 1.1–13:
15. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 522.
16. Բ Պետրոս 1.19:

Երեց Դալլին Հ. Օքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Քրիստոսի հետևորդները

Քրիստոսին հետևելը պատահական կամ հազվադեպ գործընթաց չէ, այլ շարունակական նվիրվածություն և ապրելակերպ է, որը վերաբերում է բոլոր ժամանակներին և բոլոր վայրերին:

Մեր ամենասիրելի հիմներից մեկը սկսվում է այս բառերով.

«Եկ հետևիր ինձ»,- Փրկիչն ասաց:
Հետո եկեք Նրա հետքերով քայլենք,
Քանզի միայն այսպիսով կարող ենք լինել մեկ
Աստծո սիրելի, միածին Որդու հետ:[1]

Այս բառերը գրվել են շոտլանդացի նորադարձ Ջոն Նիկոլսոնի կողմից, ով ոգեշնչված է եղել Իր առաքյալներին ուղղված Փրկչի առաջին հրավերով (տես Մատթէոս 4.19): Մեր վաղ ղեկավարներից շատերի նման՝ նա ուներ թերի կրթություն, բայց խորը սեր մեր Փրկչի և փրկության ծրագրի նկատմամբ:[2]

Այս համաժողովի բոլոր ուղերձներն օգնել են մեզ քայլել Փրկչի հետքերով, ում օրինակը և ուսմունքները սահմանում են Հիսուս Քրիստոսի յուրաքանչյուր հետևորդի ճանապարհը:

Բոլոր Քրիստոնյաների նման՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներն ուսումնասիրում են մեր Փրկչի կյանքը՝ ինչպես որ պատմվում է Նոր Կտակարանի Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի և Յովհաննէսի գրքերում: Ես կվերանայեմ Սուրբ Աստվածաշնչի այս չորս գրքի օրինակներն ու ուսմունքները և կհրավիրեմ մեզանից յուրաքանչյուրին խորհել, թե ինչպես են Նրա վերականգնված Եկեղեցին և մեզանից յուրաքանչյուրը որակավորվում որպես Քրիստոսի հետևորդներ:

Հիսուսն ուսուցանել է, որ Աստծո արքայությունը մտնելու համար մկրտությունն անհրաժեշտ է (տես Յովհաննէս 3.5): Նա սկսեց Իր ծառայությունը մկրտվելով (տես Մարկոս 1.9), և Նա ու Նրա հետևորդները մկրտեցին մյուսներին (տես Յովհաննէս 3.22–26): Մենք անում ենք նույկերպ:

Հիսուսը սկսեց Իր քարոզը՝ հրավիրելով Իր լսողներին ապաշխարել (տես Մատթէոս 4.17): Մինչև հիմա դա Նրա ծառաների ուղերձն է աշխարհին:

Իր ծառայության ընթացքում Հիսուսը տվեց պատվիրաններ: Եվ Նա ուսուցանեց. «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք» ((Յովհաննէս 14.15; տես նաև 21, 23) հատվածները): Նա հաստատեց, որ Իր պատվիրանները պահելը կպահանջեր Իր հետևորդներից թողնել այն, ինչը Նա կոչում էր «մարդկանց առաջին բարձրը» (Ղուկաս 16.15) և «մարդկանց ավանդությունը» (Մարկոս 7.8; տես նաև 13 հատվածը): Նա նաև զգուշացրեց. «Եթէ այս աշխարհիցը լինէիք, ապա աշխարհքն իրանը կ'սիրեր. բայց որովհետև աշխարհիցը չէք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհից, նորա համար աշխարհքն ատում է ձեզ» (Յովհաննէս 15.19): Ինչպես Պետրոս Առաքյալն ավելի ուշ հայտարարեց՝ Հիսուսի հետևորդները պետք է լինեն «ընտիր ազգ» (Ա Պետրոս 2.9):

Վերջին Օրերի Սրբերը հասկանում են, որ մենք չպետք է լինենք «աշխարհիցից» կամ կապված «մարդկանց ավանդությանը», բայց, Քրիստոսի մյուս հետևորդների նման, մենք երբեմն դժվար ենք համարում սրանով հետևել Փրկչին: Որոշ մարդիկ ապրում են իրենց կյանքը երկրային ձևով, որովհետև, ինչպես Հիսուսն ասաց ոմանց մասին, ում ուսուցանում էր, «մարդկանց փառքն ավելի սիրեցին քան թէ Աստծուծոյ փառքը» (Յովհաննէս 12.43): Քրիստոսին հետևելու այս ձախողումներն այնքան բազմազան ու այնքան տարբեր են այստեղ թվարկելու համար: Դրանք ներառում են ամեն ինչ՝ սկսած աշխարհիկ սովորություններից՝ ինչպես քաղքենիությունը և հագուստի ու պահվածքի ծայրահեղությունները, մինչև հիմնական արժեքներից շեղումը՝ ինչպես ընտանիքի հավերժական բնույթն ու դերը:

Հիսուսի ուսմունքները չեն գրվել, որպեսզի մնան տեսական: Նրանք միշտ եղել են, որպեսզի ներգործվեն: Հիսուսն ուսուցանել է. «Արդ՝ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է և նորանց կատարում, կ'նմանեցնեմ նորան մի իմաստուն մարդի» (Մատթէոս 7.24; տես նաև Ղուկաս 11.28), և «Երանի այն ծառային, որ նորա տէրը, երբոր գայ, նորան

այնպէս անելիս գտնէ» (Մատթէոս 24.46)։ Մեկ այլ սիրելի հիմնում մենք երգում ենք.

Փրկիչ, կարո՛ղ եմ սովորել սիրել Քեզ,
Քայլել այն ճանապարհով, որ դու ես ցույց տվել, . . .
Փրկիչ, կարո՛ղ եմ սովորել սիրել Քեզ-
Տեր, ես կհետևեմ Քեզ։[3]

Ինչպես Հիսուսն ուսուցանել է, նրանք, ովքեր սիրում են Նրան, կպահեն Նրա պատվիրանները։ Նրանք կլինեն հնազանդ, ինչպես Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանեց այս առավոտ։ Քրիստոսին հետևելը պատահական կամ հազվադեպ գործընթաց չէ, այլ շարունակական նվիրվածություն և ապրելակերպ է, որը վերաբերում է բոլոր ժամանակներին և բոլոր վայրերին։ Երբ Փրկիչը սահմանեց հաղորդության (ինչպես մյուսներն են կոչում ուխտի) արարողությունը, Նա ուսուցանեց այս սկզբունքը և այն, թե ինչպես մեզ պետք է հիշեցնեն ու ամրացնեն, որպեսզի հետևենք դրան։ Ժամանակակից հայտնությունից գիտենք, որ Նա Իր հետևորդներին պատվիրել է ճաշակել այդ խորհրդանիշերից՝ ի հիշատակ Նրա (տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթէոս 26.22 [Մատթէոսի 26.26-ում ծանոթագրություն *զ*], 24, [Աստվածաշնչի հավելվածում]; Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մարկոս 14.21–24 [Աստվածաշնչի հավելվածում])։ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները հետևում են այդ պատվիրանին ամեն շաբաթ՝ հաճախելով երկրպագության ծառայության, որտեղ մենք ճաշակում ենք հացից ու ջրից և ուխտ ենք կապում, որ մենք միշտ կհիշենք Նրան և կպահենք Նրա պատվիրանները։

Հիսուսն ուսուցանել է, որ «մարդիկ ամէն ժամ պետք է աղօթեն» (Ղուկաս 18.1)։ Նա նաև սահմանեց այդ օրինակը, երբ «բոլոր գիշերն անցրեց աղօթք անելով դէպի Աստծուած» (Ղուկաս 6.12)՝ նախքան Իր Տասներկու Առաքյալներին կանչելը։ Մյուս Քրիստոնյաների նման, մենք աղոթում ենք մեր բոլոր երկրպագության ծառայությունների ժամանակ։ Մենք նաև աղոթում ենք առաջնորդության համար, և մենք ուսուցանում ենք, որ պետք է հաճախակի աղոթենք անհատապես և մեր ընտանիքի հետ ծնկի իջած։ Հիսուսի նման, մենք աղոթում ենք մեր Երկնային Հորը, և դա անում ենք Հիսուս Քրիստոսի սուրբ անունով։

Փրկիչը կանչեց Տասներկու Առաքյալներին, որպեսզի նրանք աջակցություն ցուցաբերեն Իր Եկեղեցում, և տվեց նրանց բանալիներն ու իշխանություն, որպեսզի Իր մահից հետո շարունակեն Իր աշխատանքը (տես Մատթէոսի 16.18–19; Մարկոսի 3.14–15; 6.7; Ղուկաս 6.13)։ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին՝ որպես Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցի, հետևում է այս օրինակին իր կառուցվածքով և Առաքյալներին բանալիների ու իշխանության շնորհումով։

Ոմանք, ում Հիսուսը կանչեց, որպեսզի հետևեն Իրեն, չպատասխանեցին անմիջապես, այլ հապաղեցին, որպեսզի հոգան սեփական ընտանեկան պարտականությունները։ Հիսուսը պատասխանեց, «Ոչ ով որ ձեռքը մաճի վերայ է դնում և ետևին մտիկ անում, յարմար չէ Աստուծոյ արքայութեան համար» (Ղուկաս 9.62)։ Շատ Վերջին Օրերի Սրբեր կիրառում են Հիսուսի ուսուցանած առաջնահերթությունը։ Սա ներառում է հազարավոր տարեց միսիոներների և այլոց հիանալի օրինակները, ովքեր թույլ են տվել իրենց երեխաներին ու թոռնիկներին կատարել միսիոներական պարտականություններ, որի համար կանչվել են։

Հիսուսն ուսուցանել է, որ Աստված արու և էգ ստեղծեց նրանց, և որ *մարդ* իր հորը և մորը կթողնե, և իր *կնոջը* կհարե (տես Մարկոս 10.6–8)։ Մեր նվիրվածությունն այս ուսմունքին հայտնի է։

Կորուսյալ ոչխարի ծանոթ առակում Հիսուսն ուսուցանեց, որ մենք պետք է անենք այն, ինչ կարող ենք, որպեսզի ետ բերենք նրան, ով մոլորվել է հոտից (տես Մատթէոս 18.11–14; Ղուկաս 15.3–7)։ Ինչպես գիտենք, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մեծ շեշտադրում է կատարել այս ուղղությամբ իր անմոռանալի օրինակով և մեզ ծանոթ կանանց ու տղամարդկանց փրկելու մասին ուսմունքներով։[4]

Փրկելու և ծառայելու մեր ջանքերում մենք հետևում ենք մեր Փրկչի եզակի օրինակին և սիրո մասին գորովալից ուսմունքներին. «Սիրիր քո ընկերին քո անձի պէս» (Մատթէոս 22.39)։ Նա նույնիսկ պատվիրել է մեզ սիրել մեր թշնամիներին (տես Ղուկաս 6.27–28)։ Եվ Իր մահկանացու ծառայության վերջում Իր հիանալի ուսմունքներում Նա ասել է.

«Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք։

Սորանով կ՚գիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար

վերայ սէր ունենաք» (Յովհաննէս 13.34–35)։

Որպես միմյանց սիրելու մաս՝ Հիսուսն ուսուցանել է, որ երբ մարդիկ անարդար լինեն մեր նկատմամբ, մենք պետք է ներենք նրանց (տես Մատթէոս 18.21–35; Մարկոս 11.25–26; Ղուկաս 6.37)։ Մինչ շատերն աշխատում են այս դժվար պատվիրանի վրա՝ մենք բոլորս գիտենք Վերջին Օրերի Սրբերի ոգեշնչող օրինակների մասին, ովքեր ցուցաբերել են սիրալիր ներողամտություն՝ նույնիսկ ամենալուրջ սխալների նկատմամբ։ Օրինակ՝ Քրիս Վիլյամսը ապավինեց առ Հիսուս Քրիստոս իր հավատքին, որպեսզի ներեր հարբած վարորդին, ով դարձել էր իր կնոջ և իրենց երկու երեխաների մահվան պատճառը։ Ողբերգությունից միայն երկու օր անց և դեռ խորապես հուսահատ, այս ներողամիտ մարդը, ով այդ ժամանակ ծառայում էր որպես եպիսկոպոս, ասաց, «Որպես Քրիստոսի հետևորդ՝ ես ոչ մի այլընտրանք չունեի»։[5]

Ինչպես Հիսուսն ուսուցանել է, շատ Քրիստոնյաներ օգնում են աղքատներին և կարիքավորներին (տես Մատթէոս 25.31–46; Մարկոս 14.7)։ Մեր Փրկչի այս ուսմունքին հետևելու մեջ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին և նրա անդամները գերազանցում են։ Մեր անդամները կատարում են առատաձեռն նվիրատվություններ բարեգործական կազմակերպություններին և մատուցում են անձնական ծառայություններ և այլ նվերներ աղքատների ու կարիքավորների համար։ Ավելին, մեր անդամներն ամեն ամիս երկու ճաշի չափով ծոմ են պահում և նվիրաբերում են առանվազն այս ճաշերի արժեքը՝ որպես ծոմի նվիրատվություն, որը մեր եպիսկոպոսները և ճյուղի նախագահները կիրառում են մեր կարիքավոր անդամներին օգնելու համար։ Սովածներին օգնելու համար մեր ծոմապահությունը գթության արարք է, այն մեզ հոգեպես ամրացնում է, երբ կատարվում է մաքուր մտադրությամբ։

Ավելի քիչ հայտնի է մեր Եկեղեցու գլոբալ մարդասիրական ծառայությունը։ Օգտագործելով առատաձեռն անդամների կողմից նվիրաբերված միջոցները՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ուղարկում է սնունդ, հագուստ և այլ կարևոր պարագաներ, որպեսզի մեղմացնի ամբողջ աշխարհի չափահասների և երեխաների տանջանքները։ Այս մարդասիրական նվիրատվությունները, որոնք վերջին տասնամյակի ընթացքում կազմում են հարյուրավոր միլիոններ, կատարվում են անկախ կրոնից, ռասայից կամ ազգությունից։

2011թ.-ի Ճապոնիայի երկրաշարժին ու ցունամիին հետևող մեր զանգվածային օգնության ջանքերն ապահովեցին կանխիկ 13 միլիոն դոլար և օգնության պարագաներ։ Ի լրումն, ավելի քան 31000 Եկեղեցու կողմից հովանավորվող կամավորներ կատարեցին ավելի քան 600000 ժամի ծառայություն։ Արևելյան Միացյալ Նահանգներում Սենդի մրրիկի պատճառով տուժածներին մեր մարդասիրական օգնությունն ապահովեց զանազան միջոցների մեծ նվիրատվություններով՝ գումարած մաքրման ծառայության գրեթե 300000 ժամ Եկեղեցու մոտ 28,000 անդամի կողմից։ Նախորդ տարում, շատ այլ օրինակների կողքին, Աֆրիկյան Չադ երկրի փախստականների համար մենք ապահովեցինք 300000 ֆունտ (136000 կգ) հագուստ և կոշկեղեն։ Վերջին 25 տարիների ընթացքում մենք օգնել ենք մոտ 30 միլիոն մարդկանց 179 երկրներում։[6] Իսկապես որ, «Մորմոն» կոչվող մարդիկ գիտեն ինչպես օգնել աղքատին ու կարիքավորին։

Իր վերջին աստվածշնչյան ուսմունքում մեր Փրկիչը պատվիրեց Իր հետևորդներին հասցնել Իր ուսմունքներն ամեն ազգի ու ամեն էակի։ Սկսած վերականգնումից՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին փորձել է հետևել այդ ուսմունքին։ Նույնիսկ երբ մենք աղքատ և պայքարող նոր եկեղեցի էինք՝ միայն մի քանի հազար անդամներով, մեր վաղ ղեկավարները միսիոներներ էին ուղարկում օվկիանոսներից այն կողմ, արևելք ու արևմուտք։ Որպես ժողովուրդ՝ մենք շարունակում ենք ուսուցանել Քրիստոնեական ուղերձը մինչև այսօր, երբ մեր անզուգական միսիոներական ծրագիրն ունի ավելի քան 60,000 լիաժամկետ միսիոներներ, ինչպես նաև հազարավոր կարճաժամկետ միսիոներներ։ Մենք ունենք միսիոներներ ավելի քան 150 երկրներում և տարածքներում՝ ամբողջ աշխարհում տարածված։

Իր մեծ Լեռան Քարոզի վերջում Հիսուսն ուսուցանեց. «Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը որ երկնքումն է, կատարեալ է» (Մատթէոս 5.48)։ Այս ուսմունքի նպատակը և մեր Փրկչին հետևելու նպատակը Հորը մոտենալն է, ում մասին մեր Փրկիչը ասում էր՝ «իմ Հայրը և ձեր Հայրը; և . . . իմ Աստուածը և ձեր Աստուածը» (Յովհաննէս 20.17)։

Վերականգնված ավետարանին յուրահատուկ հայտնությունից գիտենք, որ այս ուսմունքները Հայր Աստծո՝ Իր զավակների փրկության ծրագրի մի մասն են։ Այդ ծրագրի ներքո՝ մենք բոլորս մեր երկնային ծնողների *ժառանգներն* ենք։ «Աստուծոյ որդիք ենք»,- ուսուցանել է Պողոս Առաքյալը,- «և եթէ որդիք՝ ապա ժառանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ» (Հռովմայեցիս 8.16–17)։ Սա նշանակում է, ինչպես մեզ ասվել է Նոր Կտակարանում, որ մենք «ժառանգ [ենք]. . . հավիտենական կյանքի» (Տիտոս 3.7) և եթե մենք մոտենանք Հորը, մենք պետք է «ժառանգենք ամէնը» (Հայտնություն 21.7) – այն ամենը, ինչ Նա ունի – մի հասկացողություն, որ մեր մահկանացու մտքերը հազիվ են կարողանում ըմբռնել։ Բայց, համենայն դեպս, մենք կարող ենք հասկանալ, որ նվաճել այս առավելագույն ճակատագիրը հավերժությունում հնարավոր է միայն, եթե մենք հետևենք մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, ով ուսուցանել է, որ «Ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով» (Յովհաննէս 14.6)։ Մենք փորձում ենք հետևել Նրան և ավելի շատ նմանվել Նրան, այստեղ և հետագայում։ Այսպիսով, դա այն է, ինչ

«Եկ հետևիր ինձ» մեր հիմնի վերջին հատվածներում մենք երգում ենք.

Բավակա՞ն է միայն գիտենալ,
Որ մենք պետք է հետևենք նրան այստեղ,
Մինչ ճամփորդում ենք արցունքների այս հովտով:
Ոչ, սա տարածվում է դեպի ավելի սրբազան տեղեր:. . .

Քանզի զահերը, իշխանությունները, թագավորությունները, զորությունները,
Եվ մեծ փառքն ու երանությունը մերն են,
Եթե մենք հավերժության ընթացքում
Հնազանդվենք Նրա խոսքերին՝ «Եկ հետևիր ինձ»:[7]

Ես վկայում եմ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին, ում ուսմունքներին և օրինակին մենք ձգում ենք հետևել: Նա հրավիրում է բոլորին, ովքեր հուսահատ են, գալ դեպի Նա, սովորել Նրանից, հետևել Նրան և այսպիսով գտնել հանգստություն մեր հոգիների համար (տես Մատթէոս 4.19; 11.28): Ես վկայում եմ Նրա ուղերձի ճշմարտացիության և Նրա վերականգնված Եկեղեցու աստվածային առաքելության և իշխանության մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "Come, Follow Me," *Hymns,* no. 116.
2. Տես Karen Lynn Davidson, *Our Latter-day Hymns: The Stories and the Messages* (1988), 142–43, 419.
3. "Lord, I Would Follow Thee," *Hymns,* no. 220.
4. Տես, օրինակ, Heidi S. Swinton, *To the Rescue: The Biography of Thomas S. Monson* (2010), 149–61; Thomas S. Monson, "To the Rescue," *Liahona,* July 2001, 57–60.
5. Chris Williams, in Jessica Henrie, "Father Relies on Faith to Forgive Intoxicated Teen Driver," *Deseret News,* Aug. 1, 2012, deseretnews.com/article/865559847/Let-It-Go-Chris-Williams-shares-his-story-of-tragedy-and-forgiveness.html; see also Chris Williams, *Let It Go: A True Story of Tragedy and Forgiveness* (2012).
6. Տես "Emergency Response: Church Assists Worldwide," *Church News,* Mar. 9, 2013, 9; Welfare Services Emergency Response, "2012 Year in Review," 8.
7. *Hymns,* no. 116.

Քրիստոֆել Գոլդեն Կրտսեր
Յոթանասունից

Հայրը և Որդին

Հիսուս Քրիստոսի ավետարանի կենտրոնական սկզբունքն ու դրա փրկելու զորությունը Հոր և Որդու մասին ճիշտ ըմբռնումն է:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես երախտապարտ եմ խոսքս ուղղել ձեզ այս կեսօրին, ոգեշնչող գերագույն համաժողովի այս միջավայրում:

Խոսելով ինձ համար մի շատ սրբազան թեմայի մասին՝ առաջին հերթին ես կցանկանայի երախտագիտությամբ ընդունել ողջ պատմության ընթացքում շատ Քրիստոնյաների՝ այդ թվում ֆրանսիացի բողոքական և իռլանդացի կաթոլիկ իմ նախահայրերի նվիրվածությունը: Հանուն իրենց հավատքի և Աստծո երկրպագության՝ նրանցից շատերը զոհաբերեցին պաշտոն, ունեցվածք և նույնիսկ իրենց կյանքը՝ ի պաշտպանություն իրենց Աստծո և իրենց կրոնի:[1]

Որպես Վերջին Օրերի Սրբեր և Քրիստոնյաներ՝ մենք նույնպես ունենք ամուր և խորը հավատք առ Աստված՝ Հավերժական Հայրը և Նրա Որդի Հիսուս Քրիստոս: Աստծո նկատմամբ նվիրվածությունը միշտ մնում է որպես սրբազան և

անհատական հարց մեզանից յուրաքանչյուրի և մեր Արարչի միջև:

Հավերժական կյանքի մեր որոնումը ոչինչ է, քան պարզապես ձգտում՝ հասկանալու, թե ով է Աստված, և որ վերադառնանք ապրելու Նրա հետ: Փրկիչն աղոթեց Իր Հորը. «Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. և նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին»:[2]

Նույնիսկ հենց Իր՝ մեր Փրկչի կողմից կատարված հայտարարությունը հասկանալով՝ Հոր և Որդու էության մասին տարածված տեսակետը շատ դարերի ընթացքում և ողջ մարդկության մեջ ակնհայտորեն չի համապատասխանում սուրբ գրությունների ուսմունքների հետ:

Մենք հարգալից կերպով հաստատում ենք, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանի կենտրոնական սկզբունքն ու դրա փրկելու զորությունը Հոր և Որդու մասին ճիշտ ըմբռնումն է:[3]

Հիսուս Քրիստոսի ավետարանի այս ամենահիմնարար սկզբունքի կարևորությունը հաստատվում է Մարգարե Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի միջոցով, 1820թ.-ին: Մարգարեն գրել է. «Ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան*»:[4]

Պատանի Ջոզեֆի այս փորձառությունը, որին հետևեցին շատ ուրիշ տեսիլքներ և հայտնություններ, բացահայտում է, որ Աստված իրականում գոյություն ունի; Հայրը և Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը, երկու առանձին և տարբեր էակներ են; մարդը ստեղծվել է Աստծո պատկերով; մեր Երկնային Հայրը բառացիորեն Հիսուս Քրիստոսի հայրն է; Աստված շարունակում է Իրեն հայտնի դարձնել մարդուն; Աստված միշտ մոտ է և հետքրքրված է մեզանով; Նա պատասխանում է մեր աղոթքներին:

Չնայած Հոր և Որդու նմանատիպ հայտնությունները սուրբ գրություններում համեմատաբար քիչ են՝ Առաջին Տեսիլքի նշանավոր փաստն այն է, որ այն այնքան լավ է համաձայնվում սուրբ գրություններում այլ գրառումների հետ:

Նոր Կտակարանում, օրինակ, մենք կարդում ենք Ստեփաննոսի վերջին վկայությունը իր չարչարանքների ժամանակ: Նա ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացուած, և Մարդի Որդին կանգնած Աստուծոյ աջ կողմումը»:[5]

Պատմոս կղզու հզոր տեսիլքում Հովհաննես Առաքյալը տեսնում է. «ամենակարող Տեր Աստծուն»,[6] ինչպես նաև Աստծո Գառին, ով «[Իր] արյունովը մեզ [գնեց]»:[7]

Հոր և Որդու մասին վարդապետությունը Մորմոնի Գրքում Սուրբ Աստվածաշնչի հետ մեկտեղ կանգնում է փառահեղ վկայությամբ: Մորմոնի Գիրքն արձանագրում է մեր Փրկչի այցելությունը Նեփիացիներին, որտեղ Հոր ձայնը մոտ 2,500 Նեփիացիների առկայությամբ ներկայացնում է հարություն առած Քրիստոսին. «Ահա իմ Սիրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը, լսե՛ք նրան»:[8]

Չորս ավետարաններում Քրիստոսն Ինքը դիմում է Իր Երկնային Հորը 160 անգամ, մինչ Նեփիացիների մեջ Իր կարճատև երեքօրյա ծառայության ընթացքում, ինչպես գրառված է Մորմոնի Գրքում, Նա հիշատակում է Իր Հորը 122 անգամ:

Օրինակ՝ Մատթէոսի գրքում Հիսուսն ասում է. «Ոչ թէ ամեն ինձ Տէ՛ր, Տէ՛ր ասողը կմտնէ երկնքի արքայութիւնը. այլ նա որ կատարում է *իմ Հօր* կամքը, որ երկնքումն է»:[9]

Հովհաննեսի գրքում Նա վկայում է. «Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չտեսնէ *Հօրն* անելիս»:[10]

Եվ Ղուկասի գրքում Նա բացականչում է. «*Հայր,* հոգիս քո ձեռն եմ աւանդում»:[11]

Ամեն անգամ, երբ մեր Տերը դիմում է Իր Երկնային Հորը, Նա անում է դա մեծագույն ակնածանքով և հնազանդությամբ:

Սա ասելով՝ ես հույս ունեմ, որ որևէ տարաձայնություն չի լինի: Հիսուս Քրիստոսը մեծ Եհովան է, Իսրայելի Աստվածը, խոստացված Մեսիան, և Իր անսահման Քավության շնորհիվ Նա մեր Փրկիչն է և աշխարհի Քավիչը: Նրա մասին Պողոս Առաքյալը հայտարարել է. «Եւ յետոյ վախճանը, երբ որ [Քրիստոսը] թագաւորութիւնը Աստուծուն և Հօրը կտայ. Երբոր [Քրիստոսը] կխափանէ ամեն իշխանութիւնը և ամեն պետութիւնը և զօրութիւնը»:[12]

Փրկչի Քավության նախօրեին Նա Իր Հորն ասաց Իր մեծ Միջնորդական Աղոթքը: Նա աղոթեց.

«Բայց ոչ թէ միայն նորանց [այլ կերպ ասած՝ Իր Առաքյալների] համար եմ աղաչում, այլ նորանց համար էլ, որ նորանց խօսքովը կհաւատան ինձ;

Որ ամենքը *մէկ* լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում, և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում *մէկ լինեն*. որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղարկեցիր ինձ:

«Եւ ես այն փառքն՝ որ ինձ տուիր՝ նորանց տուի, որ մէկ լինեն՝ ինչպէս մենք էլ մէկ ենք»:[13]

Հայրը և Որդին ակնհայտորեն առանձին էակներ են, բայց Նրանք կատարելապես միավորված են և մեկ են զորությամբ և նպատակով: Նրանց միասնությունը վերապահված չէ միայն Իրենց համար. այլ Նրանք ցանկանում են այս նույն միասնությունը յուրաքանչյուրի համար, ով նվիրվածությամբ կհետևի և կհնազանդվի Իրենց պատվիրաններին:

Ինչպե՞ս կարող է ջանասիրաբար Աստծուն փնտրողը ծանոթանալ Հոր և Որդու հետ: Մեր Փրկիչը

խոստացավ. «Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, . . . ամեն բան կսովորեցնէ ձեզ»:[14]

Մորմոնի Գրքում Նեփիին, Քրիստոսի վարդապետության մասին խոսելիս, հայտարարեց, որ Սուրբ Հոգին «վկայում է Հոր և Որդու մասին»:[15]

Ճշմարիտ է, որ Տիրոջ կամքով Սուրբ Հոգու զորությունը կամ ազդեցությունը երբեմն ցանկացած մարդ, անկախ իր կրոնական համոզմունքից, կարող է զգալ: Բայց Սուրբ Հոգու լրիվ չափը կամ պարգևը գալիս է միայն այն ժամանակ, երբ մարդը «կոտրված սրտով և փշրված հոգով»[16] ստանում է մկրտության արարողությունները և ձեռնադրման միջոցով Սուրբ Հոգու[17] պարգևը: Այս և այլ սրբազան արարողություններ կարող են կատարվել միայն Աստծո քահանայության առաջնորդության և զորության ներքո: Այս մասին մենք ուսուցանվում ենք.

«Եվ այս մեծագույն քահանայությունը սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ Աստծո գիտության բանալիները:

Հետևաբար, նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[18]

Այս ըմբռնմամբ, Հոր և Որդու վարդապետությունը հավերժական ընտանիքի վարդապետությունն է: Յուրաքանչյուր մարդկային էակ նախապես գոյություն է ունեցել որպես երկնային ծնողների հոգևոր զավակ,[19] որտեղ Քրիստոսն եղավ Հոր Առաջնեկը այս երկնային ընտանիքում:[20]

Դա վերաբերում է մեզ բոլորիս: Մենք մեր Երկնային Հոր զավակներն ենք:

Նախագահ Էզրա Թավթ Բենսոնը մարգարեական ներըմբռնմամբ ասել է. «Երբ անցնենք վարագույրից այն կողմ, ոչինչ մեզ չի զարմացնի ավելի շատ, քան հասկանալը, թե որքան լավ ենք ճանաչում մեր [Երկնային] Հորը, և թե որքան ծանոթ է մեզ նրա դեմքը»:[21]

Ես սովորել եմ, որ մարդկային լեզվով հնարավոր չէ արտահայտել այն բաները, որոնք հայտնի են դարձվում Սուրբ Հոգով և Աստծո զորությամբ: Այս ոգով է, որ ես բերում եմ իմ կարևոր վկայությունը մեր Հավերժական Հոր և Իր սուրբ Որդու՝ Հիսուս Քրիստոսի իսկության, մոտ լինելու և բարության մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Kenneth Scott Latourette, *A History of Christianity, Volume 1: Beginnings to 1500,* rev. ed. (1975) and *A History of Christianity, Volume 2: Reformation to the Present,* rev. ed. (1975); see also Diarmaid MacCulloch, *The Reformation* (2003).
2. Յովհաննու 17.3:
3. Տես *Lectures on Faith* (1985), 38–44.
4. Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.17:
5. Գործք 7.56:
6. Հայտնություն 4.8:
7. Հայտնություն 5.9:
8. 3 Նեփի 11.7:
9. Մատթէոս 7.21; շեշտադրումն ավելացված է:
10. Յովհաննու 5.19; շեշտադրումն ավելացված է:
11. Ղուկաս 23.46; շեշտադրումն ավելացված է:
12. Ա. Կորնթացիս 15.24: Փրկչի և Նրա առաքելության մասին ավելին ըմբռնելու համար տես «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Լիահոնաս,* ապր. 2000, 2–3:
13. Յովհաննու 17.20–22; շեշտադրումն ավելացված է:
14. Յովհաննու 14.26:
15. 2 Նեփի 31.18:
16. 3 Նեփի 9.20; Մորոնի 6.2:
17. Տես Յովհաննու 3.5; 3 Նեփի 11.31–38:
18. Վարդապետություն և Ուխտեր 84.19–20:
19. Տես «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիահոնաս,* նոյ. 2010, 129:
20. Տես Կողոսացիս 1.15; Վարդապետություն և Ուխտեր 93.21:
21. Էզրա Թաֆթ Բենսոն, “Jesus Christ—Gifts and Expectations,” in *Speeches of the Year, 1974* (1975), 313; see also “Jesus Christ—Gifts and Expectations,” *Tambuli,* May 1977, 24:

Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլա
Յոթանասունից

Տուն՝ կյանքի դպրոց

Դասերը սովորում են տանը՝ այն վայրում, որը կարող է դառնալ երկնքի մի մասնիկ այստեղ՝ երկրի վրա:

Որոշ ծնողներ արդարացնում են իրենց տանը գործած սխալները նրանով, որ չկա այնպիսի մի դպրոց, որտեղ իրենց կսովորեցնեն, թե ինչպես լինել ծնող:

Իրականում, նման դպրոց գոյություն ունի և այն կարող է լինել լավագույն դպրոցը: Այդ դպրոցը կոչվում է *տուն*:

Երբ ես ետադարձ հայացք եմ գցում իմ կյանքին, ես վերհիշում եմ փայփայած պահերը, որոնք ապրել եմ իմ կնոջ հետ: Երբ ես ձեզ հետ կիսվեմ այս հիշողություններով, դուք, մի գուցե, հիշեք ձեր սեփական փորձառությունները՝ և ուրախ, և տքուր. մենք սովորում ենք այդ բոլորից:

1. Տաճարն է վայրը

Երբ ես վերադարձա իմ միսիայից, հանդիպեցի մինչև գոտկատեղը հասնող երկար սև մազերով մի գեղեցիկ երիտասարդ կնոջ: Նա ուներ մեծ մեղրագույն աչքեր և վարակիչ ժպիտ: Նա ինձ գերեց առաջին իսկ պահից:

Իմ կինը նպատակ էր դրել ամուսնանալ տաճարում, չնայած, որ այն ժամանակ ամենամոտ տաճարը պահանջում էր 4000 մղոն (6400 կմ) ճամփորդություն:

Մեր քաղաքացիական ամուսնության արարողությունը և ուրախ էր, և տխուր, քանի որ մենք ամուսնացանք միայն այս կյանքի համար: Պաշտոնատար անձը արտասանեց «Եվ այժմ ես հայտարարում եմ ձեզ ամուսին և կին» բառերը, սակայն անմիջապես դրանից հետո նա ասաց. «Մինչև մահը կբաժանի ձեզ»:

Ուստի, զոհաբերության միջոցով մենք խնայեցինք բավականաչափ գումար, որ գնեինք մեկ ուղղությամբ տոմս դեպի Մեսա Արիզոնա Տաճար:

Տաճարում մենք ծնկի եկանք զոհասեղանի մոտ և իշխանություն կրող ծառայողն արտասանեց այն բառերը, որոնք ես ցանկանում էի լսել, որոնք մեզ հայտարարեցին ամուսին և կին ժամանակի և հավերժության համար:

Մեր ընկերներից մեկը տարավ մեզ Կիրակնօրյա Դպրոց: Ժողովի ընթացքում նա կանգնեց և մեզ ներկայացրեց դասարանին: Երբ դասն ավարտվեց, մի եղբայր մոտեցավ ինձ և սեղմեց իմ ձեռքը, թողնելով այնտեղ 20 դոլարի մի թղթադրամ: Կարճ ժամանակ անց մեկ այլ եղբայր ևս մոտեցավ ինձ, և, ի զարմանս ինձ, նա նույպես մի թղթադրամ թողեց իմ ձեռքում: Ես արագ հայացքով փնտրեցի իմ կնոջը, ով գտնվում էր սենյակի մյուս ծայրում, և բղավեցի. «Բլանկի, սեղմիր բոլորի ձեռքերը»:

Շուտով մենք բավականաչափ գումար հավաքեցինք Գվատեմալա վերադառնալու համար:

«Մելեստիալ փառքի մեջ կա երեք երկինք կամ աստիճան.

Եվ ամենաբարձրին հասնելու համար մարդ պետք է մտնի քահանայության այս կարգի մեջ»:[1]

2. Վիճաբանության համար անհրաժեշտ է երկու մարդ

Իմ կնոջ նշանաբաններից մեկը եղել է հետևյալը. «Վիճաբանության համար քեզ անհրաժեշտ է երկու մարդ, և ես երբեք չեմ լինի նրանցից մեկը»:

Տերը պարզ կերպով նկարագրել է հատկանիշները, որոնք պետք է առաջնորդեն մեզ այլ մարդկանց հետ շփվելիս: Դրանք են՝ համոզումը, երկայնամտությունը, մեղմությունը, հեզությունը և անկեղծ սերը:[2]

Ֆիզիկական բռնությունն ավելի հազվադեպ է սկսել հանդիպել, և մենք ուրախ ենք դրա համար: Այնուամենայնիվ, մենք դեռևս հեռու ենք էմոցիոնալ բռնությունը բացառելուց: Այս տեսակի բռնության արդյունքում առաջացած վնասը մնում է մեր հիշողության մեջ երկար ժամանակ, այն խոցում է մեր անհատականությունը, այն ատելություն է սերմանում մեր սրտերում, այն ցածրացնում է մեր ինքնահարգանքը և լցնում մեզ վախով:

Մելեստիալ ամուսնության արարողությանը մասնակցելը բավական չէ: Մենք նաև պետք է ապրենք սելեստիալ կյանքով:

3. Երեխան, որն երգում է, երջանիկ երեխա է

Սա մեկ այլ նշանաբան է, որն իմ կինը հաճախ է մեջբերում:

Փրկիչը հասկանում էր սուրբ երաժշտության կարևորությունը: Սուրբ գրություններում ասվում է. «Եւ օրհներգելուց հետո դուրս ելան Ձիթենեաց սարը»:[3]

Եվ խոսելով Մարգարե Ջոզեֆի միջոցով, Նա ասել է. «Քանզի իմ հոգին հրճվում է սրտաբուխ երգով. այո, արդարների երգն աղոթք է ինձ համար, և այն կպատասխանվի օրհնությամբ նրանց գլխին»:[4]

Որքան հաճելի է լսել փոքրիկի

երգը, ում իր ծնողները սովորեցրել են երգել «Զավակն եմ ես Աստծո» օրհներգը:[5]

4. Ես կարիք ունեմ, որ դու գրկես ինձ

«Ես սիրում եմ քեզ», «Շատ շնորհակալություն» և «Ներիր ինձ» բառերը հոգու համար նման են բալասանի: Դրանք արցունքները վերափոխում են երջանկության: Դրանք մխիթարություն են բերում անհանգիստ հոգուն, և հաստատում են մեր հոգու քնքուշ զգացմունքները: Ինչպես բույսերն են թոշնում առանց թանկարժեք ջրի, մեր սերը մարում և մահանում է, երբ մենք չենք գործածում սիրո խոսքեր և գործեր:

Ես հիշում եմ այն օրերը, երբ մենք սիրային նամակներ էինք ուղարկում սովորական փոստի միջոցով, կամ հավաքում մի քանի կոպեկ, որ զանգեինք մեր սիրելիներին հեռախոսի խցիկից, կամ ինչպես էինք մենք նկարում և գրում սիրային բանաստեղծություններ դատարկ թղթի վրա:

Այսօր այս ամենը հնչում է որպես թանգարանային նյութ:

Մեր օրերի և դարի տեխնոլոգիան մեզ թույլ է տալիս հրաշքներ գործել: Որքան հեշտ է ուղարկել սիրո և երախտագիտության հաղորդագրություններ: Երիտասարդությունը դա անում է ամբողջ ժամանակ: Ես խորհում եմ այն մասին, թե արդյոք այս և այլ գեղեցիկ սովորույթներ շարունակվում են, երբ մենք հաստատում ենք մեր տունը: Իմ կնոջից վերջերս ստացած հաղորդագրություններից մեկում կարդում եմ հետևյալը. «Գիրկ՝ երկինքի պես, համբույր՝ արևի պես և երեկո՝ լուսնի պես: Ուրախ օր, ես սիրում եմ քեզ»:

Ես չեմ կարողանում դիմակայել, կարծես, երկնքում լինելու զգացողությանը, երբ այսպիսի հաղորդագրություն եմ ստանում:

Մեր Երկնային Հայրը սեր արտահայտելու կատարյալ օրինակ է: Երբ Նա ներկայացրեց Իր Որդուն, Նա օգտագործեց հետևյալ բառերը. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի»:[6]

5. Ես սիրում եմ Մորմոնի Գիրքը և Իմ Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Իմ սիրտը լցվում է, երբ ես տեսնում եմ իմ կնոջը Մորմոնի Գիրքը կարդալիս ամեն օր: Երբ նա անում է դա, ես կարող եմ զգալ նրա վկայությունը, լսել նրա դեմքի ուրախությունը տեսնելով, երբ նա կարդում է հատվածները, որոնք վկայում են Փրկչի առաքելության մասին:

Որքան իմաստուն են մեր Փրկչի խոսքերը. «Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են»:[7]

Այս խոսքերով ոգեշնչված՝ ես ասացի իմ թոռնուհուն՝ Ռաքելին, ով վերջերս էր կարդալ սովորել, «Ի՞նչ կասես Մորմոնի Գիրքը կարդալու համար նպատակ դնելու մասին»:

Նա տվեց հետևյալ պատասխանը. «Բայց, պապիկ, դա շատ դժվար է: Դա մեծ գիրք է»:

Ապա ես նրան խնդրեցի ինձ համար կարդալ մի էջ: Ես հանեցի վայրկենաչափը և չափեցի նրա կարդալու ժամանակը: Ես ասացի. «Դա քեզանից ընդամենը երեք րոպե պահանջեց, իսկ Մորմոնի Գրքի իսպաներեն տարբերակն ունի 642 էջ, այսինքն քեզ պետք կլինի 1926 րոպե»:

Սա, միգուցե, ավելի շատ վախեցրեց նրան, ուստի ես բաժանեցի այդ թիվը 60 րոպեի և ասացի նրան, որ այն կարդալու համար նրան պետք կլիներ ընդամենը 32 ժամ՝ մեկ ու կես օրից էլ պակաս:

Ապա նա ասաց ինձ. «Դա շատ հեշտ է, պապիկ»:

Ի վերջո, Ռաքելը, նրա եղբայր Էստեբանը և մեր մյուս թոռնիկները ավելի շատ ժամանակ տրամադրեցին, քանի որ սա մի գիրք է, որը պետք է կարդացվի աղոթքի հոգով և խորհրդածելով:

Ժամանակի ընթացքում, երբ մենք սովորում ենք հրճվել սուրբ գրություններով, մենք պետք է բացականչենք, ինչպես Մաղմոսողը. «Որքան քաղցր է քո խօսքն իմ քիմքին. մեղրիցն էլ աւելի է իմ բերանին»:[8]

6. Սուրբ գրություններն իմանալը բավական չէ. մենք պետք է ապրենք դրանց համաձայն

Ես հիշում եմ, որ երբ նոր էի վերադարձել միսիայից և ջանասիրաբար ուսումնասիրել էի սուրբ գրությունները, ես կարծում էի, որ ես ամեն բան գիտեի: Մեր ժամադրությունների ժամանակ Բլանկին և ես միասին ուսումնասիրում էինք սուրբ գրությունները: Ես օգտագործում էի իմ նշումներից և հղումներից շատերը, որպեսզի նրա հետ կիսվեի ավետարանի իմ իմացությամբ: Մեր ամուսնությունից հետո ես լրջորեն գիտակցեցի, երբ մեծ դաս սովորեցի նրանից. Ես միգուցե փորձում էի *սովորեցնել* նրան ավետարանը,

բայց նա սովորեցրեց ինձ, թե ինչպես *ապրել* դրա համաձայն:

Երբ Փրկիչն ավարտեց Լեռան Քարոզը, Նա տվեց այս իմաստուն խորհուրդը. «Արդ՝ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է եւ նորանց կատարում, կնմանացնեմ նորան մի իմաստուն մարդի ով իր տունը շինեց ժայռի վերայ»:[9]

Նրանք, ովքեր ապրում են համաձայն սուրբ գրություններում գտնվող սելեստիալ սկզբունքների, մխիթարում են նրանց, ովքեր տառապում են: Նրանք ուրախություն են բերում նրանց, ովքեր վիատված են, ուղղություն՝ նրանց, ովքեր մոլորվել են, խաղաղություն՝ նրանց, ովքեր վշտացած են, և ճիշտ առաջնորդություն՝ նրանց, ովքեր փնտրում են ճշմարտությունը:

Կարճ ասած.

1. Տաճարն է վայրը:
2. Վիճաբանության համար անհրաժեշտ է երկու մարդ, իսկ ես երբեք չեմ լինի դրանցից մեկը:
3. Երեխան, որն երգում է, երջանիկ երեխա է:
4. Ես կարիք ունեմ, որ դու գրկես ինձ:
5. Ես սիրում եմ Մորմոնի Գիրքը և Իմ Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:
6. Սուրբ գրություններն իմանալը բավական չէ. մենք պետք է ապրենք դրանց համաձայն:

Այս և ուրիշ շատ դասեր ենք սովորում տանը՝ այն վայրում, որը կարող է դառնալ երկնքի մի մասնիկ այստեղ՝ երկրի վրա:[10] Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը և մեր Երկնային Հոր ծրագիրը տալիս են ճիշտ ուղղություն այս կյանքում և հավերժական կյանքի խոստումը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 131.1-2:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.41:
3. Մարկոս 14.26:
4. Վարդապետություն և Ուխտեր 25.12:
5. «Զավակն եմ ես Աստծո», *Հիմներ և Մանկական երգեր*, համար 58:
6. Մատթեոս Գ.17, տես նաև Մարկոս Ա.11, 3 Նեփի 11.7:
7. Հովհաննես Ե.39:
8. Մաղմոս ՃԺԹ.103:
9. Մատթեոս Է.24:
10. Տես *Teachings of Presidents of the Church: David O. McKay* (2003), 43, 150:

Երեց Էրիկ Վ. Կոպիչկե
Յոթանասունից

Տիրոջ կողմից ընդունված լինել

Տիրոջ հավանությունը փնտրելը և ստանալը կհանգեցնի այն գիտելիքին, որ մենք ընտրված և օրհնված ենք Նրա կողմից:

Երբ պատանի էի, հիշում եմ, հայրս, երբեմն, ինձ վերցնում էր աշխատանք կատարելու: Մենք ունեինք մի փոքր այգի մի քանի կիլոմետր հեռու այն տեղից, որտեղ ապրում էինք, և այնտեղ միշտ շատ աշխատանք կար այգին գարնանը նախապատրաստելու համար: Մենք աշխատում էինք ամառանոցի վրա, կառուցում կամ վերանորոգում էինք ցանկապատը: Իմ հիշողության մեջ այդ աշխատանքը միշտ կատարվում էր սաստիկ ցրտին, ձյան հաստ շերտի ներքո կամ հորդառատ անձրևի տակ: Բայց այն ինձ դուր էր գալիս: Հայրս ինձ սովորեցնում էր, թե ինչպես կարելի է գործ անել համբերությամբ և հավանությամբ:

Մի օր նա ինձ հրավիրեց մի պտուտակ ամրացնել և զգուշացրեց. «Հիշի՛ր, եթե պտուտակը չափից շատ ուժեղ ամրացնես, կարող է կոտրվի»: Հպարտությամբ ես ցանկացա ցույց տալ, թե ինչի էի ընդունակ: Ես պտտեցի իմ ողջ ուժով և, իհարկե, կոտրեցի պտուտակը: Նա զվարճալի մի դիտողություն արեց և մենք նորից սկսեցինք: Նույնիսկ այն ժամանակ, երբ մի բան սխալ էի անում, նա ինձ ցույց էր տալիս իր սերը և վստահությունը իմ հանդեպ: Նա մահացել է ավելի քան 10 տարի առաջ, բայց ես կարող եմ դեռ լսել նրա ձայնը, վայելել նրա սերը, օգտվել նրա քաջալերանքից և զգալ նրա կողմից ընդունված լինելը:

Սիրված մարդու կողմից ընդունված լինելու զգացողությունը հիմնարար անհրաժեշտություն է մարդու համար: Լավ մարդկանց կողմից ընդունված լինելը խթանիչ ուժ է մեզ համար: Այն ինքնարժեվորում և ինքնավստահություն է հաղորդում մեզ: Նրանք, ովքեր ընդունված չեն զգում ցանկալի աղբյուրների կողմից, հաճախ այն փնտրում են այլ աղբյուրներից: Նրանք կարող են հավանություն փնտրել այն մարդկանց մոտ, ովքեր շահագրգռված չեն իրենց բարեկեցությամբ: Սպասված ընդունելություն ձեռք բերելու համար նրանք կարող են հարել կեղծ ընկերների և կասկածելի գործեր անել: Ընդունված լինելու կամ որոշակի կարգավիճակում զգալու համար նրանք կարող են կրել

որոշակի ապրանքանիշի հագուստ: Ճանաչման որոշակի դերի կամ դիրքի ձգտումը ևս կարող է ընդունում փնտրելու ուղի լինել ոմանց համար: Նրանք կարող են մտածել, որ իրենց արժանավորությունը որոշվում է զբաղեցրած պաշտոնով կամ ստացած կարգավիճակով:

Նույնիսկ եկեղեցում, մենք միշտ չէ, որ ազատ ենք այսպիսի մտածողությունից: Սխալ աղբյուրներից կամ սխալ դրդապատճառներով ընդունում փնտրելը մեզ դնում է վտանգավոր ուղու վրա՝ ուղի, որը կարող է տանել մոլորության և նույնիսկ կործանման: Փայփայված ու ինքնավստահ զգալու փոխարեն, մենք, ի վերջո, լքված ու ստորադրյալ կզգանք:

Ալման իր որդի Հելամանին խորհուրդ է տվել. «Տես որ նայես առ Աստված և ապրես»:[1] Առավելագույն կարողությունների և տևական ընդունման աղբյուրը մեր Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսն են: Նրանք գիտեն մեզ: Նրանք սիրում են մեզ: Նրանք չեն ընդունում մեզ մեր կոչման կամ պաշտոնի համար: Նրանք չեն նայում մեր կարգավիճակին: Նրանք նայում են մեր սրտին: Նրանք մեզ ընդունում են այնպես, ինչպես կանք և ինչպիսին ձգտում ենք լինել: Նրանց կողմից ընդունված լինելու ձգտումը միշտ կբարձրացնի և քաջալերանք կլինի մեզ համար:

Ես կկիսվեմ մի պարզ օրինակով, որի կիրառումը կարող է օգնել յուրաքանչյուրիս առավելագույն ընդունում գտնել: Այս օրինակը տրվել է Տիրոջ կողմից՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ բոլոր նրանք, ովքեր գիտեն, որ իրենց սիրտն ազնիվ է ու կոտրված, իսկ իրենց հոգին՝ փշրված, և կամենում են պահպանել իրենց ուխտերը զոհաբերությամբ,– այո, ամեն մի զոհաբերությամբ, որը ես՝ Տերս, կպատվիրեմ,– ընդունված են իմ կողմից»:[2]

Այս օրինակը ներառում է երեք հասարակ քայլ.

1. Իմանալ, որ մեր սիրտն ազնիվ ու կոտրված է:
2. Իմանալ, որ մեր հոգին փշրված է:



3. Պատրաստակամ լինել պահել մեր ուխտերը զոհաբերությամբ, ինչպես որ կպատվիրի Տերը:

Առաջին հերթին, մենք պետք է իմանանք, որ մեր սիրտն ազնիվ ու կոտրված է: Ինչպե՞ս ենք դա իմանում: Մենք սկսում ենք նայել մեր անկեղծ արտացոլանքին: Միրտը մեր զգացմունքների կենտրոնն է: Երբ նայում ենք մեր սրտին, մենք կարդում ենք մեր էությունը: Այն, ինչ շրջապատը չգիտի մեր մասին, մենք, անշուշտ, գիտենք: Մենք գիտենք մեր շարժառիթներն ու ցանկությունները: Եթե անկեղծորեն, ազնվորեն խորաքննենք մեզ, մենք չենք արդարացնի, ոչ էլ կխաբենք ինքներս մեզ:

Կա ևս մեկ ճանապարհ՝ եզրակացնելու, թե արդյոք մենք կոտրված սիրտ ունենք, թե ոչ: Կոտրված սիրտը փափուկ, բաց և ընկալունակ սիրտ է: Երբ լսում եմ Փրկչին ասելիս. «Ահա, ես դռան առաջին կանգնած եմ և թակում եմ»,[3] ես լսում եմ, թե ինչպես է Նա թակում իմ սրտի դուռը: Եթե ես բացում եմ դուռը Նրա առաջ, ապա ավելի լավ եմ արձագանքում Հոգու հրավերներին և ավելի հեշտ եմ ընդունում Աստծո կամքը:

Երբ անկեղծորեն ու աղոթքով խորհենք, թե որքանով ազնիվ ու կոտրված է մեր սիրտը, մենք կուսուցանվենք Սուրբ Հոգու կողմից: Մենք կստանանք քաղցր հաստատում կամ մեղմ ուղղում, որը մեզ հրավիրում է գործել:

Երկրորդ՝ մենք պետք է իմանանք, որ ունենք *փշրված* հոգի: Փշրված հոգի ունենալ նշանակում է վատ գործի գիտակցումից վշտանալ, հուսաբեկվել, զղջալ:[4] Երբ մենք փշրված հոգի ունենք, մենք ընդունում ենք մեր մեղքերն ու թերությունները: Մենք ընկալում ենք այն «ամենը, ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին:[5] Մենք զգում ենք աստվածային տրտմություն ու ցանկանում ենք ապաշխարել: Փշրված հոգին պատրաստ է լսել «Սուրբ Հոգու հորդորները»:[6]

Փշրված հոգին դրսևորվում է գործելու մեր պատրաստակամությամբ ու վճռականությամբ: Մենք պատրաստ ենք Աստծո առաջ մեզ խոնարհեցնելու, պատրաստ ենք ապաշխարելու, պատրաստ ենք սովորելու և պատրաստ ենք փոխվելու: Մենք պատրաստ ենք աղոթելու՝ «ոչ թե իմ կամքը, այլ քո կամքը թող կատարվի»:[7]

Տիրոջ կողմից ընդունված լինելու երրորդ քայլը գիտակցված որոշումն է պահել մեր ուխտերը զոհաբերությամբ, «այո, ամեն մի զոհաբերությամբ, որը ես՝ Տերս, կպատվիրեմ»:[8] Շատ հաճախ կարծում ենք, թե *զոհաբերություն* բառը ակնարկում է ինչ-որ մեծ կամ մեզ համար ծանր գործ անելը: Որոշակի իրավիճակներում դա կարող է ճիշտ լինել, բայց, հիմնականում, այն վերաբերում է որպես Քրիստոսի իրական հետևորդ ամենօրյա մեր ապրելակերպին:

Մեր ուխտերը զոհաբերությամբ պահելը յուրաքանչյուր շաբաթ արժանիորեն հաղորդություն ընդունելն է: Մենք գիտակցաբար նախապատրաստվում ենք հաղորդության սրբազան արարողությանը: Մենք վերականգնում և հաստատում ենք Տիրոջը տված մեր սրբազան խոստումները: Այս կերպ, մենք զգում ենք Նրա հավանությունը և ստանում ենք Նրա վստահությունը,

որ մեր ջանքերն ընդունելի են և մեր մեղքերը ներվում են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Այդ արարողության ընթացքում Տերը մեզ խոստանում է, որ քանի որ մենք պատրաստակամ ենք մեզ վրա վերցնել Նրա Որդու անունը և միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները, մենք միշտ Նրա Հոգին մեզ հետ կունենանք: Սուրբ Հոգին որպես մեր մշտական ուղեկից ունենալը Աստծո կողմից ընդունելի լինելու վերջնական ցուցանիշ է:

Մեր ուխտերը զոհաբերությամբ պահելու պարզ ուղիներից են Եկեղեցական կոչում ընդունելը և կոչման ծառայությունը հավատարմորեն կատարելը կամ մեր մարգարեի՝ Թոմաս Ս. Մոնսոնի հրավերին հետևելը՝ ձեռք մեկնելու նրանց, ովքեր կանգնած են ճանապարհի եզրին և փրկարար ջանքերի կարիք ունեն: Մենք պահում ենք մեր ուխտերը զոհաբերությամբ՝ լուռ ծառայություն մատուցելով հարևանության շրջապատում կամ համայնքում կամ գտնելով մեր նախնիների անունները և նրանց համար տաճարային աշխատանք կատարելով: Մենք պահում ենք մեր ուխտերը զոհաբերությամբ, պարզապես ձգտելով արդարության, բաց լինելով և լսելով Հոգու հուշումներին մեր ամենօրյա կյանքում: Երբեմն, մեր ուխտերը պահելը նշանակում է ոչ այլ ինչ, քան ամուր և հավատարմորեն կանգնելը, երբ կյանքի փոթորիկները մոլեգնում են մեր շրջապատում:

Բացատրելով օրինակը, թե ինչպես ընդունելի լինենք Իրեն, Տերը հիանալի պատկեր է օգտագործում, որպեսզի ցույց տա, թե ինչպես ենք մենք շահում որպես անհատներ և ընտանիքներին, երբ ձգտում ենք Նրան ընդունելի լինել: Նա ասել է. «Քանզի ես՝ Տերս, այնպես կանեմ, որ նրանք առաջ բերեն բարի գործեր, ինչպես շատ պտղաբեր մի ծառ, որը տնկված է մի բերրի հողում, մաքուր վտակի մոտ, և որը շատ թանկարժեք պտուղ է տալիս»:[9]

Երբ մենք ինքներս համահունչ ենք Տիրոջ Հոգու հետ և ընդունված ենք զգում Նրա կողմից, մենք կօրհնվեք մեր հասկացողությունից վեր օրհնություններով և առաջ կբերենք արդարության բազում պտուղներ: Մենք կլինենք նրանց թվում, ում Նա ասել է. «Լա՜ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ, քիչ բաների վերայ հաւատարիմ էիր, ես քեզ շատ բաների վերայ կ՚դնեմ. մտիր քո տիրոջ ուրախութիւնը»:[10]

Տիրոջ հավանությունը փնտրելը և ստանալը կհանգեցնի այն գիտելիքին, որ մենք ընտրված և օրհնված ենք Նրա կողմից: Մենք ավելի մեծ վստահություն կունենանք, որ Նա կառաջնորդի մեզ և կուղղորդի մեզ դեպի բարին: Նրա գորովալից ողորմությունները ակնհայտ կդառնան մեր սրտում, մեր կյանքում և մեր ընտանիքում:

Իմ ամբողջ սրտով ես հրավիրում եմ ձեզ փնտրել Տիրոջ հավանությունը և վայելել Նրա խոստացված օրհնությունները: Երբ հետևենք Տիրոջ ցույց տված հասարակ օրինակին, մենք կհասկանանք, որ ընդունված ենք նրա կողմից, անկախ մեր զբաղեցրած պաշտոնից, կարգավիճակից կամ մահկանացու սահմանափակումներից: Նրա սիրելի ընդունելությունը խթանիթ ուժ կլինի, կամրապնդի մեր հավատքը և կօգնի մեզ դիմակայել կյանքի բոլոր փորձություններին: Անկախ մեր մարտահրավերներից, մենք հաջողակ կլինենք, կբարգավաճենք[11] և խաղաղություն կզգանք:[12] Մենք կլինենց թվում, ում Տերն ասել է.

«Մի վախեցեք, փո՜քր երեխաներ, քանզի դուք իմն եք, և ես հաղթել եմ աշխարհին, և դուք նրանցից եք, որոնց իմ Հայրը տվել է ինձ.

Եվ նրանցից ոչ ոք, որ իմ Հայրը տվել է ինձ, չպետք է կորչի»:[13]

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 37.47:
2. Վարդապետություն և Ուխտեր 97.8:
3. Հայտնություն 3.20:
4. *Oxford Dictionaries Online,* “contrite,” oxforddictionaries.com.
5. Ալմա 21.23:
6. Մոսիա 3.19:
7. Ղուկաս 22.42:
8. Վարդապետություն և Ուխտեր 97.8:
9. Վարդապետություն և Ուխտեր 97.9:
10. Մատթեոս 25.21:
11. Տես Մոսիա 2.22:
12. Տես Մոսիա 2.41:
13. Վարդապետություն և Ուխտեր 50.41–42:

Բրյուս Դ. Փորթեր
Յոթանասունից

Սքանչելի առավոտներ

Մենք կարիք չունենք վախենալու ապագայից, ոչ էլ կորցնելու հույսը կամ ուրախ չլինելու, որովհետև Աստված մեզ հետ է:

Շինգշաբթի երեկոյան, Երուսաղեմում, Հիսուսը և Իր աշակերտները հավաքվեցին վերնահարկի սենյակում՝ Զատիկը նշելու համար: Նրան միացած տղամարդիկ չգիտեին, որ այդ ընթրիքը մի օր կկոչվի Վերջին Ընթրիք: Եթե նրանք իմանային դա, ինչպես նաև դրա նշանակությունը, նրանք լաց կլինեին:

Նրանց Վարդապետը, ինչևէ, կատարելապես հասկանում էր, որ Գեթսեմանիի և Գողգոթայի փորձությունները շուտով կսկսեին: Աշխարհի պատմության ամենամութ ժամերը մոտ էին, սակայն Հիսուսն ասաց նրանց. «Աշխարհքումը նեղութիւն կ՚ունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին» (Հովհաննես 16.33):

Այսօր մենք ապրում ենք խառնաշփոթի և անորոշության ժամանակներում, որի մասին Տերը մարգարեացել է Ենոքին, որ դրանք կբնութագրվեն որպես «ամբարշտության և վրեժխնդրության օրեր» (Մովսես 7.60): Առջևում կարող են լինել փորձություններ և դժվար ժամանակներ, սակայն մենք նույնպես լավ պատճառ ունենք ուրախանալու: Մենք ապրում ենք վերջին տնտեսությունում, երբ Աստված վերականգնեց Իր Եկեղեցին և արքայությունը երկրի վրա՝ ի նախապատրաստություն Իր Որդու վերադարձի:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերը մի առիթով խոսել է իր թոռների մասին և ավելի ու ավելի անհանգիստ դարձող աշխարհում, որում նրանք ապրում են: Նա ասաց. «Նրանք կտեսնեն բազմաթիվ իրադարձություններ, որոնք տեղի կունենան իրենց կյանքի ընթացքում: Դրանցից ոմանք կպահանջեն նրանց քաջությունը և կխորացնեն հավատքը: Սակայն, եթե նրանք աղոթքով փնտրեն օգնություն և առաջնորդություն, նրանց կտրվի զորություն՝ դժվարությունները հաղթահարելու համար»:

Ավելի ուշ նա ավելացրել է. «Բարոյական արժեքները, որի վրա պետք է հենվի քաղաքակրթությունը, պարուրաձև ընթանում են դեպի վար՝ ավելի ու ավելի սրընթաց: Սակայն ես չեմ վախենում ապագայից» («Մի վախեցիր», *Լիահոնա,* մայիս 2004, 77, 78):



Եղբայրներ և քույրեր, մենք կարիք չունենք վախենալու ապագայից, ոչ էլ կորցնելու հույսը կամ ուրախ չլինելու, որովհետև Աստված մեզ հետ է: Գրի առնված խորհրդի առաջին խոսքերից, որ Հիսուսը տվեց Գալիլեայում Իր նոր կանչված աշակերտներին, այս երկբառանի հորդորն էր. «Մի վախեցիր» (Ղուկաս 5.10): Նա կրկնել է այդ խորհուրդը բազմաթիվ անգամ Իր ծառայության ժամանակ: Այսօր Իր Սրբերին Փրկիչն ասել է. «Ուրախ եղեք, և մի վախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ, և ես կանգնելու եմ ձեր կողքին» (ՎևՈւ 68.6):

Տերը կլինի Իր Եկեղեցու և ժողովրդի կողքին և կպահի նրանց ապահովության մեջ մինչև Իր գալուստը: Խաղաղություն կտիրի Սիոնում և դրա ցցերում, քանզի Նա հայտարարել է. «Վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար. Եվ որպեսզի միասին հավաքվելը՝ Սիոնի հողի վրա և նրա ցցերում, պաշտպանություն և ապաստան լինի փոթորկից ու ցասումից, երբ այն անխառն կթափվի ողջ երկրի վրա» (ՎևՈւ 115.6):

Եկեղեցին պարսպապատի պես կանգնած է իր անդամների պաշտպանության համար: Թեև պայմանները աշխարհում երբեմն կարող են դառնալ շատ դժվարին, հավատարիմ Վերջին Օրերի Սրբերը ապաստարան կգտնեն Սիոնի ցցերում: Տերն ասել է, որ առանց ձեռքի կտրած քարը սարից կգլորվի, մինչև որ կծածկի ողջ երկիրը (Տես Դանիել 2.31–45; ՎևՈւ 65.2): Ոչ մի մարդկային ուժ չի կարող կանգնեցնել դրա ընթացքը: Աստված է այս աշխատանքի հեղինակը, իսկ Հիսուս Քրիստոսը՝ հիմնաքարը:

Նեփի մարգարեն տեսիլք է ունեցել այն մասին, որ վերջին օրերին Աստծո Գառան զորությունը կիջնի « Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա» և նրանք զինված

կլինեն «արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» (1 Նեփի 14.14):

Մեզանից յուրաքանչյուրը և մեր ընտանիքները կարող են զինվել Աստծո զորությամբ ինչպես մի վահանով, եթե հավատարիմ մնան Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն և թույլ տան, որ Հոգին լինի մեր ուղեկիցը: Փորձություններ կարող են գալ և մենք, հնարավոր է, չհասկանանք այն ամենը, ինչ պատահում է մեզ հետ կամ մեր շուրջը: Սակայն, եթե մենք խոնարհաբար, հանգիստ ապավինենք Տիրոջը, Նա մեզ կտա ուժ և առաջնորդություն ցանկացած խնդրի համար, որ մենք հանդիպում ենք: Երբ մեր միակ ցանկությունը լինի Նրան գոհացնելը, մենք կօրհնվենք ներքին խոր խաղաղությամբ:

Վերականգնման վաղ օրերին Եկեղեցու անդամները դաժան փորձությունների հանդիպեցին: Նախագահ Բրիգամ Յանգն ասել է այդ ժամանակների մասին. «Ամբոխով շրջապատված, ամեն կողմից մահվան և ոչնչացման սպառնալիքի պայմաններում, ես հիշում եմ միայն հոգուս ուրախ վիճակը, ինչպես այժմ: Հեռանկարը կարող է աղոտ և շատ խավար երևալ, սակայն երբեք չեմ տեսել ժամանակ այս Ավետարանում, երբ չեմ իմացել, որ արդյունքը կլինի օգտակար ճշմարտության նպատակի համար» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 357):

Իմ միսիոներ զուգընկերը՝ Փոլը միշտ լավ տրամադրություն էր ճառագայթում: Երիտասարդ հայր լինելով, նա հիվանդացավ բազմակի սկլերոզ հիվանդությամբ: Չնայած դժվարություններին, որոնք հետևեցին, նա շարունակում էր ծառայել մյուսներին ուրախությամբ և բարի հումորով: Մի անգամ նա մտավ իմ գրասենյակ իր նոր անվասայլակի մեջ նստած և հայտարարեց. «Կյանքը սկսվում է շարժիչային անվասայլակով»: Ես միշտ կհիշեմ նրան՝ ինչպես էր իր մահից մի քանի տարի առաջ բռնել Օլիմպիական ջահը՝ անվասայլակին նստած, հարյուրավոր մարդկանց ծափահարության ներքո: Այդ ընդմիշտ վառվող կրակի նման Փոլի հավատքը երբեք ժամանակի հետ չի մարի:

Երբ ուսանող էի Բրիգամ Յանգ Համալսարանում, ես ապրում էի մի տանը մի քանի երիտասարդների հետ: Սենյակակիցս՝ Բրուսը, հավանաբար, ամենալավատես անձնավորությունն էր, որ ես երբև է հանդիպել եմ: Մենք երբեք չենք լսել, որ նա որևէ բացասական բան ասեր որևէ մեկի կամ որևէ իրավիճակի մասին, և անհնար էր ուրախ չզգալ նրա ներկայությամբ: Նրա ուրախ ոգին հոսում էր Փրկչին և ավետարանին հավատարմորեն ապավինելուց:

Մի ցուրտ ձմեռային օր իմ մյուս ընկերը՝ Թոմը, քայլում էր համալսարանի տարածքով: Առավոտյան ժամը 7:00- էր և տարածքը ամայի և մութ էր: Առատ ձյուն էր գալիս և սառը քամի էր փչում: «Ինչ թշվառ եղանակ է», - մտածում էր Թոմը: Առաջ քայլելով խավարի և ձյան մեջ, նա լսեց, թե ինչպես էր ինչ-որ մեկը երգում:

Իհարկե, թափվող ձյան միջից հայտնվեց մեր ընդմիշտ լավատես ընկեր Բրուսը: Ձեռքերը ուղղված դեպի երկինքը, նա երգում էր մի հատված Բրոդվեյի *Oklahoma* մյուզիքլից. «Ինչպիսի սքանչելի առավոտ: Ինչպիսի սքանչելի առավոտ: Ես ունեմ սքանչելի զգացում, որ ամեն-ինչ լավ է լինելու»:

Հաջորդող տարիների ընթացքում այդ պայծառ ձայնը մութ փոթորկի մեջ դարձավ ինձ համար հավատքի և հույսի խորհրդանիշ: Անգամ խավարի մեջ ընկղմվող աշխարհում մենք՝ Վերջին օրերի Սրբերը, կարող ենք երգել ուրախությամբ, իմանալով, որ երկնքի զորությունները Աստծո Եկեղեցու և մարդկանց հետ են: Մենք կարող ենք ուրախանալ այն հաստատուն գիտելիքով, որ սքանչելի առավոտ է սպասվում առջևում՝ հազարամյակի օրվա լուսաբացը, երբ Աստծո Որդին կբարձրանա Արևելքում և կրկին կտիրի երկրի վրա:

Ես մտածում եմ նաև աշխարհի պատմության մեջ երկու այլ սքանչելի առավոտների մասին : 1820թ. գեղեցիկ, պայծառ գարնանային մի առավոտ, Ջոզեֆ Սմիթ անունով երիտասարդ տղան մտավ անտառոտ պուրակը և ծնկի իջավ աղոթքի մեջ: Այդ աղոթքի պատասխանը, Հոր և Որդու հայտնությունը, սկիզբ դրեցին ժամանակների լրության տնտեսությանը և երկրի վրա Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնմանը:

Մեկ այլ սքանչելի առավոտ բացվեց մոտ 2000 տարի առաջ, Երուսաղեմի պատերից դուրս: Այդ Զատկի առավոտ արևը, անկասկած շողում էր բացառիկ պայծառությամբ: Կանանց մի փոքր խումբ եկավ գերեզմանոց, հույս ունենալով օծել իրենց խաչված Տիրոջ մարմինը: Երկու հրեշտակ դիմավորեցին նրանց և հայտարարեցին. «Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում: Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ» (Ղուկաս 24.5–6):

Մեղքի և մահի հանդեպ Հիսուս Քրիստոսի հաղթանակի մասին ես բերում եմ իմ վկայությունը: Մեր Երկնային Հոր ողորմած ծրագրի և Նրա հավիտենական սիրո մասին եմ ես վկայում: Ամեն առավոտ վեր կենալիս, թող որ մենք հավատքով նայենք երկնքին և ասենք. «Օ, ինչպիսի սքանչելի առավոտ է», ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Փրկագնում

Հետևելով Քրիստոսին, ձգտում ենք մասնակցել և առաջ տանել Նրա փրկագնող աշխատանքը:

Գաղութային ժամանակներում աշխատանքի մեծ պահանջարկ կար Ամերիկայում: 18-րդ դարի ընթացքում և 19-րդ դարի սկզբներին ներգաղթյալ աշխատողներ էին հավաքագրվում Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և Եվրոպական այլ երկրներում, սակայն ցանկացողներից շատերը չէին կարողանում վճարել ճանապարհավարձը: Նրանց համար սովորական երևույթ էր՝ ճամփորդել համաձայնագրով կամ պայմանագրով, ըստ որի նրանք պետք է որոշ ժամանակահատված իրենց աշխատանքով վճարեին իրենց ուղեվարձի դիմաց: Մյուսները գալիս էին այն խոստումով, որ ժամանելուն պես արդեն Ամերիկայում բնակվող ընտանիքի անդամները պետք է վճարեին իրենց ուղեվարձը, բայց դա տեղի չունենալու դեպքում, նորեկները պարտավոր էին վճարել իրենց ուղեվարձը ըստ համաձայնագրի: Այդ պայմանագրային ներգաղթյալներին անվանում էին «փրկագնվածներ»: Նրանք պետք է հատուցեին իրենց ուղեվարձի դիմաց, այսինքն՝ իրենց աշխատանքով գնել իրենց ազատությունը:[1]

Հիսուս Քրիստոսին բնութագրող առավել կարևոր անվանումներից է՝ Փրկագնող: Ինչպես նշեցի ներգաղթյալ «փրկագնողների» մասին իմ կարճ պատմության մեջ, *փրկագնել* նշանակում է վճարել պարտավորությունը կամ պարտքը: *Փրկագնել* նաև նշանակում է փրկել կամ ազատ արձակել՝ փրկագին տալով: Եթե ինչ-որ մեկը սխալ է գործել և ապա ուղղել է այն կամ փոխհատուցել, մենք ասում ենք, որ նա փրկագնել է իրեն: Այս նշանակություններից յուրաքանչյուրը բացահայտում է տարբեր կողմերը մեծ Փրկագնման, որ կատարեց Հիսուս Քրիստոսն Իր Քավությամբ, որն ըստ բառարանի նշանակում է՝ «ազատել մեղքից և նրա պատիժներից, զոհ մատուցելով մեղսավորի համար»:[2]

Փրկչի Փրկագնումը բաղկացած է երկու մասից: Առաջինը, այն քավում է Ադամի զանցանքը և՝ իբրև հետևանք, մարդու Անկումը, հաղթահարելով այսպես կոչված Անկման ուղղակի ազդեցությունները՝ ֆիզիկական մահը և հոգևոր մահը: Ֆիզիկական մահը, գիտենք, որն է, իսկ հոգևոր մահը՝ Աստծուց մարդու առանձնանալն է: Պողոսի խոսքերով. «Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (Ա Կորնթացիս 15.22): Ֆիզիկական և հոգևոր մահից այս փրկագնումը կրում է համընդհանուր և անպայմանական բնույթ:[3]

Փրկչի Քավության երկրորդ մասը՝ Անկման անուղղակի հետևանքներից, ի տարբերություն Ադամի զանցանքի, մեր իսկ մեղքերից փրկագնումն է: Անկման շնորհիվ մենք ծնվել ենք մահկանացու կյանքում, որտեղ գերիշխում է մեղքը, որը չենթարկվելն է աստվածայնորեն հաստատված օրենքին: Խոսելով բոլորիս մասին, Տերն ասել է.

«Ճիշտ այդպես, երբ նրանք սկսում են մեծանալ, մեղքը ծնվում է նրանց սրտում, և նրանք դառնություն են ճաշակում, որպեսզի սովորեն գնահատել բարին:

Եվ նրանց տրված է բարին տարբերել չարից. ուստի նրանք գործակալն են իրենց անձի» (Մովսես 6.55–56)։

Քանի որ մենք հաշվետու ենք մեր ընտրությունների համար, մեր մեղքերից փրկագնումը պայմանական է՝ պայմանավորված խոստովանությամբ, մեղքը թողնելով և բարեպաշտ կյանքով, կամ այլ խոսքով, ապաշխարությամբ (տես ՎևՈ 58.43)։ «Ուստի,- պատվիրում է Տերը,- Ուսուցանեք ձեր երեխաներին, որ բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է ապաշխարեն, այլապես նրանք ոչ մի կերպ չեն ժառանգի Աստծո արքայությունը, քանզի ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ բնակվել նրա ներկայության մեջ» (Մովսես 6.57)։

Գեթսեմանիում Փրկչի տառապանքը և խաչի վրա Նրա հոգևարքը փրկագնում է մեզ մեղքից՝ բավարարելով մեզ համար արդարադատության պահանջները։ Նա կարեկցում, ներում և սրբագործում է նրանց, ովքեր ապաշխարում են։ Քավությունը նաև վճարում է արդարադատության պարտքը մեզ՝ բժշկելով և փոխհատուցելով մեր անմեղ կրած տառապանքները։ «Քանզի ահա, նա տանում է բոլոր մարդկանց ցավերը, այո, ամեն մի ապրող արարածի ցավերը՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց, և՛ երեխաների, որոնք պատկանում են Ադամի ընտանիքին» (2 Նեփի 9.21; տես նաև Ալմա 7.11–12)։[4]

Հետևելով Քրիստոսին, ձգտում ենք մասնակցել և առաջ տանել Նրա փրկագնող աշխատանքը։ Մեծագույն ծառայությունը, որ կարող ենք մատուցել մյուսներին, սկսած մեր ընտանիքից, դա՝ բերել նրանց Քրիստոսի մոտ հավատքով և ապաշխարությամբ, որպեսզի նրանք կարողանան ճաշակել Նրա Փրկագնումը, որն է՝ խաղաղություն և ուրախություն այժմ, և անմահություն և հավերժական կյանք գալիք աշխարհում։ Մեր միսիոներների աշխատանքը Տիրոջ փրկագնող սիրո հրաշալի դրսևորումն է։ Որպես Նրա լիազորված սուրհանդակներ, նրանք առ Հիսուս Քրիստոս հավատքի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարգևի անգուգական օրհնություններ են առաջարկում՝ բացելով հոգևոր վերածնունդի և փրկագնման ուղին։

Մենք նաև կարող ենք աջակցել Տիրոջ փրկագնման գործին՝ հոգուտ նրանց, ովքեր գերեզմանի այն կողմում են։ «Այս տնտեսության հավատարիմ երեցները, հեռանալով մահկանացու կյանքից, շարունակում են իրենց աշխատանքները՝ քարոզելով ապաշխարության ավետարանը և փրկագնումը, Աստծո Միածին Որդու զոհաբերության միջոցով, նրանց մեջ, ովքեր խավարում են և մեղքի գերության տակ՝ մահացածների հոգիների մեծ աշխարհում» (ՎևՈ 138.57)։ Աստծո տաճարներում փոխարինող ծեսերի օգնությամբ, որ մենք առաջարկում ենք, կարող են ազատվել անգամ նրանք, ովքեր մահացել են մեղքի գերության մեջ։[5]

Չնայած փրկագնման առավել կարևոր գործոնները ապաշխարությունը և ներումն են, կա մի շատ կարևոր աշխարհիկ գործոն ևս։ Ասվում է, որ Հիսուսը ման էր գալիս բարիք գործելով, (տես Գործք 10.38), բժշկելով հիվանդներին և հաշմանդամներին, կերակրելով քաղցած ամբոխին, ուսուցանելով առավել տպավորիչ ձևով։ «Մարդի Որդին չեկավ որ իրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ, և շատերի փոխանակ իր անձը փրկանք տա» (Մատթեոս 20.28)։ Թող որ մենք ևս, Սուրբ Հոգու ազդեցությամբ, շրջենք բարիք գործելով՝ հետևելով Վարդապետի փրկագնող օրինակին։

Այսպիսի փրկագնող աշխատանքը նշանակում է՝ օգնել մարդկանց լուծել իրենց խնդիրները։ Դա նշանակում է ընկերանալ աղքատի և թույլի հետ, մեղմել տառապյալի ցավը, շտկել սխալները, պաշտպանել ճշմարտությունը, ամրացնել աճող սերնդին, ձգտել ապահովության և երջանկության տանը։ Երկրի վրա մեր փրկագնող աշխատանքը հիմնականում պետք է լինի մյուսներին օգնելը, որպեսզի նրանք աճեն և հասնեն իրենց արդար հույսերին և ձգտումներին։

Վիկտոր Հյուգոյի *Թշվառները* վեպից մի օրինակ, թեպետ գեղարվեստական, միշտ հուզել և ոգեշնչել է ինձ։ Պատմության սկզբում բարի Եպիսկոպոս Բիանվենյուն ուտելիք և գիշերելու օթևան է տալիս անտուն Ժան Վալժանին, որը նոր էր ազատվել 19 տարի բանտում անցկացնելուց հետո։ Նա բանտարկվել էր իր քրոջ սովահար երեխաներին կերակրելու նպատակով հացի բոքոն գողանալու համար։ Զարացած և անուղղելի Վալժանը Եպիսկոպոս Բիանվենյույի բարությանը պատասխանում է նրա արծաթե իրերը գողանալով։ Իսկ երբ ժանդարմների մոտ կասկած հարուցելով ձերբակալվում է, Վալժանը ստում է, ասելով, որ արծաթեղենը տրվել է իրեն որպես նվեր։ Երբ ժանդարմները նրան տանում են եպիկսպոսի տուն, ի զարմանս Վալժանի, Եպիսկոպոս Բիանվենյուն հաստատում է նրա ասածը և իր խոսքն ավելի տպավորիչ դարձնելու համար ասում է. «Բայց ես տվել էի նաև մոմակալները, որոնք նույնպես արծաթից էին, և արժեին երկու հարյուր ֆրանկ։ Ինչո՞ւ ապսեների հետ դրանք էլ չես վերցրել»։

Եպիսկոպոսը, մոտենալով նրան, ցածրաձայն ասում է.

«Մի մոռացիր, երբեք չմոռանաս, որ դու խոստացել ես ինձ, որ այս արծաթեղենը կօգտագործես ազնիվ մարդ դառնալու համար»։

Ժան Վալժանը, որը չէր հիշում այդ խոստման մասին, շփոթված կանգնած էր։ Եպիսկոպոսը . . . հանդիսավոր շարունակում է.

«Ժան Վալժան, եղբայրս, դու այլևս պատկանում ես ոչ թե չարին,

այլ բարուն: Քո հոգին ես գնում եմ քեզանից: Ես վերցնում եմ այն խավար մտքերից և կորստի հոգուց և տալիս եմ Աստծուն»:

Ժան Վալժանն, իրոք, դարձավ նոր մարդ, ազնիվ մարդ և բարերար: Իր ողջ կյանքի ընթացքում նա պահեց երկու արծաթե մոմակալները, որոնք իրեն հիշեցնում էին, որ իր կյանքը փրկագնվել էր Աստծո համար:[6]

Աշխարհիկ փրկագնման որոշ տեսակները գալիս են համատեղ ջանքերի շնորհիվ: Դա պատճառներից մեկն է, որ Փրկիչը եկեղեցի ստեղծեց: Քվորումներում, օժանդակ կազմակերպություններում, ցցերում, ծխերում և ճյուղերում մենք կարող ենք ոչ միայն ուսուցանել և քաջալերել միմյանց ավետարանում, այլև մարդկանց և ռեսուրսները համախմբելով՝ կյանքի պահանջները բավարարել: Մարդիկ, ովքեր գործում են միայնակ կամ որոշակի խմբերով, միշտ չէ, որ կարող են միջոցներ տրամադրել ավելի մեծ խնդիրների լուծման համար: Որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ մենք Սրբերի համայնք ենք, կազմակերպված՝ օգնելու բավարարել կարիքները մեր ընկեր Սրբերի և շատ-շատերի, որոնց կարող ենք հասնել աշխարհում:

Անցյալ տարվա մեր մարդասիրական ջանքերի արդյունքում, որոնց մասին նշեց Երեց Դալլին Հ. Օքսը, 36 երկրում 890000 մարդ ունի մաքուր ջուր, 57 երկրում 70000 մարդ ունի անվասայլակ, 25 երկրում բարելավվել է 75000 մարդու տեսողություն, իսկ 52 երկրում մարդիկ օգնություն են ստացել բնական աղետներից հետո: Գործելով մյուսների հետ, Եկեղեցին օգնել է պատվաստումներ կատարել մոտ 8 միլիոն երեխաների և կյանքի համար անհրաժեշտ պարագաներ է տրամադրել Թուրքիայի, Լիբանանի և Հորդանանի փախստականների ճամբարներում գտնվող սիրիացիներին: Միևնույն ժամանակ, 2012 թվին Եկեղեցու կարիքավոր անդամները ստացել են միլիոնավոր դոլլարներ՝ ծոմապահությունից և բարօրության այլ ծառայություններից: Շնորհակալություն ձեր



առատաձեռնության համար:

Այս ամենը չի սկսվել հաշվելու համար անհատական բարի գործերը և օգնությունը՝ տրամադրված ուտելիքը, հագուստը, գումարը, խնամքը և հազարավոր այլ տեսակի սփոփանքն ու կարեկցանքը, որով մենք մասնակցում ենք Քրիստոսանման փրկագնող աշխատանքին: Մանուկ հասակում ես ականատես եմ եղել, ինչպես է մայրս փրկագնել կարիքի մեջ գտնվող մի կնոջ: Շատ տարիներ առաջ, երբ երեխաները փոքր էին, մայրս ծանր վիրահատություն տարավ, որը գրեթե խլեց նրա կյանքը, և նա մոտ մեկ տարի մնաց անկողնուն գամված: Այդ ընթացքում ընտանիքի և ծխի անդամներն օգնում էին մայրիկիս և մեր ընտանիքին: Լրացուցիչ օգնության համար ծխի Սփոփող Միության Նախագահը՝ Քույր Աբրահամը, առաջարկեց, որ ծնողներս որպես վարձու աշխատող վերցնեին ծխից մի կնոջ, որն աշխատանքի կարիք ուներ: Այս պատմության մեջ ես կփոխեմ այդ կնոջ և նրա դստեր անունները՝ Սառա և Էնի: Այսպես է մայրս պատմել.

«Կարծես երեկ լիներ: Պառկած էի անկողնում և Քույր Աբրահամը բերեց Սառային իմ ննջասենյակի դռան մոտ: Սիրտս ճմլվեց: Կյանքում նման անհրապույր անձնավորություն չէի տեսել՝ նիհար, զզզզված, չսանրված մազերով, կոր ուսերով, գլխիկոր հատակին նայող հայացքով: Նրա հագին չորս չափս մեծ տնային զգեստ էր: Նա չէր նայում և այնքան ցածր էր խոսում, որ չէի կարողանում լսել: Նրա ետևում թաքնված էր երեք տարեկան մի աղջնակ: Ի՞նչ եմ անելու այս էակի հետ: Նրանց գնալուց հետո ես լաց եղա: Ինձ օգնություն էր պետք, ոչ թե ավելնորդ խնդիրներ: Քույր Աբրահամը մի փոքր մնաց նրա հետ և նրանք արագ տունը կարգի բերեցին և ճաշ պատրաստեցին: Քույր Աբրահամն ասաց, որ կարող եմ մի քանի օր փորձել, հայտնելով, որ այդ աղջիկը դժվար իրավիճակում էր և, իրոք, օգնության կարիք ուներ:

Հաջորդ առավոտյան, երբ Սառան եկավ, ես նրան խնդրեցի, որ մոտենար մահճակալիս, որպեսզի նրան ավելի լավ լսեի: Նա հարցրեց, թե ինչ պետք է աներ: Ես ասացի նրան և ապա ավելացրեցի. «Իսկ ամենակարևորը իմ տղաներն են, ժամանակ անցկացրու նրանց հետ, կարդա նրանց համար, նրանք ավելի կարևոր են, քան տունը»: Նա լավ խոհարար էր, տունը մաքուր էր պահում, լվացքն անում էր և լավ էր վերաբերվում տղաներին:

Շաբաթներ անց ես իմացա Սառայի պատմությունը: [Թույլ լսողության պատճառով նա դպրոցում լավ չէր սովորում և, ի վերջո, դուրս էր մնացել: Ամուսնացել էր հարբեցող մարդու հետ, ծնվել էր Էնին, որը դարձել էր Սառայի կյանքի ուրախությունը: Մի ձմեռային գիշեր նրա ամուսինը տուն է գալիս հարբած, և ստիպում Սառային և Էնիին գիշերանոցներով նստել մեքենան, և ապա նրանց իջեցնում է մայրուղու մոտ: Նրանք այլևս նրան չէին տեսել: Ռտաբոբիկ և սառած Սառան և Էնին, ոտքով անցնելով մի քանի մղոն, հասնում են իր մոր տուն:] Մայրը թույլ է տալիս, որ նրանք մնան մի պայմանով, որ նա կատարեր ողջ տնային աշխատանքը, ճաշը պատրաստեր և հոգ տաներ դպրոցական տարիքի քրոջ և եղբոր համար:

Մենք տարանք Սառային ականջի բժշկի մոտ, և նա լսողական սարք ստացավ: . . . Մենք նրան տարանք մեծերի դպրոց, և նա ավարտեց իր դպրոցը, ստանալով վկայական: Նա գնաց երեկոյան դպրոց, ավելի ուշ ավարտեց քոլեջը և ուսուցանում էր հատուկ դպրոցում: Նա փոքր տուն գնեց: Էնին ամուսնացավ տաճարում և երկու երեխա ունեցավ: Ի վերջո, Սառան ականջների մի քանի վիրահատություն տարավ և կարողացավ նորմալ լսել: Տարիներ անց նա թոշակի անցավ և միսիա ծառայեց: . . . Սառան հաճախ էր մեզ շնորհակալություն ասում, նշելով, որ շատ բան էր սովորել ինձանից, հատկապես երբ ասել էի նրան, որ իմ տղաները կարևոր էին ավելի, քան տունը: Նա ասաց, որ նա սովորել էր այդպես վարվել Էնիի հետ: . . . Դա մի հրաշալի դաս էր ինձ համար, որ հապճեպ դատողություններ չանեի մարդկանց վերաբերյալ: Սառան շատ հատուկ կին է»:

Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մեր ուժերի սահմանում պետք է անենք ամեն ինչ, որ ազատենք մյուսներին տառապանքից և բեռից: Բացի այդ, մեր մեծագույն փրկագնող ծառայությունը կլինի նրանց Քրիստոսին մոտեցնելը: Առանց մահից ու մեղքից Նրա Փրկագնման, մենք ունենք միայն հասարակական արդարության ավետարան: Այն կարող է այժմ օգնություն և հաշտեցում պարգևել, բայց զորություն չունի երկնքից կատարյալ արդարություն և անսահման ողորմածություն իջեցնել: Կատարյալ փրկագնումը Հիսուս Քրիստոսի և միայն Նրա մեջ է: Ես խոնարհ և երախտապարտ ընդունում եմ Նրան որպես Քավիչ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Merriam-Webster's Collegiate Dictionary,* 10th ed. (1993), "redemptioner":
2. *Webster's New World College Dictionary,* 3rd ed. (1988), "redeem."
3. «Աստծո Որդին քավել է նախնական հանցանքը, որով ծնողների մեղքը չի դրվի զավակների գլխին, քանզի նրանք անմեղ են աշխարհի հիմնադրումից ի վեր» (Մոսես 6.54): Քրիստոսի Փրկագնումով բոլորը դուրս են գալիս գերեզմանից և հարություն առնում դեպի անմահություն: Ինչպես նաև, բոլորը հաղթահարում են հոգևոր մահը՝ բերվելով Աստծո ներկայություն՝ դատվելու: Հիսուսն ասել է. «Ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ կբարձրացվեն Հոր կողմից՝ կանգնելու իմ առջև, դատվելու ըստ իրենց գործերի» (3 Նեփի 27.14): Մեղքից մաքրվածները կմնան Աստծո հետ երկնային արքայությունում, իսկ ովքեր չեն ապաշխարել և մաքուր չեն, չեն կարող բնակվել սուրբ Աստծո հետ, և Դատաստանից հետո նրանքպետք է հեռանան և ուստի կրկին անգամ հոգևոր մահ կրեն: Սա երբեմն կոչվում է երկրորդ մահ կամ երկրորդ անգամ հոգևոր մահ կրել: (Տես Հելաման 14.15–18:)
4. Մեր անձնական մեղքերը ի նկատի ունենալով է, որ սուրբ գրությունները խոսում են նրանց մասին, ովքեր օգուտ չեն ստանում փրկագնումից. «Ամբարիշտները մնում են, կարծես ոչ մի փրկագնում չէր արվել, բացի արձակելը մահվան կապանքներից» (Ալմա 11.41): «Նա, ով չի գործադրում հավատք ի ապաշխարություն, ենթակա է արդարադատության պահանջների ամբողջ օրենքին. հետևաբար, միայն նրա համար, ով ունի հավատք ապաշխարության համար, իրագործվում է փրկագնման մեծ և հավերժական ծրագիրը» (Ալմա 34.16): Եթե մարդը մերժում է Փրկչի Քավությունը, նա պետք է ինքնուրույն ազատվի արդարադատության իր պարտքից: Հիսուսն ասել է. «Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. Բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես»: (Վարդապետություն և Ուխտեր 19.16–17): Չփրկագնված մարդու տառապանքը մեղքի համար հայտնի է որպես դժոխք: Դա նշանակում է ենթակա լինել դևին և աստվածաշնչյան փոխաբերական խոսքերով նկարագրվում է որպես շղթաներ կամ կրակի և ծծումբի լիճ: Լեքին աղերսում էր իր որդիներին, որ ընտրեն Քրիստոսի Փրկագնումը «և չընտրեք հավերժական մահ՝ համաձայն մարմնի կամքին ու չարությանը, որը նրանում է, որը տալիս է դևի ոգուն գերելու զորություն՝ վար բերելու ձեզ դժոխք, որ նա կարողանա իշխել ձեզ վրա՝ իր սեփական թագավորությունում» (2 Նեփի 2.29): Նույնիսկ, Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ դժոխքը վերջ ունի, և ովքեր ստիպված են անցնել դրա միջով, «փրկագնվում են դևից վերջին հարությանը» (Վարդապետություն և Ուխտեր 76.85): Համեմատաբար, մի քանի «կորստի որդիները» միայն նրանք [են], որոնց վրա երկրորդ մահը [հարատև] զորություն կունենա. Այո՛, ճշմարիտ, միայն նրանք, որոնք չեն փրկագնվի Տիրոջը հարմար ժամանակ, նրա ցասումը կրելուց հետո» (Վարդապետություն և Ուխտեր 76.32, 37–38):
5. Մարգարե Ջոզեֆ Սմիթը ցնծում էր. «Թող մահացածները հավերժական գովքի օրհներգ ասեն Էմմանուել Թագավորին, որը, նախքան աշխարհի լինելը, կարգել է այն, ինչը մեզ հնարավորություն կտա բանտից փրկագնելու նրանց. քանզի բանտարկյալները պիտի ազատվեն»: (Վարդապետություն և Ուխտեր 128.22):
6. Տես Վիկտոր Հյուգո, *Թշվառները* (1992), 91–92:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մինչ նոր հանդիպում

Ես աղոթում եմ, որ Տերը օրհնի ձեզ և պահի ձեզ, իմ եղբայրներ և քույրեր: Թող Նրա խաղաղությունը լինի ձեզ հետ՝ այժմ և ընդմիշտ:

Իմ եղբայրներ և քույրեր, ինչպիսի փառավոր համաժողով մենք ունեցանք: Ես գիտեմ, դուք կհամաձայնվեք ինձ հետ, որ ուղերձները ոգեշնչող էին: Մեր սրտերը հուզվեցին և աստվածային այս աշխատանքի մասին մեր վկայությունները ամրացան, մենք զգացինք Տիրոջ Հոգին: Թող որ մենք երկար հիշենք այս երկու անցած օրերը: Ես կոչ եմ անում ձեզ ուսումնասիրել ուղերձները ավելի խորությամբ, երբ նրանք կտպագրվեն *Ensign* և *Լիահոնա* ամսագրերի գալիք համարներում:

Մենք արտահայտում ենք մեր երախտագիտությունը յուրաքանչյուրին, ով խոսեց, ինչպես նաև նրանց, ովքեր ասացին աղոթքները: Նաև, երաժշտությունը ոգեշնչող և վեհացնող էր: Մենք սիրում ենք մեր հրաշալի Թաբերնաքլի Երգչախումբը և շնորհակալություն ենք հայտնում մյուսներին ևս, ովքեր մատուցեցին երաժշտությունը:

Միասին մենք արտահայտում ենք մեր երախտագիտությունը Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության և խորհրդի անդամներին, ովքեր ազատվեցին երեկ: Նրանց ծառայությունը գերազանց էր, նվիրումը՝ ամբողջական:

Բարձրացված ձեռքերով մենք հաստատեցինք եղբայրներին և քույրերին, ովքեր այս համաժողովին կանչվեցին նոր պաշտոնների: Մենք ուզում ենք, որ նրանք բոլորն իմանան, որ մենք հաճույքով կծառայենք իրենց հետ Վարդապետի գործի համար:

Մենք համաշխարհային Եկեղեցի ենք, եղբայրներ և քույրեր: Մեր անդամները երկրագնդի բոլոր մասերում են: Ես հորդորում եմ ձեզ լինել լավ քաղաքացիներ այն երկրներում, որտեղ ապրում եք, և լավ



հարևաններ ձեր համայնքներում, օգնելով մյուս հավատքի, ինչպեսև մեր հավատքի մարդկանց: Եկեք լինենք հանդուրժող, նաև բարի և սիրող, նրանց հանդեպ, ովքեր չեն կիսում մեր համոզմունքները և չափանիշները: Փրկիչն այս երկիր սիրո և բարի կամքի ուղերձ է բերել՝ բոլոր տղամարդկանց և կանանց համար: Թող որ մենք միշտ հետևենք Նրա օրինակին:

Ես աղոթում եմ, որ մենք տեղյակ լինենք մեր շուրջը գտնվողների կարիքներից: Կան մարդիկ, հատկապես երիտասարդների շարքում, ովքեր ողբերգորեն ներքաշված են թմրանյութերի օգտագործման, անբարոյականության, պոռնոգրաֆիայի և այլ չարիքների մեջ: Կան մարդիկ, ովքեր միայնակ են, ներառյալ՝ այրիները, ովքեր ընկերակցության և մյուսների կողմից հոգատարության կարիք ունեն: Թող որ մենք միշտ պատրաստ լինենք մեկնելու նրանց մեր օգնող ձեռքը և սիրող սիրտը:

Մենք ապրում ենք աշխարհի պատմության այնպիսի ժամանակ, երբ կան բազմաթիվ դժվար մարտահրավերներ, սակայն կան նաև մեծ հնարավորություններ և ուրախանալու պատճառներ: Կան, անշուշտ, ժամանակներ, երբ մենք կյանքում ապրում ենք հիասթափություն, ցավ, անգամ ողբերգություն: Ինչևէ, եթե մենք ապավինենք Տիրոջը, Նա կօգնի մեզ անցնել մեր դժվարությունների միջով, ինչպիսին էլ որ դրանք լինեն: Սաղմոսագիրը տվել է այս հավաստիացումը. «Իրիկունը լաց է գալիս, իսկ առաւօտը ցնծութիւն»:[1]

Իմ եղբայրներ և քույրեր, ես ցանկանում եմ, որ դուք իմանաք, թե որքան երախտապարտ եմ ես Հիսուս Քրիստոսի ավետարանի համար, որը վերականգնվեց այս վերջին օրերին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Դա մեր երջանկության բանալին է: Թող որ մենք լինենք խոնարհ և աղոթքով լի, ունենալով հավատք, որ մեր Երկնային Հայրը կարող է առաջնորդել և օրհնել մեզ մեր կյանքում:

Ես բերում եմ իմ անձնական վկայությունը ձեզ այն մասին, որ Աստված ապրում է, որ Նա լսում է խոնարհ սրտերի աղոթքները: Նրա Որդին, մեր Փրկիչը և Քավիչը, ասում է յուրաքանչյուրիս. «Ահա ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ. եթէ մէկը լսէ իմ ձայնը եւ դուռը բանայ, կ'մտնեմ նորա մօտ»:[2] Թող որ մենք հավատանք այս խոսքերին և օգտվենք այս խոստումից:

Այս համաժողովը մոտենում է ավարտին և ես հայցում եմ երկնքի օրհնությունները ձեզանից յուրաքանչյուրի համար: Թող ձեր տները լցված լինեն խաղաղությամբ, ներդաշնակությամբ, ուշադրությամբ և սիրով: Թող դրանք լցված լինեն Տիրոջ Հոգով: Թող որ դուք սնուցեք և աճեցնեք ավետարանի մասին ձեր վկայությունները, որպեսզի դրանք պաշտպանություն լինեն Սատանայի հարվածների դեմ:

Մինչև որ մենք հանդիպենք վեց ամիս անց, ես աղոթում եմ, որ Տերը օրհնի ձեզ և պահի ձեզ, իմ եղբայրներ և քույրեր: Թող Նրա խոստացված խաղաղությունը լինի ձեզ հետ՝ այժմ և ընդմիշտ: Շնորհակալություն ինձ համար և Բարձրագույն բոլոր Իշխանավորների համար ասված ձեր աղոթքների համար: Մենք խորապես շնորհակալ ենք ձեզ: Մեր Փրկչի և Քավիչի, որին մենք ծառայում ենք, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սաղմոս 30.5:
2. Հայտնություն 3.20:

Էնն Մ. Դիբ
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Ձեր սուրբ տեղերը

Լինեն դրանք աշխարհագրական տեղեր, թե պահեր ժամանակի մեջ, [ձեր սուրբ տեղերը] հավասարապես սրբազան են և ունեն անասելի զորացնող ուժ:

Մեր 2013 թվականի Միացյալի թեման վերցված է Վարդապետություն և Ուխտեր 87-րդ բաժնից: Այս հրահանգը գտնվում է Վարդապետություն և Ուխտերի երեք տարբեր բաժիններում. ակնհայտորեն այս հորդորը կարևոր է: Այն բացատրում է, թե ինչպես մենք կարող ենք ստանալ պաշտպանություն, ուժ և խաղաղություն անկայուն ժամանակներում. Ոգեշնչված հրահանգն է՝ «Կանգնեք սուրբ տեղերում, և մի շարժվեք»:[1]

Երբ ես խորհում էի այս թեմայի շուրջ, չէի կարող չհարցնել ինքս ինձ. «Որո՞նք են «սուրբ տեղերը», որոնց մասին ակնարկում է Երկնային Հայրը»: Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը խորհուրդ է տվել. «Սուրբ տեղերը ներառում են մեր տաճարները, մեր տները և Սիոնի ցցերը, որոնք . . . «պաշտպանություն և ապաստան» են:[2] Բացի սրանցից, ես հավատում եմ, որ կարող ենք գտնել ավելի շատ տեղեր: Մենք գուցե սկզբում մտածենք *տեղ* բառի մասին՝ որպես ֆիզիկական միջավայր կամ աշխարհագրական տեղանք: Սակայն, համաձայն բառարանի, *տեղը* կարող է լինել «որոշակի հանգամանք, դիրք կամ մտքի վիճակ»:[3] Սա նշանակում է սուրբ տեղերը կարող են ներառել *պահեր ժամանակի մեջ*, երբ Սուրբ Հոգին վկայում է մեզ, պահեր, երբ մենք զգում ենք Երկնային Հոր սերը կամ պահեր, երբ մենք պատասխան ենք ստանում մեր աղոթքներին: Նույնիսկ ավելին՝ ես հավատում եմ, որ ամեն ժամանակ, երբ դուք քաջություն ունենաք պաշտպանելու այն, ինչը ճիշտ է, հատկապես այն դեպքերում, երբ ոչ ոք չի կամենում դա անել, դուք ստեղծում եք սուրբ տեղ:

Ջոզեֆ Սմիթի կարճ, սակայն հրաշալի կյանքի ընթացքում նա իսկապես «[կանգնեց] սուրբ տեղերում» և չշարժվեց տեղից: Երբ պատանի էր, նա անհանգստացած էր իր համայնքում կրոնական խառնաշփոթից և կամենում էր իմանալ, թե որն էր բոլոր եկեղեցիներից ճշմարիտը: Նրա տանը մոտ գտնվող անտառապատ տարածքը դարձավ սուրբ տեղ, երբ նա ծնկի

իջավ ծառերի մեջ և ասաց իր առաջին բարձրաձայն աղոթքը: Նրա աղոթքը պատասխանվեց, և այսօր Վերջին Օրերի Սրբերն անվանում են այս անտառները որպես Սրբազան պուրակ:

Ողջ աշխարհում երիտասարդ կանայք նույնպես կանգնում են սուրբ տեղերում բնության գրկում՝ Երիտասարդ Կանանց ճամբարում: Մի ղեկավար կիսվեց ճամբարում մի երիտասարդ կնոջ հետ ունեցած փորձառությամբ: Այս աղջիկը ակտիվ չէր, և նա մի քիչ թերահավատորեն էր վերաբերվում անտառներում հոգևոր փորձառություն ունենալուն: Առաջին օրվա ավարտին նա ասաց ղեկավարին. «Ես հիանալի ժամանակ եմ անցկացնում, բայց կարո՞ղ ենք մի կողմ թողնել բոլոր խասակցությունները Հոգու մասին: Ես այստեղ եմ՝ ճամբարում, վայելելու բնությունը, լինելու ընկերների հետ և մի քիչ զվարճանալու»: Այնուամենայնիվ, տեղի ունեցավ եզրափակիչ վկայության ժողով, այս նույն աղջիկը արցունքն աչքերին ընդունեց. «Ես չեմ ցանկանում տուն գնալ: Ինչպե՞ս կարող եմ ունենալ այն, ինչ հենց հիմա եմ զգում՝ այս Հոգին ինձ հետ ողջ ժամանակ: Նա հայտնաբերել էր սուրբ վայր:

Ջոզեֆ Սմիթի կյանքում ևս մեկ սուրբ տեղ էր իր իսկ ննջարանը: Սրան գուցե դժվար լինի հավատալ, որովհետև ձեզանից շատերի նման, նա իր եղբայրների և քույրերի հետ ընդհանուր ննջարանում էր քնում: Այն դարձավ սուրբ տեղ, երբ նա աղոթեց մեծ հավատքով, խոնարհությամբ և դա անելու անհրաժեշտությամբ: Նա բացատրել է. «Երեկոյան անկողին մտնելուց հետո, որ քնեմ, ես աղոթքով ու աղաչանքով դիմեցի Ամենազոր Աստծուն՝ բոլոր մեղքերիս ու անմտություններիս թողության համար»:[4] Երեք տարիները, որ անցան Սրբազան պուրակում Ջոզեֆի առաջին տեսիլքից հետո, հեշտ չէին: Տասնյոթ տարեկան Ջոզեֆը տարել էր անվերջ ծաղր ու ծանակ, սպառնալիքներ: Բայց այդ գիշեր Ջոզեֆի ննջարանում հայտնվեց Մորոնի հրեշտակը՝ ի պատասխան նրա աղերսանքներին: Ջոզեֆը ստացավ գիտելիք և մխիթարություն: Այդ գիշեր նրա ննջարանը դարձավ սուրբ տեղ:

Մինչ նայում էի Մորմոնական Ուղերձ Երիտասարդների համար տեսաֆիլմը, ականատես եղա մեկ այլ ննջարանի, որը դարձել էր սուրբ տեղ: Տեսաֆիլմը ցույց է տալիս Ինգրիդ Դելգադոյին՝ մի երիտասարդ կնոջ Էլ Սալվադորից, որը կիսվում է տաճարի մասին իր զգացումներով: Նա ասում է. «Հրաշալի է իմանալ, որ մենք ունենք մի տեղ, որտեղ կարող ենք հեռանալ աշխարհիկ բաներից և ստանալ սրբազան արարողություններ և օգնել նրանց, ովքեր չէին կարող իրենք ստանալ դրանք այս կյանքում»: Երբ նա խոսում է, տեսաֆիլմը ցույց է տալիս Ինգրիդին իր սուրբ գրությունները կարդալիս, շրջապատված մորմոնական ազդերով, մեջբերումներով, Անձնական Զարգացման գրքույկով, իր ընտանիքի և տաճարի նկարներով և այո, իր սիրելի կենդանիների խաղալիքներով:[5] Հավանաբար, առանց նույնիսկ գիտակցելու, նա ստեղծել է իր սուրբ տեղը՝ աշխարհիկ բաներից հեռու: Ինձ հետաքրքիր է, թե քանի անգամ է Ինգրիդը կարդացել իր սուրբ գրությունները, զգացել Հոգին, աղոթել և ստացել պատասխաններ իր աղոթքներին իր սուրբ տեղում:

Սակայն ևս մեկ անսպասելի սուրբ տեղ կա Ջոզեֆ Սմիթի կյանքում՝ դա Լիբերթի բանտն է: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Ջոզեֆի կյանքում չի եղել ավելի ծանրաբեռնված ժամանակ, քան այս դաժան, անօրինական և չարդարացված բանտարկությունը»: Երեց Հոլլանդը շարունակեց բացատրել, որ Լիբերթի բանտը սկսեց կոչվել «բանտ տաճար», այն սրբազան փորձառությունների պատճառով, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթն էր ունեցել այնտեղ:[6]

Երիտասարդ Կանայք, ձեզանից կարող են լինել ոմանք, ովքեր տանում են իրենց իսկ Լիբերթի բանտը՝ մի տեղ, որտեղ դուք դիմակայում եք նվաստացման, մի տեղ, որտեղ դուք չեք զգում սիրալիր բարություն, մի տեղ որտեղ ձեզ ծաղրում են, սպառնում, կամ նույնիսկ ֆիզիկապես վնասում: Ձեզ՝ երիտասարդ կանայք, ես առաջարկում եմ Երեց Հոլլանդի խոսքերը. «Դուք կարող եք ունենալ սրբազան, հայտնություններով, խորապես ուսուցողական փորձառություններ Տիրոջ հետ *ձեր կյանքի ամենաթշվառ փորձառությունների մեջ* . . . ամենավատ հանգամանքներում, մինչ դիմակայում եք ամենացավոտ անարդարությունների, երբ առճակատում եք դժվարությունների և հակադրության, որոնք ավելի քան անհնարին են թվում հաղթահարել, քան երբևէ ձեր կյանքում»:[7] Այլ խոսքով ասած, ճիշտ Մարգարե Ջոզեֆ Սմիթի նման *դուք* կարող եք ստեղծել և կանգնել սուրբ տեղերում, նույնիսկ ամենադժվարին ժամանակներում, որ երբևէ զգացել եք:

Մի երիտասարդ չափահաս՝ Կիրստենը ինձ հետ կիսվեց իր ցավոտ փորձառությամբ: Ավագ դպրոցը նրա Լիբերթի բանտն է եղել: Բարեբախտաբար, նվագախմբի սենյակը նրան հանգստություն էր տալիս: Նա ասել է. «Երբ ես մտնում էի այդ սենյակ, թվում էր, թե մտնում էի մի ապահով վայր: Չկային նվաստացնող կամ նսեմացնող դիտողություններ, ոչ մի անպարկեշտություն: Ընդհակառակը՝ մենք լսում էինք քաջալերման և սիրո խոսքեր: Մենք բարություն էինք գործադրում: Այն երջանիկ վայր էր: Նվագախմբի սենյակը լցված էր Հոգով, երբ մենք պարապում էինք և նվագում երաժշտություն: Սենյակն այդպիսին էր մեծամասամբ նվագախմբի ղեկավարի շնորհիվ: Նա լավ Քրիստոնյա մարդ էր: Երբ ետ եմ նայում, զգում եմ, որ ավագ դպրոցը ինձ համար հոգևոր զարգացման վայր էր: Դժվար էր, բայց ես սովորեցի կենսուրախություն: Ես ընդմիշտ երախտապարտ կլինեմ իմ ապաստանի համար, իմ սուրբ տեղի՝ նվագախմբի սենյակի համար:[8]

Այս երեկո դուք խորհել եք ձեր սուրբ տեղերի մասին: Ես խնդրել եմ հարյուրավոր երիտասարդ կանանց կիսվել ինձ հետ իրենց «սուրբ տեղերի» մասին: Լինեն դրանք աշխարհագրական տեղեր, թե պահեր ժամանակի մեջ, դրանք հավասարապես սրբազան են և ունեն անասելի զորացնող ուժ: Ահա՝ նրանց ինը զգայուն արձագանքները.

- Մեկ՝ «Ես հիվանդանոցում էի, գրկումս պահած իմ նորածին եղբորս»:
- Երկու՝ «Ամեն անգամ, երբ կարդում եմ իմ հայրապետական օրհնությունը, զգում եմ, որ ես ճանաչված եմ և սիրված իմ Երկնային Հոր կողմից»:
- Երեք՝ «Այն օրը, երբ ես դարձա 12 տարեկան, ծխի երիտասարդ կանայք եկան և «սիրո հարձակում»[9] գործեցին: Ես այնքան սիրված, ողջունված, ընդունված և երջանիկ զգացի»:
- Չորս՝ «Մի օր, երբ կարդում էի սուրբ գրությունները, մի արտահայտություն գրավեց ուշադրությունս: Ես գտա իմ աղոթքների պատասխանը»:
- Հինգ՝ «Ես գնացի մի երեկույթի, որտեղ մարդիկ խմում էին և անընդունելի այլ վարքի տրվում: Հոգին ասաց ինձ շրջվել և տուն գնալ: Ես արեցի այդպես, և այո, եղան հասարակական հետևանքներ»: Այնուամենայնիվ, այդ պահը ինձ վստահություն տվեց, որի կարիքն ունեի, որպեսզի իմանայի, որ կարող եմ ապրել ավետարանով»:
- Վեց՝ «Հաղորդության ժամանակ, մինչ ես մտածում էի Քավության մասին, հասկացա, որ պետք է ներեի ինչ որ մեկին, ում վրա բարկացած էի: Ներելու իմ ընտրությունը դրական գործ էր, որը կբերեր Քավությունը իմ ամենօրյա կյանք»:
- Յոթ՝ «Մայրիկիս հետ Նոր Սկիզբ ծրագրին հաճախելուց հետո նա համբուրեց այտս և ասաց ինձ, որ սիրում է ինձ: Դա առաջին անգամ էր, որքան հիշում եմ, որ նա արեց այդ»:
- Ութ՝ «Իմ եպիսկոպոսի հավաստիացմամբ, ես իմացա, որ սուրբ գրություններում տրված խոստումը ճիշտ էր. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան»:[10] Ես հույսով լցվեցի և իմացա, որ կարող էի սկսել ապաշխարության իմ երկարատև գործընթացը:
- Վերջինը՝ «Մի երեկո ես հավաքեցի քաջությունս՝ կիսվելով իմ զգացումներով ավետարանի և Մորմոնի Գրքի մասին իմ լավագույն ընկերուհու հետ: Հետագայում արտոնություն ունեցա մասնակցել նրա մկրտությանը: Այժմ մենք միասին ենք հաճախում Եկեղեցի»:

Թույլ կտայի՞ք կիսվել ձեզ հետ իմ սուրբ տեղերից մեկի մասին: Ես զգում էի զերճնշված, երկյուղով լցված և լիովին մենակ: Լուռ ես աղոթեցի. «Երկնային Հայր, ես չգիտեմ, թե ինչպես անեմ այս: Խնդրում եմ, խնդրում եմ, օգնիր ինձ»: Շուտով մի անձնավորություն անսպասելիորեն առաջ եկավ, ձեռքը դրեց ուսիս և ասաց անկեղծ, քաջալերող խոսքեր: Այդ պահին ես խաղաղություն զգացի: Ես զգացի ընդունված: Ամեն ինչ փոխվեց: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի խոսքերը միտքս եկան. «Աստված մեզ նկատում է և Նա հսկում է մեզ: Բայց սովորաբար ուրիշ մարդու միջոցով է Նա բավարարում մեր կարիքները»:[11] Ինձ համար այդ պահին, այդ տեղը սուրբ դարձավ:

Սիրելի երիտասարդ կանայք, կան անհամար այլ սուրբ տեղեր, որոնց վերաբերյալ ես կկամենայի, որ կարողանանք կիսվել միմյանց հետ: Երբ տուն վերադառնաք այս երեկո, ես կխրախուսեի ձեզ գրի առնել ձեր օրագրում այն տեղերը, որոնք դուք ճանաչում եք և հիշում: Այս տեղերը տալիս են ձեզ պաշտպանություն, ուժ և խաղաղություն անկայուն ժամանակներում: Ինձ համար պարզ է, որ *ձեզանից* հազարավորները կանգնած են սուրբ տեղերում: Ձեր վկայությունները դառնում են ավելի ուժեղ, որովհետև դուք պաշտպանում եք ճշմարտությունը և արդարակեցությունը *փառահեղ* ուղիներով:

Դուք՝ Եկեղեցու ազնիվ երիտասարդություն, իմ հերոսներն եք: Ես սիրում եմ ձեզ: Ես զգում եմ Երկնային Հոր աներևակայելի սերը ձեր հանդեպ և բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: Նա սպասում է, պատրաստ աջակցելու ձեզ, երբ «կանգնեք . . . սուրբ տեղերում և չշարժվեք»: Ես սիրում եմ և աջակցում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, մեր ճշմարիտ և քաջալերող մարգարեին: Ես ասում եմ այս բաները Հիսուս Քրիստոսի անունով ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 87.8; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.32; 101.22:
2. Ezra Taft Benson, "Prepare Yourself for the Great Day of the Lord," *New Era,* May 1982, 50; տես նաևо Վարդապետություն և Ուխտեր 115.6::
3. Merriam-Webster Online, "place," merriam-webster.com/dictionary/place.
4. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.29:
5. Տես "Practice, Celebration, Dedication: Temple Blessings in El Salvador," lds.org/youth/video:
6. Jeffrey R. Holland, "Lessons from Liberty Jail," *Ensign,* Sept. 2009, 26, 28.
7. Jeffrey R. Holland, "Lessons from Liberty Jail," 28.
8. Անձնական զրույց հեղինակի հետ:
9. Երբեմն Միացյալ Նահանգներում կոչում են «սրտի կաթված»:
10. Եսայիա Ա.18:
11. Spencer W. Kimball, "The Abundant Life," *Tambuli,* June 1979, 3.

Սան Սալվադոր, Էլ Սալվադոր

Մերի Ն. Քուք
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության
Առաջին Խորհրդական

Փրկելով մի աղջիկ՝ սերունդներ եք փրկում

Ձեր առաքինի կյանքը կօրհնի ձեր նախնիներին, ձեր ներկայիս ընտանիքը և գալիք ընտանիքի անդամներին:

Ինձ համար մեծ պատիվ է խոսքս հղել Եկեղեցու քաջարի երիտասարդ աղջիկներին: Մենք տեսնում ենք, որ դուք առաջ եք ընթանում ուխտերը պահելու ճանապարհով, և գիտենք, որ ձեր առաքինի կյանքը կօրհնի ձեր նախնիներին, ձեր ներկայիս ընտանիքը և գալիք ընտանիքի անդամներին, և ինչպես Գորդոն Բ. Հինքլին է ասել. «Փրկելով մի աղջիկ, սերունդներ եք փրկում»:[1]

Ձեր ուխտի ճանապարհը սկսվեց այն ժամանակ, երբ մկրտվեցիք և ստացաք Սուրբ Հոգու պարգևը: Այն շարունակվում է ամեն շաբաթ հաղորդության ժողովին՝ սուրբ վայրում, որտեղ նորոգում եք ձեր մկրտության ուխտը: Այժմ է տաճարային ուխտերին պատրաստվելու ժամանակը: «Սուրբ տաճարներում կատարվող սրբազան արարողություններ ու ուխտերը հնարավոր են դարձնում [մեզ] համար՝ վերադարձը դեպի Աստծո ներկայությունը, իսկ [մեր] ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը»:[2]

Կանգնեք սուրբ վայրերում հանուն ձեր նախնիների: «Յուրաքանչյուր մարդկային էակ այս երկիր է գալիս որպես իր ծնողների սերունդ: Մենք ունենք մեր նախնիների հետ միանալու բնական ձգտում»:[3] Մասնակցելով ընտանիքի պատմության և տաճարի աշխատանքին, դուք միահյուսում եք ձեր կյանքը ձեր նախնիների կյանքին՝ փրկող ծեսեր պարգևելով նրանց:

Կանգնեք սուրբ վայրերում ձեր և ձեր հարազատ ընտանիքի համար: Ձեր արդար օրինակը մեծ ուրախության աղբյուր կլինի՝ անկախ ձեր ընտանեկան պայմաններից: Ձեր արդար ընտրությունները ձեզ արժանի կդարձնեն, որ սուրբ ուխտեր կապեք և պահեք, որն էլ ձեր ընտանիքը հավերժ միասին կկապի:

Կանգնեք սուրբ վայրերում հանուն ձեր ապագա ընտանիքի: Պարտավորվեք սուրբ քահանայությամբ կնքվել ձեր ամուսնու հետ տաճարում, երբ հավերժական ընտանիք հիմնեք: Ձեր երեխաները կօրհնվեն ճշմարտությամբ, երբ ձեր առաքինի օրինակը և անխախտ վկայությունը միահյուսեք նրանց կյանքին և ցույց տաք նրանց ուխտի ճանապարհը:

Ես այդ հավերժական սկզբունքների արտացոլումը տեսա վերջերս կայացած Երիտասարդների Համաշխարհային Արվեստի Մրցույթում: Մեգան Վորներ Թեյլորը թվային լուսանկարների իր աշխատանքով նորովի մոտեցում էր ցուցաբերել Քրիստոսի տաս կույսերի առակին:[4] Ես հանդիպեցի Մեգանին, և նա բացատրեց տաս կույսերի խորհրդանիշը, որոնք առաքինի և հավատքով երիտասարդ աղջիկներ են, պատրաստ կապելու և պահելու տաճարային սուրբ ուխտերը: Բոլոր իմաստուն կույսերի պես, նա, իր հետևողական արդարակյաց ապրելակերպով, անհատապես պատրաստվել է՝ ամեն անգամ մի կաթիլ յուղ ավելացնելով լամպին: Ես նկատեցի նրա մազերի հետաքրքիր հյուսքը, և Մեգանը բացատրեց, որ հյուսքը ներկայացնում է երիտասարդ կնոջ արդարակյաց կյանքը՝ միահյուսված անթիվ սերունդներին: Մազերի հյուսքի մի փունջը ներկայացնում էր իր սերն ու հարգանքը իր նախնիների հանդեպ, երկրորդ փունջը՝ իր արդարակյաց ազդեցությունը ներկայիս ընտանիքի վրա, իսկ երրորդ փունջը՝ իր պատրաստված կյանքը միահյուսելը ապագա սերունդների կյանքերին:

Ես հանդիպել եմ մեկ այլ երիտասարդ կնոջ, ով հոգևոր վաղ պատրաստվածությամբ իր արդարակյաց կյանքը միահյուսել է շատ սերունդների:

Մի գեղեցիկ սեպտեմբերյան օր ես և ամուսինս տաճարում սպասում էինք տաճարային արարողություններ կատարելու մեր հերթին: Մեր ընկեր Քրիսը ներս մտավ: Ուրախ էինք տեսնել այդ երիտասարդին, որը նոր էր վերադարձել Ռուսաստանում կատարած իր միսիայից:

Երբ նիստը սկսվում էր, մի հաճելի երիտասարդ աղջիկ նստեց իմ կողքին: Նա փայլում էր, ժպտում և լի էր լույսով: Փորձելով ծանոթանալ, ցածրաձայն ներկայացա: Նա շշնջաց իր անունը՝ Քեյթ, և նրա ազգանունից ես ճանաչեցի նրա ընտանիքին, որը բնակվել էր Միչիգանում, որտեղ մի ժամանակ մեր ընտանիքն էր ապրել: Քեյթը նրանց չափահաս դուստրն էր, և հինգ շաբաթ առաջ էր վերադարձել Գերմանիայի իր միսիայից:

Նիստի ընթացքում մի միտք էր անընդհատ գալիս՝ «Քեյթին

Քվին Քրիկ, Արիզոնա, ԱՄՆ

ծանոթացրու Քրիսի հետ»: Այդ հուշումն անտեսեցի մտածելով՝ ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս: Երբ պատրաստվում էինք դուրս գալ, Քրիսը մոտեցավ ցտեսություն ասելու, և ես, օգտվելով առիթից, Քեյթին մոտեցնելով շշնջացի. «Դուք երկու առաքինի երիտասարդներ եք, արժե որ միմյանց ճանաչեք»: Ես տաճարից հեռացա բավարարված, որ հետևեցի այդ հուշումին:

Տան ճանապարհին ամուսնուս հետ քննարկում էինք, թե որքան շատ դժվարությունների միջով է անցել Քեյթի ընտանիքը: Դրանից հետո ես ավելի լավ ճանաչեցի Քեյթին և հասկացա, թե ինչու էր նա այդքան ուրախ այն օրը տաճարում:

Քեյթը միշտ փորձել էր մնալ իր ուխտի ուղու վրա՝ փնտրելով սուրբ վայրեր: Նա մեծացել էր այնպիսի ընտանիքում, որտեղ ընտանեկան երեկո անցկացնելը, միասին աղոթելը և սուրբ գրություններն ուսումնասիրելը իրենց տունը դարձրել էր սուրբ վայր: Մանուկ հասակում սովորել էր տաճարի մասին, իսկ ընտանեկան երեկոյի սիրված երգն էր՝ «Ուզում եմ տեսնել տաճարը»:[5] Փոքր հասակում տեսնում էր, ինչպես են իր ծնողներն օրինակ ծառայում, սուրբ վայր փնտրելով, երբ հանգստյան օրերին երեկոյան կինոնկար դիտելու կամ հյուր գնալու փոխարեն գնում էին տաճար:

Նա շատ էր սիրում իր հորը, որն իր քահանայության իշխանությունն օգտագործելով օգնել էր դստերը մկրտության ուխտ կապել: Այնուհետև նա, ձեռքերը դնելով դստեր գլխին, շնորհել էր Սուրբ Հոգին: Քեյթն ասաց. «Ես այնքան ոգևորված էի Սուրբ Հոգին ստանալու համար, գիտեի, որ այն կօգնի ինձ մնալ հավերժական կյանքի ուղու վրա»:

Կյանքը շարունակվում էր, և Քեյթն իրեն շատ օրհնված և երջանիկ էր զգում: Երբ 14 տարեկան էր, նա գնաց ավագ դպրոց և սիրեց սեմինարիան, որն ավետարանը սովորելու մեկ այլ սուրբ վայր է: Մի օր նրա ուսուցիչը սկսեց խոսեց փորձությունների մասին և հավաստիացրեց, որ բոլորս էլ դիմակայելու ենք դժվարությունների: Նա մտածեց. «Ես փորձություններ չեմ ուզում ունենալ, ես չեմ ուզում լսել այդ մասին»:

Մի քանի շաբաթ անց, Զատկի կիրակի առավոտյան նրա հայրը շատ թույլ զգաց իրեն: Քեյթն ասաց. «Հայրս շատ առողջ մարդ էր, նա մարաթոնի վազորդ էր: Մայրս, անհանգստանալով հորս առողջությամբ, նրան տարավ հիվանդանոց: 36 ժամվա ընթացքում նա ուժեղ կաթված տարավ և մարմնի մեծ մասն անզգայացավ: Նա կարողանում էր թարթել աչքերը, սակայն մարմինը չէր աշխատում: Հիշում եմ, տեսնելով նրան այդ վիճակում, մտածեցի՝ «Օ, ոչ, այդպես էլ կա, սեմինարիայիս ուսուցիչը ճիշտ էր, ես փորձության միջով եմ անցնում»: Մի քանի օրից Քեյթի հայրը մահացավ:

Քեյթը շարունակեց իր պատմությունը. «Այնքան դժվար էր, երբեք չես ուզում կորցնել քո կյանքի հերոսին: Գիտեմ, կարող էի դա դարձնել աճի համար խթան կամ թույլ տալ, որ այն խաթարի իմ աճը: Ես չէի ուզում, որ դա կործաներ իմ կյանքը, որովհետև դեռ 14 տարեկան էի: Փորձում էի, հնարավորինս, մոտ լինել Տիրոջը: Շատ էի կարդում սուրբ գրություններս: Ալմայի գլուխ 40-ը հավաստիացնում էր ինձ, որ հարությունն իրական

է, և Քրիստոսի Քավությամբ ես կարող եմ կրկին լինել հայրիկիս հետ: Շատ էի աղոթում: Հաճախ էի օրագրումս գրառումներ կատարում: Եվ այդպես վկայությունս վառ էի պահում: Ամեն շաբաթ Եկեղեցի և երիտասարդ կանանց դասերին էի հաճախում: Ինձ շրջապատել էի լավ ընկերներով: Մոտ էի մնում հոգ տանող հարազատներին, հատկապես մայրիկիս, որը մեր ընտանիքի խարիսխն էր: Ես քահանայական օրհնություններ էի խնդրում իմ պապիկից և քահանայության այլ կրողներից»:

Այդ հետևողական ընտրությունները, ինչպես իմաստուն կույսերի օրինակում, յուղ էին ավելացնում Քեյթի լամպին: Նրան օգնում էր կրկին իր հայրիկի հետ լինելու ցանկությունը: Քեյթը գիտեր, որ իր հայրը տեղյակ էր իր ընտրություններից, և չէր ուզում հուսախաբ անել նրան: Նա ցանկանում էր հավերժական կապ ունենալ նրա հետ և հասկանում էր, որ ուխտերի ուղու վրա մնալով իր կյանքը ամուր կմիահյուսվի նրա կյանքին:

Ինչևէ, փորձությունները չվերջացան: Երբ Քեյթը 21 տարեկան էր և ստացավ իր միսիայի փաստաթղթերը, մոր մոտ հայտնաբերվեց քաղցկեղ: Քեյթը պետք է կարևոր որոշում կայացներ իր կյանքում: Պետք է տանը մնար և աջակցեր մայրիկին, կամ միսիա գնար: Մայրիկին քահանայական օրհնություն տրվեց, որը խոստում էր պարունակում, որ նա կապաքինվեր: Այդ օրհնությամբ փարատված, Քեյթը հավատքով առաջ գնաց և պատրաստվեց միսիայում ծառայելուն

Քեյթն ասաց. «Դա դեպի խավար քայլ կատարելու նման մի բան էր, բայց միսիայում ծառայելիս, ի վերջո, լույս ծագեց և լուր ստացա, որ մայրիկիս տրված օրհնությունը իրականություն է դարձել: Այնքան ուրախ էի, որ չհրաժարվեցի Տիրոջը ծառայելուց: Կարծում եմ, դժվար պահերին հեշտ է անգործության մատնվել, կասեցնելով առաջընթացը, բայց, եթե Տիրոջը դնում ես առաջին տեղում, ձախորդությունները կարող են հանգեցնել հրաշալի օրհնությունների: Տեսնում ես Նրա ձեռքը և հրաշքների ականատեսն ես լինում»: Քեյթի կյանքում իրականություն դարձան Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերը. «Մեր առավել նշանակալից հնարավորությունները կարող են բացվել ամենադժվար պահերին»:[6]

Քեյթը նման հավատք ուներ, որովհետև հասկանում էր փրկության ծրագիրը: Նա գիտեր, որ մենք ապրել ենք նախկինում, երկրի վրա կյանքը փորձության ժամանակ է, և մենք կրկին ապրելու ենք: Նա հավատում էր, որ իր մայրը կօրհնվի, սակայն հոր հետ տեղի ունեցածից հետո, գիտեր, որ եթե մայրը մահանար, ամեն ինչ լավ էր լինելու: Նա ասաց. «Հայրիկիս մահից հետո ես ոչ միայն կարողացա վերագտնել ինձ, այլ այն դարձավ իմ էության լավ մասը, և եթե մայրս էլ հեռանար այս կյանքից, նույն կերպ կլիներ: Դա կհյուսեր իմ կյանքի մեծագույն վկայությունը»:[7]

Երբ տաճարում հանդիպեցի Քեյթին, նա սուրբ վայր էր փնտրում: Փափագելով ամուր հյուսել հավերժական կապերը, որոնք հնարավոր է անել միայն տաճարային ծառայության շնորհիվ, նա հետևում էր մշտապես տաճար այցելելու իր ծնողների օրինակին:

Շատ բան տեղի չունեցավ այդ երեկո, երբ ես Քեյթին ծանոթացրեցի Քրիսի հետ, բայց հաջորդ կիրակի մեկ այլ սուրբ վայր փնտրելիս, Քեյթը տեսավ Քրիսին ինստիտուտի հավաքի ժամանակ հարյուրավոր երիտասարդ ամուրիների մեջ: Այնտեղ նրանք ավելին իմացան միմյանց մասին: Մի քանի շաբաթ անց Քրիսը հրավիրեց նրան միասին դիտել գերագույն ժամադրավը: Իրենց ժամադրությունների ընթացքում նրանք ամեն անգամ փնտրում էին վայրեր, որտեղ ներկա էր Հոգին, և, ի վերջո կնքվեցին տաճարում, սուրբ վայրում, որտեղ ծանոթացել էին: Այժմ նրանք միասին կատարում են ծնողի իրենց սուրբ պարտականությունը, հյուսելով փրկության ծրագրի մասին իրենց վկայությունները երեք փոքր

տղաների կյանքում, ցույց տալով նրանց ուխտի ուղին:

«Փրկելով մի աղջիկ, սերունդներ եք փրկում»: Ճիշտ ուղու վրա մնալու 14-ամյա Քեյթի որոշումը մշտապես յուղ է ավելացրել նրա լամպի մեջ, և սուրբ վայրերում կանգնելը *փրկել* և *փրկելու* է սերունդներ: Իր նախնիներին փնտրելը և տաճարում ծառայելը նրա սիրտը միահյուսել է նրանց սրտերին: Ընտանիքի պատմության և տաճարի աշխատանքին մասնակցելը նմանապես կհյուսի ձեր սրտերը միմյանց և ձեր նախնիներին հավերժական կյանքի հնարավորություն կպարգևի:

Տանն ավետարանով ապրելը ևս յուղ կավելացնի ձեր լամպին և ձեր տանը կհյուսի հոգևոր ուժ այժմ և կօրհնի ձեր ապագա ընտանիքն անհամար եղանակներով: Ավելին, ինչպես Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն է ասել. «Եթե մեր ծնողների օրինակը լավը չէ, մենք պարտավոր ենք խզել այդ շղթան . . . և ճիշտ ավանդույթներ ուսուցանել գալիք սերունդներին»:[8]

Այժմ որոշեք անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի ձեր ամուր վկայությունը և օրինակը միահյուսվի նախկին, ներկայիս և ապագա շատ սերունդների կյանքին: Ես վկայում եմ, որ ձեր առաքինի կյանքը ոչ միայն կփրկի սերունդներ, այլ կփրկի նաև *ձեր* հավերժական կյանքը, քանզի դա մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու և իսկական ուրախություն գտնելու միակ ուղին է՝ այժմ և հավերժության մեջ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “Standing Strong and Immovable,” *Worldwide Leadership Training Meeting,* Jan. 10, 2004, 20; see also Gordon B. Hinckley, “Our Responsibility to Our Young Women,” *Ensign,* Sept. 1988, 10.
2. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
3. Russell M. Nelson, “Generations Linked in Love,” *Լիահոնա,* մայիս 2010, 92:
4. Տես Մատթեոս 25.1–13:
5. Տես “I Love to See the Temple,” *Children’s Songbook,* 95:
6. Thomas S. Monson, “Meeting Your Goliath,” *New Era,* June 2008, 7.
7. Անձնական զրույց հեղինակի հետ, 2013:
8. Robert D. Hales, “How Will Our Children Remember Us?” *Ensign,* Nov. 1993, 10.

Էլեյն Ս. Դալտոն
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Մի շարժվեք

Կանգնեք անսասան: Եղեք անխախտ: «Պաշտպանեք ճշմարտությունը և արդարությունը»: Կանգնեք որպես վկա: Եղեք դրոշ աշխարհի համար: Կանգնեք սուրբ վայրերում:

Այս երեկո ես կանգնել եմ սուրբ վայրում՝ այս ամբիոնի առաջ, մարգարեների, տեսանողների, հայտնողների և Աստծո թագավորական դուստրերի ներկայությամբ: Հրաշալի ժամանակ է երկրի վրա ապրելու և երիտասարդ աղջիկ լինելու համար: Դուք մեր Երկնային Հոր ընտրյալ դուստրերն եք: Նա սիրում է յուրաքանչյուրիդ, ես՝ նույնպես:

Իմ գրասեղանին դրված է Կրիստինա անունով երիտասարդ կնոջ բրոնզաձույլ մի քանդակ: Կրիստինայի իրական չափերով բնօրինակը կանգնեցրած է Դանիայում Կոպենհագենի ծովափին. նա նայում է ծովից այն կողմ՝ դեպի Սիոն: Եկեղեցուն միանալու և տնից հեռանալու նրա որոշումը հեշտ չտրվեց, ինչպես տեսնում եք նա կանգնած է խստաշունչ քամիներին դեմ հանդիման: Նա կանգնած է հաստատուն, իմանալով, որ թեպետ դժվար, բայց ճիշտ քայլ է կատարում: Նրա ժառանգներն այս քանդակը դրել են այդ ծովապատնեշին՝ որպես տուրք Կրիստինային, սերունդների համար հավերժական նշանակություն ունեցող այդ որոշման համար:

Ինձ համարԿրիստինայի քանդակը ներկայացնում է ձեզանից յուրաքանչյուրին: Նրա նման, դուք կանգնած եք շատ կարևոր որոշումների առաջ և ամեն օր ընտրություններ եք կատարում, որոնք կկերտեն ոչ միայն ձեր ապագան, այլև սերունդների ճակատագրերը: Դուք ևս դիմակայում եք հակառության, ձախորդության, հասակակիցների ճնշման և բարոյական ախտի խստաշունչ հողմերին: Եվ չնայած մեր հասարակության մեջ մոլեգնող այդ փոթորիկներին, դուք կանգնած եք անսասան և ապրում եք ավետարանով: Կրիստինայի նման, դուք առաջնորդվում եք Սուրբ Հոգով, կայացնում եք ճիշտ որոշումներ: Դուք հավատարիմ եք և թագավորական:

Սիրող Երկնային Հորից ստացված չկա առավել կարևոր խորհուրդ, կարծում եմ, քան ձեզանից յուրաքանչյուրին ուղղված նրա հորդորը՝ «Կանգնեք սուրբ տեղերում և մի շարժվեք»:[1] Նա ասում է՝ Կանգնեք անսասան: Եղեք անխախտ:[2] «Պաշտպանեք ճշմարտությունը և արդարությունը»:[3] Կանգնեք որպես վկա:[4] Եղեք դրոշ աշխարհի համար: Կանգնեք սուրբ վայրերում: Այսպիսով, իմ ուղերձը ձեզանից յուրաքանչյուրին շատ պարզ է՝ Մի շարժվեք:

Առաջինը, եղեք անսասան ճիշտն ընտրելիս: Այս վերջին օրերին չկան փոքր որոշումներ: Որոշումները, որ այժմ կատարում եք, որոշիչ նշանակություն ունեն: Ազատ կամքը կամ ընտրելու ազատությունը Իր զավակներին տված Աստծո մեծագույն պարգևներից է: Դա երջանկության ծրագրի մի մասն է, որը դուք և ես ընտրել և պաշտպանել ենք մեր նախաերկրային կյանքում: Այնպես ապրեք, որ լսեք Սուրբ Հոգուն, և Նա կօգնի ձեզ ճիշտ որոշումներ կայացնել: Իրականում, նա կասի ձեզ «բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:[5]

Մի քանի շաբաթ առաջ ես վերադարձել էի իմ հին ավագ դպրոց՝ առաջին անգամ այսքան տարիների ընթացքում: Ես մասնակցում էի ցցի համաժողովին, որն անցկացվում էր իմ դպրոցի դահլիճում: Քայլելով սրահներով, հիշողությունները հեղեղել էին միտքս: Ես հիշեցի, թե ինչպես էի զգում, երբ երիտասարդ հասակում հաճախում էր ավագ դպրոց՝ անապահով, ուժերիս հանդեպ անվստահ, քաշվող, համապատասխանելու մեծ ցանկությամբ: Մտա դահլիճ: Կրկին հիշողությունները հեղեղեցին միտքս: Ես քաջածանոթ էի դահլիճի ամեն մի մանրուքին: Միայն մի բան էր փոխված, դա՝ ես էի:

Այդ օրն առիթ ունեցա կանգնելու ամբիոնի մոտ, որտեղ շատ անգամներ կանգնել էի որպես ուսխորհրդի անդամ: Ներկաների մեջ ես անգամ տեսա իմ դասընկերներից մի քանիսին, որոնց հետ այն տարիներին ժամադրվել էի: Բայց այս անգամ ժողով անցկացնելու փոխարեն ես արտոնություն ունեի իմ դպրոցի դահլիճում «կանգնել որպես վկա»[6] և բերել իմ վկայությունը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին:

Երիտասարդ կանայք, հետևեք, որ մյուսների հետ ձեր հարաբերություններն այնպիսին լինեն, որ 40 տարի անց չամաչեք: Ոչ հասակակիցների ճնշումները, ոչ ընդունված լինելը և ոչ էլ հանրաճանաչությունը չարժեն անգամ մեկ փոխզիջում: Երիտասարդ տղաների վրա ձեր ազդեցությունը կօգնի նրանց արժանի մնալ քահանայության զորությանը, տաճարային ուխտերին և միսիայում ծառայությանը: Ով գիտե, քառասուն տարի անց, գուցե նրանցից մեկը մոտենա ձեզ ձեր ավագ դպրոցի դահլիճում և շնորհակալություն ասի, որ օգնել եք իրեն արժանի մնալ քահանայության պարտականությանը և պատվավոր միսիա ծառայելուն: Եվ ով գիտե, գուցե նույնիսկ նամակ ստանաք այդ երիտասարդ տղաներից մեկի կնոջից, որը շնորհակալություն կհայտնի *ձեզ* այն ազդեցության համար, որ ունեցել եք իր ամուսնու և իրենց ապագա ընտանիքի վրա: Ձեր այսօրվա ընտրությունները կարևոր են: Ձեր այսօրվա ընտրություններն ազդում են ոչ միայն ձեր, այլ ուրիշների վրա: Դրանք հավերժական նշանակություն ունեն: Մի շարժվեք:

Երկրորդ, անսասան եղեք առաքինություն և սեռական մաքրություն պահելու ձեր ցանկության և պարտավորության մեջ: Փայփայեք առաքինությունը: Ձեր անձնական մաքրությունը ձեր զորության ամենամեծ աղբյուրներից մեկն է: Երբ երկիր եկաք, ձեզ թանկագին նվեր տրվեց. դա ձեր մարմինն էր: Ձեր մարմինը ձեր մտքի գործիքն է և աստվածային պարգև է, որով պետք է գործադրեք ձեր ազատ կամքը: Այս պարգևից զրկվել է սատանան, ուստիև նրա բոլոր հարձակումները ուղղված են ձեր մարմնի դեմ: Նա ցանկանում է, որ դուք արհամարհեք ու չարաշահեք ձեր մարմինը: Անհամեստությունը, պոռնոգրաֆիան,

անբարոյականությունը, դաջվածքները, պիրսինգները, թմրամոլությունը և բոլոր տեսակի հակումները՝ այդ թանկ պարգևին տիրանալու և ձեր ազատ կամքը կասեցնելու արդյունք են: Պողոսը հարցրել է. «Չգիտե՞ք որ դուք Աստծո տաճար եք և Աստծո Հոգին բնակուած է ձեզանում»:[7]

Ձեր մարմինը տաճար է: Ինչո՞ւ: Որովհետև այն ունակ է օթևան լինելու ոչ միայն ձեր հավերժական հոգու, այլև այն հավերժական հոգիների համար, ովքեր կգան երկիր որպես ձեր հավերժական ընտանիքի մաս: Երեց Դալլին Հ. Օքսն ուսուցանել է. «Մահկանացու կյանք ստեղծելու զորությունը վեհ զորություն է»:[8] Ձեր դերը կարևոր դեր է: Աստված ձեզ սուրբ պարտականություն է տվել: Դուք պատրաստվում եք լինել գալիք սերունդների ապագա մայրերը: Մաքուր և արժանի պահեք ձեզ, և պահպանեք այն, ինչը «ամենաթանկն է ու արժեքավորը՝ բոլոր բաներից առավել». դա ձեր առաքինությունն ու մաքրաբարոյությունն է:[9] Որպես Երկնային Հոր ընտրյալ դուստրեր, անձամբ ձեզ ուղղված Նրա իմաստուն խորհուրդն է՝ «Իմ առաջ քայլեք առաքինության շավիղներում»:[10]

Առաքինությունը տաճարի ոսկե բանալին է: *Այնպես որ, երրորդը, եղեք անսասան, որպեսզի արժանի լինեք ուխտեր կապելուն և պահելուն:* Մկրտության ժամանակ կապած ուխտը կպահի ձեզ առաքինության և երջանկության ուղու վրա, եթե ամեն շաբաթ նորոգեք այն՝ ընդունելով հաղորդությունը: Պահելով ձեր մկրտության ուխտը, դուք այլ տեսք կունենաք, այլ կերպ կհագնվեք, և ձեր վարքով կտարբերվեք աշխարհից: Այդ ուխտը պահելով, դուք կունենաք Սուրբ Հոգու առաջնորդությունը: Կանգնեք սուրբ վայրերում և մի մոտեցեք անգամ այնպիսի միջավայրի կամ երաժշտության, լրատվամիջոցների կամ ընկերությունների, որոնց պատճառով կկորցնեք Սուրբ Հոգու ընկերակցությունը:[11] Եվ ձեր ուխտերը պահելով, դուք արժանի և պատրաստված կլինեք մտնելու Տիրոջ սուրբ տաճարը:

Եվ վերջում, անսասան եղեք Փրկչի Քավությունն ընդունելու մեջ: Քավությունը ձեզ և ինձ համար է: Դա լիազորող և փրկագնող զորություն է: Եթե արժանի չեք համարում ձեզ կանգնելու սուրբ վայրերում, մեկ օր ավել անգամ մի կրեք այդ բեռը: Մահկանացու կյանքում մենք բոլորս էլ սխալներ ենք գործում: Վստահ եղեք, որ Փրկիչը ձեզ սիրում է այնքան, որ ձեզ համար հնարավոր է դարձրել փոխվելը և ապաշխարելը, եթե սխալ եք գործել: Սատանան չի ցանկանում, որ մտածեք, թե կարող եք արդյոք փոխվել:[12] Նա կփորձի համոզել ձեզ, որ ամեն ինչ կորած է: Սուտ է: Դուք կարող եք վերադառնալ, կարող եք ապաշխարել: Կարող եք լինել մաքուր և սուրբ՝ ի շնորհիվ Փրկչի անսահման Քավության:

Խոսքս կուզեի ավերտել երբևէ պատմված ամենահրաշալի սիրո պատմություններից մեկով: Գուցե հարցնեք. «Ի՞նչ կապ ունի սիրո պատմությունը սուրբ վայրերում կանգնելու հետ»: Ասեմ, որ իրոք կապ ունի: Սա Ռեբեկա անունով մի երիտասարդ աղջկա մասին է:[13]

Ըստ պատմության, Աբրահամը հանձնարարում է իր ծառային, որ գտնի այնպիսի երիտասարդ աղջիկ, որն արժանի կլիներ իր որդի Իսահակի կինը լինելու: Նա պետք է արժանի լիներ ուխտյալ ամուսնությանը՝ լիներ առաքինի, մաքուր և արժանավայել: Այսպիսով, նա ուղարկում է իր ծառային երկար ու վտանգավոր ճամփորդության դեպի Հարան կոչվող վայր: Այնտեղ գնալու պատճառը պարզ է՝ սուրբ տղամարդկանց պետք են սուրբ կանայք՝ իրենց կողքին կանգնելու համար: Ծառան քաղաքին մոտենալով կանգ առավ ջրհորի մոտ, որպեսզի ջուր տար իր ուղտերին, և աղոթեց, որ հանդիպեր մի լավ աղջկա և ճանաչեր նրան, երբ նա

Բրազիլիա, Բրազիլիա

ջուր առաջարկեր իրեն և իր 10 ուղտերին: Գիտեք, ես ուղտ վարել եմ, և մի բան գիտեմ, որ ուղտերը *շատ* ջուր են խմում:

Ծննդոցում կարդում ենք, որ Ռեբեկան ոչ միայն գնաց ջրհորի մոտ և ջուր հանեց, այլ «շուտով»[14] կամ արագ կատարեց իր գործը: Այնուհետև ծառան ապարանջաններ և զարդեր նվիրեց Ռեբեկային և հարցրեց, թե արդյո՞ք իր հոր տանն իջևանելու տեղ կգտնվեր: Վստահ եմ, զարդեղենն օգնել էր: Սուրբ գրության մեջ կարդում ենք. «Եվ աղջիկը վազեց, և այս բաները պատմեց իր մորը»:[15] Ռեբեկան պետք է որ վազորդ եղած լիներ:

Ծառան պատմեց Ռեբեկայի ընտանիքին իր երկար ճամփորդության նպատակը, և Ռեբեկան համաձայնեց դառնալ Իսահակի կինը: Ծառան ցանկանում էր հենց հաջորդ օրը Ռեբեկայի հետ հեռանալ, բայց ընտանիքը խնդրում էր, որ աղջիկն իրենց հետ առնվազն 10 օր էլ մնար: Իսկ երբ Ռեբեկային հարցրեցին, թե ինչ էր նա ցանկանում, նա պարզապես պատասխանեց՝ «Կգնամ»:[16] Արդյո՞ք այդ պատասխանը նման չէ հազարավոր երիտասարդ տղաների և աղջիկների արձագանքին, ովքեր վճռականորեն ասացին՝ «Ես կգնամ և կանեմ»,[17] երբ մեր մարգարեն, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, հայտարարեց, որ այժմ երիտասարդները կարող են ավելի վաղ տարիքում միսիա ծառայել:

Այժմ այդ սիրո պատմության բարոյախոսությունը և ավարտը: Ռեբեկան պատրաստ և արժանի էր՝ սուրբ ուխտեր կապելուն և պահելուն, և Իսահակի ուխտյալ կինը դառնալուն: Նա ստիպված չէր սպասել և պատրաստվել: Իր ընտանիքից հեռանալուց առաջ նրան օրհնություն տրվեց, որի խոսքերը հուզում են հոգիս, քանզի նրան խոստացվեց, որ նա կդառնա «շատ և շատ հազարների մայր»:[18] Սակայն այս սիրո պատմության լավագույն մասն այն է, երբ Ռեբեկան առաջին անգամ տեսավ Իսահակին, իսկ Իսահակը՝ Ռեբեկային: Աստվածաշնչում չի ասվում, սակայն իմ կարծիքով, դա սեր էր առաջին հայացքից: Քանզի «առաքինությունը սիրում է առաքինությանը. [և] լույսը հարում է լույսին»:[19] Երբ Իսահակը դուրս եկավ դիմավորելու քարավանը, Ռեբեկան «[իր] ուղտից իջավ»:[20] «Եվ նա սիրեց նրան»:[21] Այստեղ ես թեթևացած շունչ եմ քաշում:

Թե Ռեբեկայի, և թե Կրիստինայի համար հեշտ չէր սուրբ վայրերում կանգնելը: Անսասան մնալը հեշտ չէր: Խստաշունչ քամիները փչում էին, ջրհորից ջուր քաշելը ծանր էր, իրենց հարազատ տնից և նախկին կյանքից հեռանալն անշուշտ հեշտ չէր: Բայց նրանք ճիշտ որոշումներ կայացրեցին: Նրանք առաջնորդվում էին Սուրբ Հոգով: Նրանք առաքինի էին, և պատրաստ էին սուրբ ուխտեր կապելուն և պահելուն: Փրկիչը սերում է Ռեբեկայի տոհմագծից: Արդյո՞ք այն ժամանակ նա գիտեր դա: Ո՛չ: Արդյո՞ք այժմ ձեր կայացրած որոշումները կարևոր են: Այո՛:

Երիտասարդ կանայք, սերունդներ են կախված ձեր որոշումներից, ձեր մաքրությունից և ձեր արժանավայել կյանքից: Եղեք անսասան: Դուք ունեք հրաշալի ապագա ձեր առջև: Սա ձեր ժամանակն է: Ես իրոք հավատում եմ, որ Հոգով առաջնորդվող առաքինի երիտասարդ աղջիկը կարող է փոխել աշխարհը:

Ես վկայում եմ, որ Փրկիչն ապրում է: Նա կլինի ձեզ հետ, Նա կօգնի ձեզ: Եվ դժվար պահերին Նրա «հրեշտակները [կլինեն] ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[22] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 87.8:
2. Տես Մոսիա 5.15:
3. Երիտասարդ Կանանց նշանաբան, *Երիտասարդ Կանանց Անձնական Զարգացում* (գրքույկ, 2009), 2:
4. Տես Մոսիա 18.9:
5. 2 Նեփի 32.5:
6. Տես Մոսիա 18.9:
7. Ա Կորնթացիս Գ.16:
8. Dallin H. Oaks, “The Great Plan of Happiness,” *Ensign,* Nov. 1993, 74.
9. Մորոնի 9.9:
10. Վարդապետություն և Ուխտեր 25.2:
11. Տես Ա Կորնթացիս 6.9; Ա Թեսաղոնիկեցիս 5.22; Բ Տիմոթեոս 2.22; Վարդապետություն և Ուխտեր 9.13:
12. Տես *Երիտասարդներին զորացնելու հանար* (գրքույկ, 2011), 28–29:
13. ՏեսԾննդոց 24:
14. Ծննդոց 24.20:
15. Ծննդոց 24.28:
16. Ծննդոց 24.58:
17. Տես 1 Նեփի 3.7:
18. Ծննդոց 24.60:
19. Վարդապետություն և Ուխտեր 88.40:
20. Ծննդոց 24.64:
21. Ծննդոց 24.67:
22. Վարդապետություն և Ուխտեր 84.88:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ձեր սքանչելի ճանապարհորդությունը դեպի տուն

Երբ ուրախությամբ օգտագործում եք քարտեզը, որը ձեր Երկնային Հայրը պատրաստել է ձեր ճանապարհորդության համար, այն կտանի ձեզ սուրբ տեղեր և դուք կհասնեք ձեր գերագույն ներուժին:

Ձեզ համար պատիվ է այս երեկո գտնվել Նախագահ Թոմաս Ս.Մոնսոնի՝ մեր սիրելի մարգարեի ներկայությամբ: Նախագահ, մենք միշտ աղոթում ենք ձեզ համար:

Իմ սիրելի քույրեր, շնորհակալություն երաժշտության և հոգևոր խոսքի համար: Ամեն ինչ այնքան ոգեշնչող եր և մեծապես համապատասխան Զատիկին՝ սրբազան ժամանակին, որը մենք տոնում ենք այս շաբաթ:

Թանկագին երիտասարդ քույրեր, ուրախ եմ լինել ձեզ հետ՝ ձեր մայրերի և ձեր հիանալի ղեկավարների հետ: Դուք ունեք շողացող հոգիներ և վարակիչ ժպիտներ: Անկասկած, Տերը հոգատար է ձեր հանդեպ և սիրով է նայում ձեզ երկնքից:

Ես մեծացել եմ նախկին Արևելյան Գերմանիայում Զվիկաու քաղաքում: Երբ 11 տարեկան էի, հայրս ենթարկվեց մանրազննին քննության որպես քաղաքական ընդդիմադիր, և ծնողներս զգացին, որ միակ ապահով ընտրությունը մեր ընտանիքի համար Արևմտյան Գերմանիա փախչելն էր: Որոշվեց, որ ամենաապահով ծրագիրը՝ տարբեր ժամանակ և տարբեր ուղիներով արևմուտք մեկնելն էր, թողնելով մեր բոլոր ունեցվածքը:

Քանի որ ամենամեծ վտանգի տակ հայրս էր, նա ընտրեց ամենաարագ ճամփորդությունը Բեռլինով: Իմ մեծ եղբայրը մեկնեց դեպի հյուսիս և յուրաքանչյուրը գտավ իր ուրույն ճանապարհը դեպի արևմուտք: Քույրս, որն այսօր այստեղ գտնվողներից շատերի տարիքում կարող էր լինել, Հելգա Ֆասսմանի՝ իր Երիտասարդ Կանանց ուսուցչի հետ և մի քանի ուրիշների հետ գնացք նստեցին, որն արագ անցավ Արևմտյան Գերմանիայով: Նրանք վճարեցին ուղեկցորդին, դռներից մեկը իրենց համար բացելու համար, և գնացքն Արևմտյան Գերմանիայի սահմանն անցնելուց հետո, դուրս ցատկեցին շարժվող գնացքից՝ դեպի ազատություն: Ինչպես էի հիանում իմ քրոջով իր քաջության համար:

Ես ամենափոքրն էի երեխաներից, և իմ մայրը որոշեց, որ նա և ես կքայլենք՝ անցնելով լեռնաշղթան, որը բաժանում էր երկու երկրները: Ես հիշում եմ, որ նա փաթաթեց նախաճաշը, իբրև թե գնում էինք զբոսնելու կամ զբոսախնջույք անելու լեռներում:

Մենք գնացք նստեցինք, որքան հեռու որ կարող էինք գնալ և ապա քայլեցինք երկար ժամեր, ավելի մոտենալով Արևմտյան Գերմանիայի սահմանին: Սահմանները խստորեն հսկվում էին, բայց մենք քարտեզ ունեինք և գիտեինք ժամը և տեղը, թե որտեղից ապահով կլիներ անցնել: Ես զգում էի մորս նեղսրտվածությունը: Նա լարված զննում էր տարածքը՝ տեսնելու, թե արդյոք մեզ հետևում էին: Ամեն

Սոբրալ, Բրազիլիա

քայլի հետ, թվում էր, նրա ոտքերն ու ծնկներն ավելի էին թուլանում: Ես օգնում էի տանել նրա ուտելիքով լիքը ծանր պայուսակը, կարևոր փաստաթղթերը և ընտանեկան լուսանկարները, երբ մենք մագլցում էինք վերջին երկար բլուրը: Նա անկասկած մտածում էր, որ մենք արդեն անցել ենք սահմանը: Երբ նա վերջապես իրեն ապահով զգաց, մենք նստեցինք և սկսեցինք ուտել մեր զբոսախնջույքի նախաճաշը: Այդ օրն առաջին անգամ նա ավելի հեշտությամբ շունչ քաշեց:

Միայն այդ ժամանակ մենք նկատեցինք սահմանի նշանը: Այն բավականին հեռու էր մեզանից: Մենք զբաստախնջույք էինք անում սահմանի սխալ կողմում: Մենք դեռ Արևելյան Գերմանիայում էինք:

Սահմանապահները կարող էին հայտնվել ամեն րոպե:

Մայրս անմիջապես փաթաթեց մեր նախաճաշը և մենք շտապեցինք բլուրն ի վեր՝ այնքան արագ, որքան կարող էինք: Այս անգամ մենք չհամարձակվեցինք կանգ առնել, մինչև մենք չհամոզվեցինք, որ հասել էինք սահմանի մյուս կողմին:

Չնայած մեր ընտանիքի յուրաքանչյուր անդամ բռնել էր լիովին տարբեր ճանապարհ և տարել շատ առանձնահատուկ դժվարություններ ճանապարհին, ի վերջո, մենք բոլորս անվտանգ տեղ հասանք: Մենք վերջապես վերամիավորվեցինք որպես ընտանիք: Ինչպիսի փառահեղ օր էր դա:

Ճանապարհորդական պատմություններ

Այն, ինչ ես հենց նոր պատմեցի ձեզ, կյանքի փորձառություն է, որն ինձ համար շատ թանկարժեք ճանապարհորդություն էր: Այժմ ես կարող եմ ետ նայել իմ կյանքին և ճանաչել մի քանի այդպիսի «ճանապարհորդություններ», որոնք ես կատարել եմ ժամանակի ընթացքում: Դրանցից ոչ բոլորն են ներառում լեռնաշղթաներ կամ քաղաքական սահմաններ անցնելը, մի քանիսը կապված են ավելի շատ փորձություններ հաղթահարելու կամ հոգեպես աճելու հետ: Բայց, դրանք բոլորը ճանապարհորդություններ էին: Ես հավատում եմ, որ ամեն կյանք անձնական «ճանապարհորդական պատմությունների» մի հավաքածու է:

Համոզված եմ, դուք տեղյակ եք, որ յուրաքանչյուր մշակութային ավանդույթ հարուստ է ճանապարհորդական պատմություններով: Օրինակ, դուք կարող է ծանոթ լինեք Դորոթիի և նրա շան՝ Տոտոյի ճանապարհորդության հետ *Օզ կախարդական աշխարհում* հեքիաթից: Դորոթին և Տոտոն քշվում են պտտահողմից և փոխադրվում Օզ երկիրը: Այնտեղ Դորոթին գտնում է այդ որոշակի դեղին աղյուսապատ ճանապարհը, որը նշում է ճամփորդության ուղին, որն էլ, ի վերջո, նրան առաջնորդում է տուն:

Այնուհետև արժե հիշատակել Չարլզ Դիկենսի Էբենեզեր Սքրուջին, որի ճանապարհորդությունը տանում է նրան ոչ թե տեղից տեղ, այլ մի ժամանակից դեպի մեկ ուրիշ ժամանակ: Դա ճանապարհորդություն է հենց իր սեփական սրտի ներսում և դա օգնեց նրան հասկանալ, թե ինչու նա դարձավ այնպիսին, ինչպիսին կար, և ինչ կպատահեր նրան, եթե նա շարունակեր եսասիրության և երախտամոռության իր թշվառ ուղին:[1]

Չինական գրականության դասական մեծ վեպերից մեկը կոչվում է *Ճանապարհորդություն դեպի արևմուտք*: Գրված լինելով 16-րդ դարում, այն մի վանականի մասին հիանալի արկածային մի պատմություն է, որը չորս ընկերասեր անձանց հետ ճանապարհորդում է դեպի հոգևոր լուսավորում:

Եվ իհարկե նաև՝ Բիլբո Բագինսը՝ փոքրիկ, համեստ և անսպասելի հոբիթ, որը շատ ավելի կգերադասեր մնալ տանը և ուտել իր ապուրը: Բայց դռան թակոցից հետո նա գնում է դեպի մեծ անորոշություն և դուրս գալիս աշխարհ, մի կախարդի և թզուկների խմբի հետ միասին՝ կատարելու վտանգավոր, բայց կենսականորեն կարևոր առաքելություն:[2]

Համաշխարհային պատմություն

Մի՞թե չենք սիրում այս ճամփորդական պատմությունները, որովհետև մենք կարող ենք ճանապարհորդների մեջ տեսնել ինքներս մեզ: Նրանց հաջողություններն ու ձախողումները կարող են օգնել մեզ գտնել մեր իսկ ուղին կյանքում: Տեսաֆիլմը, որը մենք տեսանք մի քանի րոպե առաջ, նույնպես պատմում է մի գեղեցիկ ճանապարհորդական պատմություն: Մի գուցե այս պատմությունները հիշեցնում են մեզ մի ճամփորդություն, որին մենք բոլորս ծանոթ ենք, որում մեզանից յուրաքանչյուրս կարևոր դեր ենք խաղում:

Այս պատմությունը սկսվել է շատ երկար ժամանակ առաջ՝ երկիրն իր ուղեծրի շուրջը պտտվելուց շատ ժամանակ առաջ, արևը՝ իր կրակոտ բազուկները տիեզերքի սառնությանը հասցնելուց շատ առաջ, մեր մոլորակը մեծ ու փոքր արարածներով բնակեցնելուց շատ առաջ: Այս պատմության սկզբում դուք ապրում էիք մի շատ հեռավոր գեղեցիկ վայրում:

Մենք շատ մանրամասներ չգիտենք կյանքի մասին այդ նախամահկանացու ոլորտում, բայց մենք գիտենք որոշ բաներ: Մեր Երկնային Հայրը բացահայտել է մեզ, թե ով է Նա, ով ենք մենք և ով կարող ենք դառնալ:

Անդրադառնալով առաջին վիճակին, դուք գիտեիք բացարձակ վստահությամբ, որ Աստված գոյություն ուներ, որովհետև դուք տեսնում և լսում էիք Նրան: Դուք գիտեիք Հիսուս Քրիստոսին, որը պիտի դառնար Աստծո Գառը: Դուք այն ժամանակ հավատք ունեիք առ Նա: Եվ դուք գիտեիք, որ ձեր ճակատագիրը ձեր նախամահկանացու տան ապահովության մեջ մնալու մեջ չէր: Որքան էլ որ դուք սիրում էիք այդ հավերժական ոլորտը, դուք գիտեիք, դուք ցանկանում էիք և դուք պետք է ճանապարհորդության մեկնեիք: Դուք հեռանալու էիք ձեր Հոր գրկից, անցնելու էիք մոռացության վարագույրի միջով, ստանալու էիք մահկանացու մարմին, և սովորելու և տանելու էիք բաներ, որոնք պետք է օգնեին ձեզ աճել՝ ավելի նման դառնալու Երկնային Հորը և վերադառնալու Նրա ներկայություն:

Այդ սրբազան վայրում՝ շրջապատված նրանց կողմից, ում

Կոպենհագեն, Դանիա

գիտեիք և սիրում էիք, պետք է որ լիներ մեծ հարց ձեր շուրթերին և ձեր սրտում. «Արդյոք կվերադառնա՞մ ապահով իմ երկնային տուն»:

Ձեր վերահսկողությունից դուրս այնքան շատ բաներ կլինեին: Մահկանացու կյանքը դժվար էր լինելու՝ ճանապարհի անսպասելի ոլորաններով՝ հիվանդությունով, սրտաբեկությամբ, վթարներով, կոնֆլիկտներով լի:

Առանց ձեր նախկին գոյության հիշողության, առանց հիշելու, որ դուք մի ժամանակ քայլել եք ձեր Երկնային Հոր հետ, արդյոք դուք դեռ կճանաչեի՞ք Նրա ձայնը ողջ աղմուկի և մահկանացու կյանքի խոտորումների մեջ:

Առաջիկա ճանապարհորդությունը թվում էր այնքան երկար և անորոշ, այնքան վտանգներով լի:

Այն հեշտ չէր լինի, բայց դուք գիտեիք՝ այն արժեր ամեն ջանք:

Այսպիսով, ահա դուք կանգնել էիք հավերժության եզրին, առաջ նայելով անասելի հուզմունքով և հույսով, և ես պատկերացնում եմ, նաև՝ ինչ որ չափով անհանգստացած և վախով:

Անշուշտ, դուք գիտեիք, որ Աստված արդար էր լինելու, որ Նրա բարությունը հաղթելու էր: Դուք մասնակցել էիք մեծ երկնային խորհուրդների և գիտեիք, որ ձեր Փրկիչը Քավիչը՝ Հիսուս Քրիստոսը կապահովեր մի ուղի ձեզ համար՝ մեղքից մաքրվելու և ֆիզիկական մահից ազատվելու համար: Դուք ունեիք հավատք, որ վերջում կուրախանայիք և կմիացնեիք ձեր ձայնը երկնային երգչախմբին՝ գովք երգելով Նրա սուրբ անվանը:

Եվ այսպիսով, դուք խորը շունչ քաշեցիք . . .

Եվ մի մեծ քայլ արեցիք առաջ. . .

Եվ, ահա, դուք այստեղ եք:

Դուք՝ ձեզանից ամեն մեկը, սկսեցիք ձեր իսկ սքանչելի ճանապարհորդությունը ետ՝ դեպի ձեր երկնային տուն:

Ձեր քարտեզը

Այժմ, երբ դուք այստեղ եք՝ երկրի վրա, իմաստուն կլիներ հարցնեիք ինքներդ ձեզ՝ ինչպե՞ս է ձեր ճանապարհորդությունն ընթանում: Արդյո՞ք դուք ճիշտ ուղղությամբ եք շարժվում: Արդյո՞ք դուք դառնում եք այն անձնավորությունը, որը պետք է դառնայիք ըստ ծրագրի, և կամենում եք դառնալ: Արդյո՞ք կատարում եք ընտրություններ, որոնք կօգնեն ձեզ վերադառնալ ձեր Երկնային Հոր մոտ:

Նա չի ուղարկել ձեզ այս ճանապարհորդությանը ինքնուրույն անպատակ թափառելու համար: Նա կամենում է, որ դուք վերադառնաք Իր մոտ: Նա տվել է ձեզ Սիրող ծնողներ և Եկեղեցու հավատարիմ առաջնորդներ, մի քարտեզի հետ, որը նկարագրում է տեղանքը և մատնանշում է վտանգները; քարտեզը ցույց է տալիս ձեզ, թե որտեղ կարելի է գտնել խաղաղություն և երջանկություն, որը կօգնի ձեզ ծրագրել ձեր ուղին ետ՝ դեպի տուն:

Իսկ որտեղի՞ց գտնեք այս քարտեզը:

- Սուրբ գրություններում:
- Մարգարեների և առաքյալների խոսքերում:
- Եվ Սուրբ Հոգուց՝ անձնական հայտնությունների միջոցով:

Այս քարտեզը Հիսուս Քրիստոսի ավետարանն է, բարի լուրը և Քրիստոսի աշակերտը լինելու ուրախալի ուղին : Դա մեր Բարեխոսի և Միջնորդի կողմից տրված պատվիրաններն ու օրինակն է, ով գիտի ճանապարհը, որովհետև Նա *է* ճանապարհը:[3]

Իհարկե, ուղղակի քարտեզ ունենալը ոչ մի օգուտ չի տա, մինչև դուք չուսումնասիրեք այն, մինչև չօգտագործեք այն կյանքում նավարկելիս: Ես հրավիրում եմ ձեզ դարձնել այն բարձր առաջնահերթություն Աստծո խոսքն ուսումնասիրելու և կիրառելու համար: Բացեք ձեր սիրտը

Սուրբ Հոգու առջև, որ Նա կարողանա ուղղորդել ձեզ՝ կյանքի ձեր ճանապարհորդության ընթացքում:

Ձեր քարտեզը լի է ձեր Երկնային Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի կողմից քաջալերող և հրահանգավորող ուղերձներով: Այսօր ես կկամենայի կիսվել ձեզ հետ այդ ուղերձներից երեքով, որոնք կօգնեն ձեզ կատարել հաջող ճանապարհորդություն դեպի ձեր երկնային տուն:

Առաջին ուղերձն է. «Մի վախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ»:[4]

Դուք մենակ չեք այս ճանապարհորդության մեջ: Ձեր Երկնային Հայրը գիտի ձեզ: Երբ նույնիսկ ոչ ոք չի լսում ձեզ, Նա լսում է ձեզ: Երբ դուք ուրախանում եք արդարակեցությամբ, Նա ուրախանում է ձեզ հետ: Երբ դուք տրտմում եք փորձությունից, Նա տխրում է ձեզ հետ:

Երկնային Հոր հետաքրքրությունը ձեր հանդեպ կախված չէ նրանից, թե որքան հարուստ կամ գեղեցիկ եք, առողջ կամ խելացի: Նա տեսնում է ձեզ ոչ թե ինչպես աշխարհն է տեսնում ձեզ, Նա տեսնում է, թե դուք ով եք իրականում: Նա նայում է ձեր սրտին:[5] Եվ Նա սիրում է ձեզ,[6] որովհետև դուք Նրա զավակն եք:

Սիրելի քույրեր, լրջորեն որոնեք Նրան և դուք կգտնեք Նրան:[7]

Ես խոստանում եմ ձեզ՝ դուք միայնակ չեք:

Այժմ մի պահ կենտրոնացեք հենց հիմա և նայեք ձեր շրջապատի մարդկանց: Ոմանք գուցե ձեր առաջնորդներն են, ընկերները կամ ընտանիքի անդամները: Մյուսներին դուք երևի երբեք չեք հանդիպել: Այնուամենայնիվ, ամենքը, ում դուք տեսնում եք ձեր շրջապատում, այս ժողովում կամ որևէ այլ վայրում, քաջարի է եղել նախամահկանացու աշխարհում: Ձեր կողքին նստած այն ոչ մեծամիտ և սովորական տեսքով անձնավորությունը կարող է եղած լինել այն մեծ անհատներից մեկը, ում դուք սիրել եք և որով հիացել եք ոգիների ոլորտում: Գուցե դուք լինեք այդպիսի օրինակելի անձնավորություն՝ ինքներդ:

Մի բանում կարող եք համոզված լինել՝ յուրաքանչյուր անձի, ում դուք տեսնում եք, անկախ ռասայից, կրոնից, քաղաքական հայացքներից, մարմնի ձևից կամ արտաքինից, նույն ընտանիքից է: Երիտասարդ կինը, որին դուք նայում եք, ունի նույն Երկնային Հայրը, ինչ որ դուք, և նա հեռացել է Նրա սիրառատ ներկայությունից ճիշտ ինչպես դուք եք արել, ձգտելով գալ այս երկիր և ապրել այնպես, որպեսզի մի օր կարողանա վերադառնալ Նրա մոտ:

Այնուամենայնիվ, նա կարող է միայնակ զգալ, ճիշտ ինչպես երբեմն դուք եք զգում: Նա կարող է նաև երբեմն մոռանալ իր ճանապարհորդության նպատակը: Խնդրում եմ հիշեցրեք նրան, ձեր խոսքերով և գործերով, որ նա մենակ չէ: Մենք այստեղ ենք՝ օգնելու միմյանց:

Կյանքը կարող է դժվար լինել և այն կարող է կարծրացնել սրտերն այն աստիճան, որ որոշ մարդիկ թվում են անհասանելի: Ոմանք գուցե լցված լինեն բարկությամբ: Մյուսները, կարող է, ծաղրեն և ծիծաղեն նրանց վրա, ովքեր հավատում են սիրառատ Աստծուն: Բայց խորհեք այս մասին՝ չնայած նրանք չեն հիշում, նրանք նույնպես մի ժամանակ փափագել են վերադառնալ իրենց Երկնային Հոր մոտ:

Ձեր պարտականությունը չէ դարձի բերել որևէ մեկին: Դա Սուրբ Հոգու գործն է: Ձեր խնդիրն է կիսվել ձեր հավատքով և չվախենալ: Եղեք ընկեր բոլորին, բայց երբեք փոխզիջման մի գնացեք ձեր չափանիշների առումով: Հավատարիմ մնացեք ձեր համոզմունքներին և հավատքին: Կանգնեք գլուխներդ բարձր, որովհետև դուք Աստծո դուստրերն եք, և Նա կանգնած է ձեր կողքին:

Երկրորդ ուղերձն է. «Իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի»:[8]

Երբևիցե մտորե՞լ եք, թե ինչ լեզվով էինք մենք բոլորս խոսում, երբ ապրում էինք Աստծո ներկայության մեջ: Ես ուժեղ կասկածներ ունեմ, որ դա գերմաներենը էր, չնայած, կարծում եմ, ոչ ոք հաստատ չգիտի: Բայց ես իսկապես գիտեմ, որ մեր նախամահկանացու կյանքում մենք անմիջականորեն մեր հոգիների Հորից սովորեցինք մի տիեզերական լեզու՝ մի լեզու, որն ունի զորություն հաղթահարելու զգացմունքային, ֆիզիկական և հոգևոր սահմանները:

Այդ լեզուն Հիսուս Քրիստոսի մաքուր սերն է:

Դա աշխարհում ամենահզոր լեզուն է:

Քրիստոսի սերը ձևական սեր չէ: Այն շնորհավորական քարտի վրա

Սիդնեյ, Ավստրալիա

գրվող սեր չէ: Դա այնպիսի սեր չէ, ինչպիսին գովերգվում է ժողովրդական երաժշտության մեջ կամ կինոնկարներում:

Այս սերը բնավորության իսկական փոփոխություն է առաջացնում: Այն կարող է խոցել ատելությունը և քայքայել նախանձը: Այն կարող է ապաքինել վրդովմունքը և հանգցնել դառնության կրակները: Այն կարող է հրաշքներ գործել:

Մենք ստացանք մեր «առաջին դասերը»[9] սիրո այս լեզվով, որպես ոգիներ Աստծո ներկայության մեջ, և այստեղ երկրի վրա մենք ունենք հնարավորություններ կիրառելու և դարձնելու այն ավելի սահուն: Դուք կարող եք իմանալ, արդյոք դուք սովորո՞ւմ եք սիրո այս լեզուն՝ գնահատելով այն, թե ինչն է դրդում ձեր մտքերը և գործողությունները:

Երբ ձեր հիմնական մտքերը կենտրոնացած են նրա վրա, թե ինչպես ինչ որ բաներ կարող են օգուտ տալ ձեզ, ձեր դրդապատճառները կարող են եսասիրական լինել և մակերեսային: Դա այն լեզուն չէ, որը դուք ուզում եք սովորել:

Բայց երբ ձեր հիմնական մտքերը և վարքագիծը կենտրոնացած են Աստծուն և ուրիշներին ծառայելու վրա, երբ դուք իսկապես ցանկանում եք օրհնել և բարձրացնել նրանց, ովքեր ձեր շրջապատում են, այդ ժամանակ Քրիստոսի մաքուր սիրո ուժը կարող է գործել ձեր սրտում և կյանքում: Դա է լեզուն, որ դուք կամենում եք սովորել:

Երբ դուք սահուն դառնաք այս լեզվում և օգտագործեք այն՝ ուրիշների հետ ձեր փոխազդեցություններում, նրանք կճանաչեն ձեր մեջ մի բան, որը կարթնացնի նրանց մեջ երկար ժամանակ թաքնված զգացումը՝ իրենց երկնային տուն ետ վերադառնալու համար որոնել ճիշտ ուղի ճանապարհորդության ընթացքում: Ի վերջո նրանց մայրենի լեզուն, նույնպես, սիրո ճշմարիտ լեզուն է:

Սա խորը և մնայուն ազդեցությամբ մի լեզու է, որը հասնում է մինչև հոգու խորքը: Դա հասկացողության լեզուն է, ծառայության լեզուն, բարձրացնելու և ուրախանալու ու մխիթարելու լեզուն:

Սովորեք օգտագործել Քրիստոսի սիրո տիեզերական լեզուն:

Եվ երրորդ ուղերձն է. «Ուրախ եղեք»:[10]

Երբեմն մենք անհամբեր ենք դառնում այն պատճառով, թե որտեղ ենք գտնվում մեր ճանապարհորդության ընթացքում, այնպես չէ՞: Եթե դուք 12 տարեկան եք, դուք գուցե ցանկանաք լինել 14: 14 տարեկանում դուք գուցե ցանկանաք լինել 18: Եվ եթե դուք 18 տարեկան եք, գուցե երբեմն նույնիսկ ցանկանաք կրկին լինել 12 տարեկան և սկսեք ամեն ինչ սկզբից:

Միշտ էլ կլինեն բողոքելու առիթներ՝ բաներ, որոնք, թվում է, ձեր ուզածով չեն գնում: Դուք կարող եք անցկացնել ձեր օրերը տխուր, միայնակ, սխալ հասկացված կամ անօգտակար զգալով: Բայց դա այն ճանապարհորդությունը չէ, որի հույսն եք ունեցել և դա այն ճանապարհորդությունը չէ, որ Երկնային Հայրն է ձեզ ուղարկել կատարելու: Հիշեք, որ դուք իսկապես Աստծո դուստրն եք:

Իմանալով այս, հրավիրում եմ ձեզ քայլել վստահորեն և ուրախությամբ: Այո, ճանապարհին ունի բախումներ, շեղումներ և նույնիսկ որոշ խոչընդոտներ: Բայց մի կենտրոնացեք դրանց վրա: Որոնեք երջանկությունը, որը ձեր Հայրը Երկնքում պատրաստել է ձեզ համար ձեր ճանապարհորդության յուրաքանչյուր քայլում: Երջանկությունը նպատակակետն է, բայց այն նաև ուղին է. «Խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում» այն է, ինչ Նա խոստանում է:[11] Այդ պատճառով Նա պատվիրում է «ուրախ եղեք»:

Երբ ուրախությամբ օգտագործում եք քարտեզը, որը ձեր Երկնային Հայրը պատրաստել է ձեր ճանապարհորդության համար, այն կտանի ձեզ սուրբ տեղեր և դուք կհասնեք ձեր գերագույն ներուժին: Դուք կաճեք՝ դառնալով Աստծո դուստրը, որը հույս ունեիք դառնալ:

Սիրելի քույրեր, Եկեղեցու սիրելի երիտասարդ կանայք, սիրելի երիտասարդ ընկերներ, որպես Տիրոջ Առաքյալ ես թողնում եմ ձեզ մի օրհնություն, որ դուք գտնեք ձեր ճանապարհը՝ տուն տանող այս ճանապարհորդության ընթացքում և որ դուք ոգեշնչում լինեք ձեր ընկեր ճանապարհորդներին: Իմ խոստումն է նաև և աղոթքը, որ երբ դուք պատվեք ուխտերը, սկզբունքները և Հիսուս Քրիստոսի ավետարանի արժեքները և ապրեք դրանց հավատարիմ, ձեր ճանապարհորդության վերջում Երկնային Հայրը կլինի այնտեղ: Նա կգրկի ձեզ և դուք կիմանաք մեկընդմիշտ, որ դուք անվտանգ տուն եք հասել: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Charles Dickens, *A Christmas Carol:*
2. Տես J. R. R. Tolkien, *The Hobbit:*
3. Տես Հովհաննես ԺԴ.6:
4. Վարդապետություն և Ուխտեր 68.6, տես նաև Եսայիա ԽԱ.10, Հովհաննես ԺԴ.18:
5. Տես Ա Սամուել ԺԶ.7:
6. Տես Ա Պետրոս Ե.6–7:
7. Տես Երեմիա ԻԹ.13:
8. Հովհաննես ԺԵ.12, տես նաև Հովհաննես ԺԳ.34, Մորոնի 7.45–48:
9. Վարդապետություն և Ուխտեր 138.56:
10. Վարդապետություն և Ուխտեր 78.18, տես նաև Հովհաննես ԺԶ.33, 3 Նեփի 1.13:
11. Վարդապետություն և Ուխտեր 59.23:

Դարձնելով համաժողովը մեր կյանքի մասը

Այս վարժությունները և հարցերը կարող եք օգտագործել ընտանեկան քննարկում սկսելու կամ անհատապես խորհելու համար:

Էջի համարը, որը նշվում է յուրաքանչյուր մտքի համար, ելույթի առաջին էջի համարն է:

Երեխաների համար

- Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խոսեց հնազանդության կարևորության և այն մասին, թե ինչպես է անհնազանդությունը միշտ հետևանքներ ունենում (էջ 89): Մտածեք այն ժամանակի մասին, երբ հնազանդվել եք ընտանեկան օրենքներին: Մտածեք այն ժամանակի մասին, երբ հնազանդվել եք Աստծո օրենքներին: Ինչպե՞ս եք զգում, երբ հնազանդ եք լինում:
- Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, պատմեց մի փոքրիկ աղջկա մասին, որը լոլիկի թուփ էր աճեցրել փոքրիկ սերմից (էջ 18): Կարդացեք կամ վերապատմեք այս պատմությունը ընտանիքով և խոսեք այն մասին, թե ինչ է այն ուսուցանում Երկնային Հորը նմանվելու մասին: Դուք կարող եք նպատակ դնել անել որևէ բան Երկնային Հորը ավելի մոտենալու համար:
- Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլան Յոթանասունից խոսեց այն մասին, թե ինչն է ընտանիքներին ամուր դարձնում (էջ 102): Նա ուսուցանեց, որ ընտանիքում ամենակարևոր բառերը, որ մենք պետք է օգտագործենք, «Ես սիրում եմ քեզ», «Շատ շնորհակալ եմ» և «Ներիր ինձ» բառերն են: Քույր Ռոզմարի Մ. Վիքսոմը՝ Երեխաների Միության գերագույն նախագահը, առաջարկեց ասել՝ «Ինձ դուր է գալիս քո մեջ ամենինչ» բառերը: Արդյո՞ք դա նրանց երջանկացնում է: Ինչպե՞ս եք դուք զգում:

Երիտասարդների համար

- Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ուսուցանեց չորս սկզբունք միսիոներական աշխատանքին պատրաստվելու համար ոչ միայն որպես լիաժամկետ միսիոներներ, այլ նաև որպես Եկեղեցու անդամներ (էջ 66): Դուք կարող եք կարդալ նրա ելույթը, մտքում ունենալով այս հարցը. «Ի՞նչ ես կարող եմ անել ավելի լավ միսիոներ լինելու համար»:
- Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանեց, որ նորմալ է կասկածներ և հարցեր ունենալը, սակայն նաև ասաց. «Ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիքներ կգան: . . . Հավատարիմ եղեք ձեր ունեցած հավատքին» (էջ 93): Կարող եք ձեր օրագրում գրել ձեր համոզմունքները, վկայությունը և հոգևոր փորձառությունները: Գրեք նաև ձեր հարցերը և պահեք դրանք, որպեսզի սուրբ գրությունները և այս համարը կարդալիս փնտրեք պատասխանները:
- Ելույթ ունեցողներից շատերը խոսեցին հնազանդության և դրա օրհնությունների մասին: Օրինակ, Նախագահ Մոնսոնն ուսուցանեց. «Ճշմարտության գիտելիքը և մեր մեծագույն

հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք հնազանդ ենք Աստծո պատվիրաններին:» (էջ 89): Կարող եք այս համարում գտնել և ընդգծել կամ գրի առնել հնազանդության բազմաթիվ օրհնությունները: Այդ օրհնությունները գտնելը կարող է ոգեշնչել ձեզ շարունակել արդարակյաց ապրել:

- Մի քանի խոսնակներ ուսուցանեցին ոչ միայն ծառայության ծրագրերի միջոցով, այլ ցանկացած ժամանակ ծառայելու հնարավորության մասին: «Ծառայեք ամեն օր», - ուսուցանեց Եղբայր Դեյվիդ Լ. Բեքը: «Հնարավորությունները ձեր շուրջն են»: Եղբայր Բեքի ելույթում դուք կարող եք կարդալ մարդկանց ծառայող երիտասարդների մասին (էջ 55):

Չափահասների համար

- Խոսնակներից շատերը վկայեցին Հիսուս Քրիստոսի մասին: Ի՞նչ դուք կարող եք սովորել Նրա աստվածային բնավորության, առաքելության և ծառայության մասին 22, 70, 96, 99 և 109 էջերի ելույթներից:
- Երիտասարդների մայիս ամսվա ուսումնական ծրագրի թեման նվիրված է մարգարեներին և հայտնությանը: Եթե դուք եկեղեցում ուսուցանում եք երիտասարդներին կամ ունեք դեռահաս երեխաներ, կարող եք քննարկել նրանց հետ ուսումնական ծրագիրը և այս հարցը. «Ինչո՞ւ է կարևոր լսել և հետևել ապրող մարգարեներին»: Կարող եք այս համարում գտնել այն մարգարեությունները և նախազգուշացումները, որոնք կօգնեն մեզ չհուսահատվել դժվար ժամանակներին:
- Մի քանի խոսնակներ կենտրոնացրել էին իրենց ելույթները ընտանիքի շուրջ: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանեց. «Երբ [Փրկիչը] ձեր տան կենտրոնն է, խաղաղություն և հանգստություն է տիրում» (էջ 29): Մտածեք, թե ինչ ճանապարհներով կարող եք ձեր տունը կենտրոնացնել Փրկչի շուրջ, ուսումնասիրելով Երեց Սքոթի ելույթը և 6, 81, 83 և 102 էջերի վրա գտնվող ելույթները: ■

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԸ

Կարող եք ուսումնասիրել այս սուրբ գրությունները, որոնք մի քանի անգամ մեջ են բերվել կամ որոնց հղում է կատարվել գերագույն համաժողովի ելույթներում.

Ա Թագավորաց 16.7*
Մատթեոս 7.24; 28.19
Հովհաննես 13.34–35; 14.6; 16.33
Մոսիա 3.19*; 18.8–9
Հելաման 5.12
3 Նեփի 11.7
Մորոնի 9.9
Վարդապետություն և Ուխտեր 42.22; 59.23; 64.34; 84.88; 87.8; 115.6
Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17)

* Սեմինարիայի սուրբ գրությունների սերտման հատվածներ

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ընտրված փորձառությունների ցանկը, որը կարող է օգտագործվել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոյի և այլ ուսուցումների ժամանակ: Համարը ներկայացնում է ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Երեց Նիլ Լ. Անդերսեն	(77) Մոզամբիկում մի զույգ իրենց ավանդույթների փոխարեն հետևում է Փրկչին:
Երեց Մ. Ռասսել Բալլարդ	(18) Յոթամյա թոռնուհին փրկում է լոլիկի թոշնած թուփը:
Դեյվիդ Լ. Բեք	(55) Ահարոնյան Քահանայություն կրողները դառնում են երիտասարդ աղջկա ընկերները, ով ծաղրի է ենթարկվում իր հասակակիցների կողմից: Բանգալորում, Հնդկաստան, մի սարկավագ օգնում է ակտիվացնել իր ճյուղի բոլոր երիտասարդ տղամարդկանց:
Երեց Թեդ Ռ. Քալիսթեր	(52) Տասնյոթամյա Ջորջ Ֆ. Ռիչարդսը սովորում է քահանայության զորության մասին՝ իր մորը օրհնություն տալու միջոցով:
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(109) Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի մայրը օգնում է կարիքի մեջ գտնվող մի երիտասարդ կնոջ հասնել իր ներուժին:
Մերի Ն. Քուք	(118) Երիտասարդ կինը դիմակայում է իր հոր մահվանը և քաղցկեղի դեմ մոր պայքարին՝ հավատք գործադրելու շնորհիվ:
Երեց Քվենթին Լ. Քուք	(32) Հնդիկ կինը խաղաղություն է զգում Սուվա Ֆիջի Տաճարի բաց դռների օրը:
Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս	(9) 1989թ. Լոմա Պրիետայի երկրաշարժը, Կալիֆոռնիա, ԱՄՆ, վերահաստատում է Դին Մ. Դեյվիսի մտքում և սրտում մեր կյանքը ամուր հիմքի վրա կառուցելու կարևորությունը:
Էնն Մ. Դիբ	(115) Քիչ ակտիվ երիտասարդ կինը զգում է Հոգին Երիտասարդ Կանանց ճամբարում:
Նախագահ Հենրի Բ. Այրինգ	(62) Ծնողազուրկ մի տղա դառնում է Եկեղեցու առաջին անդամը 130000 բնակչությամբ քաղաքում: Նյու Մեխիկոյում, ԱՄՆ, և Նյու Ինգլենդում, ԱՄՆ, ծառայելու ընթացքում Հենրի Բ. Այրինգը տեսնում է Աստծո ձեռքը՝ Նրա արքայությունը կառուցելիս:
Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլա	(102)Եկեղեցու անդամները Արիզոնայում, ԱՄՆ, Էնրիկե Ռ. Ֆալաբելլային և նրա կնոջը փող են տալիս, որպեսզի նրանք կարողանան վերադառնալ Գվատեմալա իրենց տաճարային ամուսնությունից հետո:
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(93) Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասում է 14-ամյա տղային, որ նա երբեք չպետք է ներողություն խնդրի «միայն հավատալու» համար:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(66) Կանադայում մի տղամարդ ուսումնասիրում և միանում է Եկեղեցուն նրանից հետո, երբ երկու լիաժամկետ միսիոներներ զորեղ վկայություն են բերում Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Իր շաբաթական նամակներում սեր արտահայտելու միջոցով լիաժամկետ միսիոները բերում է իր հորը Եկեղեցի: (89) Ութամյա Թոմաս Ս. Մոնսոնը սովորում է հնազանդություն դաշտը հրդեհի մատնելուց հետո: Հունգարիայում Եկեղեցու մի հավատարիմ անդամ տարիների ընթացքում հավաքում է իր տասանորդը, մինչև որ հնարավորություն է ունենում հանձնել այն իր տնային ուսուցիչներին:
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ	(29) Լիաժամկետ միսիոները ցանկանում է կառուցել իր ապագա ընտանիքը իր միսիայի նախագահի ընտանիքի օրինակով:
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(70) Արևմտյան Աֆրիկայի Սրբերը սկսում են օրհներգեր երգել, երբ հավաքատունը հոսանքազրկվում է: Ավետարանն օգնում է երիտասարդ աղջկան հաղթահարել բռնությամբ լցված պատանեկության խավար շրջանը: (125) Դիտեր Ֆ. Ուխդորֆը և նրա ընտանիքի անդամները փախչում են Արևելյան Գերմանիայից:

Մեր ժամանակների ուսմունքները

Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը կնվիրվեն «Մեր ժամանակների ուսմունքներին»: Յուրաքանչյուր դաս կարելի է պատրաստել վերջին գերագույն համաժողովի մեկ կամ մի քանի ելույթներից (տես ստորև տրված աղյուսակը): Ցցերի և շրջանների նախագահները կարող են ընտրել, թե որ ելույթները պետք է օգտագործվեն, կամ նրանք կարող են հանձնարարել այդ պատասխանատվությունը եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին: Ղեկավարները Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրներին և Սփոփող Միության քույրերին պետք է շեշտեն միևնույն ելույթները նույն կիրակի օրերին ուսումնասիրելու կարևորությունը:

Նրանց, ովքեր հաճախում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսում ենք ուսումնասիրել և իրենց հետ դասարան բերել վերջին գերագույն համաժողովի ամսագիրը:

Առաջարկություններ ելույթներից դաս պատրաստելու համար

Աղոթեք, որպեսզի Սուրբ Հոգին լինի ձեզ հետ, երբ ուսումնասիրում և ուսուցանում եք ելույթ(ներ)ը:

Վերանայեք ելույթները, գտնելու համար այն սկզբունքներն ու վարդապետությունները, որոնք համապատասխանում են դասարանի անդամների կարիքներին: Ինչպես նաև ելույթներից գտեք պատմություններ, սուրբ գրությունների հղումներ և սահմանումներ, որոնք կօգնեն ձեզ ուսուցանել այդ ճշմարտությունները:

Համառոտ ծրագիր կազմեք սկզբունքները և վարդապետությունները ուսուցանելու համար: Կարող եք ընդգրկել հարցեր, որոնք կարող են օգնել դասարանի անդամներին.

- Ելույթ(ներ)ից գտնել սկզբունքներ և վարդապետություններ:
- Խորհել դրանց իմաստի մասին:
- Կիսվել իրենց հասկացողությամբ, մտքերով, փորձառությամբ և վկայություններով:
- Կիրառել այդ սկզբունքներն ու վարդապետություններն իրենց կյանքում: ■

ԴԱՍԵՐԸ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՄԻՍՆԵՐԸ	ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԴԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ
Ապրիլ 2013- հոկտեմբեր 2013	2013թ. ապրիլի գերագույն համաժողովի ելույթները
Հոկտեմբեր 2013- ապրիլ 2014	2013թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ելույթները*

** Ապրիլի և հոկտեմբերի չորրորդ կիրակի օրվա դասերի համար ելույթներ կարելի է ընտրել նախորդ կամ ամենավերջին համաժողովից: Ելույթները տարբեր լեզուներով մատչելի են՝ conference.lds.org:*

Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քերոլ Մ. Սթեֆենս
Առաջին Խորհրդական


Լինդա Ք. Բըրթըն
Նախագահ

Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Բոննի Լ. Օսկարսոն
Նախագահ

Նեյլ Ֆ. Մերիոթ
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական


Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ


Շերիլ Ա. Էսփլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվիդ Մ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Ռասսել Տ. Օսգաթորփ
Նախագահ

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Երկրորդ Խորհրդական

183-րդ գերագույն համաժողովը ներառում է Երիտասարդ Կանանց նոր գերագույն նախագահության հաստատումը

«Ուր սրտերը հուզվեցին և աստվածային այս աշխատանքի մասին մեր վկայությունները ամրացան, մենք զգացինք Տիրոջ Հոգին: Թող որ մենք երկար հիշենք այս երկու անցած օրերը», – ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 2013թ. ապրիլի 7-ին կայացած 183-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման նիստին:

Ավելի քան 100000 մարդ մասնակցեցին ապրիլի 6-ին և 7-ին Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, Համաժողովների Կենտրոնում կայացած գերագույն համաժողովի հինգ նիստերին: Աշխարհով մեկ միլիոնավոր մարդիկ դիտեցին կամ ունկնդրեցին այն հեռուստատեսության, արբանյակային հեռարձակման, ռադիոյի և համացանցի միջոցով: Ուղիղ հեռարձակումների և LDS.org-ում համաժողովի առցանց վիդեո, աուդիո և տեքստային տարբերակները անդամներին մատչելի էին 95 լեզուներով:

Նախագահ Մոնսոնը բացեց ամենամյա համաժողովը, հայտարարելով նոր տաճարներ կառուցելու ծրագրերի մասին Մեդար Սիթիում, Յուտա, ԱՄՆ, և Ռիո դե Ժանեյրոյում, Բրազիլիա, որի արդյունքում հայտարարված և կառուցման մեջ գտնվող տաճարների ընդհանուր թիվը կհասնի 29-ի: Ներկայումս գործում է 141 տաճար:

Շաբաթ օրվա նիստին մի քանի փոփոխություններ են կատարվել Եկեղեցու ղեկավարության կազմում: Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության բոլոր անդամները ազատվեցին իրենց ծառայություններից, Երեց Վոլտեր Ֆ. Գոնզալեսը ազատվեց Յոթանասունի Նախագահության անդամի ծառայությունից: Ազատվեցին նաև հիսունմեկ Տարածքային Յոթանասունական:

Երեց Ուլիսես Սոարեսը՝ Յոթանասունի Առաջին Քվորումից, հաստատվեց որպես Յոթանասունի Նախագահության անդամ:

Որպես Երիտասարդ Կանանց գերագույն նախագահություն հաստատվեցին Բոննի Լի Գրին Օսկարսոնը՝ նախագահ, Քերոլ Ֆոլի Մակքոնկին՝ առաջին խորհրդական, և Նեյլ Ֆուտ Մերիոթը՝ երկրորդ խորհրդական:

Հաստատվեցին նաև Յոթանասունի Առաջին Քվորումի երեք նոր անդամներ՝ Երեց Էդվարդ Դյուբը՝ Զիմբաբվեից, Երեց Ս. Գիֆորդ Նիլսենը՝ Շուգրը Լենդից, Տեխաս, ԱՄՆ, և Երեց Առնուլֆո Վալենզուելան՝ Քերետառոյից, Մեքսիկա: Հաստատվեցին նաև Յոթանասունի Երկրորդ Քվորումի հինգ նոր անդամներ:

Էլեյն Ս. Դալտոնը՝ Երիտասարդ Կանանց նախկին գերագույն նախագահը, ծառայել է Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունում՝ որպես խորհրդական կամ նախագահ՝ 11 տարի ապրիլին ազատվելուց առաջ:

Հաստատումների և ազատումների ամբողջական ցանկը տես էջ 26-ում:

Նոր կանչված ղեկավարների կենսագրականները տես էջ 139-ում: ■

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՆԵԼ

Եվ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, և Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խրախուսեցին անդամներին նվիրաբերել Միսիոներական Ընդհանուր Ֆոնդին: 2013թ. ապրիլի 4-ի դրությամբ ծառայության մեջ էին գտնվում 65634 լիաժամկետ միսիոներներ, իսկ ավելի քան 20000 հոգի կանչվել էին ծառայության:

Գերագույն համաժողովի բացման նիստի ժամանակ Նախագահ Մոնսոնը նշեց. «Միսիոներական այս բանակը պահելու համար, և քանի որ մեր միսիոներների մեծ մասը գալիս է համեստ պայմաններից, մենք կոչ ենք անում ձեզ, եթե կարող եք, առատորեն նվիրատվություն կատարել Եկեղեցու Միսիոներական Ընդհանուր Ֆոնդին»:

Անդամները կարող են նվիրատվություններ կատարել տասանորդի նվիրատվության թերթիկում մուտքագրելով գումարը, որը ցանկանում են նվիրաբերել, Միսիոներական Ընդհանուր Ֆոնդ տողում: Անդամները կարող են նաև նվիրատվություններ կատարել առցանց՝ ldsphilanthropies.org:

Եկեղեցին կարիք ունի ավագ զույգերի հասունության և փորձի

Միսիոներական տարիքային սահմանի նվազեցման հետևանքով երիտասարդ միսիոներների թվի աճի հետ կապված ամբողջ աշխարհում մեծանում է ավագ զույգերի կարիքը: Վերջերս 58 նոր միսիաների ստեղծման հետ մեկտեղ կարիք կլինի ավագ զույգերի շատ ավելի մեծ քանակ՝ ղեկավարման փորձ և այլ աջակցություն տրամադրելու համար, ինչը կենսական նշանակություն ունի հաջող միսիա կատարելու համար:

2013թ. ապրիլյան համաժողովին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խոսեց միսիոներների արագ աճող թվի մասին և արտահայտեց իր սերը նրանց հանդեպ, ովքեր ցանկանում են ծառայել Տիրոջը միսիայի դաշտում (տես էջեր 4, 66): Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հատկապես խրախուսեց ավագ զույգերին ծառայել. «Տարեց զույգեր, պլանավորեք մի օր միսիա ծառայել: Մենք շատ երախտապարտ կլինենք ձեր ծառայության համար», – ասաց նա (տես էջ 45):

2012թ. հոկտեմբերյան գերագույն համաժողովի բացման իր խոսքում Նախագահ Մոնսոնն ասաց. «Մենք շարունակում ենք ավելի ու ավելի շատ ավագ զույգերի կարիք ունենալ: Եթե թոշակի անցնելուց հետո ձեր պայմանները և ձեր առողջությունը թույլ են տալիս, ես խրախուսում եմ ձեզ դիմել լիաժամկետ միսիոներական ծառայությանը: Ամուսինը և կինը՝ երկուսն էլ մեծ ուրախություն կգտնեն, երբ միասին ծառայեն մեր Հոր զավակներին» («Բարի գալուստ համաժողով», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2012, 5):

Տարիներ շարունակ Եկեղեցու ղեկավարները խրախուսել են ավագ զույգերին ծառայել: Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է. «Ամենուրեք միսիաներում ավագ զույգերի կարիք կա: Հասունությունը և փորձը դարձնում են նրանց լավագույն միսիոներներ, որ մենք կարող ենք ունենալ: Նրանց հատուկ հմտությունները . . . թույլ են տալիս արդյունավետությամբ ուսուցանել տեղական ղեկավարներին, ամրացնել և վերաակտիվացնել անդամներին և բերել ոչ անդամներին դեպի Քրիստոսը» (“Missionary Couples—Trading Something Good for Something Better,” *Ensign,* June 1988, 9, 11):

Արժանի զույգերը, որոնք ցանկանում են ծառայել որպես միսիոներներ, կարող են տեղեկացնել իրենց եպիսկոպոսներին կամ ճյուղերի նախագահներին ծառայելու իրենց ցանկության մասին: Ծառայության ժամկետը կարող է լինել 6-ից մինչև 23 ամիս:

Ավագ միսիոներների ծառայության վերաբերյալ հարցերի համար զանգահարեք՝ 1-800-453-3860, ներքին. 2-6741 (կամ 1-801-240-6741) համարով, կամ է-փոստով՝ SeniorMissionaryServices@ldschurch.org՝ որոշակի հարցերի պատասխաններ ստանալու համար: ■

Ավագ զույգերի հասունությունը և փորձը թույլ են տալիս նրանց ուսուցանել տեղական ղեկավարներին և ամրացնել անդամներին, նաև բերել ոչ անդամներին դեպի Քրիստոսը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՂԵՆ Լ. ՍԵՐԼԻ ԿՈՂՄԻՑ © 2008

Առցանց նոր գործիքներ, որոնք օգնում են պահել ընտանեկան լուսանկարները և հուշերը և կիսվել դրանցով

2013թ. ապրիլից այցելուները FamilySearch.org կնկատեն նշանակալի փոփոխություններ: Թարմ, վառ գույներ, հրապուրիչ նկարներ և մի շարք այլ հատկանիշներ առաջարկում են բացի հետազոտությունից բազմաթիվ այլ հնարավորություններ: Թեև կայքը մեծապես հետաքրքիր է տոհմաբանների և հետազոտողների համար, նոր հնարավորությունները կգրավեն շատ ավելի լայն հետաքրքրությունների տեր այցելուների:

Նոր հատկանիշները կօգնեն ընտանեկան պատմության աշխատանքը չսահմանափակել միայն հետազոտությամբ և գրավել երիտասարդ և մեծահասակ սկսնակ պատմաբանների ավելի մեծ լսարան: Այցելուները կարող են այժմ համատեղ առցանց կառուցել իրենց տոհմածառը, պահել ընտանեկան լուսանկարները և պատմությունները, և կիսվել դրանցով՝ և այդ ամենը անվճար:

© IRI

Ընտանեկան լուսանկարները և պատմությունները կյանքի են վերադարձնում նախնիներին: Տարեթվերի ետևում կանգնած իրական մարդիկ կարող են ուսուցանել մեզ սկզբունքներ, ինչպիսին են՝ տքնաջան աշխատանքի արժեքը, կյանքի դժվարություններին դիմակայելը և մեր ընտրությունների ազդեցությունը մեր կյանքի վրա:

Ընտանեկան պատմության պահպանումն ավելի դյուրին դարձնելը օգնում է մեզ կապ հաստատել մեր անցյալի հետ և ժառանգություն ստեղծել մեր ապագայի համար:

Նոր հնարավորություններ FamilySearch.org-ում:

FamilySearch Family Tree: Առաջին անգամ FamilySearch.org-ում անհատները կարող են սկսել համատեղ կառուցել իրենց ընդհանուր տոհմածառը առցանց, ավելացնելով տեղեկություն իրենց, այնուհետև՝ նախորդ սերունդների մասին:

Տոհմածառի հիմնակետերը.

- Գտեք այն FamilySearch.org-ում “Family Tree” վերնագրի տակ:
- Ծառը բնակեցված է ավելի քան 900 միլիոն անհատների անուններով, որոնք ներկայացրել են այցելուները:
- Այն անվճար է:
- Այն հնարավորություն է տալիս անհատներին համատեղ կառուցել, կառավարել և կիսվել ընտանեկան պատմությամբ՝ ամբողջը առցանց:
- Օգտվողները կարող են տեսնել, թե ինչ են արդեն գտել ուրիշները իրենց ընտանեկան պատմության մասին:
- Օգտվողները կարող են ըստ ցանկության ավելացնել լուսանկարներ, պատմություններ և աղբյուրների կապուղիներ:
- Օգտվողները կարող են մշտապես պահել իրենց տոհմածառը ապագա սերունդների համար:
- «Բռնել և քաշել» պարզ հնարավորությունը թույլ է տալիս օգտվողներին հեշտությամբ տեղափոխել իրենց տոհմածառը դեպի վերև կամ ներքև:
- Այցելուներին FamilySearch.org-ում մատչելի կլինեն միլիոնավոր անվճար գրառումներ, որոնք կօգնեն լրացնել իրենց տոհմածառի պակասող ճյուղերը:

Լուսանկարներ: Օգտվողները կարող են պահել իրենց նախնիների սիրված լուսանկարները, կցել դրանք իրենց անձնական տվյալներին FamilySearch Family Tree-ում, կիսվել դրանցով սոցիալական մեդիայի միջոցով: Ավելի քան 200000 լուսանկարներ են արդեն ներբեռնվել, պահվել և տարածվել:

Պատմություններ: Օգտվողները կարող են գրել իրենց նախնիների մասին սիրված պատմությունները FamilySearch Family Tree-ում: Այս հատկանիշը թույլ է տալիս ընտանիքներին հավաքել, տարածել և մշտապես պահպանել իրենց ընտանեկան պատմությունները:

Ինտերակտիվ Զվարճալի Գծապատկեր: 2012 FamilySearch-ում փորձարկվեց մի հնարավորություն,

© IRI

որը թույլ էր տալիս անհատներին տեսնել իրենց և իրենց նախնիներին գունազարդ զվարճալի գծապատկերի կառուցվածքում: Այս հնարավորությունը կատարելագործվել է և այժմ մատչելի է FamilySearch.org-ում:

Տոհմածառի Հրաշագործ: Ովքեր նոր են ստեղծում իրենց տոհմածառը, այս գործիքը օգտակար կիամարեն: Հարցազրույցի ոճով այն հարցեր է տալիս ձեր կենդանի և մահացած նախնիների մասին, այնուհետև կապեր ստեղծում տոհմածառի վրա, օգնելով ձեզ սկսել:

Շուրջօրյա օգնություն: Ընտանեկան պատմության հանդեպ հետաքրքրությունը աճում է ողջ աշխարհում: FamilySearch-ը այժմ 10 լեզուներով տրամադրում է միջազգային առցանց շուրջօրյա անվճար օգնություն՝ ապրանքատեսակի և անհատական հետազոտության վերաբերյալ:

Լեզուներ: Բոլոր նոր հնարավորությունները և ծառայությունները մատչելի են 10 լեզուներով: Բոլոր հնարավորությունների համար գոյություն ունի «ինչպես սկսել» տեսանյութերի և առցանց այլ ռեսուրսների անվճար հավաքածու: Պարզապես սեղմեք Help կոճակի վրա՝ մանրամասներին ծանոթանալու համար: ■

Ընտանեկան պատմությունը սրտեր է փոխում

Ռ. Սքոթ Լոյդ
Church News

Ապագայում ընտանեկան պատմության շատ կենտրոններ կլինեն տներում, կանխատեսել է Յոթանասունից Երեց Բրեդլի Դ. Ֆոստերը մարտի 28-ին իր ելույթում՝ RootsTech 2013 Family History and Technology համաժողովին Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ:

Երեց Ֆոստերը, Ընտանիքի Պատմության բաժնի տնօրենի գործադիր օգնականը, ասել է, որ շուտով երկրի վրա կլինի ինը միլիարդ մարդ և որ Տերը տեխնոլոգիաներ է պատրաստել, որպեսզի հնարավոր լինի կապել միասին բոլոր ընտանիքներին:

Նա շեշտեց ընտանեկան պատմությունն ուսումնասիրելու, մեր նախնիների մասին պատմություններ իմանալու կարևորության մասին, ոչ թե միայն տոհմաբանության, այլ անուններ և տարեթվեր գտնելու մասին: Աշխարհում ցանկացած գերեզմանի հուշաքար պարունակում է անուն, ծննդյան թիվ, գծիկ, ապա մահվան թիվ, ասել է նա: «Այդ փոքրիկ գծիկը ծննդյան և մահվան թվերի միջև, թվում է շատ փոքր և աննշան, սակայն մեր ողջ պատմությունն է պարունակվում դրա մեջ», - նշել է նա: «Այնպես որ, թեև մենք հաճախ կենտրոնանում ենք այդ թվերի վրա, մեր սերը մեր նախնիների հանդեպ՝ մեր սրտերը դեպի մեր հայրերը դարձնելը, առաջ է գալիս գծիկը բացահայտելու արդյունքում»:

Ընտանեկան պատմությունը մոտեցնում է մեզ միմյանց. Մենք կիսվում ենք մեր պատմություններով և աշխատանք ենք կատարում միասին, բացատրել է նա: «Այդպիսով, տոհմաբանությունը փոխում է մեր ուղիները, իսկ ընտանեկան պատմությունը փոխում է մեր սրտերը»: ■

Եկեղեցու Հայրապետ Երեց Էլդրեդ Գ. Սմիթը մահացավ 106 տարեկան հասակում

Սառա Ջեյն Վիվեր
Church News

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, աջում, Երեց Էլդրեդ Գ. Սմիթի հետ, որը ծառայել է որպես Եկեղեցու Հայրապետ 1947-1979թթ., նրա 106-ամյակին, 9 հունվարի, 2013թ.: Երեց Սմիթը մահացել է ապրիլի 4-ին իր տանը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՋԵՐԻ ԱՎԱՆՏԻ ԿՈՂՄԻՑ, CHURCH NEWS

Երեց Էլդրեդ Գ. Սմիթը, որը ծառայել է որպես Եկեղեցու Հայրապետ 1947-1979թթ., մահացավ 2013թ. ապրիլի 4-ին, իր տանը: Նա 106 տարեկան էր:

Համարվելով Յուտայի ամենատարեց մարդը, Երեց Սմիթը ապրեց ավելի երկար, քան որևէ նախկին Բարձրագույն Իշխանություն:

Եկեղեցու Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը այցելել էր Երեց Սմիթին նրա վերջին ծննդյան տարեդարձի օրը՝ 2013թ. հունվարի 9-ին: «Էլդրեդ Սմիթը իմ լավ ընկերն է», - ասաց Նախագահ Մոնսոնը: «Մենք երկար մղոններ ենք անցել միասին: Ես սիրում և հարգում եմ այս մարդուն»:

Էլդրեդ Գ. Սմիթը կանչվել է Եկեղեցու Հայրապետ 1947թ. ապրիլի 10-ին, այդ ժամանակ Եկեղեցու Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի կողմից և եղել է այդ պաշտոնը կրող վերջին անձը: Նրան շնորհվել է պատվավոր իշխանավորի կարգավիճակ 1979 թվականին: Այդ պաշտոնը ստեղծվել էր 1833թ., երբ դրան կանչվեց Ջոզեֆ Սմիթ Ավագը՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի հայրը: Երեց Սմիթը Մարգարեի եղբայր Հայրումի նախածոռն է:

Որպես Եկեղեցու Հայրապետ իր ծառայության ընթացքում Երեց Սմիթը ճանապարհորդել է աշխարհի շատ վայրեր և բազմաթիվ հայրապետական օրհնություններ տվել այն տեղերում, որտեղ հայրապետ չկար: 1966թ. նա, այն ժամանակ Երեց Մոնսոնի հետ, ճանապարհորդեց Ավստրալիա և Սամոա՝ այնտեղի անդամներին հայրապետական օրհնություններ տալու համար: Առաջին անգամ էր նախագահող հայրապետը այցելում Սամոա: Այսօր ցցերի մեծ մասը ունեն իրենց ցցի սահմաններում ապրող հայրապետ:

Նախագահ Մոնսոնը և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը խոսեցին Երեց Սմիթի թաղման արարողությանը: Նախագահ Մոնսոնը կարդաց ցավակցական նամակը, ուղղված ընտանիքին Առաջին Նախագահության կողմից, ապա ավելացրեց. «Ժամանակավորապես ես կորցրել եմ իմ լավ ընկերոջը»:

Երեց Բալլարդը, որը նույնպես Հայրում Սմիթի նախածոռն է, խոսեց իրենց ընտանիքի պատմությունը կենդանի պահելու գործում Երեց Սմիթի ներդրումի մասին: «Մենք պատվում ենք նրան որպես Եկեղեցու Հայրապետ և որպես մեր մեծ ընտանիքի հայրապետ», – ասաց նա: Նա ավելացրեց, որ գիտեր, որ Երեց Սմիթն իր մեծագույն նվաճումը համարում էր իր ընտանիքը:

Էլդրեդ Սմիթը ամուսնացել է Ջին Օդրի Նեսսի հետ 1932թ.: Նրանք ունեին հինգ զավակ: 1977թ. կնոջ մահից հետո նա ամուսնացավ Հորտենս Չայլդի հետ, որը ծառայում էր որպես Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության խորհրդական: Նա մահացավ 2012թ. մայիսին:

Երեց Սմիթից հետո մնացել են նրա երկու որդիները և դուստրը (մյուս դուստրը մահացել է), 22 թոռներ (երկուսը մահացել են), 63 ծոռներ և 22 նախածոռներ: ■

Ջերի Ավանտը մասնակցել է այս հոդվածի ստեղծմանը:

Երեց Ուլիսես Սարես

Յոթանասունի Նախագահությունից

Երեց Ուլիսես Սարեսը, որը սկսեց իր ծառայությունը Յոթանասունի Նախագահությունում 2013թ. հունվարին, աշխարհի տարբեր մասերում Եկեղեցու արագ աճի առաջնային ականատեսներից է եղել:

Երեց Սարեսը ծնվել է Սան Պաուլոյում, Բրազիլիա, 1958թ. հոկտեմբերին: Նրա ծնողները՝ Ապարեսիդո և Մերսեդես Սարեսները, միացել էին Եկեղեցուն, երբ նա հինգ տարեկան էր: Նրանք հաճախում էին ժողովների, որոնք անց էին կացվում հացի փռան վերևում գտնվող սենյակում: Երեց Սարեսը հիշում է այն ոգևորությունը, որը զգաց ութ տարեկան հասակում, երբ 1966թ. առաջին ցիցը հիմնվեց Հարավային Ամերիկայում՝ Սան Պաուլոյում: Եկեղեցին Բրազիլիայում արագ աճեց, հասնելով 50 ցցի՝ 1990թ. և ավելի քան 200 ցցի՝ 2000թ.:

Երեց Սարեսը, որը ստացել է բակալավրի կոչում հաշվապահության և տնտեսագիտության գծով Պոնտիֆիկա Կաթոլիկ Համալսարանում և բիզնես կառավարման մագիստրոսի կոչում Բարձրագույն Կրթության Ազգային Ինստիտուտում, աշխատում էր անվադողերի միջազգային ընկերությունում, երբ նրան պաշտոն առաջարկվեց Եկեղեցում: Ֆինանսների բաժնում աշխատանք ստանալուց հետո նա շուտով դարձավ նյութական գործերի տնօրենը Եկեղեցու Սան Պաուլոյի տարածքային գրասենյակում, աջակցություն տրամադրելով Տարածքային Նախագահությանը 10 տարիների ընթացքում: Նա նաև ծառայել է որպես Սան Պաուլո Բրազիլիա Կոտիա ցցի առաջին նախագահ:

Նա ծառայել է որպես Պորտուգալիա Պորտո միսիայի նախագահ 2000-2003թթ. և կանչվել է Յոթանասունի Առաջին Քվորում 2005թ. ապրիլին: Նա ծառայել է Բրազիլիայի և Հարավ-արևելյան Աֆրիկայի տարածքային նախագայություններում:

«Այդ փորձառությունները օգնել են ինձ պատկերացում կազմել, որ Եկեղեցին կարող է հիմնվել ցանկացած տեղ, որտեղ մենք հավատարիմ մարդիկ ունենք, – ասել է նա, – ինչպես նաև պատկերացում ունենալ, թե ինչ ես պետք է սովորեմ ավելի լավ ծառայելու համար»:

Երեց Սարեսը և նրա կինը՝ Ռոզանա Ֆեռնանդես Մորգադոն, ամուսնացել են 1982թ. հոկտեմբերին Սան Պաուլո Բրազիլիա տաճարում: Նրանք երեք զավակներ ունեն:

Երեց Սարեսը ծառայել է լիաժամկետ միսիա Բրազիլիա Ռիո դե Ժանեյրո միսիայում: Նա ծառայել է որպես երեցների քվորումի նախագահ, եպիսկոպոսության խորհրդական, քահանայապետ, ցցի գործադիր քարտուղար և բարօրության տարածքային գործակալ: ■

Երեց Էդվարդ Դյուբ

Յոթանասունից

Երեց Էդվարդ Դյուբը ծանոթացել է ավետարանի հետ 1981թ. գործատուի շնորհիվ, ում տանը նա աշխատում էր: Այդ մարդը տվեց նրան Մորմոնի Գիրքը: Նա կարդաց այն միայն 1983թ., սակայն այդ ժամանակ այնքան տպավորվեց Մորոնիի այցի մասին Ջոզեֆ Սմիթի վկայությամբ, որ համաձայնվեց այցելել ծոմի և վկայության ժողովին՝ Կվեկվեում, Զիմբաբվե:

Սկզբում նա իրեն անհարմար զգաց, կարծես ծառայող հարաբերությունների մեջ էր ներկաներից շատերի հետ:

«Սակայն, երբ նրանք բերեցին իրենց վկայությունները Մորմոնի Գրքի մասին, ես կապ զգացի այդ մարդկանց հետ, և կարողացա կիսվել Մորմոնի Գրքի մասին իմ զգացումներով», – հիշում է նա:

Հետագայում նա ստացավ միսիոներական դասերը, մկրտվեց և, ի վերջո, ծառայեց Զիմբաբվե Հարարե միսիայում:

Այդ ժամանակ նա ուսուցանեց 16-ամյա Նաումե Կերեսիա Սալազանիի ընտանիքին: Նրանք շարունակեցին իրենց ծանոթությունը նրա միսիայից հետո և ամուսնացան Կվեկվեում 1989թ. դեկտեմբերի 9-ին: 1992թ. մայիսին նրանք կնքվեցին Յոհանեսբուրգ Հարավային Աֆրիկայի տաճարում: Նրանք երեք դստեր և մեկ որդու ծնողներ են:

Երեց Դյուբը ծնվել է 1962թ. մայիսին Չիրումանզու գյուղում, Զիմբաբվե, Կլեմենտ և Ռոզմարի Դյուբերի ընտանիքում, ստացել է կրթություն Զիմբաբվե Դ Դ Քոլեջում՝ 1992թ., ապա աշխատել Եկեղեցու Կրթության Համակարգում, հիմնելով սեմինարիաներ և կրոնի ինստիտուտներ Զիմբաբվեում, Զամբիայում և Մալավիում: Նա օրհնվել է, տեսնելով, թե ինչպես են իր կողմից ավարտական վկայականներ ստացած բազմաթիվ ուսանողներ ծառայում Եկեղեցու ղեկավար պաշտոններում՝ այդ երկրներում, որտեղ Եկեղեցին աճել է:

Նա ծառայել է որպես երեցների քվորումի նախագահ, ճյուղի նախագահ, շրջանի նախագահ, ցցի նախագահ, միսիայի նախագահության խորհրդական և 2009-2012թթ. որպես Զիմբաբվե Հարարե միսիայի նախագահ: Յոթանասունի Առաջին Քվորում նշանակումից առաջ նա ծառայում էր որպես Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Ս. Գիֆորդ Նիլսեն

Յոթանասունից

Երեց Սթենլի Գիֆորդ Նիլսենը տարված է սպորտով, սակայն դա նրա կյանքի ամենակարևոր մասը չէ: Նա հավատում է, որ հավասարակշռությունը և ավատարանն են այժմ և հավերժության մեջ երջանկության հիմքը հանդիսանում:

Նա ծնվել է 1954թ. հոկտեմբերին Հարի և Լոյս Նիլսենների ընտանիքում, ապրել է Պրովոյում, Յուտա, ԱՄՆ, մինչև քոլեջն ավարտելը: Նրա ծնողները ուսուցանել են նրան ավետարանակենտրոն արժեքների համակարգը, որով նա առաջնորդվել է իր ողջ կյանքում:

Ծանր վնասվածքից հետո, որը վերջ դրեց նրա քոլեջի ֆուտբոլի կարիերային, Երեց Նիլսենը ասում է, որ սովորել է, որ կյանքի ամենակարևոր բաները չեն կարող վերցվել ոչ մի վնասվածքով:

Հաջող ապաքինումից հետո նա խաղացել է Ազգային Ֆուտբոլի Լիգայում, սակայն երեք տարի անց նրա կարիերան տապալվեց: Նրան հրապարակայնորեն ծաղրեցին: Դա ինքնագնահատման և իրական համոզմունքների բացահայտման ժամանակ դարձավ: «Ես սովորեցի, որ Փրկիչը երբեք չի թողնում ձեզ, անկախ որևէ բանից», - ասել է Երեց Նիլսենը, որն այժմ ապրում է Շուգար Լենդում, Տեխաս:

Եթե կա սուրբ գրություն, որով նա փորձում է ուղղորդել իր կյանքը, դա Մատթեոս 5.14–16 է. «Դուք եք աշխարհի լոյսը: . . . Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն, եւ փառաւորեն ձեր Հօրը որ երկնքումն է»:

«Տերը բացում է Իր գիրկը ձեզ համար», - ասել է Երեց Նիլսենը: «Դուք սիրում եք Նրան, ապրելով ավետարանով»:

Քոլեջի տարիներին էր, երբ նա հանդիպեց Վենդի Օլսոնին: Նրանք ամուսնացան Պրովո Յուտա տաճարում 1975թ. ապրիլի 23-ին: Նա ստացել է հեռահաղորդակցման գծով աստիճան Բրիգամ Յանգ Համալսարանում: Եկեղեցու լրիվ դրույքի ծառայության կանչվելուց առաջ նա եղել է Հյուստոնն Օյլերսի խաղացող և KHOU հեռուստատեսության սպորտային տնօրեն:

Վեց զավակների հայր՝ Երեց Նիլսենը ծառայել է որպես սեմինարիայի ուսուցիչ, Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, երեցների քվորումի նախագահ, եպիսկոպոս և ցցի նախագահ: Յոթանասունի Առաջին Քվորում կանչվելու ժամանակ նա ծառայում էր որպես Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Առնուլֆո Վալենզուելա

Յոթանասունից

Երեց Առնուլֆո Վալենզուելան մեծացել է մորմոնական գաղութներում Չիուաուայում, Մեքսիկա, և ավարտել է Եկեղեցու սեփականություն հանդիսացող Խուարեզ Ակադեմիան:

Լատինական Ամերիկայում Եկեղեցու այդ պատմական անկյունում սովորած դասերը օգտակար կլինեն նրան որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ իր պարտականությունները կատարելիս:

«Ես ինձ շատ օրհնված եմ զգում լրիվ դրույքով Տիրոջը ծառայելու այս կոչման համար», - ասել է նա:

Նա ծնվել է 1959թ. մայիսին Ջիլբերտո և Ռոզա Վալենզուելաների ընտանիքում և վաղ տարիքում ներգրավվել է Եկեղեցու ծառայության մեջ: 19 տարեկան հասակում նա ընդունել է Մեքսիկա Վեռակրուզ միսիայում ծառայելու կանչը: Մեքսիկայի այդ գեղատեսիլ տարածքում նա զգացել է ամենօրյա ավետարանական աշխատանքից եկող բավարարվածությունը և մյուսներին դեպի Քրիստոսը հրավիրելու ուրախությունը:

Իր միսիայից կարճ ժամանակ անց նա սկսեց այցելել մի ընտանիքի, որին հետագայում մկրտեց և որը ավելի ուշ տեղափոխվեց Մեքսիկո Սիթի: Այդ ընտանիքի հարևանությամբ ապրում էր Փիլար Փորասը, որը հավատարիմ նորադարձ էր Եկեղեցում: Առնուլֆոն և Փիլարը դարձան ընկերներ և շուտով սկսեցին ժամադրվել: Նրանք ամուսնացան Մեսա Արիզոնա Տաճարում 1982թ. ապրիլի 6-ին՝ այն ժամանակ, երբ իրենց հայրենի հողում տաճարներ չկային:

Նրանք մեծացրել են երեք զավակ, շարունակելով ծառայել Եկեղեցում և հետևելով նրան, թե ինչպես է Մեքսիկան դառնում տաճարների երկիր: «Մենք երբեք չէինք պատկերացնի, որ Մեքսիկայում կլինի 12 տաճար, իսկ մեկն էլ՝ կառուցման փուլում», - ասել է նա:

Որպես եպիսկոպոս, ցցի և միսիայի նախագահության խորհրդական և Տարածքային Յոթանասունական իր ծառայության ընթացքում Երեց Վալենզուելան ականատես է եղել մեքսիկացի անթիվ անդամների զարմանալի նվիրման, որոնք պատրաստ են տալ այն ամենը, ինչ ունեն Տիրոջ գործի համար:

Ավարտելով Մեքսիկո Սիթիի Հաշվապահության և Վարչարարական Ուսումնասիրությունների Համալսարանը, Երեց Վալենզուելան աշխատել է միջազգային կորպորացիաների կառավարման տարբեր պաշտոններում: ■

Երեց Տիմոթի Ջ. Դայչես

Յոթանասունից

Երեց Տիմոթի Ջոն Դայչեսի կյանքի սիրված դերերից մեկը «վկա լինելն է» և ուրիշներին վկայելը, օգնելով նրանց գալ դեպի Քրիստոսը: Անկախ նրանից, ծառայում է որպես միսիոներ, շփվում է իր սեփական ընտանիքի հետ, թե աշխատում է իր մասնագիտությամբ, նա ուրախությամբ ընդունում է այդ դերը և պարտականությունը և օգնում մյուսներին անել նույնը:

Նա ծնվել է 1951թ. Մյուրեյում, Յուտա, ԱՄՆ, Մայլո Ֆրեդրիկ և Մերի Քեթրին Դայչեսների ընտանիքում և եղել է յոթ երեխաներից երկրորդը: Երբ նա պատանի սարկավագ էր, նրա ընտանիքը տեղափոխվեց Էլքո, Նեվադա, որտեղ նա դպրոցից հետո աշխատում էր իր հոր դեղատանը: Աշխատելով կողք-կողքի, նրա հայրը սովորեցրեց նրան լավ աշխատելու կարևորությունը, որը նրան օգտակար եղավ, երբ նա երիտասարդ միսիոներ էր Գերմանիայի Հարավային միսիայում 1970-72թթ.:

«Դա ծանր միսիա էր, սակայն ինձ համար հիանալի միսիա», - ասել է նա: «Ես սովորեցի ծանր աշխատանքի, հնազանդության և չհանձնվելու արժեքը»:

Աշխատանքի այդ էթիկան նա շարունակեց կիրառել իր միսիայից հետո ուսանելու ժամանակ, իր մասնագիտական ոլորտում աշխատելու ընթացքում և Եկեղեցու հանձնարարություններում: Երեց Դայչեսը հանդիպել է իր ապագա կնոջը՝ Ջիլ Դաղլիին, երբ հաճախում էր Բրիգամ Յանգ Համալսարանը: Նրանք ամուսնացել են 1974թ. ապրիլի 26-ին Մանթի Յուտա տաճարում: Նրանք ունեն երեք զավակ:

Երեց Դայչեսը ստացել է բակալավրի կոչում Բրիգամ Յանգ Համալսարանում՝ համալսարանական ուսումնասիրությունների գծով, ապա շարունակել է ուսումը, ստանալով բժշկության աստիճան Վաշինգտոնի Համալսարանի Բժշկական դպրոցում: Նա իր մասնագիտական կարիերան անց է կացրել որպես ականջի, քթի և կոկորդի վիրաբույժ, մասնավոր գործունեություն ծավալելով Ռենոյում, Նեվադա:

Յոթանասունի Երկրորդ Քվորում կանչվելու ժամանակ Երեց Դայչեսը ծառայում էր Երիտասարդ Տղամարդկանց կազմակերպությունում որպես սարկավագների քվորումի խորհրդատու: Նա ծառայել է տարբեր կոչումներում, ներառյալ՝ Տարածքային Յոթանասունական, Օրեգոն Փորթլենդ միսիայի նախագահ, ցցի նախագահ, ցցի նախագահության խորհրդական, քահանայապետ, տաճարային արարողությունների աշխատող, Կիրակնօրյա Դպրոցի նախագահ և ծխի գործավար: ■

Երեց Ռենդի Դ. Ֆանկ

Յոթանասունից

Երեց Ռենդի Դենիս Ֆանկը՝ Յոթանասունի Երկրորդ Քվորումից, ապրում է իր կյանքը այս հիմնական սկզբունքով. «Ապավինիր Տիրոջը և Նրա բարությանը»:

Իրավագիտության երրորդ տարվա ընթացքում նրա կինը հղի էր իրենց երկրորդ երեխայով, իսկ նա իրավագիտության պարբերականի խմբագրերից էր, երբ կանչվեց որպես երեցների քվորումի նախագահ: «Այդ դժվար ժամանակ ես ընդունեցի կոչումը և աղոթեցի Երկնային Հորը, որ հոգ տաներ նրա համար, ինչ ինքս չէի կարողանա անել», - ասել է նա: «Ես օգնության կարիք ունեի իմ կոչումը կատարելու, կրթությունս հաջողությամբ ավարտելու, աշխատանք գտնելու և իմ երիտասարդ ընտանիքի մասին հոգ տանելու համար: Օրհնությունները, որ մենք ստացանք, անհամեմատ գերազանցում էին այն, ինչին մենք արժանի էինք: Այդ փորձառությունն ինձ մեծ հավատք պարգևեց Տիրոջ բարության և Նրա օրհնությունների հանդեպ նրանց համար, ովքեր ջանասիրաբար ձգտում են ծառայել Իրեն»:

Նա ծնվել է 1952թ. օգոստոսին Ս. Դեննիս և Ռեբեկա Ֆանկերի ընտանիքում և մեծացել է Մանթիում, Յուտա; Մեդիսոնում, Վիսկոնսին և Սմիթֆիլդում, Յուտա, ԱՄՆ: Նա տեսել է, թե ինչպես է իր հայրը հավատարմությամբ ծառայում Եկեղեցում և ուսուցանվել է քահանայության պարտականությունները կատարելու կարևորության մասին:

Ինդոնեզիայում իր միսիան ծառայելուց հետո նա ամուսնացել է Մնդրեա Քլայդի հետ 1976թ. մայիսի 29-ին, Լոգան Յուտա տաճարում: Նրանք վեց զավակների ծնողներ են: Երեց Ֆանկը ստացել է աստիճան պատմության գծով Յուտայի Պետական Համալսարանում և իրավագիտության դոկտորի կոչում Յուտայի Համալսարանում: Նա խոշոր իրավական ընկերության գործընկեր էր Դենվերում, Կոլորադո, նախքան Եկեղեցու իր լիաժամկետ ծառայության կանչվելը, որը սկիզբ առավ 2010թ. Հնդկաստան Բանգալոր միսիայի նախագահ կանչվելով:

«Երբ մենք մեկնեցինք Հնդկաստան, մենք հավատում էինք Փրկչի այս խոսքերին. «Եվ բացի այդ, ես ասում եմ ձեզ, որ ում որ դուք ուղարկեք իմ անունով, ձեր եղբայրների՝ Տասներկուսի ձայնով, ձեր կողմից պատշաճ կերպով երաշխավորված և լիազորված, նրանք զորություն կունենան՝ բացելու իմ արքայության դուռը, որ ազգի համար էլ որ դուք նրանց ուղարկած լինեք» (ՎԵՈՒ 112.21): Երեց Ֆանկը ծառայել է երեցների քվորումի նախագահ, Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, եպիսկոպոս, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Քեվին Ս. Համիլտոն

Յոթանասունից

Երեց Քեվին Ս. Համիլտոնը նկարագրում է իրեն որպես «դարձի և փրկության արդյունք»:

1955թ. մարտին նրա ծնվելուց հետո՝ Վենաչիյում, Վաշինգտոն, ԱՄՆ, նրա մայրը՝ Քեյը սկսեց հարցեր ունենալ կյանքի նշանակության մասին: Նա խոսեց իր ՎՕՍ ընկեր՝ Ռիչարդ Փրաթի հետ, որը նրան ծանոթացրեց միսիոներների հետ:

Նրա ամուսինը՝ Նորման Ռասսել Համիլտոնը, պարզաբանել է, որ արդեն Եկեղեցու անդամ էր, սակայն այդքան էլ ակտիվ չէր իր դեռահաս տարիներին: Նա դարձավ ակտիվ Եկեղեցում, երբ իր կինը միացավ Եկեղեցուն:

«Ծնողներս հրաշալի անդամներ էին, ովքեր կառուցել են այն հավատքը, որ մենք այսօր ունենք», - ասել է Երեց Համիլտոնը:

Սակայն նա խոստովանում է, որ Ֆրանսիայում և Շվեյցարիայում անցկացրած իր միսիան էր, որ իսկապես փոխեց իր կյանքը: «Այն իմ մեջ վառվող ցանկություն առաջացրեց, որը երբեք այլևս ինձ չլքեց», - ասել է նա:

Նա ամուսնացավ հոգով իրեն մոտ էակի՝ Կլաուդիա Քեյսորի հետ, 1978թ. հուլիսի 27-ին Լոս Անջելես տաճարում: Կալիֆոռնիայում իրենց վեց զավակներին մեծացնելու ընթացքում նրանք իրենց տունը վեր էին ածել, ինչ-որ առումով, այցելուների կենտրոնի:

«Ասում էին, որ կարելի է լուռ քարոզ լսել ձեր տանը, ամբողջ տնով ցրված էին կարճ մեջբերումներ», - ասել է Քույր Համիլտոնը: Տան նախամուտքում պահվում էին Մորմոնի Գրքի, *Երիտասարդներին զորացնելու համար* և Եկեղեցու այլ գրականության օրինակներ, որոնք պարբերաբար լրացվում էին, որպեսզի այցելուները վերցնեին իրենց հետ:

Երեց Համիլտոնի ծառայելու վճռականությունը հնարավորություններ բացեց ծառայելու որպես եպիսկոպոս, ցցի նախագահ և Բելգիայի Բրյուսել Նիդեռլանդների միսիայի նախագահ 2003-2006թթ.: Յոթանասունի Երկրորդ Քվորում կանչվելուց առաջ նա Եկեղեցու Հարավային Կալիֆոռնիայի Հանրային Կապերի Խորհրդի տնօրենն էր, որի կազմում էին 64 ցից Լոս Անջելեսի քաղաքային լայն տարածքից:

Բակալավրի կոչումով Բրիգամ Յանգ Համալսարանից և մագիստրոսի կոչումով Վաշինգտոնի Համալսարանից՝ երկուսն էլ բիզնեսի գծով, նա իր կարիերայի մեծ մասն անց է կացրել հեռահաղորդակցման բնագավառում, մի քանի անգամ ծառայելով որպես գլխավոր գործադիր պաշտոնյա: ■



Երեց Ադրիան Օչոա

Յոթանասունից

Երբ Երեց Ադրիան Օչոան ծառայում էր որպես Տարածքային Յոթանասունական Մեքսիկայում, նա մի քանի օր անցկացրեց Չիուաուայում, խորհրդակցելով ցցի նախագահի և մյուսների հետ, ապա նստեց դեպի տուն ուղևորվող ինքնաթիռը: Սակայն իր տեղը զբաղեցնելուց հետո նա ստացավ հզոր հոգևոր հուշում այն մասին, որ իր աշխատանքը Չիուաուայում դեռ ավարտված չէր:

Ինքնաթիռի անձնակազմը պատրաստվում էր թռիչքի: «Սակայն, - ասաց Երեց Օչոան, - ես գիտեի, որ պետք է իջնեի ինքնաթիռից»: Այսպիսով, նա դուրս եկավ: Մի շարք հաջորդող հարցազրույցներ բացահայտեցին կարևոր տեղեկություն, որի շնորհիվ հաջողվեց լուծել մի կարևոր խնդիր և հոգևոր զարգացման հնարավորություն տալ մի ընտանիքի:

Սակայն Երեց Օչոայի աշխատանքը Չիուաուայում դեռ ավարտված չէր: Հոգին նրան ուղղորդեց մի խոնարհ տուն, որտեղ ապրում էր իր բարեկամ եղբայրը, որին նա չէր տեսել շատ տարիներ: Նա գտավ իր օտարացած եղբորը՝ ոչ ակտիվ անդամին, և նրա փոքր ընտանիքին հուսահատ վիճակում: «Ես գիտեի, որ Եկեղեցին և Քրիստոսն էին նրանց խնդրի լուծումը: Ես աղաչեցի, որ եղբայրս վերադառնար եկեղեցի», – ասաց նա:

Եղբայրը վերադարձավ ակտիվության և ընտանեկան թանկարժեք կապերը վերականգնվեցին: Տերը կարողացավ փրկել մի քանի կյանքեր Չիուաուայում մի մարդու միջոցով, որն ուշադրություն դարձրեց Հոգու հուշումներին:

Բոլորին հասանելի են այդ կյանք փոխող հոգևոր հուշումները, վկայել է Երեց Օչոան, որը ծառայել է Եկեղեցու բազմաթիվ կոչումներում, մինչ աշխատել է գովազդի բնագավառում: Նա նախագահել է Հոնդուրասի Սան Պեդրո Սուլա միսիայում 2004-2007թթ., իսկ 2009թ.-ից մինչև Յոթանասունի Երկրորդ Քվորում կանչվելը ծառայել է որպես երկրորդ խորհրդական Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահությունում:

Նա ծնվել է 1954թ. մարտին Սան Ֆրանցիսկոյում, Կալիֆոռնիա, ԱՄՆ, Էդուարդո և Կոնսուելո Օչոաների ընտանիքում, մեծացել է Կալիֆոռնիայում և Մեքսիկայում: Երիտասարդ հասակում կանչվել է ծառայելու Մեքսիկայում՝ հանրային կապերի հատուկ միսիայում: Նա և նրա կինը՝ Նենսի Վիլարիլը, կնքվել են Մեխիկո Սիթիի տաճարում: Նրանք հինգ զավակների ծնողներ են: ■

Երեց Տերենս Մ. Վինսոն

Յոթանասունից

Երեց Տերենս Մ. Վինսոնը՝ Երկրորդ Քվորումի նոր կանչված Յոթանասունականը, երբեք չէր լսել *Մորմոն* արտահայտությունը մինչև հանդիպելը Քեյ Էնն Քարդենին 1970-ականների սկզբին Սիդնեյում, Ավստրալիա: Նրանք խոսեցին կրոնի մասին և, ի վերջո, եկան համաձայնության: Ամեն կիրակի նրանք երկուսով պետք է գնային Տերենսի երիտասարդության եկեղեցին և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու փոքր ճյուղը: Առաջին խումբը հավաքվում էր մեծ և սքանչելի շենքում, մինչ մյուսը՝ վարձած փոքր տարածքում, որտեղ կարող էին հավաքվել միայն մի քանի Վերջին Օրերի Սրբեր:

Սակայն մի փոքր ժամանակ անց «համեմատությունը սկսեց ամաչեցնող թվալ» և Տերենսը սկսեց մասնակցել միսիոներական զրույցներին: Նա շատ հարցեր ուներ: Ապա, այցելելով ցցի համաժողովի, նա զգաց մի ուղերձ, որը, կարծես, հստակ հնչեր: «Ես պետք է միանամ Եկեղեցուն, եթե ուզում եմ զարգանալ: Իմ ունեցած բոլոր հարցերը կունենան իրենց պատասխանները», - ասաց նա:

Հաջորդ շաբաթ նա մկրտվեց:

Երեց Տերենս Մայքլ Վինսոնը ծնվել է Սիդնեյում, Ավստրալիա, 1951թ. մարտին Ջոն Լորենս և Մեյ Տերես Ա. Վինսոնների ընտանիքում: Նրա հայրը, որն աշխատում էր հրշեջ ծառայությունում, զոհաբերում էր, որպեսզի իր երեխաները կրթություն ստանային:

Երեց Վինսոնը ստացել է բակալավրի կոչում մաթեմատիկայի և վիճակագրության գծով Սիդնեյի Համալսարանում և ուսուցչի դիպլոմ Սիդնեյի Ուսուցիչների Քոլեջից: Նա նաև ստացել է ֆինանսական պլանավորման դիպլոմ Դիկինի Համալսարանից և մագիստրոսի կոչում կիրառական ֆինանսների գծով Մաքուրի Համալսարանից: Իր կարիերայի ընթացքում նա եղել է հանրահայտ մաթեմատիկայի ուսուցիչ, դասախոս և ֆինանսական խորհրդատու, ղեկավարել է ֆինանսական պլանավորման և ներդրումների ընկերություն:

Նա ամուսնացավ Քեյ Էննի հետ՝ կնոջ, որը ծանոթացրեց իրեն ավետարանի հետ 1974թ. մայիսի 2-ին Սիդնեյում, և նրանք կնքվեցին 1975թ. օգոստոսի 23-ին Համիլտոն Նոր Զելանդիա տաճարում: Նրանք ունեն վեց զավակ: Մկրտությունից երեք տարի չանցած Երեց Վինսոնը կանչվեց որպես եպիսկոպոս: Նա ծառայել է մի քանի ցցերի նախագահություններում և որպես տարածաշրջանային ներկայացուցիչ և Տարածքային Յոթանասունական: ■

Բոննի Լ. Օսկարսոն

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ

Ծառայելով որպես մատրոն Ստոկհոլմ Շվեդիա տաճարում 2009-2012թթ., Բոննի Լի Գրին Օսկարսոնը տեսնում էր, թե ինչպես էին Վերջին Օրերի Սրբերը Շվեդիայից, Նորվեգիայից և Լատվիայից զոհաբերում Տիրոջ տանը երկրպագելու համար:

Այդ ժամանակ նա չգիտեր, որ դասերը, որոնք նա սովորում էր այդ «շատ խոնարհ, ծայրահեղ նվիրված և պարտավորված» անդամներից, կօգնեին իրեն կենտրոնանալ Եկեղեցու Երիտասարդ Կանանց գերագույն նախագահի իր աշխատանքի վրա:

«Քանի որ շատ երիտասարդ կանայք այժմ որոշում են ծառայել միսիաներում և հաճախել տաճար ավելի վաղ տարիքում, ես հույս ունեմ, որ տաճարում աշխատելու իմ փորձը կօգնի ինձ հասկանալ, թե ինչպես օգնել նրանց պատրաստվել», – ասել է նա:

Բոննի Լի Գրինը ծնվել է 1950թ. հոկտեմբերին Սոլթ Լեյք Սիթիում Թեռ Ջեյմս և Ջին Ս. Գրինների ընտանիքում: Երբ ծնողները որոշեցին իրենց երեխաներին ծանոթացնել Եկեղեցու հետ Յուտայի սահմաններից դուրս, ինն ամյա Բոննին և նրա ընտանիքը տեղափոխվեցին Օկլահոմա, ԱՄՆ: Ընտանիքը նաև որոշ ժամանակ անցկացրեց Կոլորադոյում և Թեննեսիում՝ մինչև Միսսուրի տեղափոխվելը, որտեղ Բոննին հանդիպեց Փոլ Քենթ Օսկարսոնին՝ Ֆար Վեստում, Միսսուրի, տաճարի տեսարժան վայրում, որը մեծ նշանակություն ուներ նրանց համար, քանի որ երկուսի նախնիներն էլ ապրել են Ֆար Վեստ տարածքում:

Բրիգամ Յանգ Համալսարանն ավարտելուց հետո զույգն ամուսնացավ 1969թ. դեկտեմբերի 19-ին Սոլթ Լեյք տաճարում: Ընտանիքը, ի վերջո, աճեց յոթ զավակով:

Քույր Օսկարսոնը միայն 25 տարեկան էր, երբ նրա ամուսինը, որը լիաժամկետ միսիա էր ծառայել Շվեդիայի միսիայում 1965-1968թթ., կանչվեց նախագահելու Շվեդիա Գյոտեբորգ միսիայում:

Երբ Օսկարսոնները վերադարձան Միացյալ Նահանգներ, նրանք ապրեցին Միսսուրիում, Նյու Ջերսիում, Մասաչուսեթսում և Տեխասում, որտեղ Եղբայր Օսկարսոնը աշխատում էր որպես խոշոր բազմաբաժին խանութի տարածքային փոխնախագահ: Իր ծնողների նման, Քույր Օսկարսոնը մեծ ուրախություն էր գտնում, ապրելով այն տարածքներում, որտեղ Եկեղեցու անդամությունը սակավաթիվ էր:

Քույր Օսկարսոնը ծառայել է որպես Երիտասարդ Կանանց նախագահ երեք անգամ, վաղ առավոտյան սեմինարիայի ուսուցիչ՝ ինն անգամ, և որպես Ավետարանի Վարդապետության ուսուցիչ: ■

Քերոլ Ֆ. Մակքոնկի

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական

Երիտասարդ տարիքից Քերոլ Ֆոլի Մակքոնկին «երազել է տաճարի մասին»: Այդ կենտրոնացումը ղեկավարել է նրա բոլոր գործողությունները կյանքի ընթացքում:

Քույր Մակքոնկին ծնվել է 1952թ. ապրիլին Սպոքեյնում, Վաշինգտոն, ԱՄՆ, Վիլիամս և Ջոան Վ. Ֆոլիների ընտանիքում, և մանուկ էր, երբ միսիոներները թակեցին նրա ծնողների դուռը Վիլմինգտոնում, Դելավեր, և ծանոթացրեցին ընտանիքին ավետարանի հետ: Նրա ծնողները արագ ընկալեցին ուսմունքները, չնայած ընդդիմությանը և իրենց ապրելաձևի մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը:

Երեխա հասակում նա գնացքով ճանապարհորդելց իր ընտանիքի հետ երկրի մի ծայրից մյուսը՝ Մանթի Յուտա տաճարում կնքվելու համար:

«Դա շատ քաղցր փորձ էր», - ասել է նա: «Ես հիշում եմ, թե ինչպես հագա սպիտակ հագուստներ և թե ինչ էր դա նշանակում իմ ընտանիքի համար: Դա հրաշալի փորձառություն էր, և, թեև ես իսկապես փոքր էի, հիշում եմ իմ զգացումները, ճերմակի առկայծումները և այդ օրվա գեղեցկությունը: Այդ փորձառությունը պարգևեց ինձ տաճարը իմ կյանքում միշտ պահելու առաջին ցանկությունը»:

Տաճարը փորձության պահերին և սեփական ընտանիքում հույսի փարոս դարձավ:

Նա հանդիպել է իր ամուսնուն՝ Օսկար Վոլթեր Մակքոնկի III-ին, երբ եկուսով սովորում էին Արիզոնայի Պետական Համալսարանում: Քույր Մակքոնկին ստացել է իր բակալավրի կոչումը անգլիական կրթության գծով: Նրանք ամուսնացել են 1973թ. դեկտեմբերի 22-ին Մեսա Արիզոնա տաճարում և ունեն յոթ զավակ:

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական կանչվելու պահին Քույր Մակքոնկին ծառայում էր Երիտասարդ Կանանց գերագույն խորհրդում: Եկեղեցու ծառայության մեծ մասը նա անց է կացրել կոչումներում, որոնք կապված են եղել ուսուցանման հետ, և որպես ծխի Երիտասարդ Կանանց նախագահ և ծխի Սփոփող Միության և Երեխաների Խմբի նախագահությունների խորհրդական: Նա ծառայել է իր ամուսնու հետ, երբ վերջինս նախագահում էր Կալիֆոռնիա Սան Հոսե միսիայում՝ 2005-2008թթ.: ■

Նեյլ Ֆ. Մերիոթ

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Անգամ Եկեղեցուն միանալուց առաջ Նեյլ Ֆուտ Մերիոթը՝ դեռ երիտասարդ աղջիկ լինելով, գիտեր, որ կա Աստված և որ Նա սիրում է իրեն:

«Հայրս մեր Երկնային Հոր մարմնացումն էր», - ասել է Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության նոր կանչված երկրորդ խորհրդականը: «Նրա սերը և մյուսների հանդեպ հանդուրժողականությունը անսահման էին: Շատ հեշտ էր և բնական իմ երկրային հոր հանդեպ ունեցած սիրուց և վստահությունից հետո անցում կատարել իմ Երկնային Հորը վստահելուն և սիրելուն»:

Ծնվելով 1947թ. հոկտեմբերին Ալեքսանդրիա-յում, Լուիզիանա, ԱՄՆ, Ջորջ և Անտոնիա Ֆուտերի ընտանիքում, նա վեց եղբայրների միակ քույրն էր: Անգլիական գրականության և միջնակարգ կրթության գծով Հարավային Մեթոդիստական Համալսարանն ավարտելուց հետո Տեխասում, Մասաչուսեթս, նա տեղափոխվեց Քեմբրիջ, Մասաչուսեթս, որտեղ որպես քարտուղար աշխատեց Հարվարդի Համալսարանում: Այնտեղ նա հանդիպեց Դեյվիդ Քեննոն Մերիոթին, որը նրան ասաց. «Ես ընկերներ ունեմ, որոնց, կուզենայի, դու հանդիպեիր»: Նա շուտով բերեց միսիոներներին, որ ուսուցանեին նրան և նրա սենյակակիցներին:

Լսելով միսիոներներին, նա ասաց. «Դասերը լրացրեցին ավետարանը հասկանալու իմ բացերը»: 1970թ. մայիսին մկրտվելուց հետո նա և Դեյվիդը ընկերներ մնացին, մեկ տարի անց սկսեցին ժամադրվել և ամուսնացան 1971թ. հունիսին Սոլթ Լեյք տաճարում:

Իր ամուսնու հետ համաձայնությամբ, Քույր Մերիոթը մնաց տանը իր 11 զավակներին պահելու, մինչ ամուսինը զբաղվում էր բիզնեսում իր կարիերայով: Նրանք ծառայել են Եկեղեցու շատ կոչումներում: Նա ծառայել է ամուսնու հետ, երբ վերջինս նախագահում էր Սան Պաուլո Ինտերլագոս միսիայում 2002-2005թթ., և ծառայել է որպես արարողությունների աշխատող Սոլթ Լեյք տաճարում, ցցի և ծխի Սփոփող Միության նախագահ, ծխի Երիտասարդ Կանանց նախագահ, Ավետարանի Վարդապետության ուսուցիչ և մթերային պահեստավորման մասնագետ:

Իր նոր հանձնարարության մեջ Քույր Մերիոթը հույս ունի կիսվելու իր նույն վկայությամբ, որը ստացել էր երիտասարդ տարիքում: Նա ցանկանում է, որ երիտասարդ կանայք իմանան, որ «սիրված են իրենց Երկնային Հոր կողմից խորագույն, ամենափառավոր սիրով»: ■

© BRADY FAIRBANKS, ՉԻՆՎՈՒԱԾԸ

«Կույր էի եւ հիմա տեսնում եմ», Բրեդի Ֆերբենքս

«Եւ անցկենալիս մի մարդ տեսաւ ծնունդից կոյր: . . .

Այս ասելով [Հիսուսը] թքեց գետինը, եւ թուքիցը ցեխ շինեց, եւ ցեխը քսեց կոյրի աչքերի վերայ:

Եւ նորան ասեց. Գնա, լուացուիր Սիլոամի աւազանումը . . . Եվ նա գնաց լուացուեցաւ, եկաւ եւ տեսնում էր: . . .

Նա էլ պատասխանեց եւ ասեց. . . . Մի բան գիտեմ, որ կոյր էի եւ հիմա տեսնում եմ» (Հովհաննես 9.1, 6–7, 25):

«Մենք ապրում ենք աշխարհի պատմության այնպիսի ժամանակ, երբ կան բազմաթիվ դժվար մարտահրավերներ, սակայն կան նաև մեծ հնարավորություններ և ուրախանալու պատճառներ», - ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 183-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման ելույթում: «Կան, անշուշտ, ժամանակներ, երբ մենք կյանքում ապրում ենք հիասթափություն, ցավ, անզգամ ողբերգություն: Ինչևէ, եթե մենք ապավինենք Տիրոջը, Նա կօգնի մեզ անցնել մեր դժվարությունների միջով, ինչպիսին էլ որ դրանք լինեն»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021078520 1 6